1012
II. 6

1902 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1902 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ

Թիֆլիս. տպարան Տ. Մ. Ռոսլինեանցի
1902

Дозволено цензурою. Тифлисъ, 31 Декабря 1901 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I Պարբերութիւնք «Լուսայ»-ն: ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. . . . . Ը

II Վարդան Անրուսեան։ ՇԻՐՎԱՆԶԱԴԷ. 1

III Գրազ. Անտոն Չեխովի. թարգմ. Տ. Վ. 56

IV Ծնունդեան գիշերը։ Բարեսիրտ մարդ։ ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ . . . 66

V Սիմոնա. Պոլ Բուրժէի. Փրանս. թարգմ. ՏԻԿԻՆ Զ. 67

VI Դալի Մահրասա. ՅԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ 78

VII Դատաստանի օրը. Կարալէնկոյի. թարգմ. ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴ. 93

VIII Տախտակամած Ոլիմպոսի վերայ. Ն. ՅԱՐՈՑ. 111

IX Սատանայի անունով. զերմ. թարգմ. ՏԻՐ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ. 116

X Մանկական յիշողութիւններ ԵՂԻՇԷ Ք. ԳԵՂԱՄԵԱՆՑ. 122

XI Աւետարան. ԿԱՑԾՈՒՆԻ . . . 135

XII Մ. Լոմոնոսով. պրոֆ. Պ. Վլադիմիրովի. թարգմ. Ն. Ա. 136

XIII Նոր Նախիջեւանցւոց կայսերաշնորհ հրովարտակը եւ նոցա դատաստանագիրքը. ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ. 148

XIV Թարգմանութեան ծաղիկներ. Ս. Մ. . 172

XV Եղիշէի պատմութեան ընագիրը. Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ. 183

XVI *Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ (պատկերով)* ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ. 194

XVII *Գէորգ Բարխուդարեանց.* ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ. 201

XVIII **ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ**

Г. Эзовъ. Начало сношеніи Эчм. Патр. престола съ Русскимъ правительствомъ.

Մ. ԲԱՐԹՈՒՂԱՐԵԱՆՑ։—Ռ. Պէրպէրեան. Դատիարակի մը խօսքերը. ԲՐԻՉ: — Գ. Սունդուկեան. Պէպօ. ԲՐԻՉ:—Գ. Մ.—Կարագեօզեան. Գերմանիայի հայ ուսանողութիւնը. ԲՐԻՉ:—Հաթի քննադատութեան առիթով. ՆԻԿ. Տ. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ:—Նոր հրատարակութիւններ. . . . 213

XIX **ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ։**

Կովկասեան յօբելինական ցուցահանդէս։—Հայոց թատրոն:—Գիտական նորութիւններ: 245

XX **ԱՅԼԵՒԱՅԼՔ**: *Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս:—Ռէթէոս Պէրպէրեանի յօբելեան:—Զմիւռնիայի ս. Լուսաւորչեան ազգ. հիւանդանոցի հարիւրամեակ:—„Լուսայ"-ի խմբագրի ամեակ։* 25

XXI ✠ **ՄԱՀԳՈՅԺ** *Հ. Ղ. Ալիշան։—Յարութիւն փաշա Տատեան:—Դ. Տէր-Դաւթեան։*

XXII **ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԽԱՆՆԵՐ:**

XXIII **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։**

XXIV **ՅԱՒԵԼՈՒԱԾ**:

Անտառապետ Փրեդերիկ, Էրկման Շատրիանի. թարգմ. ԴԻՒՑ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆԻ:

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ «ԼՈՒՄԱՅ»-Ն

Վեց տարի առաջ բանասիրական ու պատմական մի հանդիսի կարօտութիւնն զգալով, ձեռնարկեցինք «Լումայ» վեցամսեայ հանդիսի հրատարակութեան, որի համեստ նպատակն էր ազգային կեանքի հին ու նոր անցեալի բեկորները լոյս աշխարհ հանել, նորագոյն քաղաքակրթութեան արգասիքներին թարգմանաբար և քաղուածօրէն հաղորդ անել և այն հայ ընթերցողներին, որոնք միայն մայրենի լեզուով էին լրացնում ընթերցանութեան ծարաւը։ Մեր տուածն արդարև մի լումայ էր միայն և այն այրի կնոջ լուման, որի տուողի ցանկութիւնն աւելի է գնահատւում, քան տուածը։ Ապացոյց, որ մեր համեստ տուրքն ևս գնահատուեցաւ, ահա այսօր «Լուման» թևակոխում է եօթներորդ տարեշրջանն և այն, աւելի ճոխ ծրագրով ու լոյն իրաւունքներով։

Գրական ու պատմական հանդիսի ճանապարհը մեր մէջ բաւական հարթուած էր, երբ ձեռնարկեցինք այս հրատարակութեան. կէս դարուց աւելի էր, որ հայ ընթերցող հասարակութիւնը սովոր էր ամսաթերթի, «Հիւսիսափայլը», «Կռունկը» և «Փորձը» այն շրջանների արտայայտիչներն էին, որոնց ընթացքում հրատարակւում էին, դոցանից ամեն մէկը մեր մէջ նոր նոր սահմանների էր տիրել գրական աշխարհում։ «Հիւսիսափայլն» իբրև անդրանիկը հայ ամսագրերի մէջ

իւր հրատարակիչ գիտնականի դրոշմը կրելով, գրգռեց հայ ընթերցողների ճաշակը դէպի եւրոպական դասական հեղինակների երկերի վայելումը, տպագրական խօսքին մեծ հեղինակութիւն տուաւ և մաքառումն սկսաւ ազգային թերութիւնների դէմ։ «Կռունկը» սիրեց իւր հայրենի աշխարհը, հնի ու նորի բեկորներն սկսեց ժողովել, հիմք դրաւ հայկական նոր վիպագրութեան և առաջինը ուշք դարձրեց հայկական ժողովրդական քանաստեղծութեան վերայ։ Այս երկու նախընթաց կարապետող հանդէսներն հոգ պատրաստեցին տպագրի համար և երբ լոյս տեսաւ «Փորձը», հայ հասարակութիւնն արդէն պատրաստ էր մի գրական, պատմական և հասարակական հանդիսի համար։ «Փորձը» իւր նախորդների ծրագրի վերայ աւելացրեց և յատուկ եւրոպական ամսագրի բաժինները. նա հայկական հին ու նոր պատմութեան, հին ու նոր գրականութեան ընդարձակ տեղ տալուց զատ, միշտ ընթացիկ եւրոպական կեանքի ու գրականութեան մասին տեղեկութիւն ու ճաշակ տալուց, տեղ ու ժամանակ էր գտնում և արևմտեան մեծ հանճարների թարգմանութիւնների համար։

Բարգաւաճման այս ընթացքը յանկարծուստ կանգ առաւ, թերևս այն պատճառով, որ գրականութիւնը առաջ էր անցել հասարակութիւնից կամ գուցէ և այն, որ նա աւելի համապատասխանում էր ընտրեալ գրական մի խմբի, քան թէ ամբողջ հասարակութեան ճաշակին. դորա մասին դեռ վաղ է վճիռ կարդալ, սակայն տխուր փաստը մնաց անհերքելի, որ մի առժամանակ հայ ընթերցողը մնաց առանց ամսագրի։

Կիսամեայ ժողովածուներն այդ շրջանումն սկսան իրենց գոյութիւնը և ալէտք է խոստովանել, որ Մոսկուայի «Գրականական և պատմական հանդէսն» ու Պետերբուրգի «Արաքսն» իրենց ընտրած ասպարէզներում

պատուով դուրս եկան մրցութիւնից, սակայն դոցա կեանքը երկարատև չեղաւ։

Ամսագրի պահանջն այնքան անհրաժեշտ էր դարձել մեր մէջ, որ երբ սկսաւ հրատարակուել Արասխանեանի «Մուրճը», հասարակութիւնն ամեն աջակցութիւն ցոյց տուաւ նորան, հին ու նոր գրական ոյժերը շրջապատեցին, բաժանորդներ ևս պակաս չէին ամսագրին, սակայն «Մուրճը» հին գրականութիւնը ու պատմութիւնը բոլորովին անտես արաւ, գուցէ և այդ պատճառով այդ փորձն էլ՝ անյաջող եղաւ։

Ահա թէ ինչ ժամանակ սկսանք մեր գործունէութիւնը։ Ընթերցողների վաղուց յագուրդ չատացած պահանջը լրացնելու ցանկութիւնը յառաջ մղեց մեզ և այս վեցամեայ շրջանում մեր ոյժերը փորձելով՝ այսօր եռապատկում ենք մեր գործունէութիւնը, յոյս ունենալով՝ որ հասարակութիւնն ևս իւր աջակցութիւնը կրկրկնապատկէ գոնէ։ Ուրախութեամբ պիտի աւետենք, որ արդէն հայկական գրական գործիչներն շտապել են մեզ խրախուսել իրենց աջակցութեամբ. Հանդիսիս այս համարը վկայ է այն համակրութեան, որ «Լուման» վայելում է մեր հին ու նոր գրական գործիչներից։

Երկամսեայ «Լումանն» իրեն պարզ ու որոշ նպատակունի. ժողովել և լոյս աշխարհ հանել մեր ժողովրդի անցեալ ու ներկայ կեանքին վերաբերեալ բոլոր պատմական և ժողովրդագրական տեղեկութիւններն ու գիտելիքները, ուսումնասիրել մեր երկիրը, ժողովրդի կեանքը, լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը. տեղ ու միջոց տալ մեր հին ու նոր բանաստեղծներին հրատարակելու իրենց վոստակներն ու ճոխացնելու մեր գրականութիւնը, ռուսական և այլ եւրոպական գրականութեանց հետևելու միջոց հայթհայթել, գիտութեանց և արուեստների նորութիւնների մասին ընթացիկ տեղեկութիւններ տալ, մեր հասարակական կեանքի այն երե-

ութիւններն, որոնք արձագանք են գտնում մամուլի մէջ քննադատել և ամեն առթիւ ճգնել հայկական գրական ասպարիզի վրայ երևացող երկերի մասին համարու հաշիւ տալ։

Այս ընդարձակ ծրագիրն իրագործելու համար խոստացել են մեզ իրենց աջակցութիւնը արդէն փորձուած գրական ոյժեր, որոնց օգնութեամբ յոյս ունինք գոհացումն տալ հասարակութեան պահանջին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԱՐԴԱՆ ԱՀՐՈՒՄԵԱՆ

ՎԷՊ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I.



Էր ի ականատես պառաւ, որ ապրեց մինչև տասնուիններորդ դարի վերջին տարին, պատմում էր, թէ այն օրը սոսկալի օր էր, երբ աշխարհ եկաւ Վարդան Ահրումեանը։ Երբև թէ երկինքը չնարունակ որոտում էր, երբեմն մռնչում ամեհի գազանի պէս, մթին ամպերը, ղեկը կորցրած նաւերի նման, տատանւում էին, չիմանալով ուր գնալ։ Բայց անձրև չէր գալիս, և չեկաւ ամբողջ օրը։ Երկիրը խաւարուել էր, կատաղի հողմից բարձրացող փոշին ոլոր-մոլոր պատյաններ էր գործում փողոցներում և քաղաքին տալիս վիթխարի աղօրիքի տեսք։

Աշխարհագրական մեծ քարտիզում այս քաղաքը,

հարկաւ, ունի իւր որոշ տեղն ու որոշ անունը։ Դոնէ գնդասեղի գլխիկից շատ փոքր մի կէտ ցոյց է տալիս, թէ նա գտնւում է Սև ու Կասպից ծովերի մէջտեղում, Կովկասեան լեռնաշղթայի ստորոտում։ Իւր արտաքին տեսքով, մանաւանդ ներքին կենցաղով, վարք ու բարքերով, անցեալ ու ներկայով, խելօք ու յիմար աւանդութիւններով ու սովորոյթներով նա այնքան նման է Կովկասի միւս քաղաքներին, որ հարկ չրկայ նրա իսկական անունն այստեղ յիշելու։ Թող, ուրեմն, նա կրի մի անգործ կատակաբանի հնարած կեղծանունը — Զիլզիլ։ Ես շատ շնորհակալ եմ այդ կատակարանից, որովհետև նա ինձ ազատում է ընթերցողի հետաքրքրութիւն ասուած անողոք հալածանքից, որ երբեմն խեղճ վիպասաններին ենթարկում է ինկվիզիցիայի։

Վարդան Ահրումեանի ծնունդը կատարւում էր Զիլզիլ քաղաքի միջին մասում, որ քրիստոնեաների թաղը բաժանում էր մահմեդականների թաղից, մի տափակ կտուրով միյարկանի քարաշէն տան մէջ։ Դրսի կողմից այս տունն ունէր միայն մի լուսամուտ, քօղաւորուած երկաթէ ամուր ցանցով, երկու խուլ պատուհաններ և մի ահագին դարբաս, որ միշտ փակ էր երկու հաստ նիգերով։ Չորս շարք երկաթէ գամեր, որոնց գլուխներն ունէին սունկերի մեծութիւն, այս դարբասին տալիս էին միջնադարեան շուք ու բանց ժանդով։ Մռայլութիւնը կրկնապատկւում էր լուսամտի երկաթէ ցանցի թանձր փոշով ու սարդի խիտ ոստայններով, որոնց մէջ հանդչում էին անթիւ ճանճեր։ Նայողն ակամայ կարծում էր, թէ ահա ահա տան մի ծայրից կերևայ պահապան զինուորը հրացանն ուսին, և լուսամտից կը նայէ թշուառ բանդարկեալի կանանչ-դեղնագոյն ուռած դէմքը։

Շատ քչերն էին մտնում այդ դարբասի մէջ բա-

ցուած փոքրիկ կամարաձև դռնով ներս, կանխապէս զարկելով նրա վրայ քաշ արած հաստ ու կեռ երկաթէ զարկոցը, որ նոյնպէս ժանգոտուել էր քիչ գործածելուց։ Եւ նրանք, որոնք մտնում էին, դուրս էին գալիս ոչ ուրախ դէմքով։

Այստեղ էր բնակւում Զիլզիլ քաղաքի յայտնի վաճառական Բաղդասարը, Պարսից վերջին խանի ախոռապետ Ահրումի թոռը։ Յայտնի՝ ոչ այնքան իւր հարստութիւնով կամ ծագումով, որքան անմատչելի, ժանդ նոյն իսկ մարդատեաց բնոյթով։ Այս մարդը խոյս էր տալիս հարևաններից, ատում էր ազգականներին (և իրաւունք ունէր, որովհետև շատերը ձրիակերներ էին), իսկ բարեկամներ գրեթէ չունէր և չէր էլ կամենում ունենալ։ Սափրիչ Պողոսը, որ կիրակի առաւօտները գնում էր Բաղդասարի երեսը թռաշելու, հաւատացնում էր, թէ անհիւրընկալ մարդը նոյն իսկ իւր «ուստային» ընդունում է տհաճութեամբ։ Աւագ քահանայ Տէր-Սարգիսը, որ միայն Զատիկ ու Հրաշնէք օրերն էր այցելում մռայլ տունը, պնդում էր, թէ նոյն իսկ այդ ուրախ օրերին Բաղդասարը չի կամենում հիւր ընդունել, բացի մի մարդուց — քաղաքի առաջին վաճառական Աբրահամ աղայից։

Ահա թէ ինչպիսի մարդ էր Բաղդասարը և ահա ինչու այն տագնապալի պահին, երբ նրա կինը գրտնւում էր ծանր երկունքի մէջ, ոչ ոք չըկար այդ մարդու մօտ։ Նա անցնում էր սենեակից սենեակ, հառաչում, ինքն իրան բարկանում և մերթ ընդ մերթ ականջ դնում դէպի ննջարան, ուսկից լսւում էին Գիւլիւմի ճչերն ու աղաղակները։ Գիւլիւմը ծնում էր թւով երրորդ զաւակն իւր ամուսնութեան ութերորդ տարում։ Առաջինը մեռել էր մի տարեկան հասակում։ Այս առիթով հասարակութեան մէջ պտտում էին զանազան շար չչուկներ Բաղդասարի հայրական

զգացման մասին։ Պատմում էին, օրինակ, թէ մի օր, սաստիկ բարկանալով կնոջ վրայ, այնքան ինքն իրան կորցնում է, որ բռնում է մի տարեկան աղջկանը թեերից և նրանով զարկում մօր գլխին։ Թըշուառ երեխան իսկոյն աւանդում է հոգին։ Եւ պատմողները Բաղդասարի այս վայրենութիւնը վերագրում էին նրա ատելութեանը դէպի իւր զաւակի սեռը։ Սակայն շատերը բողոքում էին այս մեղադրանքի դէմ. եթէ Բաղդասարի համար այդչափ ատելի է աղջիկ-զաւակը, ապա ինչու չի սպանում իւր միւս աղջկան, Մարիամին, որ այժմ արդէն հինգ տարեկան է։

Թէ որն էր ճիշդ այս կարծիքներից—դժուար էր ասել։ Մի բան միայն անհերքելի էր—Բաղդասարի ջերմ փափագը՝ ունենալ, վերջապէս, մի արու զաւակ։ Եթէ ծնուողն այս անգամ տղայ կըլի—վկայ է Աստուած—Բաղդասարը Գիւլիւմի համար կըգնի մի կտոր թանգագին թաւիշ։ Իսկ եթէ, Տէրը մի ապասցէ, աղջիկ կըծնի—կըթքի անամօթ կնոջ երեսին, այնուհետև հաց էլ չի տալ ուտելու արգանդը անիծուածին։

Յանկարծ մի երկարատև ճիչ ընդհատեց Բաղդասարի մտածմունքները։ Յետոյ լսուեց մի ուրիշ, բոլորովին տարբեր, ճիչ, իսկ և իսկ տպրակ զցած խոզի ճտի ճվճվոց։ Բաղդասարը հասկացաւ բանի էութիւնը, երեսին խաչակնքեց։ Նոյն րոպէին ներս մտաւ նրա զորանչը, մէկը Զիլգիլ քաղաքի այն պառաւներից, որոնց մէջքն այնքան վազաժամ կորանում է ասիական կեանքի բռնութեան ներքոյ։

—Աչքդ լոյս, փեսայ ջան, կնիկդ ազատուեց...

—Ազատուելը գլխիդ տուած, տղմ, թէ աղջիկ...

—Տղայ...

—Լաւ։ Դնա բանիդ...

Պառաւը չքացաւ։ Բաղդասարը շարունակեց

անցուդարձ անել պարսկական գորգերով ծածկուած յատակի վրայ այնպիսի անկանոն քայլերով, որ նրա երկայն դդակի սուր ծայրն օդի մէջ գծում էր ամենատարօրինակ զիգզագներ։ Վերջապէս, Աստուած լսեց նրա լռիկ աղօթքները, զաղտնի հառաչանքները և պարգևեց նրան արու ժառանգ։ Այժմ թող թշնամիների (Բաղդասարն ամբողջ մարդկութիւնը համարում էր իւր թշնամի) աչքը դուրս գայ։ Հէ, անիծուածներ, կարծում էիք Բաղդասարն անժառանգ կըմնայ ու նրա տուն ու տեղը քարուքանդ կըլինի մահից յետոյ...

Քառորդ ժամ անցած լուր եկաւ, թէ Բաղդասարը կարող է տեսնել իւր ժառանգին, եթէ կամենում է։ Նա անմիջապէս անցաւ ննջարան։ Այնտեղ նրա աչքին ներկայացաւ հետեւեալ տեսարանը։ — Սենեակի մի անկիւնում պառկած էր Գիւլիւմը, թոյլ, անգօր, գունատ որպէս դիակ, աչքերը փակ, սակայն մի երջանիկ ժպիտ սեղմուած շրթունքների վրայ։ Նրա գլխի աջ ու ձախ կողմերում նստած էին երկու քոյրերը, Զավահիրն ու Զառիկը, և լալիս էին... ուրախութիւնից։ Ուրախ էին, որ իրենց քոյրը ծնել էր տղայ և մի անգամ ընդ միշտ ազատուել Բաղդասարի դառն կշտամբանքներից։ Միւս անկիւնում, բաց յատակի վրայ, երևում էր մի կլոր փոս, նրան կից՝ տաք ջրով լի մի պղնձի տաշտ, որից բարձրացող շոգին սքօղել էր մի քայլ հեռու դրած երեխային, ինչպէս նօսր ամպը նորածին լուսնին։ Մանկաբարձուհու դերը կատարում էր Հերիքնազը։ Արիւնլուգի թեները մինչև արմունկները քաշած, նա պատրաստւում էր նորածնին լողացնելու։ Իսկ նորածինը բարձրացրել էր այնպիսի բողոք, որ, կարծես, ուզում էին նրան խորովել, և նա զգում էր այս։

Արդարև, այն գործողութիւնը, որ կատարեց

Հերիքնազը, հաւասար էր խորովելուն։ Նա դրեց մանկանը տաք ջրի մէջ և սկսեց նրա նուրբ մարմինը լուանալ այնպիսի ուժով, որ, կարծես, կեղտոտ լաթ էր լուանում։ Յետոյ հանեց նրան ջրից ու ըսկսեց վրէն աղ սփռել, առանձին ուշ դարձնելով կռնատակերի և այլ ծածուկ տեղերի վրայ։ Հարկաւ, նորածինը բարձրացրեց անասելի գոռոց։

— Ձայնդ փո՞րդ քաշիր, հարամզադա, — ասաց նրա տատը ուրախ կատակով, - քեզ աղ են անում, որ չրհոտես։

— Համ էլ որ կաշիդ պնդի, չրքրտնես, — աւելացրեց Ջավահիրը։

— Համ էլ որ անհամ մարդ չդառնաս, — լրացրեց Ջառիկը։

Անհանգիստ նորածնին, օրինաւոր աղելուց յետոյ, Հերիքնազը դրեց խանձարուրի մէջ, փաթաթեց ու սկսեց ձեռները ու ոտները մետաքսեայ լայն ժապաւէնով ամուր կապկապել։ Կարելի էր կարծել, որ փոստային փաթեթ էր պատրաստում ուրիշ քաղաք ուղարկելու համար։ Շատ տարիներ յետոյ երբ մանուկը ցոյց տուեց իւր արտակարգ ձիրքերը, պառաւներն ասում էին. «Կապողն է այնպէս կապել»։ Նոյն պառաւները հաւատացնում էին, թէ մանուկը, մօր արգանդից դուրս գալով, իսկոյն աղաղակել է. «ուզում եմ, ուզում եմ»։ Պնդում էին նաև, թէ ներկայ եղողները ջրից դուրս բերելիս նրա կրծքի վրայ նշմարել են մի կլոր դեղնագոյն բիծ, իսկ և իսկ նման ոսկի իմպերիալի։ Ոմանք հաւատացնում էին, թէ այդ բիծն այժմ էլ դրոշմուած է այնտեղ և թէ նա Վարդանի անզուգական բաղդի նշանն է։

Բաղդասարը մօտեցաւ իւր ժառանգին, նայեց նրա կապտակարմրագոյն դէմքին, ժպտաց, եթէ միայն կարող էր ժպտալ այդ դաժան դէմքը, և արտա-

սանեց հեռանալ փաղաքշական դարձուածը.

– Ձան լակոտը եփած ճղունդուրի է նման։

Ցետոյ արխալուղի դրպանից հանեց երկու արծաթէ դրամներ և դրեց նորածնի փորի վրայ։ Նրա օրինակին հետևեցին զոքանչն ու քենիները։ Հերիք-նազը մօտեցաւ, վերցրեց այդ դրամները և դրեց դրպանը իբրև վարձ իւր աշխատանքի։

—Դէհ, հիմայ հայդա, – դարձաւ Բաղդասարը զոքանչին ու քենիներին, - ազատուողն ազատուեց, դուք էլ ինձ ազատեցէք։ Հայդա, բարի ճանապարհ։ Ամմա չէ, սպասեցէք, չայ կըխմէք։ Ափսոս որ չըկայ։ Ճաքարս թրջուել է ծովում, չայի հունձը Չինու-Մաչինում չեն սկսել դեռ, սամօվարս գողացել են, ջուր չըկայ, ածուխ չկայ։ Հայդա, գլխիս տէրերը, հայդա, հաւաքեցէք փասսա-փուսսաներդ։ Մեծ օգնութիւն արիք կնկաս, տեսայ, շատ ու շատ շնորհակալ եմ... Հայդա, Ահրումանց Բաղդասարը աչքով աչք չունի կանանց տեսնելու... Ըը, ես ձեզ մարդ ասողին...

Հիւրերը, լաւ ճանաչելով տանտիրոջ կոպիտ բնոյթը, շտապեցին հեռանալ։

Այսպէս աշխարհ եկաւ Վարդան Ահրումեանը։ Նա, որ ապագայում այնպէս հռչակեց իւր անունը և դարձաւ կրեթէ համայն հայութեան նախանձի առարկաներից մէկը...

II.

Ուղիղ եօթերորդ օրը Բաղդասարը հրաւիրեց Տէր-Համբարձումին՝ նորածնին «հալալելու», այսինքն մկրտելու։ Կնքահայրը Աբրահամ աղա Դալբաշեանն էր, քաղաքի առաջին վաճառականը և ամենից յարգուած քաղաքացին։ Միակ մարդն ամբողջ Զիլգիլում, որի հետ Բաղդասարը քիչ թէ շատ բարեկա-

մական յարաբերութիւն ունէր, որին հաւատում էր անպայման, որից նոյն իսկ ակնածում էր։

Առաւօտը կնքահայրն իւր սանիկի ծնողներին ուղարկեց մի գեղեցիկ շաքար, մի ֆունտ թէյ և կէս փութ չորացրած միրգ։ Իսկ ինքը բարեհաճեց գնալ ուզղակի եկեղեցի, ուր արդէն սպասում էր Հերիքնազը նորածնին թևերի վրայ պահած։

Տէր-Համբարձումը մանկանը տուեց Վարդան անունը, խորապէս համոզուած, որ աւելի յարմար և պատուաւոր անուն չէր կարող գտնել Աբրահամ աղայի սանիկի և ամեն բանից զժգոհ Բաղդասարի զաւակի համար։ Թող սուրբ զօրավարի խաչն ու սուրը պաշտպանեն նրան։

Վարդանին տուն բերեցին հետևեալ հանդիսով։ —Առջևից գնում էր տիրացուն խաչվառը բարձր պահած, յետոյ Տէր-Համբարձումը շուրջառն ուսերին, խաչը ձեռին, երգելով հանդիսին պատշաճ երգ, այնուհետև ընթանում էր Աբրահամ աղան թևերի վրայ պահած իւր սանիկին և ձեռներին բռնած մի զոյգ վառ մոմեր զոյգը քառասուն կողէկանոց։ Նրանց հետևում էին. Հերիքնազը՝ կռնատակին բռնած մի կապոց և ժամհարը՝ մի ձեռում հանված բուրվառը, միւսում տէր հօր գաւազանն ու Աբրահամ աղայի փափաղը։ Աջ ու ձախ կողմերից հանդէսն ուղեկցում էին մի խումբ կիսամերկ ու ոտաբոբիկ մանուկներ, աշխատելով մի քայլ անգամ յետ չընկնել Աբրահամ աղայից և միշտ նայելով նրա երեսին այնպէս, որ, կարծես, նա անյայտ աշխարհից եկած մի տարօրինակ էակ լինէր։ Այն ինչ՝ Աբրահամ աղայի կռնեին այնքան յոգնել էին սանիկին պահելուց, որ պատրաստ էր նրան ձգել գետնին։ Իւր սրտի մաղձը նա թափում էր անկոչ թիկնապահների վրայ, գոռալով, ոտները գետնին զարկելով ու հայհոյելով նրանց

հանդիսին միանգամայն անվայել յիշողնեբով։ Նրա ձայնն ազդու էր, քայլուածքը զոռոգ, գէր դէմքի արտայայտութիւնը սպառնալի հաստ բեղերի և թաւ յոնքերի շնորհով։ Մանուկները մի վայրկեան սարսափելով, ցրւում էին դէս ու դէն և նորից կամաց կամաց մօտենում։ Վերջապէս, հանդէսը հասաւ տուն, մասյ զարբասը փակուեց փողոցային մանուկների քթի առջև։

Հիւրերի համար պատրաստել էին թերխաշ ձուեր, կարագ, մեղր, ալիւրի հալվա, սեր և քազցը թէյի ու ռոմի խառնուրդ — մի ըմպելիք, որ տեղական բարբառով կոչւում էր «փունջ»։ Բաղդասարը հագել էր իւր մետաքսեայ արխալուղը, մէջքին կապել ժապատագոյն մետաքսեայ լայն գոտին։ Ինչեր չէր երևակայում երջանիկ մարդն իւր եօթնօրեայ ժառանգի համար։ Վարդանը կըմեծանայ, կըդարնայ հօր օգնականն ու ընկերն առևտրի մէջ, ինքն անձամբ պիտի տարի կերթայ «Մակարիա» ապրանք բերելու, հազարներ կրվաստակի, տներ ու քարվանսարաններ կըշինի, կըդառնայ Զիլգիլ քաղաքի առաջին մարդը, ամենի նախանձի առարկան։ Այ, այն ժամանակ Բաղդասարը իւր թշնամիների աչքը կըհանի։

— Ա մարդ, ինչ ես քթիդ տակ փնթփնթում, — ասաց Գիւլիւմը, որ հագնուած նստած անկողնում, սպասում էր գաւակի վերադարձին, կանգ առ, ա մարդ, հէնց մի գլուխ չափչփում ես սենեակը։ Այդ ում ես հայհոյում.... բաա, ինչու ես ձեռքդ բարձրացնում, ում ես ուզում խփել։ Հիմա ծիծաղում ես. փիէ, վինչ է պատահել...

— Նա պիտի մեծ մարդ լինի, շատ մեծ, հասկանում ես...

— Ո՞վ...

—Եթէ մեծ մարդ չլլինի, ամենից առաջ ես կրթքեմ նրա երեսին։

—Ո՛ւմ երեսին, ինչ ես ասում։

Կորիր ձայնդ չուն չան...

Լսուեց Տէր-Համբարձումի դիլ ձայնը։ Բաղդասարը վազեց դէպի դռները։ Հարեան կտուրները լցուեցին հետաքրքիր կանանցով ու մանուկներով։ Սակայն բաղում կար մի ահագին թթենի, որի խիտ ճիւղերը խանգարում էին նրանց տեսնել ինչ է կատարւում «խոզ» Բաղդասարի տանը։

Հիւրերը նստեցին նախաճաշի։ Տէր-Համբարձումը կերաւ վեց հատ թերխաշ ձու, ասելով, թէ խիստ օգտակար է ձայնի համար։ Բայց թէ ինչ օգուտ ունէր երեք բաժակ փունջն և երկու բաժակ օղին, այս մասին լռեց, բարոք համարելով ոչնչացնել մեղրն ու կարագը։

Աբրահամ աղան երկու բաժակ փունջից յետոյ բաւական զուարթացաւ և խօսք բաց անելով առևտուրի անկման մասին, անցաւ քաղաքական դէպքերին. յայտնեց հեղինակաւոր եղանակով, թէ «ռուսը» մտադիր է լեզգիների հետ հաշիւները վերջացնել, ամեն բան պատրաստ է, այսօր-էգուց Ջամիլին կը բռնեն ու Դաղստանում նրա տեղը կը նշանակեն Արղութովին։ Յետոյ անցնելով ուրիշ նիւթերի, վերջապէս, հասաւ իւր սանիկի ապագային։

—Գիտես ինչ, Բաղդասար,—ասաց նա, դատարկելով փունջի երրորդ բաժակը,—այն օրից, որ ռուսը ոտ դրեց մեր կողմերը, ամեն ինչ փոխուեց։ Հին կարգերը տակն ու վրայ եղան, նոր կարգեր առաջ եկան։ Հիմայ ուսում է հարկաւոր։ Լսի՛ր, որդուդ անուսում չը թողնես հա՛, էս է ասում եմ, թէ չէ, շատ կը փոշիմանես։ Հիմիկուայ ժամանակը անուսում մարդը կէս մարդ է, այն էլ չէ—չեթվերտ մարդ է։

—Էհ, տեսնենք դալիբից ինչ դուրս կը գայ,—արտասանեց Բաղդասարը և սաստիկ փափագեց մի թունդ խօսք աւելացնել, բայց յիշելով, որ դիմացինը Աբրահամ աղան է, բեղերի մէկը ծալեց դրեց ատամների տակ։

—Ինչ էլ որ դուրս գայ Վարդանը, զակօնը պիտի իմանայ, որ զակօն չիմացաւ, հէշ...

—Ի հարկէ,—մէջ մտաւ Տէր-Համբարձումը,—առանց զակօնի ինչպէս կարելի է։—Աղա Աբրահամ,—փոխեց նա խօսքը, մի նենգամիտ հայեացք ձգելով կնքահօր ուղարկած շաքարի վրայ, որ ցցուել էր սենեակի անկիւնում իբրև տնտեսական ապահովութեան նշան,—այս տարի շաքարի մազանդան ոնց է։

—Շատ թունդ։

—Բա՜հ, բաս ասա ինձ նման անճարներն էլ չայ չը պիտի խմեն էլի։

Բաղդասարը հասկացաւ տէրհօր խորամանկ ակնարկը և մտքում ասաց. «վերկենաս, աներեսի միրուքը քանդես»։

Տէր հայրը մկրտուածին մաղթեց երկար կեանք, առողջութիւն, մեծ անուն, պատիւ, տոպրակներով ոսկի-արծաթ և այլ շատ ու շատ բարիքներ և «աջահամբոյրը» դնելով գրպանը, դուրս գնաց։ Նրան հետեւեց Աբրահամ աղան, կրկնելով.

—Անուսում չը թողնես հա, էս է ասում եմ։

Դիտողների ասելով Վարդանն ոչ մօրն էր նման, այդ բարի աչքերով, նիհար կնոջը, ոչ հօրը, այդ ամբակազմ, խոժոռ դէմքով, մեծ քթով, հաստ կարմիր պարանոցով, առողջ մարդուն։ Իբր թէ նա նման էր իւր մօրեղբայր Մարտիրոս Հախվերդեանին, որ երեք տարի էր բացակայ էր Զիլգիլ քաղաքից։ Ճիշդ էր այս թէ ոչ—դժուար էր ստուգել, բայց մի բան խիստ աչքի էր ընկնում—Վարդանի աչքերի գոյնը։

Իսկապէս այդ գոյն չէր, այլ դեղնի, կանաչի և կարմրի մի տարօրինակ, չը տեսնուած խառնուրդ։ Այդ աչքերն երբեմն նայում էին վերին աստիճանի սուր ու ազդու հայեացքով։ Թւում էր, որ մանուկը պատրաստ է արձակուել դիտողի վրայ և կտտաղած կատուի պէս ճանկռտել նրա երեսը։

Գիլիւմը, զոհունակ ժպիտն երեսին, ասում էր, թէ հազիւ աշխարհում մի մանուկ մօր կրծքից կաթն այնպիսի ագահութեամբ ծծած լինի, որպէս Վարդանը։ Արդարև, երբ նա կպչում էր մօր կրծքին, մի անյագ, սոսկալի տզրուկ էր, սոսկալի՝ մանաւանդ իւր խոշորութեամբ։ Բիբերն ուղղելով մօր աչքերին, ծծում էր նրա կաթը մինչև վերջին կաթիլ։ Իսկ երբ կաթը վերջանում էր, իւր ընդերքով կծռում էր կերակրիչ ծիծն այնպէս ամուր, որ մայրը ցաւից ազաղակում էր և շտապում կուրծքն ազատել նրա փոքրիկ, բայց խիստ ամուր ճանկերից։ Օհ, այդ ճանկերը շատ անդամ էին խրւում մայրական կրծքի մէջ և այնտեղ թողնում արիւնային հետքեր։ Մինչդեռ վագրի աչքերը շարունակ նայում էին մօր երեսին հանգիստ, անշարժ, սառցային հայեացքով։

Տասնումէկ ամսական հասակում Վարդանին ծրծից կտրեցին։ Մայրն ասաց.

—Փառք Աստուծոյ, հիմա մի քիչ ոյժի կը դամ։ Այս տղան կաթիս հետ արիւնս էլ ծծեց։

—Տայ Աստուած, այնպիսի տղայ լինի, որ աշխարհի արիւնը ծծի, ափէրիմ կասեմ,—արտասանեց Բաղդասարը։

—Մի ասա, ա մարդ, մի ասա, մարդիկ աչքով աչք չեն ունենայ նրան տեսնելու։

—Թքել եմ մարդկանց վրայ։ Ի՞նչ են նրանք, հա, ինչ։ Խլէգներ, հապա, հապա, խլէգներ։ Ով դոշաղ է, պիտի նրանց ջարդի իւր կրունկներով։

—Այ, այդպէս ես խօսում, որ բոլորը քեզ խոզ են անուանում է,—համարձակուեց նկատել Դիւլիմը զուցէ առաջին անգամ իւր կեանքում։

—Ձայնդ կտրիր, անիրես,—կատաղեց Բաղդասարը,—տեսնում եմ, այն օրից, որ ինձ համար տղայ ես ցցնել, լեզուդ բացուել է։ Խոզ եմ, բաս, ոչխար չեմ, որ ինձ խուզեն ուրիշները։ Թող իմ որդին էլ խոզ լինի, միայն ամենքը վախենան նրանից, ամենքը գլուխ խոնարհեցնեն նրա առաջ...

Երեք տարեկան հասակում Վարդանը կարմրագէմ, կայտառ մանուկ էր, հաստլիկ, հիւթալի շրթունքներով, որոնց միջից երևում էին նրա առաջին մանկական ատամները։ Նրան թոյլ էին տալիս տնից դուրս գալ իւր քրոջ հսկողութեամբ։ Մարիամը, հինգ տարով եղբօրից մեծ լինելով, կարող էր նրան հովանաւորել։ Նա շալակում էր Վարդանին, տանում փողոց և այնտեղ հետը խաղում, չը թողնելով նրան միանալ փողոցի երեխաներին, հօր պատուէրի համաձայն։ Սակայն, ինչպէս երևում էր, Վարդանը Բաղդասարի մարդատեաց բարքը չէր ժառանգել։ Ընդհակառակը, նա ձգտում էր խառնուել հասակակիցների խմբին և նրանց հետ խաղալ։ Նա սիրում էր խաղալիքներ. հէնց որ մի երեխայի ձեռքում տեսնում էր որ և է գրաւիչ բան, վազում էր ու աշխատում խլել նրանից։ Այն ինչ՝ ինքն երբէք ոչ մի բան չէր տալիս ուրիշներին թէկուզ մի քանի վայրկեանով։

Մի օր Բաղդասարը նրա համար շուկայից բերեց մի տափակ տուփ, որի փակ կափարիչի վրայ կար մի նեղ ծակ հինգ կոպէկանոցի երկայնութեամբ և տալով որդուն, ասաց.

—Ահը, ա՛ռ, ինչ-որ ձեռքդ փող ընկնի, գցիր այս «դախլի» մէջ։

Այդ օրից ինքը Բաղդասարը գրեթէ ամեն երե-

դոյ տուփի մէջ դցում էր որեէ պղնձի կամ արծաթի դրամ, այսպիսով որդու համար դրամագլուխ ժողովելով։

— Լսիր, որդի, — ասում էր նա ամեն անգամ, դրամը գրպանից հանելիս, — փող, փող, փող, ոչ բարեկամ, ոչ ազգական, ոչ եղբայր, ոչ քոյր, ոչ մարդկանց պատիւ, ոչ սէր, փող։ Նա է աշխարհի ոյժը, օրհնուի նրա կտրողի ձեռքը...։

Վարդանը լսում էր այս խօսքերը և կամաց կամաց ըմբռնում նրանց իմաստը։

III.

Շատ չանցած մանուկն իւր տուփը սիրեց աւելի քան բոլոր խաղալիքները, քան բոլոր շրջապատողներին, քան նոյն իսկ հարազատ ծնողներին։ Նա սեղմում էր իւր գանձը կրծքին այնպիսի գգուանքով, որպէս միայն սիրավառ մայրն իւր զաւակին։ Երկու ձեռներով տուփը մօտեցնում էր ականջին, շարժում էր, ականջ դնում մետաղի ախորժալուր հնչիւններին։

Այս պահերին նրա մանկական դէմքը զրկւում էր անմեղութիւնից, աչքերը վառւում էին ագահութեան անախորժ հրով։ Վայ, եթէ մէկն այդ միջոցներին փորձէր ձեռք տալ նրա գանձին, առնէտի պէս ծծվալով, կրյարձակուէր յանդուգն փորձողի վրայ, որպէս զի եղունգներով հանի նրա աչքերը։

Նայելով այդ հազիւ հազ թոթովող մանկանն իւր գանձը կրծքին սեղմած, կարելի էր կարծել, որ նա խանձարուրից արդէն ստացել է անխախտելի գաղափար դրամի մասին և գիտէ, որ նա է աշխարհի առանցքը, նրան և միմիայն նրան պիտի կպչել ա-

մուր, հոգու բոլոր ոյժերով, սրտի բոլոր սիրով, ձեռների բոլոր զօրութեամբ։

Բաղդասարը հոգու խորքում ուրախանում էր, տեսնելով սրդու այդ բնազդական սէրը դէպի դրամը այնչափ, որչափ կարող է միայն ուրախանալ միջակ արտիստը, տեսնելով իւր ժառանգի մէջ հանճարի նշոյլներ։ Նա խրախուսում էր որդու մէջ այդ սէրը և աւելի ու աւելի ամրացնում այնտեղ։ Երբեմն դրամը տալիս էր Վարդանին, որ նա ինքն իւր ձեռքով գցի տուփի մէջ։ Եւ մանուկը, մինչև գցելը, խաղում էր դրամի հետ, մի ձեռից միւսի մէջ քաց թողնելով, գլորելով յատակի վրայ, ինչպէս խաղում է կատուն մկան հետ մինչև նրան խեղդելը։

Չէ, այս տղան փուչ չի դուրս գայ,—ասում էր Բաղդասարը Դիւլիւմին սրդու ներկայութեամբ։

Երբ մանուկը վեց տարեկան դարձաւ, հայրը մի երեկոյ վճռեց տուփը բանալ։ Դանակի ծայրով զգոյշ պոկեց կափարիչը։ Յատակի վրայ թափուեցին արծաթի ու պղնձի դրամները։ Վարդանի աչքերը վառուեցին հոգեկան անսահման հաճոյքից, ինչպէս կարող էին վառուել մի ուրիշ մանկան աչքերը ըսքանչելի հրավառութիւն տեսնելիս։ Նա ակամայ աղաղակեց.

—Իմս ես, իմս են։

Եւ երկու ձեռներով արձակուեց դրամների վրայ, ինչպէս գիշակերը որսի վրայ։ Մի քանի դրամներ գլորուել էին սենեակի անկիւնը։ Մարիամը շտապեց նրանց գտնել և փորձեց գրպանը դնել։ Սակայն Վարդանը բռնեց նրա ձեռը և այնպէս ամուր կծեց, որ խեղճ աղջիկը ցաւից ճչաց, արտասուեց, բաց թողնելով իւր աւարը։

Բաղդասարը համբեց փողերը, դուրս եկաւ—երեսուն ինները բուրլի։

—Էէ,—ասաց նա,—հիմա մտածենք, ինչ պիտի անենք այս փողերը։ Արի, Վարդան, տուր ինձ տոկոսով, մանէթին տասը կոպէկ տարեկան։ Հադու չգիտես ինչ ասել է տոկոս։ Լսիր. այս տարի դու ինձ տալիս ես, ասենք, տասը մանէթ։

Եւ նա, մանրամասն բացագրելով տոկոսի նշանակութիւնը, աւելացրեց.

—Հասկացար...

—Հասկացայ,—պատասխանեց խելօք մանուկը,—ես իմ փողերը տոկոսով չեմ տալ։ Թափիր դախըլի մէջ՝ տուր ինձ։

Բաղդասարը տուփի կափարիչը ափացրեց և պատուիրեց Վարդանին շարունակել դրսում ժողովել։

Այժմ Վարդանը վազվզում էր փողոցներում, բազերում ու կտուրներում։ Մարիամն այլ ևս չէր հրկում նրան և չէր էլ կարող. արդէն նա տասնումէկ տարեկան աղջիկ էր, տեղական սովորութեամբ պիտի փակուէր տանը։

Բաղդասարը վարձեց մի լեզգի ծառայ, որ պիտի հսկէր Վարդանին։ Օրուայ մեծ մասը մանուկն անց էր կացնում այդ լեռնականի հետ, խոհանոցում, թոնրատանը, բազում, փողոցներում։ Օսմանը—այսպէս էր լեզգու անունը—հասարակ փայտից նրա համար շինում էր խաղալիքներ և երբեմն պատմում նրան կանազան դիպուածներ Դաղստանի կեանքից։ Վարդանը նստում էր նրա ուսերի վրայ և պահանջում, որ իրեն զբօսեցնի։ Նա ոտներով անինայ հարուածում էր Օսմանի կողերին, փորին, փոքրիկ մտրակով զարկում ուսերին, կրծքին, երբեմն երեսին, երևակայելով, որ ձիու վրայ է նստած։ Հպարտ լեռնականը, ներքուստ վրդովուելով, ժպիտն երեսին յուռ կրում էր այդ վիրաւորանքները քրիստոնեայի դաւակից։ Եթէ չրկրէր, պիտի զրկուէր պաշտօնից.

այսինքն՝ ամսական երեք բուբլուց և մի փոքր հացից։ Նա ինքն էլ հայր էր, ունէր Վարդանի հասակի մի տղայ և երկու աղջիկ, որոնց թողել էր Դաղստանի լեռներում իւր կնոջ հետ։ Ցիշում էր զաւակներին և հառաչելով շփում կոշտացած ճակատը, որ իւր ծննդավայրի ժայռերի խորշոմներն ունէր։ Երբեմն, յոգնելով փոքրիկ բռնակալին ուսերի վրայ գբօսեցնելուց, բաց էր թողնում նրան հարեան մանուկների շրջանը և ինքը հեռուից հետևում նրան։ Վարդանը մեծ մասամբ ընկերանում էր այնպիսի մանուկների հետ, որոնք հեզ էին և սիրով կատարում էին նրա կամքը կամ թոյլ էին տալիս իրանց հարստահարել։ Նրա ոսկէզօծ քամարը, սատինի արխալուղը, մանաւանդ «ապօյկա» կօշիկները փայլուն անկարուրդներով ընկերներին ներշնչում էին յարգանքի զգացում, միևնոյն ժամանակ, շարժելով նրանց նախանձը։ Նա շատ անգամ անպատիժ խլում էր սրա ու նրա ձեռքից մի որևէ գնդակ, թռուցիկ կամ վէգ, հայհոյում էր կամ ծեծում, իսկ երբ յանդգնում էին իւր վրայ ձեռք բարձրացնել, աղաղակելով վազում էր Օսմանի մօտ։ Եւ եթէ լեզվի ծառան բարեսիրտ չլինէր, կատարէր փոքրիկ բռնակալի հրամանները, բոլոր մանուկները վաղուց հաշմանդամ կըդառնային. այնքան խիստ էր Վարդանը։ Սակայն պատահում էր, որ նրան պաշարում էր վեհանձնութեան զգացումը։ Այսպիսի հազուադէպ բոպէներին ընկերներին տալիս էր ծտի կտուցի չափ հալվա, մի քանի մսխալ աղանձ կամ մի խնձոր տասը կտորների բաժանած։

Նա միշտ գրպանում փող էր պահում ու պարծանքով ցոյց տալիս ընկերներին։

Ամառուայ սկզբին Օսմանը, շորերին չդիմանալով, գնաց իւր հայրենիքը աշնանը վերադառնալու պայմանով։ Վարդանը մնաց անպաշտպան, կրճատեց

իւր յարաբերութիւնները ընկերների հետ, ամփոփուեց ինքն իւր մէջ և աւելի սիրեց իւր տուփը։ Այժմ մտածում էր միայն իւր գանձն աւելացնելու մասին։ Ճշմարիտ է, հայրը գրեթէ ամեն երեկոյ գրցում էր տուփի մէջ որ և է դրամ, բայց տարիներ պիտի անցնէին մինչև նրա լեցուելը։ Եւ ահա Վարդանը գտաւ փող վաստակելու միջոց և սկսեց գործադրել ծնողներից թագուն։

Մի երեկոյ Բաղդասարը տանն ինչ-որ հաշիւներ էր անում, իսկ Գիւլիւմը Վարդանի համար մետաքսեայ շապիկ էր կարում, երբ միւս սենեակից վազեց Մարիամը և ջնջաց։

—Գնացէք, տեսէք Վարդանն ինչ է անում...

Մարդ ու կին մօտեցան դռներին։ Նրանց աչքերին ներկայացաւ հետևեալ տեսարանը. միւս սենեակի անկիւնում Վարդանը, վառ մոմը առջևը դրած, համարում էր մի բուռն արծաթէ ու պղնձէ դրամներ։ Նա այնքան էր խորասուզուած իւր զբաղմունքի մէջ, որ ծնողների մերձաւորութիւնը չըզգաց։ Նրա մանկական ճակատը խորշոմել էր, շրթունքները սեղմուել էին, ձեռները յուզումից դողում էին։ Համրելով բոլոր դրամները, ձեռը դրեց ճակատին, նայեց առաստաղին—ինչ հիանալի նիւթ նկարչի համար։ Յետոյ նորից սկսեց համրել, նորից ձեռը դրեց ճակատին։ Պարզ էր, որ հաշիւն ուղիղ չէր գալիս։ Եւ որքան աւելի էր համրում փողն, այնքան ձեռների դողոցն աւելանում էր, ականջները ու այտերը կարմրում էին, շունչը սաստկանում։ Այս եօթուլթ տարեկան մանուկը սենեակի լռութեան մէջ, ազատ լուսոյ առջև, յիշեցնում էր այն աւանդական ագահին, որ մեն-մենակ խուլ գիշերները ստուգում է իւր գանձը, հրճւում ոսկու հնչիւնով, լուռ խօսում նրա հետ, որպէս մենասէր փիլիսոփան իւր մտքերի հետ։

—Հրաշք է, տղայ չէ,—անգիտակցաբար շշնջաց Բաղդասարը, կնոջ թևից քաշելով։

Նա կամացուկ մոտեցաւ որդուն։ Վարդանը գլուխը բարձրացրեց և, իսկոյն երկու ձեռներով փողերը թագցնելով, գոչեց.

—Չեմ տայ, չեմ տայ, ոչ ոքի չեմ տայ...

Նրա ձայնը, աչքերը, ամբողջ կերպարանքն արտայայտում էին եօթանասուն տարեկան ժլատի ոսկեմոլութիւն։

—Ո՞րտեղից են այդ փողերը,—հարցրեց հայրը։

—Չեմ ասի, կրծեծես ինձ։

—Դախըլից ես հանել։

—Չէ, Աստուած վկայ, չէ, ես եմ հաւաքել, իմ աշխատած փողերն են։

—Քո աշխատած։ Դու ինչպէս ես փող աշխատում։ Ասա, թէ չէ—կրծեծեմ...

Վարդանը ստիպուեց գաղտնիքը բացադրել։ Բանն այն է, որ մայրը գրեթէ ամեն օր նրան ուղարկում է մերձակայ խանութները՝ գնելու զանազան մանրմունր պարագաներ տան համար. սապոն, մոմ, լեղակ, լուցկի, մածոն և այլն։ Վարդանն ամեն անգամ աշխատում է մի մի, երկու-երկու կոպէկ յետ դցել իւր համար, և ահա գոյացել է այս դումարը։

—Խելօք տղայ, խելօք տղայ,—գոչեց Բաղդասարը հիացած։

—Ուրեմն, գողութիւն ես արել,—հարցրեց Գիւլիւմը, որ միանգամայն համաձայն չէր ամուսնու հայեացքին որդու արարքի վերաբերմամբ։

—Իսկի էլ գողութիւն չէ, առուտուր է,—պատասխանեց Վարդանն ամենալուրջ եղանակով,—բախկալից առել եմ էժան, քեզ ծախել եմ թանգ։ Առուտուրականներն էլ այսպէս են փող աշխատում։

— Կերա՞ր, — գոչեց Բաղդասարը, միանգամայն յափշտակուելով որդու խելացի պատասխանով։

Եւ, համբուրելով նրա ճակատը, կրկնեց.

— Խելո՞ք տղայ, խելո՞ք տղայ...

IV.

Առաջիկայ աշնան սկզբին Բաղդասարն որոշեց Վարդանին տալ ուսումնարան։ Մի առաւօտ մանկանը զարթեցրին կանուխ։ Մայրն ամրապնդեց նրա որովայնը մի զոյգ ձուով, կարագ ու մեղրով և, օրհնելով, յանձնեց հօրը։

Ճանապարհին Բաղդասարն ամբողջ ժամանակ խրատում էր Վարդանին, բացադրելով ուսման նշանակութիւնը։

— Տես, որդի, — ճառաբանում էր նա, — աշխարհն այ, օրինակ, այս չինարի պէս մի ծառ է։ Մարդիկ որդներ են, նստած, ուտում են ծառը։ Որդ կայ, որ ղոչաղ է. նա համ շատ շատ է ուտում համ շուտ շուտ։ Որդ կայ, որ տեղից չը գիտէ շարժուել. նա քաղծից սատկում է։ Ուտելու համար ատամներ են հարկաւոր։ Մարդուս խելքը նրա ատամներն են։ Ուսումը որ կայ մի սրոց է, իմացիր հա՜, ատամների սրոց։ Եթէ անուսում խելօքն արժէ հինգ յիմարի, ուսում առած խելօքը տասն անուսում խելօքի արժէ։ Ուսում առած մարդուն խաբելը շատ դժուար է. նա ինքն ուրիշներին կը խաբէ։ Հիմայ քեզ տանում եմ ուսումնարան, փոզ եմ ծախսելու հա՜, հեշտ չիմանաս։ Աֆարիմ չեմ ասի, եթէ երկու-երեք տարուց յետոյ Կոնսիստորի սեկրետար Ղահրաման-բէկի պէս ռուսերէն չը կոտրատես ու նրա նման խնդիրներ չը գրես։ Ասենք, Ղահրամանիդ էլ հէրը գոռբէգոռ լինի, բ՚նչ մարդ է, այն օրը չիթ առնելիս տասներեք կո-

պէկս կերաւ, բայց ասում եմ էլի, մարդ ամեն բան պէտք է իմանայ։ Հէնց որ ուսումդ վերջացրիր, քեզ Աբրահամ աղայի եղբօր Իսրայէլի հետ ուղարկելու եմ Մակարիա, որ ապրանք առնես հաա, լաւ իմացիր։ Այ, այն ժամանակ ջուխտ ձեռներովս կը հանեմ թըշնամիներիս աչքը։ Ըրը, ես նրանց հօր, պապերի, եօթը պորտի գերեզմանները տակն ու վրայ անեմ...

Վարդանը գլուխը քաշ լսում էր հօր խօսքերը, ամուր բռնած նրա ձեռը և մի քայլին երկուսն անելով, հազիւ կարողանում էր հաւասար ընթանալ նրա հետ։ Մերթ ընդ մերթ Բաղդասարը, այս կամ այն խրատը որդու մտքում ամուր դրոշմելու համար, այնպէս պինդ էր սեղմում նրա ձեռը, որ մանուկը քիչ էր մնում ցաւից գոռայ։

Ուսումնարանում, — շարունակեց հայրը, — ոչ ոքի հետ չը կռուես, բայց ոչ ոքի հետ էլ չընկերանաս։ Գլուխդ քաշ բանիդ կաց։ Ընկերներից օգուտ չը կայ, մնաս կարող է լինել, ես առաւել աղքատ ընկերներից. մէկը գրիչ կուզէ, միւսը թուղթ, թանաք, էլ չը գիտեմ ինչ։ Ասեղ չը տաս, որ աչքները կոխեն, իմանում ես, ասեղ չը տաս չան որդիներին։ Դէհ, հասանք ուսումնարան, տեսնենք վերջդ ինչ է լինելու...

Ճիշդ այս պահին Վարդանն երկու անգամ փռըշտաց։ Որովհետև գիտէր, որ զոյգ փռշտոցը խէր է, իսկ կէնտը շատ, շրթունքները սեղմեց, քթի ծակերը մատներով փակեց և երրորդ փռշտոցը զսպեց։

- Փառք Աստծու, — գոհ եղաւ Բաղդասարը։

Ուսումնարանը գտնւում էր քաղաքի վերին կողմում, ռուսաց թաղում։ Այդ մի հասարակ մէկ ու կէս յարկանի շինութիւն էր, դրսից պատերը կաւով սպիտակացրած։ Հարևան տներից նա տարբերւում էր նրանով միայն, որ լուսամուտները երկաթէ ցանցեր

չունէին, երևի, այն պատճառով, որ ներսում գողերի համար հրապուրիչ բան չը կար։

Դռների առջև Բաղդասարն իւր գոյնզգոյն մեծ թաշկինակով սրբեց Վարդանի քիթը, որի ծայրն, ի դէպս ասած, այն ժամանակ հիւթաւորուելու վատ սովորութիւնն ունէր։ Հայը ու որդի մտան մի ընդարձակ բաց, որի երկու կողմերը ներկայացնում էին բաց տարածութիւն տախտակեայ պարսպով շրջապատուած։ Դասերը դեռ չէին սկսուել, աշակերտները վազվզում էին բացում։ Տեսչի խոհանոցի առջև զբօսնում էին երեք-չորս զոյգ սագեր ու երկու հնդկահաւ, գլուխները հպարտ հպարտ վեր ցցած ինչպէս գաւառական չինովնիկներ։ Նրանց ոտները թաց գետնի վրայ թողնում էին եռանկիւնի հետքեր, կարծես, բլիթ էին նախշում։ Մի քանի բաղեր զուարճանում էին գետնի մէջ փորած աւազանում, կտցահարելով կեղտոտ ջրի մակերևոյթում լողացող փլթած վարունգն ու սեխի կճեպները։ Տեսնելով անծանօթ դէմքեր, մի հնդկահաւ, կտուցը ցցած, վազեց առաջ, կարծես, հաշիւ պահանջելու։ Բաղդասարը չուխայի երկայն թևերով փախցրեց անհիւրընկալ թռչնին, մրտքում մի ազդու յիշոց ուղղելով նրա տիրոջ հասցէին։

Աշակերտներն իսկոյն շրջապատեցին նորեկին։ Այստեղ կային մի քանի ազգերի, կրօնների ու աղանդների մանուկներ։ Իւրաքանչիւրը հագնուած էր իւր ծնողների քէֆով ու նրանց կարողութեան համեմատ, ուստի խումբը ներկայացնում էր տարազների մի նկարչական խառնուրդ։

—Մեարթին Բաղդանըշը չայ է խմում, —ասաց մի թուրք աշակերտ։

—Քեզ հարցնող չը կայ, —բարկացաւ Բաղդասարը և, չուխայի թևերը ուսերին գցելով, նստեց ուսումնարանի առջև դրած նստարանի վրայ։

Աշակերտները նրա առջև կազմեցին կիսաշրջան և սկսեցին ոտից մինչև գլուխ դիտել Վարդանին։ Ցանկարծ Բաղդասարը, գլուխը ցած թեքելով, շրջանի արանքով նայեց հեռու կանգնած մի մանկան։

—Պզտիկ, ա պզտիկ, - ասաց,—մին առաջ եկ, ռեխդ տեսնեմ։

Մանուկը մոտեցաւ, արխալուղի թևը ատամներով կոծոտելով։

—Աղա, դու փալան կարող Օհանի թոռը չես, երկաթ ծախող Ասատուրի տղան։

— Այո,—պատասխանեց մանուկը ամաչելով։

—Աղա, մէջքիդ արծաթի քամար ես կապել։ Փահ, փահ, ախար հայրդ սովդագար է, բրը, ես նրա հօր ոսկորները... Դու էլ ես ուսում առնում... Փահ փահ, աշիարհը լուսաւորուեց, պրծաւ։ Անունդ ինչ է։

—Լևոն...

— Օհո, բաս ասա Լևոն թագաւորի քթի ծակիցն ես ընկել, բրը ես քո պապի փալանը...

Աշակերտները հրա հրա ծիծաղեցին միահամուռ։

Վերջապէս, ուսումնարանի պահապան Անդրէասը ազդարարեց, թէ Մարտին Բաղդանիչը գալիս է։ Մի քանի վայրկեանում բաղը դատարկուեց, աշակերտները վազեցին դասարանները։ Բաղդասարը ոտքի կանգնեց, չուխայի թևերը ցած գցելով ի նշան յարգանքի և խոնարհութեան։

Երկդասեան ուսումնարանի տեսուչ Մարտին Բաղդանիչը միջին հասակից քիչ բարձր մի մարդ էր, երեսը չեչոտ, կոտած բեղերով ու կարճ միրուքով, որ ծնօտի վրայ երեք մատնաչափ սափրած էր։ Նրա աջ այտի վրայ կար ինչ-որ բուժուած վէրքի հետք հինգ կոպէկանոցի մեծութեամբ, որ նրա դէմքին տալիս էր դաժանութիւն։ Իրօք դժուար էր որոշել այդ մարդու տարիքը, որովհետև թէն միրուքը ալե-

խառն էր, բայց գլխի մազերը տակաւին սև էին, թէև ատամները փթած ու սևացած էին, բայց քայլուածքն ունէր պատանեկական աշխոյժ, ձայնը երիտասարդական հնչիւն, իսկ կուտած բեղերը թամբաքուի գոյն ունէին, երևի, այն պատճառով, որ ծխախոտը ծխում էր առանց մունդշտուկի։ Այս վերջին հանգամանքն ապացուցում էր նաև նրա աջ ձեռի միջին մատի ու ցուցամատի դեղնութիւնով։

Նա մտաւ դասարան գլուխն առաջ թեքած. կարելի էր կարծել, որ մի աներևոյթ ձեռ կմշտում է նրա պարանոցը։

— Վզին գիւմրալ ունի,—շշնջաց Վարդանը հօր ականջին։

— Սուս, — սաստեց Բաղդասարը,—գլուխ տուր. հարամզադա։

Հայը ու որդի անմիջապէս հետեցին տեսչին։ Սկզբում Բաղդասարը մի քիչ շփոթուեց նրա դեղին կոճակներից, բայց, յիշելով, որ երկու տարի առաջ նրան ծախել է մունդիրի համար երեք արշին կապոյտ մահուդ, հազեց ու մտքում ասաց. «քո հէրն էլ անիծեմ»։

— Բարով ես եկել, — ասաց տեսուչը, ինչ կըհրամայես։ Որդուդ ես բերել։ Հա, լաւ, շատ լաւ, ուսում է կըտանք էլի։ Սուս, դարշելիներ։ Խոնարհ տղայի է նման։ Իսկի գրել-կարդալ չըգիտէ։ Ոչինչ, շուտով կըսովորեցնենք...

Մինչ բանակցութիւնը շարունակւում էր, աշակերտները սկսեցին թաղուն-թաղուն չարութիւններ անել։ Նրանք զանազան միմոսութիւններով աշխատում էին միմեանց ծիծաղեցնել, բօթում էին իրարու, խտղտում, թղթի գնդակներ արձակում միմեանց վրայ։ Առանձնապէս աչքի էր ընկնում թուխ դէմքով ու ծուռ բթով մի աշակերտ։ Նա այնքան ճարպիկ

էր, որ ձեռնասուն կապկի պէս կրկզում էր սրա ու նրա ուսերին կամ գլուխը դնում նստարանի վրայ, ոտները ցցում օդի մէջ, հէնց որ տեսուչն երեսը մի կողմ էր դարձնում։

Բանակցութիւնը Վարդանի մասին վաղուց վերջացած կըլինէր, եթէ Մարտին Բաղդանիչը բարեկամաբար չըհետաքրքրուէր Բաղդասարի մասնաւոր գործերով։ Այս էլ վերջացնելով, նա սկսեց գանգատուել պարանոցի խոցից։

—Աղբէր, մի շաբաթ է քունս կտրուել է, անիրաւը ասեղի պէս է ծակում վիզս։ Սուս, գարշելիներ։ Գլուխը վերև բարձրացնել չեմ կարողանում։

—Ես ճարը գիտեմ,—ասաց Բաղդասարը,—վերցրու մի գլուխ սոխ, միջից կէս արա, վրէն դիր այծի փիր, կրակի վրայ լաւ սիրուն խորովիր, յետոյ տաք տաք դիր տիմբալիդ վրայ ու կապիր։ Համ ցաւը կրկտրի, համ էլ չիրքը կրքաշէ...

Այդ պահին բիթրծուռ աշակերտը ինչ-որ բարդ սարտօմօրտայլ էր ուզում անել։ Հաւասարակշռութիւնը կորցրեց ու նստարանից ընկաւ յատակը, բարձրացնելով ահագին դղրդոց ու թանձր փոշի։

Աշակերտները միաձայն բրբջացին։

—Այդ ով էր, -գոչեց Մարտին Բաղդանիչը,—էհէ, էլի դու, գարշելիներից գարշելի Մկիչ Չախմախչեան։ Դէհ, առաջ եկ, տեսնեմ, առաջ եկ, ասում եմ, իժ օձի զաւակ...

Քիթրծուռ Մկիչը, կրակոտ աչքերը տեսչի երեսին յառած, անշարժ էր։ Գիտէր ինչու համար են իրան կանչում։ Մարտին Բաղդանիչը, մի ձեռը վրդին դրած, միւսով քանոնը բարձրացրած, մօտեցաւ նրան։ Մկիչը փախաւ։ Տեսուչը վազեց նրա ետևից, վիզը թեք պահած։ Մանուկը բարձրացաւ նստարանների վրայ։ Տեսուչը աջողեց բռնել նրա արխալուղի

փեշը։ Սակայն Մկիչը դուրս սկսուեց, արխալուղը թողնելով տեսչի ձեռքում, և տկլոր թռաւ լուսամտով փողոց։

—Տղերք, բռնեցէք այդ գարշելուն,—հրամայեց տեսուչը։

Մի խումբ աշակերտներ, մեծ մասամբ մալականներ, վազեցին նրա հրամանը կատարելու։

—Այ տեսնում էք, պարոն Բաղդասար, ինչ սատանաներ են, գանգատուեց Մարտին Բաղդանիչը, վզի ցաւից չըկարողանալով իւր հայեացքը Բաղդասարի գօտիից աւելի վերև բարձրացնել,—հոգիս են հանում գարշելիները, հոգիս։ Մեր պահապան Անդրէասի որդին է, երեք անգամ վռնդել եմ, էլի ընդունել։ Ի՞նչ անեմ, հայրը խեղճ մարդ է, գալիս է, ոտներիս ընկնում, աղաչում, լաց լինում։ Գազանին հազար կրթիր, հէչ մարդ կըդառնայ։ Ինչպէս հրամայեցէք։ Սոխը խորովել, այծի փիհ, պինդ կապել։ Շնորհակալ եմ։ Սուս, անիրաւագոյն աւանակներ...

Ներս բերեցին Մկիչին մի կողմից աշակերտները բռնած, միւս կողմից Անդրէասը։

—Մարտին Բաղդանիչ,—ասաց հայրը,—դրա Աստուածը ուզգին է, տուր որ կիտաս փափուկ տեղերին, հոգիս բողաղս բերաւ։

Այն ժամանակները արքունական դպրոցներում ծեծն արգելուած չէր, և Մարտին Բաղդանիչն ամենայն հաճոյքով գործադրում էր իւր իրաւունքը, հաստատ համոզուած, որ ծեծից աւելի զօրեղ կրթութեան միջոց չըկայ։ Նա Մկիչի ձեռների ափերին տուեց տասներկու հարուած, արտասանելով. «դարշելի, մէկ, դարշելի, երկու, դարշելի, երեք, աւանակ, չորս, շան ձագ, հինգ և այլն...

Մանուկը գոռալով գնաց իւր տեղը, ձեռները ծոցը դրած։ Սակայն երկու բոպէ չանցած, արխա-

լուղը հագաւ և, դեռ աչքերի արտասուքը չըցամքած, սկսեց ծամածռութիւններ անել տեսչի, Բաղդասարի նոյն իսկ իւր հօր ետևից։

Ծեծի տեսարանը Վարդանի վրայ խոր տպաւորութիւն գործեց։ Նա մտքում երդուեց երբէք տեսչի բարկութիւնն իւր դէմ չըգրգռել։

Դ.

Առաջին տարի Վարդանն ուսման մէջ ցոյց տըւեց բաւական շնորք։ Սովորեց կարդալ ռուսերէն ու հայերէն, նաև մի փոքր գրել։ Նա ամեն երեկոյ դասերը կրկնում էր հօր մօտ և արժանանում նրա գովասանքին։ Սակայն յանկարծ նրա բանականութիւնը կանգ առաւ, որպէս կամակոր էշ գետի մէջտեղում և, կարծես, այլ ևս չէր ուզում առաջ երթալ։ Բայց և այնպէս մանուկն իրենէ աշխատասէր էր. առնելով ձեռը ամենակարող համբերութեան մտրակը, սկսեց առաջ քշել բանականութիւնը, անխնայ հարուածելով նրան։ Եւ այն, ինչ-որ ընդունակ աշակերտները իւրացնում էին առանց դժուարութեան, Վարդանը ձեռք էր բերում քրտինքով, բառի բուն մտքով։ Միայն մի առարկայում նա ընդունակութիւն ցոյց տուեց — թուաբանութեան մէջ։ Արդէն տանը, անդադար համրելով իւր փողերը, նա ընտելացել էր թուաբանութեան չորս կանոններին։

Վարդանի դասարանական հարևանը ձախ կողմից զինագործ Կարապետի որդի Մինասն էր։ Ձէկ մազերով, հեզ, նիհար, հիւանդոտ դէմքով մի բարեսիրտ և ընդունակ մանուկ։ Հագնում էր նա շատ աղքատ, կապոյտ կտաւից կարած արխալուղը կրծքի կողմում կարկատած էր մի քանի տեղ, իսկ նոյն գոյնի վարտիկն այնքան կարճ էր, որ ասուեայ կոշտ

գուլպաների վերևից երևում էին նրա նիհարիկ սրունգ-ները։ Նա մէջքին կապում էր հաստ ասուեայ գոտի. մի՛ակ բանը, որ պաշտպանում էր նրան ցրտից։ Սակայն իւր ցնցոտիների մէջ նա միշտ մաքուր էր մաքմնով աւելի քան ով և է աշակերտներից։ Նրան անխտիր սիրում էին բոլոր աշակերտները, որովհետև երբէք ոչ ոքի անախորժութիւն չէր պատճառում, ոչ ոքի չէր նախանձում և ոչ ոքի չէր մերժում իւր օգնութիւնը, եթէ կարող էր մի որ և է բանով օգտակար լինել։ Իւր համեստ նախաճաշը, որ մեծ մասամբ բաղկանում էր հաց ու պանրից, երբէք մենակ չէր ուտում։ Հէնց առաջին օրը նա սկսեց օգնել Վարդանին դասերի մէջ։ Ահա ինչու Վարդանը ընկերացաւ նրա հետ և սիրեց նրան, ի հարկէ, այնչափ, որչափ ընդունակ էր սիրելու։

Մինասի կատարեալ հակապատկերն էր ներկայացնում Վարդանի աջ կողմի հարևանը։ Դա դդակ կարող Ալիանասի որդի Մարտիրոսն էր։ Նրա հակակրելի բերանը, նեղ ճակատի տակից միշտ գողնովի նայող աչքերը, ագռաւի կտուցի նման սուր քիթը արտայայտում էին քսու, նախանձոտ և կրքոտ հոգի։ Նրա ամենասիրելի զուարճութիւնն էր՝ միշտ կմշտել իւր ընկերներին միշտ դաւաճանել նրանց, միշտ նրանց մանկական չարութիւնների մասին զեկուցանել ուսուցիչներին կամ տեսչին։ Հէնց առաջին օրը նա մի երկու անգամ Վարդանին կմշտեց, կարծես, փորձելու համար, արդեօք, նորեկի մարմինը իւր հարևանութեանը դիմանալու չափ ամուր է։ Վարդանն ոչինչ չասաց, բայց մտքում որոշեց զգոյշ լինել նրա հետ։

Այժմ Բաղդասարը հրամայել էր որդուն ամեն օր ճաշից յետոյ դալ խանութ։ Նա ուզում էր Վարդանին փոքր առ փոքր ծանօթացնել առևտրական գործերին։

Խանութը գտնում էր Զիլգիլ քաղաքի ստորին մասում, մի ծածկուած քարվանսարայում։ Այդ մի ոչ այնքան մեծ սենեակ էր երկու մասերի բաժանուած։ Ետևի մասը բռնուած էր դեռ չբացուած ապրանքների հակերով, առջևի մասը ներկայացնում էր բուն խանութը։ Այստեղ ապրանքը դարսուած էր յատակի վրայ, պատերի տակ, որովհետև այն երանելի ժամանակները Զիլգիլ քաղաքում այժմեան մաղազինների դարանների մասին գաղափար չունէին։ Բաղդասարը սովորաբար նստում էր խանութի մէջ տեղում, մինդարի վրայ կամ պարսկի ձևով չոքում, առջևն ունենալով պարսկական կէս գազը ու մի կեղտոտ համարակալ, որ տեղ տեղ յիշեցնում էր պառաւի ատամներ իւր հատիկների պակասով։ Վարդանը նստում էր դռների առջև, սարդուի վրայ։ Մուշտարին գալիս իսկոյն ոտքի էր կանգնում, ձեռները դնում կրծքին ու սպասում հօր հրամաններին։ Նա օգնում էր Բաղդասարին չթի կտորները բաց անելում ու ծալելում, ծախած ապրանքը փաթաթելում։ Նա աւելում էր խանութը, մուշտարիներին խմելու ջուր էր տալիս, կրակ էր դնում նրանց ծխագարշի վրայ և այլ այսպիսի մանր ծառայութիւններ մատուցանում։

Ջուտով Բաղդասարը յանձնարարեց նրան՝ վաճառել ապրանքի հակերից մնացած խսիրներն ու պարանները։ Դոյացած փողերի կէսը պիտի տար հօրը, իսկ միւս կէսը գցէր իւր տուփի մէջ։ Այս առաջին գործում Վարդանը ցոյց տուեց զարմանալի առևտրական ձիրք։ Հէնց որ հեռուից տեսնում էր մուշտարուն, չտապում էր դուրս թռչել, ցցուել նրա առջև, դէմքից արդէն գուշակելով եկողին ինչ ապրանք է հարկաւոր։ Նա իւր խսիրներն ու պարանները, նաև կոտրտուած արկղերը գովաբանում էր.

այնպիսի ջերմեռանդութեամբ, որպէս պարսիկ դարվիշները ամեն օր խանութների առջև փառաբանում էին Ռուստէմի Զալի սապազէնը։

Երեկոները, երբ առուտուրը վերջանում էր, Վարդանը կողպում էր խանութի դռները և, բանալիները վերցնելով, հօր հետ տուն վերադառնում։ Այդ միջոցներին կարելի էր նրա դէմքի վրայ նշմարել առանձին լրջութիւն, որով խիստ տարբերւում էր փողոցներում վազվզող անհոգ մանուկներից։ Նա ինքը զգում էր իւր առաւելութիւնը, և այս զգացումը նա արտայայտում էր բանալիների միջոցով, որոնց զբընգացնում էր կատաղի կերպով, ընկերներին տեսնելիս։ Ցանը նա հօրը ենթարկում էր մանրամասն հարց ու փորձի այս կամ այն ապրանքի մասին։ Իսկ հայրը հրճւում էր, տեսնելով որդուն այդչափ հետաքրքիր և հարցասէր։

Կարճ միջոցում Վարդանն այնքան սիրեց վաճառականութիւնը, որ ուսումնարանն էլ դարձրեց իւր համար մի տեսակ շուկայ։ Սկսեց աշակերտներին վաճառել ամեն ինչ, որ կարող էր վաճառել, ընկոյզ, շագանակ, աղանձ, հալվա, եփած սիսեռ, փոխինձ և այլն։ Երբեմն պաքսիմատը փաթաթում էր թղթի մէջ, քարով ծեծում, մանրացնում, խառնում շաքարի հետ ու պտղուցը մի կոպէկով ծախում։ Առևտուրը նրան աւելի էր զբաղեցնում, քան նոյն իսկ ընկերական խաղերը։ Այս առիթով քիթը ծուռ Մկիչը նրան ենթարկում էր ամենակծու հեգնութեան, ի հարկէ, աւելի գործով, քան խօսքով։ Անդուլ շարաճճին Վարդանի համար դարձաւ կատարեալ երկնային պատիժ։ Ինչ ասես անում էր փոքրիկ վաճառականին կատաղեցնելու համար։ Խլում էր ձեռքից «ապրանքը», վազում, բարձրանում ուսումնարանի կտուրը, նստում եզրին, ոտները ցած գցելով, և

Նրա աչքի առջև անուշ անում հալվան, աղանձը, փտիլինձը։ Երբեմն հաւաքում էր իւր շուրջը ընկերներին և աւարը բաժանում նրանց։ Յետոյ իւրաքանչիւրին տալիս էր մի մի թղթեայ կոպէկանոց և պատուիրում վճարել Վարդանին։ Աշակերտները, ծիծաղելով ու ոստոստալով, մօտենում էին վաճառականին ու ասում.

—Սովդագար, ա՛ռ ապրանքիդ գինը։

Սակայն այս բոլորը Վարդանին չէր վհատեցնում։ Հակառակ իւր հօր սկզբունքին, նա բնազդաբար հասկանում էր, որ միայն մարդկանց բարեկամութիւնը կարելի է շահագործել, իսկ մարդատեցութիւնից օգուտ չրկայ։ Ուստի աշխատում էր ոչ ոքի հետ չրկտրել իւր յարաբերութիւնը։ Միևնոյն ժամանակ, ոչ ոքի վատութիւնը չէր մոռանում և յարմար միջոցին վրէժն առնում էր ներովի։ Այսպէս, օրինակ, մի անգամ գանգրահեր Լևոնը, փալան կարողի թոռը, որ մոռացել էր տնից նախաճաշ բերելու, սաստիկ քաղց զգալով, խնդրեց նրանից մի կտոր հաց ու պանիր։ Վարդանը մի օր նրանից ծաղրուել էր և այդ օրից ոխ էր պահում նրա դէմ։ Նա իւր հացի կտորը բաժանեց երկու մասերի, մի մասի վրայ դրեց համեղ պանիրը ու ասաց. «առ կեր»։ Հազիւ Լևոնը ձեռը մեկնել էր, Վարդանը հացը ձգեց կեղտոտ աւազանի մէջ, ասելով. «վերցրու, կեր»։ Յետոյ սկսեց իւր բաժինը խաշտել, քաղցած ընկերոջ ախորժակը բորբոքելով անողոք սառնասրտութեամբ։

Մի օր նա ուսումնարան բերեց ծախելու տասը հատ փայտեայ գդալներ։ Օսմանը շնորքով մարդ էր. նա էր շինել այդ գդալները։ Որպէս զի քիթծուռ Մկիչը չբխանգարի իրան, Վարդանը մի գդալ նուիրեց նրան—առաջին նուէրն իւր կեանքում։ Այն ժամանակ Մկիչն ինքն յանձն առաւ ծախել «ապրանքը»։

—Մածոն ուտելու գդալ, մածոն ուտելու գդալ, - վազվզելով բաղում, գոռում էր նա, - ով է ուզում, հատը երկու կոպէկ։

Կէս ժամում բոլոր գդալները վաճառեց և փողերը յանձնեց Վարդանին։

Զատիկ օրը Բաղդասարը Մարտին Բաղդանիչի համար ուղարկեց մտքում խոստացած մի գլուխ շաքարը և մի ֆունթ թէյը, աւելացնելով կէս դիւժին կոլենկորի թաշկինակ։ Յետոյ ինքը բարեհաճեց գընալ անձամբ տեսչի մօտ՝ տօնը շնորհաւորելու —միակ այցելութիւնը, որ այդ օրն արաւ, բացի, ի հարկէ, Աբրահամ աղայից։ Մարտին Բաղդանիչն ընդունեց նրան խորին յարգանքով և բարեկամաբար յանդիմանեց։ Ստուած վկայ, նա չէր ընդունի այդ նուէրը, եթէ իմանար, որ աղա Բաղդասարը չի վիրաւորուիլ։

Խօսեցին Վարդանի մասին։

—Աչքիս լուսի պէս եմ սիրում։ Շատ խոնարհ տղայ է, արարքներից երևում է, որ լաւ օջախի որդի է։ Մինչև օրս մի անգամ էլ չեմ ծեծել։ Իսկ ես, ինչու մեղքս թագցնեմ, սիրում եմ երբեմն փոքրիկներին ծվծվացնել, մեծերին կարցեր նստեցնել։ Շատ էլ աշխատասէր է, Պօղոս-Պետրոսը վկայ։ Պաժալստա, ծխեցէք, երևելի թիւթիւն է, Սամսոնի իսկական դիւբեկ է։ Աշակերտներիցս մէկի հայրն է ուղարկում ինձ։ Հէ, Ստուած պահի, լաւ որդի ունիր։ Իսկի ընկերների հետ չի կռւում։ Ուրիշներն էլ կռուելիս քաշւում է մի կողմ, մտիկ անում. որ միմեանց մորթեն էլ, մատ մատի չի խփի։ Իսկ երբ իրան են ձեռք տալիս, գալիս է ու ինձ գանգատւում։ Հաւանում էք թիւթիւնը։ Շատ լաւն է։ Հա, չմոռանամ ասել, տիւմբալս ախար լաւացաւ, Վարդանն ասած կլինի, ձեր ճարն օգնեց երեք օրում։ Հէ, երևելի տղայ է Վարդանը։ Գիտէք ինչ, հաա,

լան միտս եկաւ, այժմեանից սկսել է առուտուր անել։ Հապա՜։ Նա աշակերտներին ծախում է տեսակ տեսակ ուտելիքներ, փող է աշխատում։ Իմ արևը, ես կեանքումս որդուդ պէս զոչաղ տղայ չեմ տեսել։

Դռների մօտ տեսուչն անփոյթ եղանակով հաղցրեց.

—Լաչվերդի գոյնի կաստոր ունիք։

—Կրճարուի։

—Պուժալստա, մի բրիլկացու կտրեցէք, տուէք Վարդանին, բերի։ Փողն, ի հարկէ, նաղդ կրտամ։ Բրիլկին քամակը մաշուել է, այ, տեսէք, ամօթ չըլինի...

Եւ Մարտին Բաղդանիշը, երեսը շուռ տալով, յետ արաւ մունդիրի փէշը և ցոյց տուեց վարտիկի մաշուած տեղերը։

—Աչքիս վրայ, ասաց Բաղդասարը, իսկ մտքումն աւելացրեց. «քո էլ, կաստոր ծախողիդ էլ, շալվար կարողիդ էլ եօթը պորտը...»

VI.

Մի օր բարի Մինասը դասամիջոցին դարձաւ Վարդանին.

—Ինչու՞ մեր տուն չես գալիս։

Վարդանը տատանուեց ճիշդ պատասխան տալու։ Ամաչում էր ասել, որ հայրը պատուիրել է ոչ ոքի հետ մօտիկ ընկերութիւն չունենալ, մանաւանդ մի ինչ-որ զինագործի որդու հետ։

—Էդուց եկ,—հրաւիրեց նա,—կրգաս։

—Որ գամ ի՞նչ կրտաս։

—Ինչ կրտամ,—արտասանեց Մինասը, չիմանալով ինչով կարող է գրաւել Վարդանին,—մածոն սիրում ես։ Մենք մի լաւ կով ունինք, մայրս է կթում։

Ամեն օր մենք ուտում ենք մածուն, թանով, կաթնով։ Սիրում ես։

— Ես սեր եմ սիրում։

— Սեր։ Մայրս մեզ սեր չի տալիս։ Իզ է պատրաստում նրանից ու ծախում։ Բայց կասեմ, որ քեզ համար սեր պահի։ Կըգամ։

Վարդանն այլ ևս չըկարողացաւ իրան զսպել ու ասաց.

— Ախար ես քո ընկերը չեմ։

— Ինչու։

— Դու ով, ես ով։ Հայրս ասում է. սովդաղարի որդին չի կարող արհեստաւորի որդու հետ ընկերանալ։

— Հա՛մ,— արտասանեց Մինասը անմեղաբար և, անգիտակցօրէն նայելով ընկերոջ ոսկէզօծ քամարին ու փայլուն կօշիկներին, կարմրեց,— ես չէի իմանում։ Այդ մասին Աւետարանում գրած է։

— Աւետարանն ինչ գործ ունի այստեղ։

— Ինչպէս չէ, իմ հայրն ամեն երեկոյ կարդում է ու ասում ամեն հրաման Աւետարանից կամ Աստուածաշնչից է գալիս։ Ուրեմն մեր տուն չես կարող գալ, ամո՞թ է։ Ափսո՜ս։

Սակայն Վարդանը չէր ուզում վիրաւորել բարեսիրտ ընկերոջն, որ ամեն օր նրան դասեր էր սովորեցնում, ուստի հարցրեց.

— Ձեր կովը հորթ ունի։

— Ի հարկէ, ունի։ Զատ սիրուն ու չաղ հորթ է։ Ամեն օր ճաշից յետոյ տանում եմ նրան քաղաքից դուրս արածացնելու։ Այնքան եօնջա ու կաթնուկ է ուտում, այնքան ուտում է, որ փորն ուռչում է երկու կողմից տկճորի պէս։

— Ասում ես էգուց կիրակի է։

— Կիրակի է։

- Մեր դուքանը փակ է լինելու էգուց, տեսնենք, կարելի է գամ։

—Հա՛մ, բաս մայրիկիս ասեմ քեզ համար սեր պատրաստի։

—Ինձ չես կանչում,—մէջ մտաւ նախանձոտ Մարտիրոսը, որ ներկայ էր այս խօսակցութեանը։

—Դու առանց կանչելու էլ գալիս ես,—ասաց Մինասը։

—Թող էգուց չըգայ,—շշնջաց Մինասի ականջին Վարդանը, որ ամբողջ հոգով ատում էր Մարտիրոսին։

—Ի՞նչ ես փնթփնթում,—գոչեց նախանձոտ մանուկը, բութ մատի յօդով բոթելով Վարդանի կողը,—աա՛, հասկացայ։ Ես սովդագարի որդի չեմ հա՛մ։ Իմ հայրը գդակ կարող է, բայց քո հօրից էլ, պապից էլ, պապիդ-պապից էլ մեծ մարդ է։ Դիտես ինչ մեծամեծներ են գալիս մեր դուքան։ Երէկ ակալօղօշնին ինքն էր եկել, հասկանում ես։

Վարդանը բարձրաձայն ծիծաղեց։

Զինագործ Կարապետի տնակը գտնուում էր թաղի վերջում, որից դէնը կային միայն մի քանի խրբճիթներ, այնուհետև բաղաքը վերջանում էր։ Այս տնակը բաղկացած էր ընդամենն երկու փոքրիկ սենեակներից, սրանց կից գոմից ու թոնրատնից, որ, միևնոյն ժամանակ, և խոհանոց էր։

Վարդանին այնտեղ ընդունեցին մեծ յարգանքով։

Կարապետը, որ նաժդակով սրբում էր մի երկայն հրացանի փողը, իսկոյն մի կողմ դրեց սոսկալի զէնքը և ոտքի կանգնեց, կոշտ ձեռը պարզելով հիւրին։ Իսկ նրա ամուսինը—Թագուհին գրկեց ու համբուրեց նրան, ասելով. «Աստուած քեզ ջուխտ ձեռներով պահի մօրդ համար, բալա»։ Դա սիրուն դէմ-

բով, հազիւ քանուինը տարեկան, գեղեցիկ աչքերով, սև ունքերով, բաց գունի մազերով մի կին էր։ Հարևան կանայք միշտ նրան նախատում էին, որ չի ուզում գլխի մազերը հինայով ներկել իրանց պէս։ Եւ այս իսկ պատճառով նրան անուանում էին «մատուշկա»։ Թէև այս բառն այն ժամանակուայ տեղական հայ կանանց բերանում ունէր վատ իմաստ, բայց Թագուհին չէր վիրաւորւում։ Ծաղրողներին նա, ներողամտաբար ժպտալով, պատասխանում էր. «աւելի լաւ է հայ քրիստոնեայի կնիկը մատուշկայի նըմանի, քան մի Թուրք Ֆաթմայի կամ Խաճճայի»։ Ով գիտէ, գուցէ բնական ճաշակը նրան Թելադրում էր, Թէ բաց գունի մազերը խիստ ներդաշնակում են իւր խոշոր աչքերի մուգ գոյնին և սև ունքերին։

Կարապետը վերցրեց մի երկայն դաշոյն և սկսեց սրբել նրան այնպիսի եռանդով, որպէս Ռիգոլետտո օպերայում աւազակ Սպարաֆուչիլէն է սրբում իւր սուրը։

—Բաղդասար աղան մեր քաղաքի սիւներից մէկն է,— ասաց նա, դաշոյնը պահելով լուսոյ դէմ, որ տեսնի, չըկայ արդեօք, նրա վրայ մի որ և է բիծ, —մեր պարտքն է նրան պատիւ տալ։ Այ կնիկ, երեխային մի բան տուր ուտելու։

Այդ մարդու սիրած զբաղմունքներից մէկն էր միշտ մի որ և է բանով հիւրասիրել իւր որդու հասակակիցներին։ Գրեթէ ամեն երեկոյ, խանութից տուն վերադառնալիս, փողոցում մանուկներին բաժանում էր զանազան մրգեղէն։ Եւ մանուկները սիրում էին այդ կլորիկ դէմքով, մի փոքր ցցուած այտերով, մեծ ու բարեհամբոյր բերանով մարդուն, որի աչքերը, չընայելով քառասնամեայ հասակին, արտայայտում էին մանկական անմեղութիւն։ Նա ոչ միայն բարի էր, այլ և համբերողամիտ։ Կնոջ հետ

վարում էր մեղմ, զաւակներին պաշտում էր, երբէք Մինասին չէր ծեծում։ Նա գիտէր գրել-կարդալ, որովհետև քահանայի որդի էր։ Երեկոներն ազատ ժամերին բարձրաձայն կարդում էր Աւետարան կամ Աստուածաշունչ վանկ-վանկ, իւրաքանչիւր բառը առանձին շեշտելով, երբեմն երկար բառերի կիսում նաև տողավերջերում վերջակէտ դնելով։

Ներս մտաւ Մարտիրոսը և իսկոյն փափագ զգաց Վարդանին կմշտելու, տեսնելով նրան Կարապետի մօտ նստած։ Թագուհին մէջտեղ բերեց սերի գաւաթը և սկուտղի վրայ մի ամբողջ թարմ հաց ձեռով կտրտած (դանակով կտրտելը մեղք էր համարում)։

—Ես էլ եմ դայմաղ ուզում, — գոռաց նրա դուստրը, երեք տարեկան Հերիքնազը սենեակի միւս անկիւնից։

Վարդանը նայեց այն կողմ և բարձրաձայն ծիծաղեց։ Մինասի քոյրը մի տարի ու երկու ամսական եղբօր, Սամսոնի հետ մի և նոյն ափսէից մածոն էր ուտում։ Սամսոնի ձեռները տակաւին լաւ ուսումնասիրած չըլինելով ստամոքսի ճանապարհը, մածոնը, նախ քան բերանին հասցնելը, քսում էին քթին, ծնօտին, ականջներին, ճակատին, կոկորդին։ Այժմ նա այնքան շաղախել էր ինքնզինքը, որ ամբողջ դէմքից երևում էին միայն սաթի պէս սև աչքերը։

—Ա կնիկ, այն մայմունիդ էլ մտիկ արա, — ասաց Կարապետը, մեղմ ծիծաղելով։

—Փչանաս դու, Սիմոն տղայ, — գոչեց Թագուհին և, մօտենալով, մի թոյլ հարուած տուեց փոքրիկի փափուկ տեղին։

Նա վերցրեց մածոնի ափսէն։ Սամսոնը բարձրացրեց անասելի վայնասուն։ Թաւալուեց մէջքի վրայ ու սկսեց ձեռներն ու մերկ ոտներն ուժգին թա-

փով զարնել յատակին։ Կարելի էր կարծել, որ նրան ձգեցին եռացրած ջրի մէջ։ Կատարելով այս սովորական գործողութիւնը, ոտքի կանգնեց, արձակուեց քրոջ վրայ և սկսեց կծոտել նրա վիզը, երեսը, ուսերը։ Այս էլ վերջացնելով, շորքոտանի կանգնեց, գլուխը դրեց յատակին և, մերկ ոտների արանքով նայելով հօր երեսին, սկսեց բղաւել կոկորդի ամբողջ ուժով։ Աստուած գիտէ այլ ևս ինչ օյիններ ցոյց կը տար պստիկ անարխիստը հիւրերին. եթէ մայրը չը վերցնէր նրան և չրտանէր միւս սենեակ, ճանապարհին նրա փափուկ տեղերին տալով քանի մի խրատիչ հարուածներ։

Հազիւ վերջացել էր այս տեսարանը, երբ գընդակի պէս ներս սլացաւ Մկիչը։

—Բարի լոյս, ուստա Կարապետ, հայրս քեզ մի ջուալ բարով է ուղարկում, - գոչեց նա վերին աստիճանի հատարձակ,—քէֆդ լաւ է։ Մինաս, ինձ համար մածոն պահել ես։ Օհօ, վաճառական Վարդանն էլ այստեղ է։ Բարով, աղա, հազար բարով, ուպրանք ես բերել ծուխելու, թէ փող ես բերել շահով տալու։ Ա քթի մաղ, դու էլ ես այստեղ,—դարձաւ նա Մարտիրոսին, որն արդէն աջողել էր տասնումէկ անգամ կմշտել և ինքը անգամ բօթել Վարդանին։

—Քո բանը չէ, փնթփնթաց Մարտիրոսը։

—Ինչ ասացիր, իմ բանը չէ,—գոչեց Մկիչն և նոյն վայրկեանին Մարտիրոսի գլխի վրայով մի ոստում գործեց, - քթի մաղ, անխեր Թոմաս, եարամազ։ Աղա, այստեղ ռեխիդ մտիկ անել չեն ուզում, ի՞նչ ես եկել, աներես չան պէս թազնել։ Օհօ, տեսէք, սէր է ուտում... Հեռու կանգնիր, Թազուհի բաջի, հեռու, - բացականչեց չարաճճին, վերցնելով հրացանն և ուղղելով Մարտիրոսի կրծքին։

Մարտիրոսը գոռաց, գունատուեց և փախաւ

թագնուեց Կարապետի քամակում։

—Մի վախենար, որդի, հրացանը դատարկ է,— ասաց զինագործը և շտապեց սոսկալի զէնքը խլել Մկիչից։ — Կրակի կտոր է, խօմ երեխայ չէ։ Քո հօր վիզը չը կոտրուի, Մկիչ տղայ։

Մկիչը բռնեց Մարտիրոսի տեղը և սկսեց արագ արագ ոչնչացնել սերը։ Վերջացնելով նախաճաշը, նա Կարապետին թախանձեց պատմել աւազակապետ Մօլլա-Ղանիի մասին, որ այն ժամանակները ամբողջ Զիլգիլ գաւառը սարսափի մէջ էր գցել։ Կարապետը սիրում էր պատմել այդ աւազակապետի սխրագործութիւնները, երբեմն այնպիսի թանձր գոյներով, որ ահ ու սարսափ էր ազդում ունկնդիրների վրայ...

Մի վայրկեանում նրա շուրջը կազմուեց հետաքրքիրների մի խումբ, պատրաստ նրա իւրաքանչիւր բառը կլանելու նոյն ախորժակով, որպէս կլանեցին սերը։

VII.

—Մօլլա-Ղանին, որդի, Աստուած նրա տունը քանդի, քանդեց սաղ աշխարհի տունը, պրծաւ,— այսպէս սկսեց զինագործը, բեղերը շփելով։ — Նա մարդ չէ, հոգեհան է։ Էլի նորերս եօթանասուն հոգու գլուխ է կտրել սոխի պէս։

Այս առաջաբանից ամբողջ աուդիտորիայի մարմնով սարսուռ անցաւ։ Բոլորը լարեցին իրանց լսելիքը, մանաւանդ Մկիչը։

—Աբդուրահմանի քարվանը օրը մթնած չըմբթնած կանգնում է Ղըզըլ-դաղ սարի տակ, մի աղբիւրի մօտ,— շարունակեց Կարապետը, բռնելով բեղերից մէկը և նայելով նրա ծայրին։— Քսանուհինգ ուղտի, երեսուն ձիու և իններ անգամ իններ էշի մէջքից

բեռները վերցնում են։ Բեռները վերցնում են, հէյ-վաններին բաց են թողնում արածելու։ Բաց են թողնում արածելու։ Աբդուրահմանը ծառաներին հրամայում է փլաւ եփել։ Բլինձը լուացած, չլուացած, հեռուից երևում է մի ձիաւոր։ Աբդուրահմանը մատը կծում է, թուֆանգը վերցնում։ Թուֆանգը վերցնում է, առաջ գնում։ Առաջ է գնում ու գոռում. «աղա, ով է եկողը»։ - Ասածու հիւրը», պատասխան է լսում։ «Ասածու հիւրը աչքիս վրայ տեղ ունէ, համեցէք»։ — Սալամ Ալիքիմ։ Ալիքիմի սալամ։ Եկողն ասում է. «Աբդուրահման, քաղցած եմ, մի բան տուր ուտելու»։ Աբդուրահմանը, դուր էք աղաներս, հրամայում է փլաւ բերել։ Ձիաւորը ցած է գալիս ձիուց։ Դէս-դէն, իմացւում է, որ սովգազար է, գնում է Ղաբրիստան ոչխար գնելու։ Փլաւն անուշ են անում, պառկում են քնելու։ Քարվանում երեսունուհինգ մարդ է լինում, ոչ աւելի, ոչ պակաս։ Քնած — չբնած, Աբդուրահմանը մի թրմփոց է լսում։ Թրմփոցը լսում է, ոտքի է կանգնում, ծառաներին էլ զարթեցնում։ Հայդէս, հայդէն, ձիաւորը չբկայ ու չբկայ, տափովն է անցել, երկինք է թռել, չբկայ ու չբկայ... Հիմայ, եթէ հարիֆ էք, իմացէք, ով էր ձիաւորը։

— Դևը, - պատասխանեց Մարտիրոսը։

— Չէ։

— Սուրբ Սարգիսը, - պատասխանեց Մինասը երեսին խաչակնքելով։

— Ախմախ, սուրբ Սարգիսը թուրքի փլաւ կուտէր, — նկատեց Կարապետը։

— Ես ասեմ ով էր, Մօլլա-Ղանին, — մէջ մտաւ Մկիչը։

— Աֆարին տղայ, լաւ իմացար։ Նա ինքն է լինում։

Մանուկները միաժամանակ սարսափելի ճչացին։

Մկիշն իւր դունչը բոլորովին մօտեցրեց գինագործի քթին, արմունգները յենած ծնկներին և ձեռներով ծնօտը բռնած։

—Դուք էք աղաները,—շարունակեց Կարապետը թամբաքուի չոր տերևը ափերի մէջ տրորելով, որ չիրուխը լեցնի,—ինքը Մօլլա-Ղանին է լինում։ Դու մի ասա, եկած է լինում իմանալու քարվանում քանի թուփանգաւոր կայ, ինչքան ապրանք և այլն։

—Այ սիրտ,—գոչեցին մանուկները միաբերան, բացի Մկիշից։

—Ասլան է, խամ մարդ չէ։ Հա, հէնց որ իմանում է քարվանում մի քանի հազար թումանի ապրանք կայ, գիշերուայ կիսին ձի է նստում, գնում անտառը, ընկերներին հաւաքում, յետ գալիս...

—Յետոյ, յետոյ...

—Առաջ առաջ Աբդուրահմանին կապում է ծառին, յետոյ ծառաների վիզը մէկ մէկ կտրում, յետոյ ընկնում է միւսների վրայ, տուր հա կրտաս։ Դէս կտորում, դէն կտորում, մի ժամում տասնուհնգի գլուխն է թռցնում, տասնումէկի փորերը պատռում, ջիգարները հանում, երեսունուհնգին գիւլլախորով է անում, երեքին միջից կէս է անում, շներին տալիս, երկուսին չորս-չորս կտոր է անում, մի քսան-երեսունին էլ կիսամահ է անում, որի ականջը կտրելով, որի քիթը, որի լեզուն...

—Ինչով, թրով, թէ խանջալով,—հետաքրքրուեց Մկիշը։

—Ղլինջով։

—Տասնուհինգ, տասնումէկ, երեսնուհինգ, երեք, երկու, քսան երեսուն, Աբդուրահմանը, ծառաները,—արտասանեց Վարդանը,—Կարապետ ապեր, դա հարիւրից անցաւ։ Դու ասացիր, քարվանում ոչ աւելի ոչ պակաս երեսունուհինգ մարդ է լինում։

—Եանղլըշ ես, շատ է լինում, բալա,—ասաց Կարապետը, մազու չափ չըշփոթուելով, վասն զի երբ ոգեորուում էր ամենից առաջ ինքն էր հաւատում իւր երեակայութեան ստեղծագործութեանը։

—Ցետոյ, յետոյ,—կրկնեց Մկիչն անհամբերութեամբ։

—Ցետոյ ամենին թալանում է, տկլոր բաց թողնում։ Ապրանքը բարձում է ձիերի վրայ ու, գարշապարին թքելով, հայդա, փախչում...

—Բաս քարվանում մի հատ տղամարդ էլ է չի լինում,—դոչեց Մկիչը վրդովուած,—այ վախկոտներ...

Նրա աչքերը յուզումից վառուել էին, այտերը կարմրել, շունչը սաստկացել սարսափելի պատմուածքի ազդեցութիւնից։

Ես լինէի Աբդուրահմանի տեղը,—մէջ մտաւ Մարտիրոսը,—փլաւի մէջ մինդեղ կածէի, կըտայի Մոլլա-Ղանիին, կուտէր ու տեղն ու տեղը կըսատկէր։

—Քանի հազար թումանի ապրանք է թալանում,—հետաքրքրեց Վարդանը։

—Հա շատ, որդի, հա շատ։ Ասում են, միայն եօթը տոպրակ ոսկի է լինում։

—Ի՞նչ, ափսոս,—արտասանեց Վարդանը հոգու խորքից, գոնէ մի տոպրակ իմ ձեռքն ընկնէր։

—Խեղճ մարդիկ, խեղճ մարդիկ, գոչեց Մինասը արտասուալի ձայնով,—ինչու՞ «Հրաժարիմք» չեն ասել։ Եթէ «Հրաժարիմք» ասէին, գիշերը քարվանի շորս կողմը եօթը շաբք երկաթէ պարիսպներ կըկանգնէին, աւազակները չէին կարող մօտենալ։

Մի փոքր անցած, մանուկները դուրս եկան սենեակից խաղալու։ Մինասն առաջարկեց գնալ մերձակայ բլուրը։ Նրանք իրանց հետ տարան հոր-

թին։ Փողոց դուրս գալիս Մկիչը ցանկապատի միջից դուրս քաշեց չորս ցից իւր և ընկերների համար, ասելով.

— Հարկաւոր կլինայ։

Եւ, երաւ, շուտով փայտերը հարկաւոր եղան։ Հէնց որ մանուկները բարձրացան մերձակայ բլրի գագաթը, հանդիպեցին մի խումբ թուրք պատանիների։ Հակառակի պէս հէնց այդ պահին գրգռուեց հորթի ազատասիրութեան ընազդը։ Նա խլեց կապը Մինասի ձեռքից և փախաւ, պոչը ցցելով օդի մէջ որպէս թեթեւամտութեան դրօշ։ Նա վազում էր դէպի մի դեղնագոյն կով, երևի, իւր մօր տեղն ընդունելով նրան։ Թուրքերն իսկոյն բռնեցին նրան։

— Բաց թողէք,— աղաղակեց Մինասը հեռուից։

— Եթէ կարող ես, ինքդ եկ, տար,— խրոխտացին թուրքերը։

Նրանք սկսեցին հորթին չարչարել։ Մէկը նստեց նրա մէջքին, միւսն ականջներից բռնած առաջ էր քշում, իսկ մնացեալները փայտերով բզբզում էին։ Դրուժիւնը տաղնապալի էր. պէտք էր կամ ուժով ուժով հորթին ազատել, որ անկարելի էր առանց կռուի, կամ թոյլ տալ, որ թուրքերը տանեն նրան։ Մարտիրոսը սկսեց հեռուից թուրքերին հայհոյել այնպիսի կեղտոտ յիշոցներով, որ դիպչում էին հակառակորդների հաւատին։ Մէկը թուրքերից քար արձակեց և դիպցրեց Մինասի ոտին։ Խեղճ մանուկը ցաւից աղաղակեց, բայց, որովհետև երկչոտ չէր, չընկրկեաւ։

— Տղերք, շատուոր են, բայց չրվախենաք,— գոչեց քիթը ծուռ Մկիչը,— դուք այստեղից առաջները պահեցէք, ես այս ըոպէին կըգամ...

Ասաց և իսկոյն վազեց անհետացաւ բլրի ետեւում։ Վարդանն ահից դողում էր և արդէն մտածում

էր փախչելու մասին։ Մարտիրոսը շարունակ հայհոյում էր։

Ցանձնելով հորթին ընկերներից մէկին, թուրքերը միահամուռ վազեցին Մինասի վրայ և մի բոպէում շրջապատեցին նրան հովուի շների պէս։ Բոլորը զինուած էին թոնրում խանձած, ապակիով յղկած և իւղած փայտերով։ Մի քանիսը չուխաները հանել էին և վահանի ձևով թևներին փաթաթել։ Շընայելով վտանգին, Մինասը չէր փախչում։ Նա այնքան էր սիրում իւր հորթին, որ պատրաստ էր մինչև մահ կռուել նրա համար։ Նա գունատ էր, աչքերը պսպղում էին, նիհար կուրծքն ուռել էր։

Նրա մէջքին և ուսերին տեղացին փայտերի հարուածներ, իսկ ինքը մէկին շարքից դուրս գցեց մի աջող հարուածով։

Թշնամիները կատաղեցին նրա անվեհերութիւնից։ Այն ինչ՝ Վարդանն ու Մարտիրոսն աւելի հեռացան, բռնեցին ապահով դիրքը, որպէս զի հարկ եղած միջոցին տմարդաբար փախչեն անվտանգ։ Մինասը բոլորովին մենակ էր, թշնամիներից շրջապատուած, որպէս մի եղջերու շների ոռմակից։ Բայց նա չէր էլ մտածում, թէ առանց իւր սիրելի հորթի կարող է տուն վերադառնալ։ Նա օգնութեան կանչեց ընկերներին, բայց անօգուտ։ Նա դարձեալ մի քանի հարուածներ ստացաւ, ձեռը թուլացաւ, բայց փայտը բաց չրթողեց։ Յարմար վայրկեան որսալով, նա հարուածեց մէկի գլխին և ջարդեց։ Այն ժամանակ թուրքերը բռնեցին նրան և սկսեցին խեղդել։ Յետոյ գլորեցին դետնին և սկսեցին ոտնակոխ անել։ Խեղճ մանուկը յուսահատութիւնից սարսափելի ճչում էր։

Ցանկարծ բլրի ետևից յայտնուեց Մկիչն երկու հասակակիցների հետ։

—Ապա, հուռռա՛, Մօլլա-Ղանին եկաւ, աղաղա-

կեց նա թուրքերէն և յարձակուեց թշնամիների վրայ։

Թուրքերը չփոթուեցին, Մինասին թողեցին գետնի վրայ կիսաշունչ։ Մկիչը սկսեց հարուած հարուածի ետևից թափել նրանց գլխին։ Մանեսվրն անսպասելի էր։ Թուրքերը սկսեցին յետ նահանջել։ Սակայն որ կողմ դիմում էին, հանդիպում էին արագաշարժ Մկիչի և նրա օգնականների հարուածներին։ Վարդանն ու Մարտիրոսը սիրտ արին առաջ վազելու։ Այդ միջոցին Մինասն էլ ոտքի էր կանգնել։ Թուրքերը, երբ գտնելով, փախան։ Բայց հորթը դեռ նրանց ձեռքումն էր։

—Աղա, մի վախենար, հորթին էլ կազատենք այդ քաչալների ձեռքից,—գոչեց Մկիչը, վազելով թուրքերի ետևից։

Բարեբաղդաբար, հորթը մի զօրեղ ցնցումով գլուխն ազատեց, փախաւ, դարձեալ պոչը վեր ցցելով, այս անգամ, կարծես, իբր յաղթութեան դրօշ։ Կեանքում նա երբէք այսպիսի խելօք բան չէր արել։ Մկիչը վազեց ու նստեց նրա վզին կապած պարանի ծայրի վրայ, գոռալով.

—Աղա, հուռռա՛...

Վռնդելով թշնամիներին, ազատելով հորթին, փոքրիկ Սուվօրովը յոգնած, հեալով, պառկեց մէջքի վրայ կոնաչազարդ գետնին։ Այժմ միայն Վարդանն ուշ դարձրեց նրա երկու օգնականների վրայ։ Մէկը գանգրահեր Լևոնն էր, նա՛, որին Բաղդասարը ծաղրեց ուսումնարանում առաջին օրը։ Միւսը մի ոտաբոբիկ, կիսամերկ մանուկ էր Սահակ անունով, մէկը փողոցային շրջմոլիկներից, որոնց հետ Վարդանին խստիւ արգելուած էր որևէ յարաբերութիւն ունենալ։

—Ես տուն եմ գնում,—ասաց Վարդանը։

— Միասին կըգնանք, սպասիր մի քիչ խաղանք, յեսայ. ասաց Մկիչը։

Սակայն Վարդանը իւրը պնդեց։ Վերջապէս, ընկերները հասկացան, որ նա չի ուզում Սահակի հետ մի խմբում մնալ։ Մկիչը վրդովուեց։ Վաղուց արդէն նա հոգու խորքում ատում էր Վարդանի գոռոզութիւնը։

Չես սիրում, հա՛, — գոչեց նա, ոտքի կանգնելով և փայտը ձեռում ամուր սեղմելով, ադա, սովդագարի տղայ, Սահակը քեզ պէս տասին արժէ։ Տեսա՛ր ինչպէս ձեզ ազատեց Թուրքերի ձեռքից։ Նրա նման փայտ խփող չըկայ։ Էէ, փայտ խփելն ինչ է, մի երդել գիտէ, որ քո Տէր-Սահակը նրա մօտ հէչ բան։ Ադա, Սահակ, մի «Առաւօտ լուսոյ» կկլացրու, Թող նամարդը լսի...

Առանց երկար սպասել տալու, Սահակը յենուեց հովուի պէս իւր փայտի վրայ և երգեց «Առաւօտ լուսոյ» կիսամանկական-կիսապատանեկական դիւրեկան ձայնով։

— Ը�տ տուր չիքաստի, — պատուիրեց Մկիչը շուտով։

Սահակը եղանակը փոխեց։

— Հը, դրա՛ն ինչ կասես։ Ը�ը, ես քո սովդագար դլուխդ կնդեմ։ Լաւ երգելը փող աշխատելուց հազար անգամ լաւ է։ Դէհ, ձեռ տուր Սահակին, թէ չէ՝ փայտը գլխիդ հասցրի հա, ինձի քիթըծուռ Մկիչ կասեն։ Լաւ ընկեր եղիր, լաւ ընկեր, ինչիս է հարկաւոր փողդ։ Սահակը տկլոր է, ինչ անենք, հայրը ջրկիր մարդ է, փող չունի քո հօր պէս։ Բայց ընկերոջ համար կեանքը չի խնայի։ Ադա, հուռռա՛, Մօլլա-Ղանին եկա՛ւ...

Նա, փայտը բարձրացնելով, վազեց բլրից ցած։ Խումբը հետևեց նրան։

VIII.

Մի գլուխ շաքարը, մի ֆունթ թէյն և կէս դիւժին կոլենկորի թաշկինակները անօգուտ չանցան Բաղդասարի համար։ Մարտին Բաղդանիչը Վարդանին տեղափոխեց բաժանմունք առանց քննութեան։

Յաջորդ սեզոնին Բաղդասարը, թէև անթիւ հայհոյանքներով, կրկնեց իւր տուրքը նոր տարի օրը, և յաջորդ տարուայ քննութիւններին Վարդանը հրաշակուեց ոչ միայն առաջադէմ, այլև օրինակելի աշակերտ։ Այն օրն, երբ Վարդանին յայտնի եղաւ այս, երջանիկ էր նրա համար։ Ուսումնարանից նա ուղղակի վազեց խանութ՝ ուրախ լուրը նախ և առաջ հօրը հաղորդելու։ Բաղդասարը մի թեթև ապտակ տուեց նրան այս էր նրա ամենաջերմ հայրական փաղաքշանքը։

—Ի՞նչ ես բաշխելու ինձ, հարցրեց Վարդանը, որ երբէք ոչ մի հայրական փաղաքշանք առանց էական կաշառքի չէր ընդունում։

—Իրիկունը կիմանաս։

Կէսօրից մինչև երեկոյ—ահա յաւիտենականութիւն մեր հերոսի համար այդ օրը։ Վերջապէս, Բաղդասարը տուն վերադարձաւ, թէյ խմեց և կնոջն ու որդուն կանչեց իւր մօտ։ Հանեց գրպանից մի կաշուէ փողաման և, տալով Վարդանին, ասաց.

—Այ ինչ եմ բաշխում քեզ։

Ի՞նչ հիասթափումն—միայն այսքանը, մի փողամանն։ Վարդանը քիչ մնաց արտասուէր բարկութիւնից։

Չեմ հաւանում։ Բաց արա, տեսնենք։

Այն, ինչ որ Վարդանը տեսաւ փողամանի մէջ,

կարող էր նրան խելքից հանել - մի հատ նոր հարիւրանոց թղթադրամ։

—Ի՞մս է այս,--գոչեց նա խելագարի պէս։

—Քոնն է։ Հիմայ դախըլըդ բեր, տեսնենք նա ինչ է ասում։

Այս անգամ տուփի մէջ յայտնուեց ութսուն ռուբլի։

—Այս էլ քոնն է,—ասաց Բաղդասարը,—գումարն է հարիւր ութսուն ռուբլի։

Այս մի այնպիսի խոշոր դրամապլուխ էր, որ հազիւ թէ Զիլգիլ քաղաքում Վարդանին հասակակից մի ուրիշ մանուկ ունենար։ Հասկանալի է, ուրեմն, ինչու նա վեց անգամ թռչկոտեց վեր և մի այնքան անգամ էլ վազեց անկիւնից անկիւն, ոստոստալով ու ծափ տալով։

—Այդ փողերով պիտի Մարիամին պսակենք,—ասաց Բաղդասարը։

Վարդանը քարացաւ տեղն ու տեղը, արձակելով կրծքի խորքից մի սուր ճիչ։ Արդարև, Մարիամին արդէն նշանել էին և մի ամսից յետոյ պիտի ամուսնացնէին մի երիտասարդ վաճառականի հետ։

—Հա, որդի, Մարիամի համար պատրաստութիւն տես,—մէջ մտաւ Գիլիւմը,—թող ուրիշները զարմանան, որ դու ես քո փողերով պսակումքրոջդ։ Ամենքը քեզ կրգովեն։

Եթէ Վարդանը լռեց հօր առջև, այս չէր նշանակում, թէ պիտի լուռ ընդունէր մօր հարուածը։ Նա կատաղած գոչեց.

—Հազար թոյր էլ չան պէս սատկի, ես մի կոպէկ չեմ ծախսի։

—Որդի, վախեցիր Աստծուց, այդ ինչ ես ասում,—գոչեց Գիլիւմը, սարսափելով որդու անսրտութիւնից։

— Հա, թող Մարիամը շան պէս սատկի, փողերս ինձ տուէք։

Բաղդասարը հոգու խորքում անչափ հաւանեց որդու այս տրամադրութիւնը։ Մի մանուկ, որ այդքան պինդ է կպչում փողին, իսկի քաղցած չի մնայ, փողը նրա մօտ է վազում, ով սիրում է նրան ու աչքի լուսի պէս պահպանում։

— Մի վախենար, — շտապեց նա հանգստացնել Վարդանին, — ես հանաք էի անում։ Ոչ ոք փողերիդ ձեռ չի տայ։ Այդ փողերով այս տարի քեզ համար պիտի մի հակ ապրանք բերել տամ Մակարիայից։

Մարիամի հարսանիքին Վարդանը ոչ միայն կոպէկ անգամ չրծախսեց, այլև հնարագէտ գտնուեց ինքը վաստակելու։ Երբ խնամիներն եկան հարսին տանելու, պարեց նրանց առջև։ Հանդիսականները դրամական պարգևներ տուեցին նրան, ոմանք թղթադրամը թքով նրա ճակատին կպցնելով։ Այս նուէրները, ըստ տեղական սովորութեան, պարից յետոյ պիտի տար սաղանդարներին, իսկ նա հանգիստ խղճով դրեց իւր գրպանը։

Երկու ամիս անցած մեռաւ նրա տատը — Գիւլիւմի մայրը։ Հնարագէտ Վարդանն այս տխուր դէպքից անգամ շահուելու միջոց գտաւ։ Այսպէս, օրինակ, թաղման օրը Գիւլիւմը ամուսնուց թաղուն տուեց նրան երկու ռուբլի և պատուիրեց մի մասով եկեղեցում մոմ վառել, միւս մասը բաժանել մուրացկաններին հանդուցեալի յիշատակին։ Վարդանն ոչ այս արաւ ոչ այն, երկու ռուբլին գցեց իւր տուփի մէջ ու փոխարէնը ինքն աղօթք արաւ տատի հոգու փրկութեան համար։

Օրից օր աւելացնելով իւր դրամագլուխը, Վարդանն օրից օր դառնում էր համարձակ, ինքնավստահ փող վաստակելում։ Նրա փոքրիկ գլուխը շա-

ընտանիք խորհում էր միայն և միմիայն եկամտի նոր աղբիւրներ գտնելու մասին և միշտ գտնում էր։ Մի և նոյն ժամանակ, նա երբէք ձեռք բերածով գոհ չէր և միշտ ձգտում էր դէպի աւելին։ Այժմ նա ունէր մի հակ սեպհական ապրանք, հաշւում էր, հաշւում, և որքան վաճառումը աջող էր երևակայում, դարձեալ գոհ չէր մնում շահից։ Հետզհետէ նոյն իսկ հօր աւանտուրն ու ամբողջ կարողութիւնը սկսեցին թուալ աննշան։ Երբեմն գնում էր Աբրահամ աղայի մագազիան և այնտեղ աշկարայ տեսնում որքան իւր հայրը յետ է մնացել։ Մինչ Բազդասարը չիթուկտորը վաճառում է կտորներով, Աբրահամ աղան հակերով է վաճառում։

Հայրիկ, աշխարհի երեսին ամենից մեծ վաճառականն ով է,—հարցրեց նա մի օր։

—Մարօզովը։

—Էլ նրանից հարուստ մարդ չկայ։

—Կայ։

—Ո՞վ է։

—Մի ջհուդ։ Նա այնքան հարուստ է, որ թագաւորներին էլ է պարտք տալիս...

—Բա՜։ Քանի՞ ջուալ ոսկի ունէ։

—Ի՞նչ ջուալ, ինչ խուրջին, նրա հարստութիւնը ծով է։

—Հայրիկ, ի՞նչ է այդ ջհուդի անունը։

—Ուռշիդ։

Վարդանը լռեց և ընկաւ մտածութեան մէջ։ Տասը րոպէ անցած, սթափուեց։

—Հայրիկ, Ուռշիդն ինչպէս է այդքան փող աշխատել։

—Խարթուքով ու թթուքամորի ջրով։

—Բա՜։

—Ուռշիդի պապը Նապոլէոն թագաւորի մի-

կիտանչին է եղել։ Կռուի թունդ ժամանակ, ով է մարիկ անողը, նա սալդաթներին գինու տեղ տուել է խարթուլթով ներկած ջուր, արաղի տեղ էլ տուել է թթուխմորի ջուր։ Մարդը խելք է ունեցել, համ փող է աշխատել, համ էլ սալդաթներին հարբեցողութիւնից պահպանել, որ վատ կռուեն։

—Ո՞ւրտեղ է ապրում Ուռչիդը, հայրիկ։

—Փռանգստանում։

—Մարդ իմանայ, նրա կերածն ինչ է։

—Կերակուրը՞ Տապակած գորտ։

—Գորտ,—գոչեց Վարդանը, իւր ականջներին չը հաւատալով,—եղկ։

—Փռանգստանում բոլոր մեծամեծները տապակած գորտ են ուտում։ Դրա համար էլ այնտեղ գորտը ծախւում է հատը տասը ոսկով։

—Տասը ոսկով, ի՞ֆ ի՞ֆ...

Վարդանը դարձեալ մտածութեան մէջ ընկաւ։

—Հայրիկ,—աթափուեց նա յանկարծ,—այստեղից Փռանգստան քանի՞ օրուայ ճանապարհ է։

—Ով գիտէ, քառասուն, եօթանասուն կամ հարիւր յիսուն օրուայ։ Ինչու՞ ես հարցնում։

—Ուզում եմ իմանալ, կարելի՞ է այստեղից այնտեղ ապրանք տանել։

—Ի՞նչ ապրանք։

—Գորտ։

—Փիէ...

—Մեր լճերում ու գետերում այնքան գորտ կայ, որ ինչքան ուզում ես—հաւաքիր։ Կարելի է մի քանի բեռ ուղտերով տանել Փռանգստան ծախելու։

—Ճանապարհին կը հոտի։

—Ես էլ հէնց դրանից եմ վախենում։ Բայց կարելի է մեծ մեծ տակառներ շինել ու ջրի մէջ տանել։

—Թող, Աստուած սիրես, դալմաղալի մէջ կը գցես մեզ...

IX.

Այդ օրից Վարդանին «Ուռչիդի» հարստութիւնը հանգստութիւն չէր տալիս։ Հօր պատմած առասպելներին աւելացնելով մի շարք ուրիշները, սկսեց պատմել դասընկերներին իբր իրականութիւն։ Մի անգամ Ուռչիդի աղամանդեայ հագուստները և ոսկեպատ պալատները նկարագրելիս, պատահաբար ներկայ էր երկրորդ դասատան աշակերտ Դանիէլ Դալբաշեանը —Աբրահամ աղայի որդին, լայն երեսով, մեծ բերանով և հաստ քթով մի տգեղ էակ՝ սակայն բարեսիրտ և զուարճասէր պատանի։

—Ողա, Վարդան,—նկատեց նա ծիծաղելով, Ուռչիդ չէ այդ մարդու անունը, Ռօդչիլդ։

Մի ուրիշ անգամ երբ Վարդանը դարձեալ խօսում էր իւր իդէալի մասին, Մկիչը հարցրեց.

—Քո Ուռչիդն է մեծ մարդ, թէ պլկօվնիկը։

—Ի հարկէ՝ Ուռչիդը։

—Քիչ քիչ։ Պլկօվնիկը որ սալդաթներին հրամայի Ուռչիդիդ թափան-թրիքը կրթափեն։

—Ուռչիդից էլ, պլկօվնիկից էլ մեծը եկիսպակօսն է,—մէջ մտաւ Մինասը։—

—Օհօ, դու էլ բան ասացիր,—ծիծաղեց Վարդանը՝—եկիսպակօսի ֆէրաջէի կտորը մենք երեք ըուրլով ենք ծախում։ Նա ինչ մեծ է։

—Էյ, երիսկաբոսի մասին այդպէս մի խօսիր, Մարտին Բաղդանիչին կասեմ,—մէջ մտաւ Մարտիրոսը, որ տակաւին գերազասելու ոչ մի իդէալ չունէր, բացի քսութիւնից։

Վէճը գուցէ սուր կերպարանք ստանար և հար-

կաղբէր Մկիչին բռունցքի միջոցով բոլորին համոզել, թէ պօլկովնիկից աւելի մեծ մարդ չըկայ աշխարհում, եթէ նրանց ուշադրութիւնը չըգրաւէր մի հանգամանք։ Գանգրահեր Լևոնը մի ինքնահնար երաժշտական գործիքի վրայ նուագեց մի անուշ եղանակ։ Այդ գործիքը ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ դդումի չորացրած կեղև, որի վրէն կապել էր ձիու մազեր լարերի ձևով։ Նա նուագում էր այնքան արուեստօրէն, որ ընկերները կարծեցին սազ է նուագում։ Բոլորը շրջապատեցին նրան։ Մկիչն իսկոյն գրպանից հանեց մի փայտեայ սանր, որի բերանին փաթաթեց մի կտոր թուղթ և սկսեց, շրթունքների մէջ սահեցնելով, նուագել նոյն եղանակը։ Յետոյ հրամայեց Լևոնին նուագել պարերգ և ինքը մէջտեղ ընկաւ պարելու։ Մէկը ներդաշնակօրէն ձեռներով զարկում էր նստարանին, միւսները ծափ էին տալիս։ Ջուտով պարը փոխուեց կատաղի ոստումների։ Մկիչը բարձրացրեց անասելի աղմուկ դղրդոց ու փոշի։

Հանդիսի ամենատաք միջոցին ներս մտաւ կարմիր միրուքով, կոկորդն ու գլուխը սափրած մի թուրք։ Դա թուրքերէն լեզուի դասատու Մօլլա-Նուռուլլան էր, մի ուսուցիչ որի դասերը գրեթէ ոչ ոք չէր այցելում և որը աշակերտների անվերջ կատակների առարկան էր։

—Էվալլա, էվալլա, —մրմրեց մօլլան, ձեռները կողքերին դնելով, —դա ումի հարսանիքն է, փահ փահ, մաշալլա, մաշալլա...

Սակայն Մկիչը շարունակում էր ոստոստալ։ Մօլլայի աչքերը բարկութիւնից կայծեր էին արձակում։ Այդ փոքրիկները բնաւ նրանից չեն վախենում։

—Այ ես քո հօր... գոչեց նա և վազեց Մկիչին բռնելու։

Մկիչը մի ոստումով փախաց, ազատուեց։ Նրան

հետեւեցին միւսները։ Դիրութեան պատճառով մօլլայի ձեռքն ընկաւ մի մալական աշակերտ և մօլլան սկսեց վրէժը նրանից առնել։ Միւս աշակերտները գռների արանքից և լուսամուտներից դէմքերի ծամածռութիւններով աւելի կատաղեցրին նրան։ Բռնելով մի ձեռով աշակերտի ձեռները, միւսով անխնայ հարուածում էր թշուառի ուսերին ու գլխին։

—Տղերք՝ եկէք Միտուշկային ազատենք,—գոչեց Մկիչն ու մենակ ներս վազեց։

Կամացուկ մտնելով մօլլայի ետեւից, բռնեց նրա չուխայի փէշը և բոլոր ուժով քաշեց։ Մօլլան, յետ ու յետ գնալով, ընկաւ մէջքի վրայ։ Ընկաւ նաև Մկիչը։ Մալական աշակերտն ազատուեց, բայց Մկիչի դրութիւնը վտանգաւոր էր, որովհետև պատկառելի դասատուն այնպէս էր կատաղել, որ ընդունակ էր նրան խեղդելու։ Նա վաղուց ոխ ունէր Մկիչի դէմ։ Բռնեց նրա ականջներից և քաշքշեց, ծնկերով խփելով փորին ու կրկնելով.

—Այ ես քո հօր... այ ես քո պապի...

Բարեբաղդաբար, նոյն րոպէին ներս մտաւ տեսուչը՝ ազմուկից դրաւուած։ Տեսարանը նրա համար սովորական էր. գրեթէ ամեն օր մօլլան աշակերտների հետ այդ տեսակ ընդհարումներ էր ունենում և դրա համար արքունական զանձարանից ստանում տարեկան երեք հարիւր ռուբլի։

—Մօլլա, ուշքի եկէք, մօլլա, հերիք է,—գոչեց տեսուչը և հապիւ կարողացաւ Մկիչին ազատել։

Բաց թողնելով զոհին, մօլլան մի քանի վայրկեան չունչը յետ բերեց։ Նա դլխաբաց ու ոտաբաց էր. գդակն ընկել էր մի կողմ, արախչինը մի ուրիշ կողմ, քօշերը մի այլ տեղ։

—Մեարթին Բաղդանը՛ջ, Վալլահ, բիլլահ, ասաց նա կրծքին դարկելով,—զուր էք մեր քաղաքում

չկօլա բաց արել։ Այստեղ բոլորը էշեր են, էշերի զաւակներ են, ինչ ուզում, ինչ դաւթար, նրանց ախոռ է հարկաւոր։

Նա վերցրեց գդակը և սկսեց թափ տալ ուղիղ տեսչի քթի տակ։ Աշակերտները մէկ մէկ վերադարձան դասարան, խաղաղութիւնը վերականգնեց։

Տեղը նստելիս Վարդանը սեղանի տակ նշմարեց ինչ-որ փայլուն իր։ Վերցրեց, դրեց գրպանը։

Մի ժամ յետոյ Միտուշկան լալիս էր, թէ ծեծուելու պահին իւր քամարից պոկուել ու կորել է մի արծաթեայ կոճակ (այն ժամանակ մալականներն էլ արծաթէ քամար էին կապում)։ Բոլոր աշակերտները երդուեցին, թէ կոճակ չեն տեսել։

Երդուեց և Վարդանը։

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

(Կը շարունակուի)



ԳՐԱԶ

(ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎԻ)



I.

Շնանային, մութ գիշեր էր։ Ծերունի սեղանաւորը իւր սենեակում անկիւնից-անկիւն էր գնում գալիս և յիշում, թէ ինչպէս տասն և հինգ տարի սորանից առաջ, աշնանը խնջոյք էր սարքել։ Այդ երեկոյթին ներկայ էին բազմաթիւ խելօք անձինք և շատ հետաքրքրական հարցեր էին շօշափւում։ Ի միջի այլոց խօսում էին և մահուան պատժի մասին։ Հիւրերը, որոնց մէջ սակաւաթիւ չէին և գիտնականներ ու լրագրողներ, մեծ մասամբ մահուան պատժին վերաբերում էին բացասաբար։ Նոքա այդ եղանակ պատիժը արդէն հնացած, քրիստոնեայ պետութիւնների համար անհամապատասխան և անբարոյական էին համարում։ Նոցանից ոմանց կարծիքով մահուան պատիժը ամեն տեղ անհրաժեշտ էր փոխարինել ցմահ բանտարկութեամբ։

—Ես ձեզ հետ համաձայն չեմ, ասաց տանուտէր սեղանաւորը։ Ես չեմ փորձել ոչ մահուան պատիժը, և ոչ ցմահ բանտարկութիւնը, բայց եթէ դատելու լինենք à priori, այն ժամանակ, ըստ իս, մահուան պատիժն աւելի բարոյական է և մարդասիրական, քան բանտարկութիւնը։ Մահուան պատիժն սպանում է մի-

անգամից, իսկ ցմահ բանտարկութիւնը հետզհետէ։ Ձեզ եմ հարցնում. ո՞ր դահիճն է առաւել մարդասէր։ Նա, որ ձեզ կսպանէ մի քանի րոպէի մէջ, թէ նա, որ ձեր կեանքը դուրս կկորզէ տարիների ընթացքում։

—Թէ մէկը և թէ միւսը հաւասարապէս անբարոյական է,—նկատեց հիւրերից մէկը, - որովհետև երկուսն էլ միևնոյն նպատակն ունին՝ խլել կեանքը։ Պետութիւնը—Աստուած չէ։ Նա իրաւունք չունի խլել ինչ որ անկարող է կրկին վերադարձնել, եթէկամենայ։

Հիւրերի թւում կար և մի իրաւաբան, մօտ քսան և հինգ տարեկան մի երիտասարդ։ Երբ նորա կարծիքը հարցրին, նա պատասխանեց.

—Թէ մահուան պատիժը և թէ ցմահ բանտարկութիւնը հաւասարապէս անբարոյական է, բայց, եթէ ինձ առաջարկէին ընտրել մահուան պատիժ կամ ցմահ բանտարկութիւն, այն ժամանակ, ի հարկէ, ես երկրորդը կընտրէի։ Կեանքը, ինչպէս էլ տպրելու լինինք, աւելի լաւ է, քան չապրելը։

Տաք վիճաբանութիւն սկսուեցաւ։ Սեղանաւորը, որ այն ժամանակ առաւել երիտասարդ ու ջղային էր, յանկարծ չափազանց տաքացաւ, բռունցքով սեղանին զարկեց և գոչեց, դառնալով երիտասարդ փաստաբանին.

—Ճշմարիտ չէ։ Գրազ եմ գալիս ձեզ հետ երկու միլիոնով, որ դուք հինգ տարի անգամ բանտում նստելու համբերութիւն չէք ունենայ։

—Եթէ լրջութեամբ էք ասում այդ, —պատասխանեց իրաւաբանը,—ապա գրազ եմ գալիս, որ կնստեմ ոչ միայն հինգ, այլ նոյն իսկ տասնհինգ տարի։

—Տասնհինգ։ Համաձայն եմ,—գոչեց սեղանաւորը։—Պարոններ, դնում եմ երկու միլիոն։

—Համաձայն եմ։ Դուք դնում էք երկու միլիոն, իսկ ես իմ ազատութիւնս,—ասաց փաստաբանը։

Եւ այդ վայրենի, անմիտ գրազը ընդունուեցաւ։ Սեղանաւորը, որ այն ժամանակ իւր միլիոնների հաշիւը չգիտէր, երես առած և թեթևսոլիկ, հրճուած էր իւր գրազով։ Ընթրիքի ժամանակ նա զուարճանում էր ի հաշիւ փաստաբանի և ասում.

—Խելքի եկէք, երիտասարդ պարոն, քանի ուշ չէ։

Ինձ համար երկու միլիոնը մի չնչին բան է, իսկ դուք ձեր կեանքի երեք չորս լաւագոյն տարիների հետ էք խաղում։ Ասում եմ երեք-չորս, որովհետև դուք համբերութիւն չէք ունենայ տառաւել երկար նստելով։ Մի մոռանաք, դժբաղդ, որ կամաւոր արգելանքն առաւելածանր է պարտաւորիչ բանտարկութիւնից։ Այն միտքը, որ դուք իւրաքանչիւր րոպէ իրաւունք ունիք ազատութիւն գտնելու, բանտում ձեր կեանքը կթունաւորէ։ Ես ցաւում եմ ձեզ վրայ։

Եւ այժմ սեղանաւորը անկիւնից-անկիւն քայլելով, լիշում էր այդ բոլորը և հարցնում ինքն իրեն։

—Ի՞նչ միտք ունէր այս գրազը։ Ի՞նչ օգուտ, թէ իրաւաբանը տասնեհինգ տարի կորցրեց իւր կեանքից, իսկ ես երկու միլիոն եմ դուրս նետում։ Կարող է այդ բանը ապացուցանել մարդիկներին, որ մահուան պատիժն աւելի վատթար կամ աւելի լաւ է ցմահ բանտարկութիւնից։ Ոչ և ոչ։ Անմտութիւն և լիմարութիւն։ Իմ կողմից դա զեղխացած ու լղփացած մարդու բոլէական քմահաճոյք էր, իսկ փաստաբանի կողմից— պարզ դրամական ագահութիւն...

Ապա նա լիշեց, թէ ինչ պատահեց նկարագրած երեկոյից յետոյ։ Վճռուեցաւ, որ փաստաբանը իւր բանտարգելութիւնը պիտի կրէ սեղանաւորի պարտիզում շինուած մի առանձին շէնքի մէջ, ամենախիստ հսկողութեան տակ։ Պայմանաւորուեցան, որ տասնեհինգ տարուայ ընթացքում նա զրկուած պիտի լինի իւր բնակարանի շէմքից դուրս ոտք կոխելուց, մարդիկներ տեսնելուց, մարդկային ձայն լսելուց և նամակներ ու լրագիր ստանալուց։ Նորան իրաւունք էր տրուում ունենալ երաժշտական գործիք, կարդալ գրքեր, նամակներ գրել, գինի խմել և ծխել։ Արտաքին աշխարհի հետ ըստ պայմանի, նա կարող էր յարաբերութիւն ունենալ, միայն լուռ ու մունջ, մի փոքրիկ պատուհանի միջով, որ յատկապէս այդ բանի համար շինուած էր։ Ամեն բան, ինչ որ պէտք էր,— գրքեր, երաժշտական խաղեր, գինի և այլն, նա կարող էր ստանալ տոմսակով ինչ քանակութեամբ որ ցանկանար, միայն լուսամուտի միջից։ Պայմանը նախատեսած էր ամեն մանրամասնութիւն և

չնչին հանգամանք, որով բանտարկութիւնը խիստ միակեցիկ էր դարձնում և պարտաւորեցնում էր փաստաբանին նստել ոչնչող տասնհինգ տարի, այն է 1870 թ. նոյեմբերի 14-ի առաւօտեան 12 ժամից մինչև 1885 թուականի նոյեմբերի 14-ի առաւօտեան 12 ժամը։ Փաստաբանի կողմից պայմանը խախտելու ամենաչնչին փորձը, նոյն իսկ պայմանաժամից երկու րոպէ առաջ, սեղանաւորին ազատ էր կացուցանում երկուց միլիոնը վճարելու պարտաւորութիւնից։

Բանտարգելութեան առաջին տարին փաստաբանը որչափ կարելի էր դատել նորա համառօտ տոմսերից սատակ նեղւում էր միայնակութիւնից և ձանձրութիւնից։ Նորա բնակարանից օր ու գիշեր շարունակ դաշնակի ձայն էր լսւում։ Նա հրաժարուեցաւ գինուց և ծխախոտից։ Գինին, գրում էր նա, գրգռում է ցանկութիւններ, իսկ ցանկութիւնները — բանտարկեալի առաջին թշնամիներն են. աւելացնենք և այն, որ լաւ գինի խմել ու ոչ օգի չտեսնելուց աւելի ձանձրալի բան լինել չէ կարող։ Իսկ ծխախոտը նորա սենեակի օդն էապականում։ Առաջին տարին փաստաբանն ստանում էր առաւել թեթև բովանդակութեամբ գրքեր, — սիրային բարդ ու կնճռալի իմաստով վէպեր, քրէական և երևակայական պատմուածքներ, կատակերգութիւններ և այլն։

Երկրորդ տարին ռոմանական բնակարանում այլևս չէր լսւում դաշնակի ձայն և փաստաբանը իւր տոմսակներով պահանջում էր դասական երկեր։ Հինգերորդ տարին նորից լսուեցաւ դաշնակի ձայնը և բանտարկեալը խնդրեց գինի ուղարկել։ Նոքա, որոնք դիտում էին նորան լուսամուտից, պատմում էին, որ այդ ամբողջ տարին նա միայն ուտում, խմում և պառկած էր անկողնի վրայ, յաճախ յօրանջում էր, զայրացած խօսում ինքն իրեն։ Գրքեր չէր կարդում։ Երբեմն գիշերները նա նստում էր գրելու. գրում էր երկար և առաւօտեան դէմ բոլոր գրածները մանր բզկտում։ Յաճախ էին լսում, թէ ինչպէս լալիս էր նա։

Վեցերորդ տարուայ երկրորդ կիսամեկին նա մեծ եռանդով սկսեց ուսումնասիրել լեզուներ, փիլիսոփա-

յութիւն և պատմութիւն։ Նա ագահութեամբ կպել էր այդ գիտութիւններին և սեղանաւորը հազիւ էր կարողանում նոր գրքեր բերել տալ նորա համար։ Չորս տարուայ ընթացքում, նորա պահանջմամբ, բերել տըրուեցաւ մօտ վեց հարիւր հատոր։ Այդ յափշտակութեան շրջանում սեղանաւորը ի միջի այլոց ստացաւ այսպիսի մի նամակ. — «իմ յարգելի բանասէր. Այս տողերը գրում եմ ձեզ վեց լեզուով։ Ցոյց տուէք այդ ձեռնհաս և գիտակ անձանց։ Թող կարդան։ Եթէ նոքա այդտեղ ոչ մի սխալ չեն գտնիլ, ապա աղաչում եմ ձեզ, հրամայեցէք որ պարտիզում հրազէն պարպեն։ Հրազէնի ձայնը ինձ կպէտք, որ իզուր չեն կորել իմ ջանքերը։ Բոլոր դարերի և բոլոր երկիրների հանճարները խօսում են զանազան լեզուներով, բայց նոցա բոլորի մէջ ես նոյն հուշն է բոցավառւում։ Օ՜, եթէ դուք իմանայիք, թէ ի՞նչ երկնային բաղտաւորութեամբ է համակուած հոգիս այն զգացմամբ, որ ես նոցա բոլորին ես հասկանում եմ»։ Կալանաւորի ցանկութիւնը կատարուեցաւ։ Սեղանաւորը հրամայեց պարտիզում երկու անգամ հրազէն պարպել։

Տասներորդ տարուց յետոյ փաստաբանը անշարժ նստած էր սեղանի մօտ և միայն Աւետարան էր կարդում։ Սեղանաւորի համար օտարօտի էր թւում, որ մի մարդ, որ չորս տարուայ ընթացքում կարողացել է վեց հարիւր հատոր գիտուն գրքեր կլանել, մօտ մի տարի էր կորցնում մի շատ դիւրըմբռնելի և բարակ գրքի վրայ։ Աւետարանին յաջորդեցին կրոնների պատմութիւնն ու աստուածաբանութիւնը։

Բանտարգելութեան վերջին երկու տարուայ ընթացքում կալանաւորը խիստ շատ էր կարդում և ոչանց որևէ ընտրութեան։ Երբեմն նա զբաղւում էր բնական գիտութիւններով, երբեմն պահանջում էր Բայրըն կամ Շէքսպիր։ Այնպիսի տոմսեր էր գրում, որով պահանջում էր միաժամանակ և բնաբուծութեան և բժշկական ձեռնարկ, և վէպ և որևէ փիլիսոփայական կամ աստուածաբանական գիտական քննադատութիւն։ Նորա ընթերցասիրութիւնը նմանում էր այն բանին, որ իբր նա լողում էր ծովում իւր խորտակուած

նաւի բեկորների մէջ և., կամենալով ազատել իւր կեանքը՝ ագահութեամբ վրայ էր պրծնում բռնելու մի կամ միւս բեկորը։

II.

Ծերունի սեղանաւորը յիշում էր այս բոլորը և մտածում.

«Վաղը ժամը 12-ին նա ազատութիւն է ստանում։ Պայմանի համաձայն, ես պարտաւոր եմ երկու միլիոն հատուցանել նորան։ Եթէ ես հատուցանեմ, ապա ամեն ինչ կորած է,—ես բոլորովին տնաքանդ կլինիմ...»։

Տասնուհինգ տարի առաջ նա իւր միլիոնների հաշիւը չգիտէր. իսկ այժմ նա վախենում էր ինքն իրեն հարցնելուց՝ ինչ ունի աւելի պարզք թէ դրամ։ Բորսային յանդուգն խաղերը, վտանգաւոր շահադիտական ձեռնարկութիւնները և բռնկուող բնաւորութիւնը, որից նա չկարողացաւ ազատուել նոյն իսկ ծերութեան ժամանակ, կամաց-կամաց նորա գործերը անկման հասցրին և աներկիւղ, ինքնավստահ, հպարտ մեծատունը միջին կարգի սեղանաւոր էր դարձել, որի դողն է բռնում արժէթղթերի գների իւրաքանչիւր տատանումն և նուազումը։

—Անիծեա՛լ գրազ,—փնթփնթում էր ծերուկը և յուսահատութիւնից մազերը փետում։—Ինչո՞ւ չմեռաւ այն մարդը։ Նա դեռ ևս քառասուն տարեկան է։ Նա կառնէ իմ վերջին ունեցածս, կամուսնանայ, կզուարճանայ և կվայելէ կեանքը, կխաղայ բօրսայում, իսկ ես՝ ինչպէս մի ագքատ, ողորմելի, ամեն օր նախանձով պիտի դիտեմ նորան և լսեմ նորանից միևնոյն խօսքերը. «Եա իմ բաղտաւորութիւնը ձեզ եմ պարտական, թոյլ տուէք օգնել ձեզ»։ Ո՛չ. սա արդէն չափազանց է։ Սնանկութիւնից և խայտառակութիւնից ազատուելու միակ միջոցը—այդ մարդու մահն է։

Ժամը երեքը խփեց։ Սեղանաւորը ուշադրութեամբ ականջ էր դնում՝ տանն ամենքը քնած են և լսելի էր միայն թէ ինչպէս դուրսը ցրտահար ծառերը սոսափում էին։

Աշխատելով ոչ մի ձայն-ծպտուն չհանել, նա ան-

ֆիզելի արկղից հանեց այն դռան բանալին, որ տասն և հինգ տարի չէր բացուել, հագաւ վերարկուն և տնից ելաւ։

Պարտիզում մութ էր և ցուրտ։ Անձրև էր գալիս։ Սուր, կծու խոնաւ քամին փչում էր պարտիզում և հանգիստ չէր տալիս ծառերին։ Սեղանաւորը ամբողջապէս տեսողութիւն էր դարձել, բայց չկարողանալով տեսնել ոչ գետինը, ոչ սպիտակ անդրիները, ոչ առանձնակ բնակարանը, ոչ ծառերը։ Մօտենալով այն տեղին, ուր գտնուում էր բանտարկեալի առանձնակ բնակարանը նա երկու անգամ կանչեց պահապանին։ Պատասխան չկար։ Անկասկած, պահապանը փախել էր անտանելի եղանակի երեսից և այժմ մրափում էր կամ խոհանոցում և կամ ջերմոցի մի անկիւնում։

«Եթէ ես արիութիւն ունենամ կատարելու իմ մտադրութիւնս,—մտածեց ծերուկը,—ապա կասկածն ամենից առաջ պահապանի վրայ կընկնի»։

Մթութեան մէջ շօշափեց աստիճանները և դուռը և մտաւ առանձնակի նախասենեակը, ապա խարխափելով հասաւ մի փոքր միջանցք և լուցկի վառեց։ Ոչ ոք չկար։ Ինչ որ մահճակալ էր դրուած, առանց անկողնի, իսկ անկիւնում սեւին էր տալիս թուջէ վառարանը։ Կալանաւորի սենեակի դռների կնիքները անվնաս էին։

Երբ լուցկին մարեց, ծերուկը, յուզումից ամբողջապէս դողալով, նայեց փոքրիկ լուսամուտի միջից։

Կալանաւորի սենեկում աղօտ վառւում էր մոմը, ինքը՝ կալանաւորը նստած էր սեղանի մօտ։ Նշմարւում էր միայն մէջքը, գլխի մազերը և ձեռքը։ Սեղանի, երկու բազկաթոռների և գորգի վրայ ընկած էին բաց գրքեր։

Անցաւ հինգ րոպէ, բայց կալանաւորը ոչ մի անգամ չշարժուեցաւ։ Տասն և հինգ տարուայ արգելանքը սովորեցրել էր նորան անշարժ նստելը։ Սեղանաւորը մատով թխթխկացրեց լուսամուտը, բայց կալանաւորը այդ ձայնին ևս չպատասխանեց ոչ մի շարժումով։ Այն ժամանակ սեղանաւորը զգուշութեամբ սրոկեց դռան կնիքները և բանալին փականքի ծակն անցրեց։ Ծանգոտած փականքը խռպոտ ձայն հանեց և դուռը ճռռաց։ Սեղանաւորը սպասում էր, որ ահա կլսուի զարմացման բացականչութիւն և քայլեր, բայց երեք

բոպէ անցաւ, իսկ դռան միւս կողմը նախկին լռութիւն էր տիրում։ Նա վճռեց ներս մտնել։

Սեղանի առաջ նստած էր մէկը, որ ամենևին նման չէր սովորական մարդիկներին։ Դա մի կմախք էր, որ լոկ միայն մորթով էր պատած, երկար կանացի հիւսակներով և թանձր մօրուսով։ Դէմքը դեղին էր, հողի գոյն ստացած, ալտերը խոր ընկած, թիկունքը երկար և նեղլիկ, իսկ այն բազուկը, որի վերայ յենած էր գլուխը, մինչ այն աստիճան բարակ էր և նիհար, որ նայել չէր կարելի։ Ալիքն արդէն փայլում էր նորա մազերում և դիտելով այդ հիւծուած, զառամեալ դէմքին, ոչ ոք չէր հաւատայ, որ նա միայն քառասուն տարեկան է։ Նա քնած էր... Նորա խոնարհած գլխի առաջ մի թերթ թուղթ կար, որի վրայ, խիստ մանր գրով, ինչ որ բան էր գրուած։

«Զարմելի մարդ,—մտածեց սեղանաւորը։ Քնած է և անշուշտ միլիոններ է երազում։ Սակայն բաւական է միայն, որ վերցնեմ այս կիսամեռին, ձգեմ անկողնի վրայ բարձր թեթևակի բերնին սխմեմ և ամենաբարեխիղճ բժշկական քննութիւնն իսկ ա՛ կարող կլինի բռնի մահուան հետքեր գտնել։ Բայց, նախ կարդանք թէ ինչ է գրել սորա վրայ...

Սեղանաւորը վերցրեց սեղանի վրայից թերթը և կարդաց հետևեալը

—Վաղը առաւօտեան 12 ժամին ես ազատութիւն պիտի ստանամ, ինչպէս և մարդկանց հետ յարաբերութիւն ունենալու իրաւունք։ Բայց նախ քան ես կը թողնեմ այս սենեակը և արև կտեսնեմ, ես պարտք եմ համարում ձեզ մի քանի խօսք ասել։ Մաքուր խղճով և Աստուծոյ առաջ, որ տեսնում է ինձ, յայտնում եմ ձեզ, որ ես ատում եմ և ազատութիւնը, և կեանքը, և առողջութիւնը և այն ամենը, ինչ որ ձեր գրքերի մէջ աշխարհային բարիք է կոչւում։

«Տասն և հինգ տարի շարունակ ես ամենայն ուշադրութեամբ ուսումնասիրեցի երկրային կեանքը։ Ճշմարիտ է, ես չեմ տեսել ոչ աշխարհը, ոչ էլ մարդկանց, բայց ձեր գրքերի մէջ ես խմել եմ նեկտար և անուշաբոյր գինի, երգել եմ երգեր, անտառներում

սլացել եմ եղջերուների և վայրի վարազների յետևից, սիրել եմ կանանց... Ձեր հանճարեղ բանաստեղծների կախարդանքով ստեղծագործած ամպի չափ թեթև, եթերային գեղեցկուհիները ինձ այցելում էին գիշերները և հրաշագուն հեքեաթներ էին մրմնջում ականջիս, որից արբենում էր դլուխս։ Ձեր գրքերի մէջ ես Էլբրուսի և Մոնբլանի գագաթներն էի սաւառնում և այնտեղից դիտում, թէ ինչպէս առաւօտները ծագում էր արևը և ինչպէս երեկոները նա ոսկեզօծում էր երկինքը, ովկիանոսը և լեռնային կատարները իւր ծիրանեգոյն բոսորով. ես տեսնում էի այնտեղից, թէ ինչպէս իմ գլխավերևս, ամպերը ճեղքելով, փայլատակում էր կայծակը. ես տեսնում էի սաղարթագեղ անտառներ, դաշտեր, գետեր, լճեր, քաղաքներ, լսում էի յուշկապարիկների ու համբարուների հրաշալի երգերը և հովուական սրինգների դայլայլիկները, շօշափում էի գեղանի դևերի թևերը, որոնք թռչում ինձ մօտ էին գալիս զրուցելու Աստուծոյ մասին... Ձեր գրքերում ես անյատակ անդունդներն էի գահավիժում, հրաշքներ կատարում, սպանում, քաղաքներ հրոյ ճարակ դարձնում, նոր կրօններ քարոզում, ամբողջ հարստութիւններ, պետութիւններ նուաճում...

«Ձեր գրքերն ինձ իմաստութիւն պարգևեցին։ Այն ամենն, ինչ որ մարդկային յոգնաշխատ միտքը դարերով է ստեղծագործել, իմ գանգի մէջ սեղմուած է մի փոքրիկ կոէթի, կտորի մէջ։ Ես գիտեմ, որ ձեզնից՝ ամենքիցդ ևս խելօք եմ։

«Ես արհամարհում եմ ձեր գրքերը. արհամարհում եմ աշխարհի բոլոր բարիքներն ու իմաստութիւնը։ Ամեն ինչ դատարկ է, եղծանելի ու ապականացու, ցնորական ու խաբուսիկ, ինչպէս շամանդաղ։ Վնաս չկայ, որ դուք հպարտ էք, իմաստուն և գեղեցիկ, բայց մահը ձեզ էլ կարբէ կտանէ աշխարհիս երեսից, ինչպէս յատակի տակ ծածկուած մկներին, իսկ ձեր սերունդը, պատմութիւնը, ձեր հանճարների անմահութիւնը կսառչին կամ կայրուին երկրագնդի հետ։

«Դուք խելայեղ էք դարձել, լիմարացել և գնում էք ոչ հարկաւոր ուղղութեամբ։ Ստութիւնը դուք իբր

ճշմարտութիւն էք ընդունում և ուձևութիւնն իբր գեղեցկութիւն։ Դուք կզարմանայիք, անշուշտ, եթէ որևէ հանգամանքի շնորհիւ խնձորենիների կամ նարնջենիների վրայ նոցա պտուղների փոխարէն գորտեր և խլէզներ բսնէին կամ թէ վարդերը քրսնած ձիու հոտ տալ սկսէին, ճիշտ այդպէս էլ ես եմ զարմանում ձեզ վրայ, որ երկինքը երկրի հետ էք փոխել։ Ես չեմ կամենում ըմբռնել ձեզ։

«Որպէս զի գործով ապացուցանեմ թէ արհամարհում եմ այն, ինչով դուք էք ապրում, ես հրաժարւում եմ երկու միլիոնից, որի մասին երբեմն երազում էի, ինչպէս գրախտի մասին, և որ այժմ արհամարհում եմ։ Որպէս զի այդ երկու միլիոնն ստանալու իրաւունքից զրկուիմ, ես դուրս կգամ այստեղից պայմանաժամից հինգ ժամ առաջ և այդպիսով կխախտեմ պայմանը...»։

Կարդալով այդ բոլորը սեղանաւորը թերթը կրկին սեղանի վրայ դրեց, համբուրեց օտարօտի մարդու գլուխը, արտասուեց և ելաւ նորա բնակարանից։ Երբէք, մի այլ ժամանակ, նոյն իսկ բօրսայում սաստիկ տանուլ տալուց յետոյ, նա երբէք այնքան խիստ արհամարանք չէր զգացել դէպի իւր անձը, ինչպէս այդ րոպէին։ Տուն դառնալով, նա անկողին մտաւ, բայց յուզումն ու արտասուքը երկար ժամանակ չէին թողնում, որ նա քնէ...

Հետևեալ օրն առաւօտեան դալկահար պահապանները վազելով եկան յայտնեցին նորան, թէ ինչպէս տեսան իրենք, որ առանձնակ բնակարանում ապրող մարդը, լուսամուտից պարտէզ թռաւ, գնաց դէպի դարբասը և անյայտացաւ։ Սեղանաւորն իսկոյն, ծառաների հետ, գնաց բանտարկեալի կացարանը և հաւաստիացաւ, որ իւր բանտարկեալը փախել է։ Որպէս զի աւելորդ տարաձայնութիւնների տեղիք չտրուի, նա սեղանից վերցրեց հրաժարման թերթը և, տուն դառնալով, դրեց անկիզելի արկղի մէջ։

Տ. Վ.

ԾՆՆԴԵԱՆ ԳԻՇԵՐԸ

Արծաթափայլ լուսնեակը,
Շրջապատած աստղերով,
Կատարում է իւր ընթացքը
Հանդարտ ու պարզ գիշերով:

Խաղաղութիւն է երկնքում,
Խաղաղուի՛ր դու էլ ե՛րկիր.
Ահա՛ Ցիսուս կոյս մօր գրկում,
Եղբա՛յր, եղբօրդ գրկի՛ր:

Ատելութիւնն ու թշնամանք
Թող աշխարհից վերանան,
Մարդիկ կազմեն մի սիրտ համայնք
Սիրով կապուին միանան:

Եւ ձայնակցեն հրեշտակներին,
Փառք ի բարձունս երգելով,
Որ մեզ խղճաց Տէրն երկնային,
Մարդկանց Փրկիչ ղրկելով:

ԲԱՐԵՍԻՐՏ ՄԱՐԴ

Ես քնում եմ տաք անկողնում,
Երբէք չրտից չեմ կոնկոռնում,
Փորս կուշտ է, սիրտս ուրախ,
Երբէք քաշում չեմ ախ ու վախ:

Տունս պատրաստ զեղեցկաշէն,
Կահ կարասիքս թանկ արժեն,
Եւ ամեն օր խնջոյք, երգ, պար
Ձեն պակասում տանս իսպառ:

Բայց կան, որոնք չունին տաք շոր,
Ման են գալիս բոբիկ, տկլոր.
Ձոր հացին էլ կարօտ են միշտ,
Նոցա կեանքն է անընդհատ վիշտ:

Բայց ո՞ր մէկին հաց տամ, օգնեմ.
Անչափ շատ են, ես կը յոգնեմ:—
Շատ մտածել զո՛ւր է, չարժէ՛.
Նոցա հոգսն էլ Աստուած քաշէ:

ԳԷՈՐԳ ԲԱՐԵՍԻՐԴԱՐԵԱՆՑ

ՍԻՄՈՆԱ

Ծննդեան պատմութիւն.

ՊՕԼ ԲՈՒՐԺԷԻ

Տանեմէկ ժամն է։ Դուրսը փոթորկալից ցուրտ գիշեր է։ Ձեան տարափները առատ թափւում են երկնքից։ Կոմս դ'Էյսևի փոքրիկ ապարանքում, որ գտնւում է Մոնսօ ծառաստանին շատ մօտ, այս Ծննդեան գիշերը լրութիւն է տիրում, մի լռութիւն, որ նշան է խորին սգի։ Զկայ փարիզեցի, որ կոմս դ'Էյսևի անունը լսելիս՝ չյիշէ երիտասարդ կոմսուհու ողբերգական վախճանը, որ մեռել էր գարնանը, ձիուց վայր ընկնելուց։ Ես ինքս, երբ մտածում եմ նորա մասին, չեմ կարող չյիշել «Բաղդադի իշխանուհու» առաջին ներկայացումը՝ առանց երևակայելու հրաշալի երիտասարդ տիկնոջը իւր օթեակում, շէկ մազերը երկու հիւս բաժանած. նորա երկարուկ երեսը, քնքոյշ գունատութիւնը և մոյգ աչքերը, որ թեթև կարճատեսութիւնից մի փոքր շլում էին, երբ լաւ տեսնելու համար՝ նա չէր, որի նախշուն կոթը նա այնպէս գեղեցիկ շարժում էր իւր բարակ մատներով։ Կոմսուհին երեք որդի էր թողել. երկու տղայ, մեծը—Պիէռը, տասնըմէկ տարեկան, փոքրը—Արմանը, տասը, և

Simone, récit de Noël, par Paul Bourget.

մի փոքրիկ աղջիկ Սիմոնան, որ դեռ ութը տարեկան չկար։

Փոքրիկ երեխաները ապրում են ապարանքի երկրորդ յարկում։ Երկու տղան միևնոյն սենեակումն են բնակւում։ Փոքրիկ Սիմոնան, վերջին երեխան, իւր առանձին սենեակն ունի։ Եւ այս Ծննդեան սարսափելի գիշերը, երբ աղքատ երեխաները ցրտից դողում են փողոցներում, հարուստ երեխան իւր տաք սենեակում, ուր հանգչում է կրակը, սառնութիւն է զգում սըրտումը։ Ամբողջ սենեակը, ծածկող գորգը, բաց գոյնով ներկած մահճակալը շրջապատող վարդագոյն և կանաչ վարագոյրները, վարդագոյն պահարանը, կոմոդը և փոքրիկ գրասեղանը, սեղանի վրայ ցրուած գեղեցիկ և քնքոյշ հագուստի պարագաները, ամէն բան ցոյց է տալիս թէ ինչպիսի փարթամութեամբ պահում էր կոմսուհին իւր սիրած երեխային։ Նա պարծենում էր, երբ իւր բարեկամները՝ այդ սենեակը այցելելիս, ասում էին. «Օ՜հ, սիրելիս, մեզ սորա հասակում այսպէս երես չէին տալիս...» Սակայն ինչպէս դժբաղդ է զգում իրան Սիմոնան, այս տաք ապաստանարանում, ուր նա մենակ իւր մտքերի հետ է։ Նա մտածում է, որ մօր մահից յետոյ մի բան փոխուել է իւր համար և որ սիրոյ մթնոլորտը, ուր ապրում էր նա, յանկարծ սառեց։

Յատկապէս մահը չէր նորան ցաւ պատճառում։ Նորա հասակում այդ «մահ» սարսափելի բառը զարհուրելի իրողութեան պատկերը չէ ներկայացնում-Պէրլաշէզի բլուրը, մի դամբարան հարիւրների մէջ, մի դագաղ այդ դամբարանի մի մասում և այդ դագաղում ընդմիշտ անշարժ մի մարմին, որ ժամ առ ժամ փտում է։ Ո՛չ, մեռած մայրը, անմեղ մանկական երևակայութեան մէջ, թռել է երկինք և ապրում է երջանիկ այն հեռու, անասելի զուարճութիւններով լի ընդարձակ տեղում, որտեղ բնակւում են հրեշտակները, որ թռչում են, ինչպէս նկարած է նորա աղօթագրքի մէջ. այնտեղ Սիմոնան ինքն էլ յոյս ունէր միանալու մեռած մօր հետ, որին նա միշտ պատկերացնում է այնպէս երիտասարդ, այնպէս գեղեցիկ։ Նա չէր տեսել մօրը՝ աչքերը փակ, բերանը բաց, ճակատը սառած և արիւնաթաթախ։

Կոմսի առաջին հոգսն եղաւ իւր բոլոր երեխայոցը Վերսայլ իւր մօր մօտ ուղարկելը։ Նոցա սև զգեստներ հագցրին, առանց պատճառը յայտնելու։ Երեխայքը միայն այն ժամանակ հասկացան, որ մեծ անբախտութիւն է պատահել, երբ իրանց նայող աչքերի մէջ կարեկցութիւն նկատեցին։ Բայց այդ զգացումը երեխաներին շրջապատողներն աշխատում էին մեղմացնել, տանելով նոցա խաղալու ընդարձակ անտառը, որ այնպէս գեղեցիկ էր այդ ապրիլի օրերին, լի արձաններով և սիրուն շատրուաններով։ Ցետոյ հայրը եկաւ նոցա տեսնելու. «Իսկ մայրիկը...» հարցրին երեքն էլ։ Կոմսը համբուրեց նոցա արտասուքից խեղդուելով։ Նորա դէմքը սաստիկ տխուր էր։

Մի բան, որ աւելի է յիշում փոքրիկ Սիմոնան, այդ այն է, որ հէնց այդ օրուանից նա հասկացաւ անբացատրելի, անմիտ, իւր խեղճ մանկական խելքի համար, համարեա հրէշաւոր երևոյթը, որ հայրն առաջուան պէս չէր սիրում իրան... Եւ այդ պատճառով էլ երեխան այս Ծննդեան գիշերը արթուն է մնում, փոխանակ հանգիստ քնելու, ինչպէս կողքի սենեակում անհոգ քնած են իւր եղբայրները։

Հայրն այլևս նորան չի սիրում։ Նորա փոքրիկ երևակայութեան առաջ անցնում են պատկերներ, որոնք բոլորն էլ այդ եզրակացութեանն են բերում նորան։ Հայրը նորան չէ՞ սիրում, նորան, որ առաջ նորա սիրեցեալն էր... Սիմոնան տեսնում է Վերսայլի անտառի ծառուղին, որտեղ առաջին անգամ նա ստացաւ այդ տպաւորութիւնը, առանց հասկանալու թէ այն ժամանակը, թէ հիմա այն մարդու յարաբերութեան փոխուելու պատճառը, որ մի ժամանակ չէր կարող մի քառորդ ժամ մնալ նորա հետ, առանց փայփայելու։ Նա զբօսնում էր Պիէռի և Արմանի հետ, իւր դաստիարակչուհի Օր. Մարիի ուղեկցութեամբ։ Յանկարծ երևաց հայրը. աղջիկը սրտանց ուրախացած վազեց հօր առաջը։ Բայց նորա աչքերի հայեացքից, իւր համբոյրներ ընդունելու ձևից, երեխան զգաց, որ հայրն էլ նոյնը չէ իւր վերաբերութեամբ։ Սիմոնան առաջ զարմանք, յետոյ մի տեսակ երկիւղ զգաց։ Սակայն, ինչ վատ բան էր արել

նա այդ օրը։ Ինչու՞ հայրը ասաց նորան այն ձայնով, ինչպէս խօսում էր միայն այն օրերը, երբ նա արժանի էր լինում նկատողութեան. «Օրիորդի հետ գնա», մինչ ինքը գնում էր Պիէռի կամ Արմանի ձեռը բռնած, բայց ոչ իւր... Այդ ժամանակուանից հայրը նորա հետ ուրիշ կերպ չէր խօսում։

Եւ հազար մի մանր մունր բաների մէջ, որից բաղկացած է նրա մանկական կեանքը, նկատւում էր հօր կատարելապէս փոխուած լինելը, մի հանգամանք, որ երեխան չէ կարող բացատրել, որովհետև նա իրան անպայման անմեղ էր զգում։ Մօր կենդանի ժամանակն՝ առաւօտները վերկենալուն պէս, Սիմոնան գնում էր առաջ իւր խեղճ մօր սենեակն և յետոյ հօր մօտ, որ երկար փայփայում, գուրգուրում իր նորան։

Վերջացան այդ այցելութիւնները, էլ չկան փաղաքշական խօսքերը, վերջացաւ ծիծաղը, որ առաջ էին բերում իւր ամենաչնչին խօսքերը. այդ մարդը էլ չէր ուզում երեխային տեսնել։ Սիմոնան չէ համարձակւում այլ ևս նայել հօր աչքերին այն ժամանակուանից, երբ նկատեց նոցա մէջ մինչև իւր հոգու խորքը թափանցող սառնութիւնը։ Նա չէ համարձակւում մօտենալ հօրը, բռնել նորա ձեռը և համբուրել, այն օրուանից, երբ հայրը այնպիսի կոպտութեամբ յետ քաշեց ձեռը, երբ նա թոյլ տուեց իրան մի օր այդ փաղաքշանքը, այն ձեռը, որ առաջ միշտ զբաղուած էր լինում երեխայի գանգուրները կամ այտերը շոյելով։ Ի զուր նա աշխատում է աւելի բարեխղճութեամբ կատարել իւր մանկական աշխատանքները, որպէս զի օրիորդը առիթ չունենայ իրան նկատողութիւն անելու. երբէք մի գովասանք չէ վարձատրում նորա աշխատանքը և նորան թւում է, որ հօր անարդարութիւնը ազդել է իւր բոլոր շրջապատողների վրայ, եղբայրներից սկսած, որ այնպիսի կոպտութեամբ են վարւում իւր հետ, մինչև օրիորդը, որ աւելի անհամբեր է դարձել...

Եւ ո՞ւմ գանգատուի։ Վերսայլի բարի տատը այնպէս թոյլ, այնպէս խուլ է և նորան համարեա բոլորովին չէ տեսնում։ Հօրը գանգատուի, նա իրան նորա

առաջ բոլորովին ճնշուած է զգում մի տեսակ սարսափով, որից չէ կարողանում ազատուել։

Մի ժամանակ նա մի բարեկամ ունէր, Պ. դ'Այդին, իւր կնքահայրը։ Նա այլ ևս չէ գալիս նոցա տունը։ Մի քանի տնգամ երեխան հանդիպել էր նորան Շանզ-Էլիզէ փողոցում, բայց նա բաւականանում էր օրիորդին բարևելով, առանց նոցա հետ խօսելու, —այն ինչ նա նկատել էր, որ մարկիզը երկար հետեւում էր նորան աչքերով։ Ինչո՞ւ կնքահայրն էլ է մուացել նորան, որ առաջուայ պէս սիրում է իւր սանիկին. երեխան այդ շատ լաւ էր նկատել նորա հայեացքից։ Սիմոնան այնպէս է զգում, իբր թէ ընկել է օտար մարդկանց մէջ, որոնք իրան արհամարհում են կամ մինչև անգամ ատում են։

Նա լսում է, ինչպէս քամին փչում, երկար հառաչում է, հեռանում, նորից մօտենում և խփում է փակած լուսամուտների փեղկերին և ականջ է դնում, որ իմանայ, թէ քնա՞ծ են տանը։ Բանն այն է, որ Սիմոնան մի մեծ ծրագիր է կազմել... Որովհետև փոքրիկ Յիսուսը պիտի իջնի այս գիշեր և լցնի քաղցրաւենիքով և խաղալիքներով վառարանի մօտ դրած կօշիկները՝ պարապելու սենեակում, ինչո՞ւ չդիմէ նա Նորան, որ Նա թեթևացնէ իրան այնպէս խիստ տանջող վիշտը։ Փոքրիկ Յիսուսը ապրում է երկնքում, իսկ Սիմոնային ասել են, որ իւր մայրն էլ երկնքումն է։ Եւ նա միտք յղացաւ նամակ գրել իւր մօրը։ Նա կրդնէ նամակը կօշկի վերայ։ Փոքրիկ Յիսուսը անպատճառ կըտեսնէ նամակը, կըվերցնէ և կըհասցնէ մօրը։ Ուստի նա մինչոց գտաւ երկու, երեք օրում մի նամակ գրելու մօրը, որ խնամքով փակել էր ծրարի մէջ և վրան դողդոջուն ձեռով գրել էր այս հասցէն. «Մայրիկիս, երկնքումը...» Բայց նա երբէք չէր համարձակւում դնել նամակը օրիորդի և եղբայրների ներկայութեամբ... Հիմա բոլորը քնա՞ծ են։ Ոչ մի ձայն չէ լսւում աջակողմեան դռնից, որ Արմանի և Պիէռի սենեակն է և ոչ ձախակողմեան դռնից, որ օրիորդի սենեակն է։

Ա.հա՛ Սիմոնան դուրս է սողում փոքրիկ մահճակալից։ Նա պահել է նամակը պահարանի ցածի որ-

կզում։ Շոշափելով գնում է նամակը վերցնելու... Ի՜նչպէս արագ է խփում նորա սիրտը, երբ նա մտածում է, որ կարող է մի որևէ կահ-կարասիքի կպչել. նա փոքր քայլերով է առաջ գնում, որ երկար շապիկը ոտների տակը չընկնի... Երեխան բաց է անում իւր մահճակալի ներքին կողմը գտնուած դուռը, որ տանում է նախասենեակը։ Ճիշտ, այդ բոպէին քամին աւելի սաստիկ է փչում և անլսելի է դարձնում դռան ճռռոցը։ Նա միջանցքումն է։ Դարձեալ երկու դուռ և նա մըտնում է պարապելու սենեակը։ Այնտեղ կայ մի մեծ սեղան մէջտեղում և մի գրքի պահարան ձախ կողմում։ Երեխան մեկնում է իւր ազատ ձեռը։ Շոշափում է վառարանի մարմարը, կռանում է, մի կօշիկ, մի ուրիշը... այդ նորա եղբայրների կօշիկներն են։ Ինքն աւելի լաւ էր համարել այնտեղ դնել իւր հողաթափը, որի վրայ աւելի յարմար էր տեղաւորել նամակը։ Դնելով իւր նամակը հողաթափի վրայ այնպէս, որ լաւ երևայ, խեղճուկը ամբողջ մարմնով դողալով յետ է դառնում դէպի իւր անկողինն ու ուրախութեամբ տաքանում։ Քամին կարող է հիմա բվվալ և ձիւնը պատուհաններին զարկուել, նորա սրտում կայ մի յուսոյ բոց, որ տաքացնում է նորան։ Անկարելի բան է, որ մայրը չհովանաւորէ իւր Սիմոնային։

Գիշերուայ ժամի մէկն է։ Կոմս դ'Էյսելի առանձնասենեակի լուսամուտն է միայն լուսաւորուած տան մութ ճակատին։ Կոմսը նոյնպէս կրակի կողքին նըստած՝ մտածում է, փոխանակ քնելու։ Մի տարի է — մի տարի միայն, — կինն ու ինքը, միասին նստած այս միևնոյն սենեակում, վերջացնում էին երեխայոց համար ընծաներ պատրաստելը։

Տխուր, յուզիչ բան, երբ մի սիրեցեալի մահուան յիշատակը դաւաճանութեան յիշատակի հետ է կապուած... Քամու հառաչանքը, որ վերջապէս հանգըստացած Սիմոնային քուն է բերում, այդ մարդու հոգին լցնում է խելացնոր տխրութեամբ...

Նա տեսնում է նորից իւր կնոջը, որ կարծես դեռ այդտեղ էր, նորա քնքոյշ գունատութիւնը, մոյգ աչքերը և ժպիտը, որ երբէք չէր հեռանում նորա հը-

պարտ շրթունքից։ Եւ ի՜նչ։ Այդ երեսի, աչքերի, ժպիտի տակ նա սոսկալի անառակութեան գաղտնիքն էր թաքցնում։ Նորա հայեացքը այնպէս անմեղ էր, որ կոմսն էլ իրան աւելի յստակ էր զգում այդ հայեացքի տակ, իսկ կինը նորան խաբում էր։ Նա տարիներ խաբում էր նորան, իսկ կոմսը կամաչէր մինչև անգամ կասկած տանել նորա մասին։ Էլ ի՞նչ ճշմարիտ բան կայ այս տխուր աշխարհում, եթէ նորա Ալիսը, նա ևս ուրիշների նման խարդախ դուրս եկաւ։ Ո՜հ, ի՞նչպէս մոռանայ որ այն շրթունքը, որի ժպիտը նա այնչափ սիրում էր, խաբում էր իրան։

Ո՜րչափ գեղեցիկ էր նա, երբ կոմսն առաջին անգամ տեսաւ նորան պարահանդէսում, դեռ բոլորովին երիտասարդ աղջիկ, և ինչպիսի շնորհալի պարկեշտութեամբ էր նա հագնուած. կոմսը հէնց այդ առաջին երեկոյից սիրեց նորան։ Եւ երբ նա խնդրեց այդ օրիորդի ձեռը, ինչպէս խորը զգացուած էր նա և ինչպէս ամաչում էր իւր երիտասարդութեան անցեալը յիշելիս։ Նոքա ամուսնացան... Ի՜նչպիսի սուրբ զգացմունքով էր լցուած նորա սիրտը եկեղեցու սեղանի առաջ գնալիս։ Եկեղեցին լի էր ամբոխով. կոմսը ոչինչ չէր նկատում, բացի այդ էակից, սպիտակ՝ իւր սպիտակ քօղի տակ, որից այնպիսի քնքոյշ բուրմունք էր գալիս, որ կոմսը հաղիւ էր հաւատում իւր երջանկութեանը։ Խաբէութի՜ւն, բոլորը խաբէութի՜ւն էր, այդ ազնիւ երեսի մաքրութիւնը և նորա ամօթխածութիւնը...

Կոմսը նորից տեսնում է կնոջը իրանց ննջարանում, տեսնում է բարձի վրայ այդ կուսական գլուխը ծածկուած գանգուրներով։ Որ մի ուրիշը նոյնպէս խաղում էր այդ գանգուրների հետ, որ մի ուրիշը համբուրում էր այդ շրթունքները, այդ մի զարհուրելի երևոյթ է, այնուամենայնիւ աւելի պակաս զարհուրելի, քան այդ զզուելի, ստոր խաբէութեան տպաւորութիւնը։ Ի՜նչ կեղտոտ սիրտ պիտի լինի այն կնոջ սիրտը, որ կարող է Մադոննայի կերպարանքով ճակատը դէմ անել իւր ամուսնուն, երբ տակաւին յանցաւոր տեսակցութեան համբոյրների տպաւորութեան տակ է։ Եթէ գոնէ նորա երեսն այնպէս անմեղ չլինէր, կոմսը այս-

չափ չէր տանջուի։ Բայց խաբե՞լ այն գեղեցիկ, երկնային աչքերով, որ մինչև իսկ ներկայ բոպէին նա չէր կարողանում չսիրել։ Սոսկալի՞ բան է։

Շատ օրեր էին անցել այն բոպէից, երբ նա իմացաւ այդ դժբախտ ճշմարտութիւնը։ Կոմսը դուրս էր եկել առաւօտը իւր կնոջ հետ ձիով մանգալու։ Նա ներկայ էր ողբերգական անցքին՝ յուսահատութիւնից խելագարուած։ Եւ առաջինն էր նա, որ իւր ձեռներով փորձեց օգնութիւն հասցնել մեռնողին։ Եւ հէնց այդ պաշտած կնոջ թաղման երեկոյեան, երբ նա, սիրոյ տանջանքների զոհ եղած, գնաց նորա սենեակը իւր ցաւը ամոքելու կնոջ յիշատակներով, այնտեղ, համարեա իսկոյն նա իմացաւ այդ անհերքելի սոսկալի փաստը։ Կոմսը բաց էր արել պահարաններից մէկը, որի մէջ ննջեցեալը պահում էր իւր սիրելի առարկաները։ Եւ դոցա մէջ նա գտել էր նամակների մի կապոց, որ մատնեցին իրան ամէն ինչ... Կոմսուհին մի ուրիշին էր սիրում... Եւ ո՞ւմնով էր նա հրապուրուել. մի մարդով, որի համար նա պիտի սուրը լինէր, այն մարկիզ դ'Այդիով, որ կոմսի մանկութեան ընկերն էր... Ամեն բան նա մի անգամից իմացաւ, ամեն բան, և նոցա առաջի մաքառումը, և ինչպէս դ'Այդին աշխատել էր փախչել կոմսուհուց, նորա վերադարձը համարեա անմիջապէս, և Ալիսի յանցաւոր թուլութեան հանգամանքները, նորա զղջումը և աւելի վատը,—Սիմոնայի ծննդեան սոսկալի գաղտնիքը։ Այո՛, այդ երեխան, որին կոմսը միւսներից աւելի էր սիրում, այդ փոքրիկ աղջիկը, որին նա այնպիսի քաղցրութեամբ էր վերաբերւում, իրանը չէր։

Տխմա՞ր, տխմա՞ր կուրութիւն։ Մթթե նա չպիտի՞ հասկանար, որ այդ քնքոյշ նազուք արարածը ոչ իւր ցեղիցն էր և ոչ իւր երկու տղայոց նման, որ այնպէս ուժեղ, դ'Էյսևների նման էին իրանց լայն թիկունքներով, մինչ միւսը... Հէնց այդ նրբութիւնն էր, որ կոմսը այնպէս սիրում էր երեխայի մէջ, իւր մօր պատկերն էր նորա աչքում։ Ինչո՞ւ եօթ տարի խաբելուց յետոյ Ալիսը չխաբեց մինչև վերջը։ Ինչո՞ւ էր պահել այդ նամակները։ Երևի շատ էր սիրում այն մարդուն։ Առա-

ջին բոպէին կոմսը ասաց ինքն իրան. «Ես կը սպանեմ այդ անզգամին...» Բայց երեխայոց պատճառով նա ոչինչ չարեց։ Նա չէր կամենում, որ երեխաներն էլ նոյն կարծիքն ունենան իրանց մօր մասին, որ ինքն ունէր։ Եւ նա կենդանի մնաց։ Կոմսը բաւականացաւ փակելով իւր դուռը Նորա առաջ և կտրեց յարաբերութիւնները խարդախ բարեկամի հետ։ Նա ասաց ինքն իրան, համբուրելով տղայոց. «Ես ամէն բան սոցա զոհ եմ բերում, մինչև անգամ իմ վրէժը...» Նա ապրում էր, տանջուելով այն յարատև մտքից, որ այդ աղջիկը ուրիշի աղջիկ է։ Քանի անգամ նա կրկնում էր ինքն իրան. «Սակայն, խեղճը անմեղ է...» Եւ միշտ անկարող էր լինում ներել Նորան իւր մօր դաւաճանութիւնը, այն դաւաճանութիւնը, որ այս մութ ծննդեան գիշերը լացացնում է այս վիրաւորուած մարդուն, կարծես նա միայն երէկ է իմացել սարսափելի, անմոռանալի իրողութիւնը։

Ժամի երկուսն է արդէն։ Կոմսը սրբեց արտասուքը։ Նա հիմա ամաչում է. նա մօտ է յուսահատուելու. նա վեր է կենում։ Նորա ճակատը սովորականից աւելի մռայլ է։ Նախանձի սոսկալի կայծեր են փայլում Նորա աչքերում։ Նա պարզ ներկայացնում է իրան խաբէութիւնը և, ինչպէս և միշտ, ակամայից մտածում է Սիմոնայի մասին։ Ո՛չ, երբէք չի ների Նորան, այդ երեխային։ Կոմսը սեղանի վրայ է դրել այն խաղալիքները, որ ինքը ուզում է տանել պարապելու սենեակը և դնել այնտեղ թողած երեխայոց կօշիկների մօտ։ Նորան սարսափեցնում է այն միտքը, որ պիտի ձեռ տայ փոքրիկ աղջկայ հոմար նշանակուած խաղալիքներին։ Նորան թւում է, թէ ատում է երեխային խորին ատելութեամբ։ «Եւ ինչո՞ւ չէ,» ասում է նա ինքն իրան, զսպելով խղճահարութիւնը, որ Նորան յաճախ տանջում է։ Մթթէ չը կատարեց արդեօք նա քաջութեամբ իւր պարտքը դէպի երեխան։ Ի՞նչ կարող է պահանջել աւելի Նորա խիղճը։ Այդ մտքերով բարձրանում է նա վերև և մանում պարապելու սենեակը, մի ձեռում բռնած ճրագը, իսկ միւսում բազմաթիւ կապոցներ։ Նա տեսնում է վառարանի անկիւնում մի սպիտակ բիծ, որ

նամակի ծրարն է։ Վերցնում նայում է հասցէին, պատռում ծրարը և կարդում.

«Թանկագին մայրիկս.

«Ես քեզ գրում եմ, որ ցոյց տամ իմ գեղեցիկ գիրը և քեզ ասեմ, որ ես շատ խելօք եմ քո գնալուց յետոյ։ Բայց ես էլ չեմ գնում դահլիճը։ Հայրիկն ասում է, որ փոքրիկ աղջկերքը պիտի մնան օրիորդի հետ։ Օրիորդը շատ բարի է, բայց Ռընէն, այն գեղեցիկ տիկինը, որ դու տուեցիր ինձ, ձանձրացնում է ինձ և միւս խաղալիքներս նոյնպէս։ Ոչինչ ինձ չէ հետաքրքրում քո գնալուց յետոյ։

«Արմանի գանգուրները խուզել են, իսկ ես սև զգեստ ունիմ և մի սանր, որ դու չես սիրում։ Պիէռը երկար անդրավարտիկ է հագնում և ինձ միշտ ծաղրում է, երբ լալիս եմ։ Բայց Արմանը ինձ պաշտպանում է և ասում է, որ նորա արածը լաւ բան չէ։ Օրիորդն ինձ ասաց, որ դու երկնքումն ես և որ դու երջանիկ ես։ Ինչու՞ ինձ չտարար հետդ, ես այնպէ՞ս խելօք կը լինէի։

«Որովհետև դու երկնքումն ես, խնդրիր փոքրիկ Յիսուսին, որ ամեն բան կարող է, այնպէս անել, որ հայրիկը սիրէ ինձ այնպէս, ինչպէս սիրում էր քո ալստեղ եղած ժամանակը։ Նա ինձ լետ է մղում, երբ ես ուզում եմ նորան համբուրել։ Պիէռը և Արմանը միշտ նորա հետ են դասերից յետոյ, իսկ ինձ նա ուղարկում է օրիորդի մօտ, որտեղ ես ողմուկ չեմ անում։ Ես չեմ համարձակւում հայրիկի երեսին նայել. նորա աչքերը ինձ վախեցնում են։ Հաւատացնում եմ քեզ, որ ճիշտն եմ գրում։

«Ամէն գիշեր նա գնում է եղբայրներիս համբուրելու. ես լսում եմ դռան փակուիլը։ Ես քնած եմ ձևանում և սպասում եմ ամուր սեղմելով ձեռներս։ Բայց նա էլ չէ գալիս, երբէք չէ գալիս և ես լալիս եմ, լալիս, և յետոյ քնում։

«Մայրիկ ջան, դու, որ ինձ դեռ սիրում ես, ասա՛ փոքրիկ Յիսուսին, որ հայրիկն էլ ինձ չէ ուզում և ես այնքան կ'ուզէի մեռնել։ Համբուրում եմ քեզ ցաւած սրտով։

Երեխան ստորագրել էր. «Քո փոքրիկ Սիմոնան, որ քեզ անչափ սիրում է».

Կոմսը մի քանի անգամ կարդաց այդ տողերը, որ լցրել էին թղթի չորս երեսը։ Ի՞նչ մտքեր էին շարժւում նորա գլխի մէջ։ Արդեօք արդարութեան զգացմունքն էր այդ։ Մանկական վշտի մէջ մի զարմանալի տխուր բան կայ։ Դժբախտ արարածներ, որ իրանց կամքով չեն աշխարհ եկել։ Վաղեմի սիրոյ նշոյլն էր այդ արդեօք, որովհետև սիրած կնոջ երեխան դարձեալ նոյն կինն է։ Երեխայի այդ նամակը, կարդալուց մի ժամ յետոյ, որի մէջ նա արտայայտել էր իւր բոլոր վիշտը, կոմսը Սիմոնայի սենեակում նայում էր քնած երեխային։ Եւ երբ երեխան զարթեց միւս առաւօտը, նա չգիտէր, երազո՞ւմն է, թէ նա, որին հայր քաղցր անունն էր տալիս, իսկապէս լալով եկել էր նորան համբուրելու, ինչպէս առաջ։ Եւ զարմանալի՞ բան. չկայ այս ծննդեան բոպէին մի երեխայ, որ աւելի սիրելի լինի, քան Սիմոնան է կոմսի համար, մանաւանդ, որ ժողովարանում ծագած մի վէճից յետոյ կոմսը սպանեց ատրճանակով մարկիզ դ'Այդիին մենամարտութեան մէջ։ Աշխարհի քննադատները, որ հասկացել էին երեխայի ծննդեան գաղտնիքը, մտածում էին, թէ ինչո՞ւ դ'Էլսևը այդքան յետաձգեց իւր վրէժխնդրութիւնը։ Ի՞նչ կասէին նոքա, եթէ իմանային, որ կոմսը վճռեց այդ անել միայն այն ժամանակ, երբ մի օր տեսաւ, թէ ինչպէս մարկիզ դ'Այդին համբուրեց Սիմոնային Շանդ-Էլիզէ փողոցում։

Ֆրանս. թարգմ. ՏԻԼ. Զ.

ԴԱԼԻ-ՄԱՀՐԱՍԱ

ՊԱՏՄԱԿԱՆ ՊՕԷՄ

(1752—1796)

Ա

Սարի գլխին տխուր ժպտաց Ղարաբաղի արևը,
Ջրաբերդի անտառներին տուաւ վերջին բարևը։
Զանգակները մենաստանի մելամաղձոտ զօղանջում,
Աղօթարար սուրբ հայրերին եկեղեցի են կանչում։
Եւ ջերմեռանդ սուրբ հայրերը ահա եկան տաճարը,
Ժամերգութիւնն սկըսեցին՝ ձեռքին խաչ ու խաչվառը։
Ջերմ աղօթք են նոքա յղում Տէր Աստուծուն ողորմած,
Որ Նա փրկի աղէտներից Հայոց ազգը որբացած։

Բ

Նայէր ահա այն վիթխարի աշտարակին ահաւոր,—
Խոժոռադէմ կանգնած է նա՝ իբրև տխուր սգաւոր։
Նորա միջին նստած է լուռ մի աբեղայ դառնացած,
Իր միաբան ընկերներից անջատուած ու բաժանուած։
Զէր մասնակից երեկոյեան ժամերգութեան տաճարի—
Բազմախորհուրդ նստած է նա աշտարակում վիթխարի։
Աղօթք, մաղթանք, ժամերգութիւն չէին նորան հրապուրում,—
Նա յուզուած էր, նա այլայլուած... Նա աղօթել չէր կարում։

Գ

Ի՞նչպէս, ի՞նչպէս նա աղօթի սրտով յուզուած, վիրաւոր,
Երբ ամեն տեղ լսւում է լաց ու հառաչանք բիւրաւոր։
Ի՞նչպէս նստի մենաստանում նա անտարբեր ու խաղաղ,
Երբ պարսիկը հիմնայատակ կործանում է Ղարաբաղ.

Երբ Փանահ-խան հայ աշխարհի սրտում դրած իր բոյնը,
Օձի նման՝ թափում է խեղճ հայի գլխին իր թոյնը։
Բաւական է... Էլ չի կարող մնալ այստեղ սուրբ հայրը—
Նա թողնում է մենաստանը, սրբանուէր իր վայրը։

Դ

«Մնա՛ք բարեաւ, ո՛վ սուրբ տաճար եւ Քրիստոսի սուրբ սեղա՛ն»,—
Աշտարակը թնդացնելով՝ գոչեց յուզուած աբեղան.—
«Թո՛ղ այսուհետ՝ սուրբ խաչի տեղ՝ ձեռիս սո՛ւրը շողշողայ,
Իմ մահաբեր, ահեղ սրից թո՛ղ թշնամին դողդողայ։
Արիւնավրէժ կրօնաւորիս թո՛ղ նախատեն ամենքը—
Ես մինչև մահ ու կախաղան էլ չեմ թողնիլ իմ զէնքը։
Թո՛ղ ինձ կոչեն *խենթ արևղայ* [1]), ինձ ծանակեն աշխարհում—
Պիտի անվերջ արիւն թափեմ ռազմի ահեղ դաշտերում։

«Էլ այսուհետ՝ ես չեմ լսիլ զանգակների ղողանջիւն,—
Զանգակի տեղ՝ պիտի լսեմ հրացանների շառաչիւն։
Սուրբ տաճարի անուշահոտ կնդբրկի ու խնկի տեղ՝
Ես մահաբեր վառօդի հոտ պիտի շնչեմ ամեն տեղ։
Ընկերներբս, եղբայրներբս կ՚ըլնեն ոչ թէ սուրբ հայրեր,
Այլ ահաւոր և աննկուն նիզակակից հայ քաջեր։
Թո՛ղ իմ վարձը լինի ոչ թէ սուրբ օրհնութեան կոնդակը,
Այլ ոխերիմ ու գարշելի մեր թշնամու գնդակը...»

Ե

Կէս գիշերին գեղ լուսինը՝ ամպերի մէջ լողալով՝
Հանդարտ ու վեհ ընթանում էր, արծաթի պէս շողալով։
Նուշլայ բարձր, գոռոզ բերդը, մինչև երկինք վերացած՝
Լուսնեակի տակ մրրոփում էր, հսկայի պէս՝ լուռ կանգնած։
Գարգար գետը բերդի տակին բարձրամրմունջ վշշալով,
Ընտապում էր Թարթարի մօտ, քարափները մաշելով։
Քարափները երկու կողմից կամարի պէս՝ կրռացել,
Գետի վերայ ապառաժոտ կամուրջ[2]) էին կառուցել։

Զ

Կամուրջի մօտ կէս գիշերին մի վիթխարի ձիաւոր՝

Դաժան դէմքով լուռ դիտում էր հսկայ բերդը՝ ահաւոր։
Լուսնեակի տակ շողում էին նորա փայլուն զէնքերը,
Ահ ու սարսափ էին թափում նորա ահեղ աչքերը։
Նա կտրել էր բերդի ճամբան, արթուն աչքով միշտ հսկում.
Նորա ահից այն կողմերով էլ պարսիկ չէր անց կենում։
Այնտեղ արդէն ճանապարհին՝ այն սեպացած ժայռի մօտ՝
Թափուած էին պարսիկների դիակները արիւնոտ։

Է

Շուշուայ բերդում քնած էին զօրապետ ու զօրական.
Սակայն այնտեղ իր պալատում դեռ արթուն էր Փա-
նահ-Խան։
Ողջ գիշերը նստած էր նա— քուն չէր գալիս աչքերին.
Նա յուզուած էր և անձնատուր մռայլ ու սև մտքերին։
Օձի նման՝ ներս սողալով հայ աշխարհը որբացած,
Հայ աշխարհի սրտի միջին որդնի նման՝ բուն դրած,
Այժմ նստած՝ նա տանջւում էր սև մտքերից բիւրաւոր...
Դառը վիշտը կեղեքում էր նորա սիրտը վիրաւոր։

Ը

Այդ քնչ ծանր քար էր ճնշում խանի սիրտը բարբարոս.
Ո՞վ էր մաշում նորա հոգին ամբարտաւան ու գոռոզ։
Այդ քաջ Դալի-Մահրատան էր — այն աբեղան ահաւոր,
Որ թուրքերի արեան գետով հեղեղում էր սար ու ձոր։
Բերդի տակին, գիշեր-ցերեկ կտրած Մազէ-կամուրջը,
Իր զինակից քաջերի հետ ահ էր սփռում նա շուրջը։
Այն օրուանից, երբ հեռացաւ Եղիշէի[3]) սուրբ վանքից,
Սուրը ձեռին՝ քանի՜-քանի՜ թուրքի զրկեց նա կեանքից։

Քանի՜-քանի՜ պարսիկ զինուոր զնդակահար նա արաւ.
Քանի՜ սելիդ նա կոտորեց բանտում սոված ու ծարաւ։
Քանի՜-քանի՜ մօլլա, դէրվիշ քաշեց, տարաւ նա ձորը
Ու պատառեց իր կեռ թրով նոցա սիրտն ու փորը։
Քանի՜ պարսիկ զօրապետներ կախեց ծառին պտրանով.
Քանի՜ անգամ Դարգար գետը ներկեց կարմիր արիւնով...
Քանի՜ անգամ նորան փորձեց կործանելու Փանահ-խան,
Սակայն ի զուր...Մնաց անյաղթ Հայոց հզօր աբեղան։

Թ

Առաւօտեան, երբ երկինքը յուզուած՝ իբրև հրե-
ղէն ծով՝
Դալարազարդ սարի գլխին բռնկուեցաւ ալ բոցով.—
Մինարէթի գլխից հնչեց Մուհամէդի ազանը.
Յոգնած՝ չոքեց գոհութիւն Շուշուայ բերդի գազանը։
Աղօթում էր նա Ալլահին, որ զօրութիւն տայ իրան՝
Հայոց ազգը կործանելու ու ջնջելու յաւիտեան։
Աղօթում էր նա Ալլահին, որ երկինքը պատառի
Ու շանթահար անի վերից Մահրասային քաջարի։

Ժ

Մեծ խորհուրդ կայ այսօր բերդում։ Վշտամոլորթուրք խանը՝
Ցենուած փափուկ, թաւշէ բարձին ծխում է իր դայլանը։
Խանի առաջ կանգնած է մի հրու, խոնարհ մանկլաւիկ,
Կրակի համար գօտկի միջին խրած ոսկէ ունելիք։
Ներկայ էին պարսից յայտնի մօլլաները, մեծերը.
Ներկայ էին Փանահ-խանի զօրքի բոլոր պետերը։
Խանի կողքին, ծաղկանկար գորգի վրայ լուռ բազմած,
Մտածում էր հայոց Մելիք Շահնազարը՝ ազգուրաց։

ԺԱ

Այն օրուանից, երբ Շահնազար դաւաճանեց հայ ազգին,
Իր սեփական Շուշուայ բերդը տուաւ լպիրշ ժանտ պարս-
կին—
Դիշեր-ցերեկ նա անձնատուր Փանահ-խանին ոխերիմ,
Դարձաւ նորա սրտին մօտիկ բարեկամը մտերիմ։
Այժմ նստած խանի կողքին՝ պաշտումը փառաւոր,
Հայի համար նա լարում էր որոգայթներ նորանոր։
Այնտեղ էր և հայի մատնիչ՝ Խաչէնի զեղխ Միրզախան,
Որին, իբրև վարձատրութիւն, մելիք կարգեց Փանահ-խան։

ԺԲ

Մտածում էր խանը երկար, հարցնում խորհուրդ բոլորից—
Ի՞նչպէս Դալի Մահրասային ջնջի իսպառ աշխարհից։

Նա խնդրում էր իր հնարագէտ մօլլաներին սրբամիտ,
Որ հնարքներից հիւսեն ուռկան, որսան «Հային չարամիտ»։
Խորհուրդ էին անում երկար մօլլաներն ու խանը,
Սակայն չէին կարում հիւսել Մահրասայի ուռկանը։
Խորհուրդ էին անում նոքա, երկար տալիս խելք-խելքի,
Բայց խորհուրդը մնում էր միշտ դարձեալ առանց մի ելքի։

ԺԴ

«Պարտքս լինի, – կուրծքը ծեծեց Շահնազարը դաւաճան.—
Իմ սրբազան պարտքը լինի, որ այդ գործին տամ վախճան։
Ամեն հնարք, ամեն միջոց գործ կը դնեմ անպատճառ,
Որ գարշելի աբեղային ինքս պատժեմ չարաչար։
Մեր աշխարհի հզօր խանը թող լինի ողջ, անսասան.
Ես չեմ թողնիլ, որ կենդանի մնայ լպիրշ Մահրասան։
Դուք ամենքդ հանգիստ կացէք, անհոգ կացէք ու խաղաղ.
Ամեն բան իմ ձեռքից կը գայ, վկայ է ողջ Ղարաբաղ։

«Ես այն Մելիք-Շահնազարն եմ, որ իր սրով ահաւոր
Իշխեց ամբողջ Վարանդային ու նրաւաճեց սար ու ձոր։
Ես այն Մելիք Շահնազարն եմ, որի բերդին անառիկ,
Չէ յանդգնում մերձենալու Խամսայի ոչ մի մելիք։
Ես այն Մելիք-Շահնազարն եմ, որից ոչ թէ աբեղայ,
Այլ մեր ամբողջ Հայոց ազգը կը սարսափի, կը դողայ։
Այնպէս ջարդեմ, այնպէս փշրեմ Մահրասայի պօպոզը,
Որ աշխարհից անհետանայ նորա իզբն ու թոզը»

ԺԴ

—«Ա՜յ մաշալլա, այ ափարրմ մեր քաջ Մելիք-Շահնազար,
Գոչեց խանը.—չը կայ ոչ ոք, որ քեզ լինի հաւասար։
Ո՛չ Իրանում, ո՛չ Թուրանում իգիթ չըկայ քեզ նման.
Սաղ աշխարհի իգիթները թող նախանձեն քո անուանից։
Այն օրուանից, երբ որ դարձար իմ ջուխտ աչքի դու լոյսը,—
Քեզ վերայ է եղել միայն սրտիս բոլոր իմ յոյսը։
Հայ տեղովդ դու եղել ես իմ աջ թևը ամեն օր.
Միշտ եղել ես դու թուրքերի բարեկամը մերձաւոր»։

ԺԵ

Պըլը-Պուղին [4]) Շահնազարի խեղկատակը սիրելի,
Լուռ կանգնած էր, իբրև զազիր ու սև գործի հայելի։
Էլ չը կարաց իրան զսպել խեղկատակը դառնացած.
Նա հեգնօրէն տխուր ժպտաց, առաջ գնաց և ասաց.
«Երգւում եմ ես մեր մելիքի քաչալ գլխի կատարով,
Երգւում եմ ես այս ժողովի շարժառիթով, պատճառով,
Որ մեր կեանքում միշտ հերոս են հանդիսանում մկները.
Որ ամեն տեղ միշտ գլխից են հոտում բոլոր ձկները։

«Եթէ մի ձուկ հաւատարիմ չէ իր եղբայր ձկներին,
Նա կարող է հաւատարիմ լինել օտար մկներին։
Եթէ մի մարդ ինքն իրան չէ բարեկամ մերձաւոր,
Մի՞թէ կ'ըլնի նա բարեկամ օտարներին կեղծաւոր։
Ասում են, որ շունը շան միս չէ ճաշակում ընաւին,
Սակայն հայը տխորժակով միշտ ուտում է իր հային։
Մելի՞ք, թէև դու խեղճ Պուղուս անուանում ես խենթ ուզէլ
Բայց տեսնում եմ, որ պէլերի թագաւորն ես դու եղել...»

ԺԶ

Խորհրդաւոր խոր լռութիւն տիրեց ամբողջ պալատում.
Փանահ-խանը զգաց թախիծ ու դառը վիշտ իր սրտում։
Ցնցուեց Մելիք-Շահնազարը Պըլը-Պուղու խօսքերից,
Սիրտը կարծես՝ խոցուեց դաժան ու թունաւոր նետերից։
Մօլլաներն ու մեծերը նայում էին շըւարած,
Դողդոջ ձեռքով շփում կարմիր մօրուսները հինայած։
Եւ կատաղած Շահնազարը, շրթունքները կրծելով՝
Դուրս վազեցրեց խեղկատակին, բերանից փրփուր թափելով։

ԺԷ

Դարձեա՛լ գիշեր, մռայլ գիշեր. ամեն տեղ մութ ու խա-
ւար.
Խաւարի մէջ խորասուզուած՝ լուռ քնած է ողջ աշխարհ։
Երկնակամարն Արմենիայի ծածկուած է մութ, սև քո-
ղով—
Լուսին չըկայ, որ գեղադէմ ժպտայ վերից իր շողով։
Խօլ խաւարում՝ հսկայի պէս՝ ծեր Մասիսն ալևոր

Ամպի տակին կանգնած է լուռ, իբրև տխուր սգաւոր։
Մայր Աթոռին Արարատեան թանձր մշուշ է տիրում.
Գմբէթները սուրբ տաճարի գլուացել են խաւարում։

ԺԸ

Ո՞վ է այն հէգ բանտարկեալը, այն թշուառը վիրաւոր,
Որ իր դառը հառաչանքով թնդացնում է սար ու ձոր։
Ո՞վ է լալիս ու պապակւում ազատութեան ծարաւով,
Խորհրդաւոր լռութիւնը այնպէս խախտում դիշերով։
Դուցէ Հայոց Արտաւազդն է Մասիս լեռան անդնդում,
Շղթայակապ և յուսահատ, քաջքերի մօտ հեծկլտում։
Կամ Վրաստանի Ամիրանն է՝ կապանքներով կաշկանդուած՝
Անվերջ լալիս սրտամորմոք, մութ քարայրում բանտարկուած։

Դուցէ դժբաղդ Պրոմեթէյն է ժայռին մեխուած հառաչում.
Թէ Շիլիոնի թշուառ զոհն է բանտի միջին տառապում։
Ո՛չ... Այդ Հայոց Մահրասան է, այն աբեղան քաջազօր,
Որից թուրքը սարսափում էր, սարսափում էր սար ու ձոր։
Վագրի նման՝ քաջ Մահրասան բանտարկուած է վանդակում.
Ազատութեան տենչով լցուած՝ տառապում է նա բանտում։
Դիշեր-ցերեկ տանջւում է նա, սիրտը բեկուած ու ցաւոտ.
Խարխափում է մութ խաւարում, պայծառ լոյսին նա կարօտ։

ԺԹ

Ո՞վ յանդգնեց մերձենալու Մահրասային անվեհեր.
Ո՞վ յանդգնեց նորա ձեռից խլել սուրը մահաբեր։
Մի՞թէ գոռոզ Շահնազարն է իր խոստումը կատարել.
Թէ պարսիկն է քաջի գլխին լոյս երկինքը սևացրել։
Ո՛չ։ Շահնազարն ու պարսիկը անկարող են և անզօր,
Անկարող են նոքա ընկճել աբեղային՝ քաջազօր։
Կայ աւելի բարձր մի ոյժ, մի ոյժ հզօր, անսասան,
Որի առաջ խոնարհուել է մեր աննկուն Մահրասան։

Օ՜, այդ ոյժը սուրբ է, վսեմ, անպարտելի և հզօր.
Այդ ոյժին է դիմել մատնիչ Շահնազարը նենգաւոր։
Այդ—մեր Հայոց եկեղեցու օրէնքն է մելեռանդ,
Այն օրէնքը, որ արել է մեր աշխարհը քարուքանդ։
Եկեղեցին չէ թոյլ տալիս արիւն թափել, ըսպանել—
Պատուիրում է՝ դէպ թշնամին ներողամիտ միշտ լինել։
Բայց ոտնատակ տրւաւ այդ սուրբ պատուիրանը Մահ-
րասան.
Նա արիւնով ներկեց աշխարհ, դարձաւ ահեղ մարդա-
սպան։

Ի

Եւ հայ ազգի Հովուապետը[5]) սուրբ Միածնայ Տաճարի
Բանտարկել է արիւնավրէժ Մահրասային քաջարի.
Հայրենիքի սուրբ պաշտպանին մեղադրել է նա այսծր.
Քաջ Մահրասան բանտարկուած է, իբրև ըմբոստ յան-
ցաւոր...
Բանտարկուած է Մայր Աթոռի սառցատանը նա խաւարի
Ցուրտ ու խոնաւ իր քանտի մէջ տառապում է վշտահար։
Թող տառապի, ապաշխարի, աղօթք անի ու տանջուի.
Իսկ աշխարհը թուրքի ձեռքով թող աւերուի ու քանդուի...

ԻԱ

Մայր Աթոռը պաշարուած էր։ Արիւնարբու քրդերը[6])
Գազանաբար խորտակում են մենաստանի դռները։
Ձիչ, աղաղակ, զէնքի շաչիւն թնդացնում են աշխարհը,
Արձագանք է տալիս հեռուից Մասիս լեռան կատարը։
Վառօդի սև, թանձր ծուխը մինչ երկինք է վերանում,
Ամպի նման՝ արեգակի պայծառ լոյսը խափանում։
Մենաստանի թաքնքշիները պարիսպների վերևից
Ձիգ են թափում վանքը փրկել դաժան, ահեղ քրդերից։

ԻԲ

Տաղնապի մէջ ծերունազարդ Հայրապետը Վեհափառ
Աղօթում է, որ պահպանի Աստուած գահը մեր թշուառ։
Նա ձեռները երկինք պարզած՝ աղօթում է ծնկաչոք,
Որ Տէր Աստուած վանքը փրկի—ոսոխներից անողոք։
Սակայն ի զուր... Նայիր՝ ահա արիւնարբու քրդերը

Կոտրտեցին մենաստանի հսկայական դռները.
Կոտրտեցին, ներս խուժեցին... Ահա վանքը սրբազան
Աւերում է պիղծ թշնամին, իբրև վայրագ, չար գազան...

ԻԴ

Քաջ Մահրասան էլ չի կարող մնալ անձուկ իր բանտում —
Մռնչում է, իբրև առիւծ իր երկաթէ վանդակում։
Մութ կամարը տատանելով՝ մռնչում է անհամբեր.
Բորբոքւում է ու բաբախում նորա սիրտը անվեհեր։
Զէնքե՞ր տուէք, նժոյգ տուէք Մահրասային քաջարի.
Նա խնդրում է, նա ուզում է թշնամու դէմ մաքառի։
Հասի՞ր, հասի՞ր, քաջ Մահրասա՛, բանտի դուռը խորտակի՞ր.
Լուսաւորչի սուրբ Աթոռը ե՛կ ազատիր ու փրկի՞ր։

ԻԳ

Այն քա՞նչ ահեղ շանթեր ընկան խաւարամած երկնքից.
Այն քա՞նչ հսկայ լեռը փլեց քրդի գլխին վերևից։
Մահրասա՞ն է... Ամպերի պէս՝ որոտաձայն գոռալով,
Կոտորում է նա քրդերին՝ ահ ու սարսափ սփռելով։
Գիշերային կայծակի պէս՝ շողշողում են զէնքերը,
Աշնանային տերևի պէս՝ թափթփւում են քրդերը։
Պիղծ թշնամին արիւնաշաղախ գլորւում է, հառաչում.
Պիղծ թշնամին սարսափահար նահանջում է ու փախչում...

ԻԵ

Անցաւ արդէն ճգնաժամը։ Մայր Աթոռը ազատուեց։
Մենաստանում ամեն կողմից աւետաբեր ձայն հնչեց։
Երկնակամարն ազատուեցաւ մռայլ ու սև ամպերից,
Արեգակը նորից պայծառ՝ ուրախ շողաց վերևից։
Եւ վանական եղբայրները ահա եկան, ժողուեցին,
Քաջահզօր Մահրասային օրհնեցին ու գովեցին։
Իսկոյն նոքա քաջի համար սարքեցին տօն փառաւոր,
Ովսաննալով, կէսցէներով դղրդացրին սար ու ձոր։

ԻԶ

Աստուածարեալ Հայրապետը սուրբ պատարագ մատուցեց,

Բուռն սիրով Մահրասայի լայն ճակատը համբուրեց.
«Այս օրուանից դու ազատ ես. գնա, որդեակ, մաքառիր.
Ծայրի նման՝ կուրծքդ դէմ տուր, հայրենիքդ պաշտ-
պանիր:
Ես տեսնում եմ, որ Աստուած է քեզ ուղարկել հայի մօտ,
Որ դու բուժես նորա ցաւը եւ վէրքերն արիւնոտ:
Աստուած թուրդդ ամեն կռուում անի կտրուկ, զօրաւոր.
Աստուած տայ այժ բազուկներիդ, որ միշտ լինես քաջազօր:

«Ինչպէս այսօր դու փրկեցիր սուրբ Աթոռը քրդերից,
Այնպէս էլ թող Տէրը փրկի քեզ քո արած մեղքերից:
Մի ձեռիդ սուր, միւս ձեռիդ խաչ՝ գնա, կռուիր հա-
մարձակ:
Թուլամորթին քաջ գործերդ թող միշտ լինին օրինակ.
Հայրենիքի դաւաճանը թող քեզ տեսնի, ամաչի.
Քեզ տեսնելով՝ մեր թշնամին հային թող լաւ ճանաչի:
Թող այսուհետ անմահացնի քեզ մայրենի աշխարհը.
Թող քեզ գովի, փառաբանի բանաստեղծի քնարը»:

ԻԷ

Փբրև յոգնած և ուժասպառ մի հալածուած չար
գազան՝
Ռազմի դաշտից յաղթահարուած փախչում էր նենգ Փա-
նահ-խան:
Յուսահատուած՝ նա փախչում էր Դարգար գետի ե-
զերքով.
Նա փախչում էր, իր նժոյգի մէջքը դաղում մտրակով:
Փռնչալով՝ սլանում է խեղճ նժոյգը քրտնաթոր,
Սլանում է նա անդադար, տնցնում լեռներ, դաշտ ու ձոր:
Խանը մենակ ու սարսափած՝ սրլանում էր Պարսկաստան,
Որ իր կեանքը փրկի մահից, գտնի այնտեղ ապաստան:

ԻԸ

Վարանդայում, Ասկարանի քանդուած, աւեր բերդի մօտ
Թափթփուած են պարսիկների դիակները արիւնոտ:
Դարգար գետի ժեռոտ ափը ողողուած է արիւնով.
Շուրջը թնդում, դղրդում է խառնիճաղանճ ձայներով:
Խռնբուում են վրացի, խևսուր, օս զօրքերը լեռնական,
Որոնց արքայ Թէյմուրազը բերել էր մեզ օգնութեան:

Այստեղ են մեր հսկայատիպ հերոսները յազթանդամ.
Այստեղ են հայ իշխանները՝ մելիք Իւսուփ և Աթամ՝

ԻԹ

Ամենեքեան միահամուռ խորտակել են թուրքերին.
Այժմ նոքա հանուր ուժով որոնում են Փանահին։
Բայց Փանահը սարսափահար՝ փախուստ տալով մահուան-
նից,
Արդէն վաղուց հեռացել էր Վարանդայի սահմանից։
Հաւատարիմ իր նժոյգին մտրակելով անդադար,
Հասել էր նա Մայր Արաքսի ափերը գեղ ու դալար։
Յոգնած խանը մօտեցել էր Խուդափիրին կամուրջին,
Երբ յետևից յանկարծ հնչեց մի ձայն ահեղ և ուժգին։

Լ

Եւ այդ ծանօթ, հուժկու ձայնից ցնցուեց խանը
սարսափած,
Սանձը ձեռքից նա բաց թողեց, տերևի պէս դողդողացաց,
Եւ երկաթէ հզօր մի ձեռք յանկարծ բռնեց Փանահին,
Տաշեղի պէս՝ նետեց նորան, զարկեց գետնի քարերին։
Նա վիրաւոր և ուժասպառ՝ ուժգին ճչաց, հառաչեց,
Թաւագլոր փռուեց գետին, հոգւոց հանեց ու լռեց։
Երբ կիսամեռ խանը նորից բացաւ պղտոր աչքերը,
Տեսաւ կապած շղթաներով իր ոտները, ձեռքերը։

ԼԱ

Նորա առաջ հսկայի պէս՝ պարթև հասակ, անսասան,
Ընկերների հետ միասին կանգնած էր քաջ Մահրասան։
Գլխին դրած մորթէ գլխարկ, սև փարաջան ծալած յետ,
Կողքին կախած իր վեղարը կանգնած էր նա խմբի հետ։
Ասպառազէն, խոժոռադէմ՝ կանգնած էր նա անվեհեր.
Նորա տեսքից սոսկում էին դաշտեր, ձորեր ու լեռներ։
Արաքս գետը՝ յորձանք տալով՝ կամուրջի տակ հոսում էր,
Կարծես՝ Դալի-Մահրասայի գովքը պատմում, խօսում էր։

ԼԲ

Եւ Մահրասան հեծաւ կայտառ իր մոխրագոյն նժոյգ ձին
Ու Վարանդա տարաւ իր հետ շղթայակապ Փանահին։
Տարաւ Նորան հայի ահեղ դատաստանին յանձնելու,

Տարաւ իր հետ հայի մաղձը նորա գլխի թափելու։
Ծանապարհին գերուած խանը հառաչում էր ու լալիս,
Սակայն ոչոք ազատելու և օգնութեան չՁր գալիս։
Նորա երկու բարեկամը՝ Շահնազար ու Միրզախան
Փախել էին ու Զանախչու բերդում գտել ապաստան։ ՞)

ԼԴ

Բայց Շահնազար ու Միրզախան չը մնացին ապահով.
Նուտով նոքա՝ խանի նման՝ կապկպուեցին շղթայով։
Ղարաբաղի երեք դաժան հրէշներին ահաւոր
Այժմ գերել, շղթայել են հայերը քաջ և հզօր։
Ուրախութեան աղաղակով դղրդում են լեռները,
Դղրդում են Ղարաբաղի անտառները, ձորերը։
Ամենայն տեղ խինդ ու բերկրանք, նրուագարան ու տաղեր.
Ամենայն տեղ բուռն հրճուանք, պար ու ծիծաղ և խաղեր...

ԼԶ

Բայց... ծիծաղը լացի փոխուեց, իսկ երգերը—վէրքերի.
Խնդութիւնը շուտ դադարեց, մնաց կիսատ ու թերի։—
Շղթայակապ մատնիչները ու գարշելի Փանահ խան
Յանկարծակի ազատուել են շղթաներից գերութեան։
Ազատուել են գերութիւնից ոչ սեփական ուժերով,
Այլ Վրաստանի նեՀնդ, ընչաքաղց Թէյմուրազի ձեռներով։
Հայոց ազգի դաշնակիցը դաւաճանեց մեր ազգին,
Քակտեց կապը սուրբ միութեան, երկրպագեց կաշառքին։ ՞)

ԼԵ

Աւաղ... ինչո՞ւ, ինչո՞ւ հզօր եւ քաջարի Մահրասան
Պատառ-պատառ չ՚արաւ խանին իր կեռ թրով անսասան։
Ինչո՞ւ նորան նա չ՚ոպանեց Արաքս գետի ափի մօտ
Ու չը նետեց պղտոր ջուրը գարշ դիակը արիւնոտ։
Մելիք-Իսուփն ու Աթամը ինչո՞ւ իրանց ոսոխին
Արծաթապաշտ և ուխտադրուժ Թէյմուրազի մօտ թողին։
Այժմ երեք արիւնարբու գազանները վայրենի
Դնացի՞ն դարձեալ աւերելու մեր աշխարհը մայրենի...

ԼԶ

Օ՜, սև ամպեր, քանի՞ ծածկէք դուք երկնքի կամարը.
Քանի՞ անգամ խաւարեցնէք դուք Ղարաբաղ աշխարհը։

Հէնց ուզում է արեգակը թափել վերից շողերը,
Իր շողերով ոսկեզօծել հայ աշխարհի հողերը. —
Ամեն կողմից իսկոյն գալիս, կուտակւում էք միասին,
Սփռում նորից մռայլ քողը պայծառ ջահի երեսին։
Սիւնեաց երկինք, աշնան երկինք, փոփոխական ես դու միշտ.
Մերթ բերում ես մեզ ուրախ օր, մերթ տխրութիւն, ցաւ ու վիշտ։

ԼԷ

Կէս գիշերին գեղ լուսինը լող էր տալիս երկնքում,
Տխուր նայում դէպի աշխարհ, ինքն իրան մորմոքւում։
Մերթ պահւում էր ամպերի տակ նա սարսափով ու դողով,
Մերթ ամպերից դուրս էր լողում, կրկին փայլում իր շողով։
Դանձակի մօտ լեզգիների [10]) դիակներ են թափթփած.
Դիակների մէջ անվեհեր Մահրասան է լուռ նստած։
Նա յոգնած էր պատերազմից, նա տխուր էր ու մոլոր.
Քաջի սիրտը կեղեքում էր մի զգացմունք ահաւոր։

ԼԸ

Գերեզմանի սառը քարին նստած է նա միայնակ,
Նստած է նա, հանգստանում, շուրջը արիւն ու դիակ։
Դաժան մահը, իբրև սառած դիակների պահապան,
Լուռ կանգնած էր կէս գիշերին ահեղ դաշտում ռազմական։
Զարհուրանքը, իբրև անխօս մի ուրուական դժնդակ,
Մեռելների միջին հանդարտ թափառում էր լուսնի տակ։
Տերևախիտ սօսիները սառը քամուց շշնջում,
Մի սոսկալի, սրտաճմլիկ դէպք են կարծես գուշակում։

ԼԹ

Ահա յանկարծ արիւնշաղախ ու յօշոտուած մի դիակ
Բացաւ աչքը, անթարթ նայեց Մահրասային դժնդակ։
Քաջը նստած՝ խոժոռադէմ նայում էր ցած գլխակոր,
Կարծես՝ վերից դիտում էր իր գերեզմանը ահաւոր։
Եւ ուժասպառ լեզգին՝ տանջուած՝ իր մրմնջող վէրքերից
Վերջին ոյժը հաւաքելով հանդարտ շարժուեց իր տեղից,

Գաղտնագողի ու նենգաբէն հեռուից նայեց դալկացած.
Եւ նորա թոյլ ձեռքին յանկարծ ատրճանակն որոտաց...

Խ

Եւ անողոք, օրհասական սև կապարը մահաբեր
Խրուեց Դալի-Մահրասայի ժեռոտ կուրծքըն անվեհեր...
Գնդակահար առիւծի պէս՝ նա դառնագին մռնչաց
Եւ՝ խորտակուած սարի նման՝ գլորեցաւ դէպի ցած։
Մեռաւ քաջը... խլեց, տարաւ, տարաւ անգութ, սև մահը.
Խուարեցաւ հայ աշխարհի պայծառ լոյսն ու ջահը։
Քանդուեց, ընկաւ վշտի ծովը մեր փրկութեան փարոսը.
Ննջեց առ միշտ, լռեց յաւէտ հայրենիքի հերոսը... [11])

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Ծանօթութիւններ

[1]) Խէնդ կամ Գէնդ աշխարհ, թուրքերէն՝ Դէնգ-Մահրասա։ Սորա իսկական անունը Աւագ վարդապետ էր, բայց ժողովուրդը տուաւ սորան Գէնդ մականունը։ Այս մականունը հին ժամանակներում տալիս էին քաջ հերոսներին։

[2]) Մաղէ-կամուրջը՝ Շուշուայ մօտ։

[3]) Ղարաբաղի Ջրաբերդ գաւառում։

[4]) Պէլը-Պա-ղէ=Պէլ Պա-ղէ, որ նշանակում է խէնդ Պողոս։ Այդպէս էր կոչում Մելիք-Շահնազարը իր զուարճաբանին։

[5]) Սիմէօն կաթուղիկոս։

[6]) Զալալի քրդերը։

[7]) Գիւլիստանի Մելիք-Իսուփը և Ջրաբերդի Մելիք-Աթամը միացել էին վրաց Թէյմուրազ արքայի հետ և ընդհանուր ուժով ուզում էին ոչնչացնել Փանահ-խանի գօրութիւնը։ Բոլոր կռիւների ժամանակ հայ մելիքները հոգում էին իրանց դաշնակցի պիտոյքները և մատակարարում էին նորա վրացի, խնսուր և օս զօրքերի խառնիճաղանճ բազմութեան բոլոր պաշարեղէնները։

[8]) Զանախչին կամ Աւետարանոցը Վարանդայի գլխաւոր բերդաւանն էր։ Առաջ այստեղ էր կեդրոնացած գաւառի իշխանութիւնը։ Բայց յետոյ Փանահ-խան, գտնելով Զանախչու դիրքը պաշտպանութեան համար անյուսալի, խորհուրդ տուաւ Մելիք-Շահնազարին հիմնել Շուշուայ բերդը. Այնուհետև Շուշուայ բերդը դարձաւ Վարանդայի իշխանութեան և պաշտպանութեան կենդրոնը։ Գարգար գետի մօտ կառուցած

ճակատամարտում Փանահ-խանի զորքերը ջարդում են և ինքը փախչում է դէպի Պարսկաստան. իսկ Մելիք-Շահնազարը և Խաչէնի Մելիք-Միրզախանը, իբրև Փանահ-խանի դաշնակիցներ, յաղթութիւնից յետոյ փախչում են Զանախչու բերդը և այնտեղ ամրանում։ Հայոց և վրաց միացած զորքերը յարձակւում են Զանախչոյ վերայ, բերդը աւերում և Շահնազարին ու Միրզախանին գերի առնում։

Ի՞նչ Մելիք-Կոստին ու Մելիք-Ներսէսը պատերազմից առաջ պայմանաւ էին հասել վրաց արքայ Թէյմուրազի հետ, որ վերջինս միայն բաւականանայ պատերազմական դաւարով, իսկ Փանահ-խանը, Մելիք-Շահնազարը և Մելիք-Միրզախանը, ըստ պայմանին, պիտի յանձնուէին հայերի ձեռքը։ Սակայն պատերազմից յետոյ Թէյմուրազը զանազան պատրուակներով յետաձգում էր այդ երեք չարագործին հայերի ձեռքը յանձնելը, չընայելով, որ փախստական Փանահ-խանին Դալի Մահրամեան էր բռնել կէս ճանապարհին և կրկին բերել Վարանդա։ Ուխտադրուժ Թէյմուրազը, քանդելով հայերի հետ կապած պայմանը, գերուած Փանահին, Շահնազարին ու Միրզախանին տարաւ իր հետ մինչև Գանձակի կողմերը և մեծ փրկանք ստանալով այդ երեք չարագործից, արձակեց նոցա գերութիւնից։

[10]) 1796 թուին, երբ Գանձակը պաշարել էին վրաց Հերակլ թագաւորը և Փանահ-խանի որդի Իբրահիմ-խանը (այդ ժամանակ Փանահը սպանուած էր Պարսկաստանում և նորա տեղը Ղարաբաղում բռնել էի որդին), սորանց օգնութեան էր եկել և Աւարիայի Օմար խանը իր լեզգի զորքերով։

[11]) Գանձակի պաշարուած բերդումն էին գտնուում տեղային հայասէր Ջաւատ-խանը և նորա մտերիմ բարեկամ՝ հայոց Մելիք-Մէջլումը իր երկու քաջերի՝ Դալի-Մահրամայի և Թիլի-Արզումանի հետ միասին։ Դալի-Մահրաման լեզգիների դէմ էր կռւում, իսկ Արզումանը՝ վրացիների դէմ։ Սոքա յաճախ իրանց զինակիցների հետ միասին դուրս էին գալիս պաշարուած բերդից, կայծակի նման՝ նետւում թշնամիների վերայ, նրանց ջարդում և կրկին վերադառնում բերդը։ Մի այդպիսի յանդուգն յարձակումից յետոյ, երբ անզգոյշ Մահրաման լքնած նստած էր գիշերով՝ իր ձեռքով սպանուած լեզգիների դիակների մէջ՝ և հանգստանում, մի կիսաշունչ լեզգի յանկարծ ատրճանակով զարկեց և սպանեց նորան։ Դալի-Մահրաման սպանուեց Գանձակի զերեզմանատան մէջ և թաղուեցաւ այդ քաղաքի Մայր եկեղեցու գաւթում։

Ե. Թ.



ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ

(ԻՕՄ-ԿԻՊՈՒՐ [1])

ԿԱ. ԻՍԱԼԷՆԿՈ

(Մալառոսպկան հեքեաթ)

Երակը հանպա, լուսնեակը է բարձրանում
Գալլակերը ծրածում է անտառում։

(Հնչեն կ ο)

I.

Լսես Ինչ կայ,— ով մարդ, հապա մի պարզ գիշեր դուրս եկ տնից դուրս կամ ուելի լաւ, դուրս արի հէնց գիւղից, բարձրացիր բլրակը, ու աչքդ ձգիր երկնքին ու երկրիս։ Տես թէ ինչպէս պայծառ լուսնակը շրջում է երկնքի երեսին, ինչպէս պեծպրծին են տալիս ու աչքախփիկ անում աստղերը, ինչպէս երկրի երեսից թեթև ամպեր են բարձրանում և, կարծես գիշերով ճանապարհը կտրող ուշի մնացած օտարականների նման միմեանց ետեւից մի տեղ շտապում...։ Իսկ անտառը հմայուած ականջ է դնում, ինչ թովիչ բաներ են կատար-

---

[1]) Հրէաները գարնան սկզբներում տօնում են իրենց նոր տարին, իսկ տասն օր անց գալիս է Իօմ-Կիպուր (մաքրութեան) տօնը։ Մալառուսիայում դա «Դատաստանի օր» է

ում այդտեղ կէս գիշերից յետոյ, իսկ քնէած դեռակը վաղում է, և խոխոջում, և ափի սօսիներին մի բան փնթփնթում...։ Եւ այնուհետև, դու, մարդ Աստուծոյ, ասա ինձ— ինչ ասես, ինչ հրաշք ասես չի պատահիլ այս Աստծու տնակի մէջ, որ մարդիկ լոյս աշխարհ են անուանում։

Կարող է ամեն բան պատահել։ Ահա հէնց իմ մէկ բարեկամիս, Նովո-Կամենկայի Ջաղացպանի գլխին էլ, մի արկած էր պատահել...։ Թէ որ մինչև այժմս դեռ ոչ ոք ձեզ այդ բանը չէ պատմել, դէ լաւ ուրեմն, ես կպատմեմ, միայն ինձնից մի պահանջէք, որ երդուեմ, թէ այդ ամենը ուղիղ է։ Ամենևին, չեմ երդուիլ, որովհետև ճիշտ է, ես այդ ամենը Ջաղացպանից իրենից եմ լսել, բայց և այնպէս, մինչև օրս էլ դեռ չգիտեմ—եղել է իսկապէս այդ բանը, թէ չի եղել...։

Էհ, եղել է թէ չի եղել, բայց և այնպէս եկէք ինչ որ պատահել է, պատմեմ ձեզ։

Մի իրիկուն, իրիկուան ժամից յետոյ, Ջաղացպանը Նովո-Կամենկայից տուն էր դառնում,—Ջաղացը, աւելի չէ, գիղից հաղիւ մէկ ու կէս վերստ հեռու լինէր,—Ջաղացպանիս քէֆը տեղը չէր։ Բայց թէ ինչու քէֆը տեղը չէր, այդ նա ինքն էլ կարող չէր ասել։ Եկեղեցում ամեն բան կարգին, կանոնին էր եղել, և մեր Ջաղացպանը, որ ձայնի կողմից ոչ ոքից յետ չէր մնալ, սաղմոսասացի բեմից սաղմոսներն այնպէս վարժ, այնպէս բարձր էր կարդացել, որ մինչև անգամ սովոր մարդիկն էլ զարմացել էին. «Ցեսէք, տեսէք, ո՛նց է վրայ տալիս,—ասում էին նրանք զարմացած,—որ ասես մի խօսք չի հասկացուում. կատարեալ անիւ է—պտտւում է, գլորւում, և գիտես էլ, որ անիւը մատներ ունի, բայց կարող ես թէ կուզ մէկ մատը տեսնել։ Հէնց այդպէս էլ նա էր կարդում,—կարդմունքն, ոնց որ անիւ կարծես քարած ճամբի վրայ գզրդում էր, բայց արի ու մի բառ ջոկիր։

Եւ Ջաղացպանը ականջ էր դնում թէ մարդիկ ինչ են

կոչում և այն հաւատալիքը կայ, թէ այդ օրը հրէական սատանան, Ջանչողը, մտնում է սինագոգ և մի հրէայ վերցնում, տանում։ Հաւանօրէն այդ հաւատալիքն առաջացած պիտի լինի այն հանդամանքից, որ հրէաները արևմտեան նահանգների մանր քաղաքներում Իօմ-Կիպուրը կատարում են չափազանց սրտայոյզ և եղերերգական ծէսերով՝ քրիստոնեայ ժողովրդի աչքի առաջ։

խօսում իրար մէջ, և ուրախանում էր։ Հո կարողանում էր հոգու համար աշխատել,—ոնց որ ամրապինդ երիտասարդը կալում, այնպէս էլ սա իր լեղուով թակում էր, թակում, մինչև որ կոկորդը չորացաւ, քիչ էր մնում աչքները դուրս պրծնէին։

Ժամից յետոյ տէրտէրը ջաղացպանին տուն տարաւ, թէյ խմացրեց, մի չիչ էլ օղի բերին, սեղանի վրայ դրին ու դարտկած յետ տարան։ Դրանից յետոյ լուսնակն արդէն դաշտերի վրայ բաւական բարձրացել, մտիկ էր տալիս փոքրիկ, բայց արագահոս Կամենկա գետակին, երբ որ ջաղացպանը տէրտէրի տնից դուրս եկաւ և գեղի միջովն անցնելով իւր ջաղացը դարձաւ։

Գեղացիներից ոմանք արդէն քնած էին, ոմանք խրճիթում նստած ճրագի լուսով ընթրիք անում, իսկ կային նաև այնպիսիները, որոնց աչնանային տաք ու պարզ դիշերը քաշել, փողոց էր դուրս բերել։ Եւ ծերունիները նստած էին տան առաջ սաքուի վրայ, իսկ երիտասարդները քաշուել էին ցանկապատերի տակ, խրճիթների ու բալուտի թանձր ստուերում, այնպէս որ նրանց տեսնել անդամ կարելի չէր, և միայն այստեղ-այնտեղ լսում էր նրանց կամացուկ խօսելու ձայնը, կամ զսպուած ծիծաղը, իսկ երբեմն էլ երիտասարդզոյգի անդգոյշ համբոյրը...։ Էհ, ինչ ասես չի պատահիլ ահա մի ալպիսի պարզ ու տաք դիշեր բալուտի թանձր ստուերի մէջ։

Եւ թէպէտ ջաղացպանը մարդկանց չէր տեսնում, բայց նրանք տեսնում էին ջաղացպանին, որովհետև նա հէնց փողոցի մէջ տեղով, լուսնեակի լուսովն էր գնում։ Ուստի և տեղ-տեղ նրան ասում էին.

—Բարի իրիկուն, պարոն Ջաղացպան։ Տէրտէրի տնից հո չէք գալիս։ Այսքան ժամանակ նրա մօտ հո չէք հիւրասիրուել։

Ամենքն էլ գիտէին, որ միայն այդտեղից է գալիս նա, ուրիշ տեղ չունի, և ջաղացպանին դիւր էր գալիս այդ բանը, ուստի և նա հպարտութեամբ ու առանց քայլերը կանգնեցնելու պատասխան տուեց։

—Էհ, վատ չէր, բաւական լաւ հիւրասիրուեցայ,—և հպարտ քայլուածքով առաջ գնում...։

Իսկ ոմանք լուռ նստած էին լերդիկի տակ ու սպա-

սղում, որ չուտով անցնիլ գնալ և չկատէ իրենց այդտեղ եղածը։ Բայց մեր Ջաղացպանն այն մարդը չէ, որ թողնի գընալ կամ մոռանալ այնպիսի մարդկանց, որոնք իրենից պարտքի ալիւր կամ տոկոսով փող էին առել, կամ ցորեն աղալու համար պարտք մնացել։ Ի՛նչ անենք, թէ նրանք ստուերի միջից լաւ չէին երեում կամ նստած էին լուռ ու մունջ, կարծես պապանձուած լինէին, բայց և այնպէս Ջաղացպանը կանգ էր առնում և խօսում.

—Հ՛ը, բարի՞ ջողում։ Այստեղ էք։ Ուղում էք լռեցէք, ուղում էք՝ չէ, այդ ձեր գիտնալու բանն է, բայց պարտքերդ պատրաստեցէք, որովհետև ժամանակը վաղն է, առաւօտը կանուխ։ Իսկ ես չեմ սպասիլ, գիտցած լինիք։

Եւ յետոյ դարձեալ փողոցի միջով շարունակեց իւր ճանապարհը, իսկ նրա ստուերը կողքից անքաժան վազում էր հետը. և ինչ ստուեր—սեւ, սիպ սև, այնպէս որ Ջաղացպանը, որ դիր-կարդումով մի մարդ էր և հարկաւոր տեղում գիտէր խելքին զօռ տալ, ինքն իրեն մտածում էր.

—Ի՛նչ սև ստուեր է. զարմանալի բան...։ Ձիւնից սպիտակ չոր հաղնիս ոչ ստուերդ այսպէս ածուխից էլ սև լինի՞...։

Այստեղ նա եկաւ հասաւ Չնուդ Եանկէլի օղետանը, որ կանգնած էր բլրակի գլխին, ճանապարհի մոտքի մօտիկ։ Արևի մայր մտնելով չարաչն էլ վերջացել էր արդէն, բայց և այնպէս տէրը օղեպանը չէր, հապա կար միայն վարձուորը՝ Խալրկոն՝ որ միշտ չարաչ ու տօն օրերին ամրոջ ու նրա տնեցիների տեղն էր բռնում։ Խալրկոն նրանց համար ճրագ վառում, իւր ձեռներով յաճախորդներից փող ստանում, քանի որ Չնուդները—այդ սաղ աշխարքն էլ գիտէ—խիստ մօտիկ են իրենց հաւատին—ամենևին տօն օրը ոչ ճրագ կվառեն, ոչ ձեռները փող կբռնեն—մեղք է։ Այս ամենը նրանց տեղաք վարձուոր Խալրկոն էր անում. իսկ Եանկելը կամ նրա կինը, և մէկ-մէկ էլ նրանց տղերքը աչքները չորս բացած նայում էին, թէ մի գուցէ չահանոցը կամ արաստանոցը դախլը ընկնելու տեղ մի հունարով Խալրկոի ջեբը մանի։ «Խորամանկ մարդիկ են, օ՛, շատ խորամանկ,—մտածում էր Ջաղացպանը։—Ճամբան զտել են, համ իրենց Աստծուն են հաճոյանում, համ էլ կոպէկները չեն կորցնում։ Խելօք ժողովուրդ է, այս էլ պէտք է ասած,—մերոնք ուրտեղ»։

Նա կանգ առաւ օղետան դրանը, հրապարակի վրայ,

որը պինդ թակուած էր բազմաթիւ մարդկանց ոտների տակ, որոնք թէ վաճառանոցի և թէ հասարակ օրերը, ամբողջ շաբաթը, խռնուում են այդտեղ, և հարցրեց.

—Եանկէլ, էյ, Եանկէլ։ Տանն ես, թէ չէ։

—Չեմ տեսնում, տանը չէ,—դախլի ետեից պատասխանեց վարձուորը։

—Բաս ուր է։

—Ո՛ւր է,—ուր պիտի լինի, քաղաքում,—պատասխանեց վարձուորը։—Մի՞թէ, պարոն Ջաղացպան, չգիտէք, թէ ինչ օր է այսօր նրանց համար։

—Ի՞նչ օր է որ։

—Իսմ-կիպուր է։

«Որպէս թէ բան հասկացրեց»—մտածեց ինքն իրեն Ջաղացպանը։ Եւ պէտք է ձեզ ասեմ, որ թէպէտ այս վարձուորը մի հասարակ վարձուոր էր,—չէ թէ միայն հասարակ, հապա և ջհուդի վարձուոր,—բայց և այնպէս գիր-կարդում գիտցող, բան տեսած ու հպարտ մարդ էր, ծառայութիւնից վերադարձած զինուոր։ Սիրում էր քիթը վեր պահել ու պարծենալ, մանաւանդ Ջաղացպանի առաջ։ Նկեղեցում սաղմոս էլ էր կարդում, Ջաղացպանից պակաս չէր, միայն ճաքած ձայն ունէր ու մէկ էլ քթի մէջն էր ասում։ Այդ պատճառով էլ ժամադրքի վերարերմամբ կարող էր մեր Ջաղացպան Փիլիպպի հետ մրցել, բայց Առաքելի մէջ—ամենևին։ Իսկ թէ ուրիշ բաների մէջ—երբէք չետ չէր մնալ։ Թէ Ջաղացպանը մի խօսք ասաց, նա իսկոյն պատասխանը կտալ և այն՝ անպատճառ հակառակը կասէր։ Թէ Ջաղացպանն ասի՝ «չգիտեմ», սա իսկոյն—«բայց ես գիտեմ»։ Անհամ մարդ է...։ Ահա այժմ էլ մի այնպիսի խօսք ասաց, որ Ջաղացպանս եղունդներով գըլխարկի տակ քարեց, իսկ ինքը դեռ ուրախանում էլ է։

—Դուցէ դուք դեռ այժմ էլ չհասկացաք, թէ ինչ օր է այսօր։

—Ինչիս է որ ջհուդի ամեն մի տօնը գիտենամ,—նեղացած պատասխանեց Ջաղացպանը։—Ես նրանց մօտ հօ չեմ ծառայում։

—Ամեն մի։ Հէնց բանն էլ այն է, որ սա «ամեն մի» տօն չէ։ Այսօր մի այնպիսի տօն է նրանց համար, որ տարին մի անգամ է գալիս միայն։ Այդ դեռ ինչ է որ։ Աւելին

ասեմ,— աչխարքիս երեսին ուրիշ ոչ մի աղդ մի այսպիսի տօն չունի։

—Դէ լաւ, կասէք։

—Կարծեմ Զանչողի (Խապուն) մասին դուք էլ լսած կլինիք։

—Հա։

Ջաղացպանը զարմացած մնաց,— և ճչմարիտ, ինչպէս էր, որ գլխի չէր ընկել,— և նա Ջհուդի խրճթի պատուհանից ներս նայեցաւ. ինչ տեսնի— լատակին խոտ ու դարման էր փռած, երկչահեան ու եռաչահեան աչտանակների վրայ վառած էին բարակ, ճարպից թափած մոմերը և լաւում էր մի տեսակ, մի քանի մարդահասակ մեղուների բզզոց։ Այդ Եանկէլի նոր առած երկրորդ, նորատի կինն ու մի քանի էլ Ջհուդի ճուտերն էին, աչքերը փակած, շրթունքները ցըմցըմացնելով աղօթք բզբզացնում, և այդ բզզոցի մէջ որ ասես մի բառ ջոկել կարելի չէր։ Բայց մի ջոկ, մի զարմանալի բան կար այդ աղօթելու մէջը՝—կարծես թէ Ջհուդների ներսը մի ուրիշը նստած է, ու նստած լաց է լինում, մի բան լիշում, խնդրում, աղերսում։ Բայց թէ ումն են խնդրում, ինչ են խնդրում,—ով է իմանում։ Այսքանս միայն երևում է, որ նրանց խնդրուածքը օղետան ու փողի համար չէ...։

Ջհուդների աղօթքին ականջ դնելուց՝ մեր Ջաղացպանի հոգին խռովեցաւ,— և՛ ափսոսում էր, և սիրտը ճմլւում։ Նա դարձաւ, վարձուորի երեսը նայեցաւ, որ նոյնպէս դրան ետևից լսում էր այդ բզզոցը, և ասաց.

—Աղօթք են անում...։ Ուրեմն, ասում ես, Եանկէլը քաղաք գնաց։

—Հա, գնաց։

—Մէկ ասող լինի, ինչ գործ ունիս։ Հապա եթէ Զանչողը հէնց նրան չանչի։

—Հէնց բանն էլ այդ է,—պատասխանեց վարձուորը։—Ես որ լինէի նրա տեղը, սաղ աչխարքս ինձ բախչէին տեղիցս չէի շարժուիլ—թէպէտ ամեն տեսակ անհաւատների դէմ պատերազմի եմ գնացած ու շքադրամ էլ ունիմ։ Պինդ կնատէր տանս,— տնից հո չէ չանչելու։

—Ինչու։ Որ չանչել ուզի, տան միջից էլ կարող է չանչել։ Ինչի տան միջից կարելի չէ։

—Ինչու...։ Զարմանում եմ, որ հարցնում էլ էք։ Որ ու-

զէք ղլխարկ կամ ձեռնոց առնել, ոչ կդնաք առնելու։

—Ո՛ւր պիտի գնամ, ի հարկէ խանութ։

—Ինչու խանութ։

—Բան ասաց։ Որովհետև խանութում չատ-չատ կայ։

—Չա՛, հէնց այդ է։ Այժմ սինագոգ որ մանես—սիրտդ ինչքան ջհուդ կուզէ։ Խռնւում են, լաց լինում, աղաղակում, այնպէս որ ձայները սաղ քաղաքի մէջ փռուած, մէկ ծայրից միւսն է հասնում։ Իսկ ուր որ մէկներ են հաւաքւում, այնտեղ էլ թռչունն է գնում։ Զանչողը չիմար պիտի լինի, որ այդտեղ գնալու տեղ անտառներ ու գեղեր մտնի գայ, ջհուդ փնտրի։ Տարուայ մէջ մէկ օր ունի, այն էլ այդպէսով ի զուր պիտի անցկացնի։ Մէկ էլ որ, ամեն գեղի մէջ հո ջհուդ չի լինում, մէկտեղ կայ, մէկ տեղ չկայ։

—Է՛, ասենք այդպիսի տեղ քիչ կայ։

—Քիչ, բայց հո կա՛յ...։ Այս էլ կայ որ չատի միջից ընտրելն էլ հեշտ է։

Երկուսն էլ լռեցին։ Ջաղացպանը ա՛յն էր միտք անում, թէ վարձուորը նորից խօսքով բռնեց իրան, և դարձեալ դժգոհութիւն զգաց։ Իսկ պատուհաններից չարունակ լսւում էր ջհուդների լացն ու աղօթքը։

—Երևի իրենց հօր համար են աղօթում,—ասաց Ջաղացպանը։

—Շատ կարելի է։

—Դեռ տեսնենք այդ ուղիղ բան է,—նորից սկսեց Ջաղացպանը, որ համ ուզում էր վարձուորի սիրտը հանել, համ էլ, որպէս մարդ, մի քիչ խղճում էր ջհուդին։—Դուցէ մարդիկ հէնց դուրս են տալիս միայն։ Սխմախին մէկը հնարած լինի, միւսն էլ հաւատացած։

Այս խօսքերը վարձուորին դիւր չեկան։

—Այդպէս էլ է պատահում,—ասաց նա,—մէկ էլ տեսար մէկը, առանց մտածելու, յանկարծ մի բան ասաց...։Հէնց ձեր ասածն օրինակ,—միթէ ես եմ հնարել այդ բանը, կամ հա՛լրս, կամ խնամիս է հնարել, քանի որ ամեն մի քրիստոնեայ մարդու էլ յայտնի է դա։

—Դուք ձեր աչքովը տեսնել էք,—զարմացած հարցրեց Ջաղացպանը, որ վարձուորի արհամարհական խօսքերը սրտին էր առել։

Այս էլ ասեմ, որ Ջաղացպանս որ տաքանար, կսկսէր

երբեմն էլ պնդել, թէ մինչև իւր աչքովը չտեսնի, չի հաւատալ, որ սատանայ կայ աշխարհումս։ Հէնց ալժմս էլ նա խիստ տաքացել էր։

—Իսկ դուք,—ասում է,—ձեր աչքովը տեսել էք։ Բաս որ չէք տեսել, միք էլ ասիլ, թէ կայ. ա՛յ ինչ։

Մեր վարձուորը թէպէտ պաշտօնատոր զինուոր էր և կտրուկ էլ մարդ, բայց այստեղ ձայնը փոքր ինչ քաշ գցեց և մինչև անգամ հաղալու պէս արաւ։ Բայց և այնպէս—կրողը տանի—այն մարդը չէր, որ բոլորովին պոչը իրան քաշէր։

—Ի՛նչ սուտ ասեմ,—ասում է,—աչքովս տեսած չեմ։ Իսկ դուք, պարոն Ջաղացպան, սկի Կիւն տեսել էք։

—Ոչ, չեմ տեսել, ես էլ սուտ չեմ ասիլ։

—Թէպէտ տեսած էլ չլինիք, բայց և այնպէս հո Կիւնը կայ։

Այստեղ Ջաղացպանս մի այսպիսի պարզ բանի վրայ աչքերը չուեց։

—Ինչ որ ուղիղ է՝ ուղիղ է,—համաձայնեցաւ նա,—թէև Կիւն չեմ տեսել, բայց գիտեմ որ կայ...։ Տեսնում եմ, որ պէտք է հաւատալ, երբ ասում են թէ Ջանչող կայ։ Բայց, գիտէք, բանը... ուզում էի հարցնել, ումից էք իմացել։

—Վա՛. ումից։ Իսկ դուք ումից էք իմացել, թէ Կիւնը կայ։

—Ի՞նչ էք վրայ տալիս։ Լեզու եմ ասում է։ Լեզու չէ, թուր է. չորանար այդ լեզուդ։

—Իմ լեզուս չորանալուց օգուտ չկայ. լաւն այն է, որ երբ ամենքն էլ պնդում են մի բան, դուք էլ հաւատաք դրան։ Թէ որ ամենքն էլ նոյնն են ասում, նշանակում է, որ ուղիղ է։ Որ ուղիղ չլինէր, այն ժամանակ ամենքն էլ չէին ասիլ, հապա միայն դրախտոնները կխօսէին. ահա՛ ձեզ։

—Բլ, բլ, բլ, բլբլում էք... Համբերեցէք մի բոպէ։ Այնպէս էք վրայ տալիս, հէնց գիտենաս սանդ լինիք ծեծելիս։ Ալժմ ինքս էլ եմ տեսնում, որ ծուռ ճամբայ եմ բռնել...։ Բայց, գիտէք, դարձեալ կուզէի իմանալ, որտեղից է դուրս եկել դա, ժողովրդի պատմածը...։

—Այնտեղից է, որ ամեն տարի կատարւում է այդ։ Ինչ որ լինում է, այն էլ խօսում են, իսկ ինչ որ չի լինում, նրամասին խօսելն էլ աւելորդ է...։

—Ի՛նչ մարդ է։ Բայց չէ, սպասիր, ես որ քեզ չկանդ-

նացնեմ, ջաղացի չախչախի նման գնալու ես հա գնալու։ Վերջապէս ասա մի տեսնենք, ինչ է պատահում։ Դու ինձ ոչ ասա։

—Հը՛. ուրեմն դուք այն էլ չգիտէք, թէ ինչ է լինում դատաստանի օրը...։

—Որ գիտենալի, չէի հարցնիլ։ Շատոնց է լսում եմ, որ մարդիկ դուրս են տալիս, ոչ ոնց որ դու—Զանչող, Զանչող, բայց թէ ինչ մտքով են ասում, չեմ իմանում։

—Թէ որ այդպէս է, վաղուց ասէիք էլի. արդէն պատմած կլինէի, թէ չէ ես այսպիսի հպարտ մարդիկ չեմ սիրում. ասենք նրանց օղի է պէտք, բայց դեռ սկիղբը ջրի մասին խօսք բաց կանեն—«ջուր կխմէի, բայց համով չէ»։ Որ ուզում էք, ձեզ պատմեմ, լսեցէք. ինչքան էլ որ չլինի, դարձեալ ես աշխարք տեսած մարդ եմ, ձեզ նման տանը չեմ փտել։ Քանի տարի քաղաքում եմ ապրել, ջհուդների մօտ էլ առաջին անգամ չէ ծառայածս։

—Մեղք չէ,—իւր կասկածը յայտնեց Ջաղացպանը։

—Դուցէ ուրիշի համար մեղք է, բայց զինուորին ամեն բան կարելի է։ Հէնց այդպիսի թուղթ էլ տրուած է մեզ։

—Հա՛, թէ որ թուղթ է տրուած...

Սրանից յետոյ զինուորն արդէն սկսեց բարեկամաբար պատմել Զանչողի մասին բոլոր գիտեցածը, պատմեց և այն, թէ ինչպէս նա ամեն տարի այս օրը մի-մի ջհուդ է չանչում, տանում։

Զանչողը, պէտք է ձեզ էլ ասեմ, քանի որ Ջաղացպանի նման դուք էլ չգիտէք այդ, մի ջոկ տեսակ ջհուդի սատանայ է։ Նա, ասենք, ամեն բանով նման է մեր սատանային, նոյնպէս սև է, նոյնպիսի կոտոշներ ունի և թևերն էլ—ոնց որ մի անագին չղջիկանի թևեր. միայն դաւիկներ ունի և զլխին թասակ, ու մէկ էլ միմիայն ջհուդների վրայ իրաւունք ունի։ Բայց հէնց որ մի քրիստոնեայ մարդու պատահի, թէկուզ ճիշտ կէս դիշերին, մի անապատ տեղ կամ թէ չէ լճացած ջրի ափին լինի, ոնց որ վախկոտ շուն կթողնի, կըփախչի։ Իսկ ջհուդների վրայ նրան իրաւունք է տրուած—ամեն տարի ընտրում է մի ջհուդ և վեր առնում տանում...

Ահա հէնց այդ ընտրութիւնն անելու համար է Իսմ-Կիպուրը, դատաստանի օրը։ Դեռ այդ տօնից օրեր առաջ ջհուդները սկսում են աղօթք անել, լաց են լինում, չորերը պա-

տառոտում և մինչև անգամ չգիտեմ ինչու վառարանից մոխիր հանում, գլուխները ցանում։ Իրիկունից ամենքը լուացում են դետակի կամ լճակների մէջ, իսկ արևը մայր մտածովը խեղճերը գնում են աղօթատուն, և մի այնպիսի աղմուկ-աղաղակ բարձրացնում, որ Աստուած հեռու անի,—ձայները գլխներն են ծղում, իսկ վախից աչքները փակում...։ Իսկ այդ միջոցին, հէնց որ մութն ընկաւ ու երեկոյեան աստղը ծագեց, Զանչողը դուրս է գալիս իւր ընից ու պտոյտ-պտոյտ անում աղօթատան գլխին, ու թևերով պատուհաններին խփում, ու իրեն համար որս ջոկում։ Ամենից աւելի վախը ու սարսափը Ջնուդների վրայ կէս գիշերին է ընկնում։ Նրանք դիտմամբ վառում են բոլոր մոմերը, որ սենեակ չլինի, բոլորը դետին են փռւում, այնպէս կանչվատում, հէնց գիտենաս մորթելու են տանում։ Եւ մինչ նրանք այսպէս վէր ընկած սուգ ու շիւանի մէջ են լինում, Զանչողը, մի մեծ ագռաւի նման, մտնում է ներս. ամենքն էլ զգում են, թէ ինչպէս նրա թևերի շարժումից սառչում է սրանները, իսկ նա, որին որ առաջուց ընտրած է լինում, զգում է, որ սատանի մագիլները խրում են իւր մէջքին։ Է՛հ. միայն պատմելուց արդէն մարդուս ջանը սրսռում է. դէ իմացիր ինչ կլինի խեղճ Ջնուդի հալը...։ Ի հարկէ, ինչ որ ջանումը ոյժ կայ, սկսում է կանչել։ Բայց ո՞վ է լսողը, քանի որ հէնց ամենքն էլ դժի նման դորդոռաց են զցել։ Ո՞վ դիտէ, դուցէ կողքին եղողները հէնց լսում էլ են, ինչ կարող են անել—նրանք ուրախ են, որ իրենք պրծել են...։

Վարձուոր Խալրիօն հէնց ինքն էլ քանի անգամ լսել է, թէ ինչպէս դրանից յետոյ դիւղում փող է հնչելիս եղել, և ինչ դիլ, խղճալի ու երկար ձայնով...։ Այդ աղօթատան ծառան է իւր խեղճ եղբօր ետևից բարի ճամբայ ասում. ինչ այդ միջոցին միւսները դաւթում հաղնում են իրենց ոտնամանները (որովհետև նրանք գուլբով են աղօթատուն մտնում) և սուս ու փուս տուն դառնում։ Խալրիօն այս էլ է տեսել, թէ ինչպէս նրանք իմբոլին կանգնում են լուսնի առաջ և մի բան փնթփնթում, և ոտքի ծայրերին բարձրացած՝ դիշերային երկինքը դիտում...։ Եւ այդ ժամանակ, երբ արդէն բոլորն էլ հեռանում են, դաւթում գետնին մնում է մի զոյգ ոտնաման, որ իւր տիրոջն է սպասում...։ Է՛հ. ինչքան ուզում է սպասի, տէրը չկայ. որովհետև այդ միջոցին Զանչո-

ղը ոտնամանների տիրոջը չանչած, օդի մէջ թևերը շարժելով սարեր ու ձորեր, դաշտեր ու անտառներ է կտրում և աշխատում, որ քրիստոնէի աչքի չընկնի...։ Անիծեալը ուրախ է լինում, երբ ամպամած ու մութ գիշերուայ է պատահում։ Բայց եթէ խաղաղ ու պարզ գիշեր լինի, այ ինչպէս այսօր, երբ լուսինը այնպէս է լուսաւորում, հէնց դիտենաս ցերեկ լինի, կարելի է ասել, որ սատանան ի զուր է ջափա քաշել...։

—Ինչու՞, — հարցրեց Ջաղացպանը ու վախեցաւ, թէ մի դուցէ շատախօս Խայրիօն դրա համար էլ սկսի իրեն յանդիմանել։ Բայց սա այս անգամ հանդարտ պատասխանեց.

—Նրա համար, որ բաւական է թէկուզ մի հասարակ քրիստոնեայ մարդ, թէ կուզ հէնց դուք, օրինակ, ասէ. «Թող, այդ իմն է։—նս։ իսկոյն Չհուդին բաց կթողնի։ Թևերը կթափահարէ, ոնց որ գնդակահար եղած անդղ խոշալի կերպով կրկանչէ և, ամբողջ տարուայ աւարից զրկուած, կթռչի կերթայ։ Իսկ Չհուդը գետին կընկնի։ Լաւ եթէ շատ բարձրից չի վեր ընկնիլ, կամ փափուկ տեղ, ճահճի մէջ կընկնի։ Թէ չէ, միևնոյնն է, կորած է ի զուր...։ Ոչ սատանին է փայ դառնում, ոչ իրան։

—Ա՛յ քեզ բան, — մտքի մէջ ընկած պատասխանեց Ջաղացպանը և վախեցած՝ աչքը ձգեց երկինք, որտեղ լուսինը, ճշմարիտ որ ցերեկի նման լոյս էր տալիս։ Երկինքը պարզ էր, միայն լուսնի ու անպտաւի միջև, որ գետակի միւս կողմը հեռուում սևին էր տալիս, ոն փետրի նման, արագ արագ վազում էր մի փոքրիկ ամպ։ Ամպ էր՝ ամպի պէս. բայց այս բանս մի քիչ տարօրինակ թուաց Ջաղացպանիս, — կարծես քամի էլ չկայ, թփերի վրայ տերևներն անշարժ կեցած են, հէնց իմանաս հմայուած լինին, բայց ամպը ուղիղ, թռչունի նման, դէպի քաղաք է թռչում։

—Հապա՝ մի տեսէք, ինչ եմ ցոյց տալու, — ասաց Ջաղացպանը։

Վարձուորը դուրս եկաւ օդեռնից և, մէջքը դրան կողքին դէմ տուած, սառնութեամբ հարցրեց.

—Ի՞նչ կայ որ։ Բան էք գտել ցոյց տալու։ Ամպ է, ինչ անենք։ Տէրը նրա հետ...

—Բայց դուք այս էլ նայեցէք, — քամի կայ։

—Հ՛ըը՛... Ա՛յ քեզ բան, — գլխի ընկաւ վարձուորը։ — Ուղիղ քաղաք է գնում...։

Եւ երկուսն էլ, գլուխները վեր բարձրացրած, վզները քորեցին։

Իսկ պատուհաններից շարունակ լսում էր Ջհուդների բզզոցը, երևում էին նրանց դեղնած, երկարացած դէմքերը, գլխարկները յետ քաշած, աչքները փակ, շրթունքներն անշարժ...։ Ջհուդի լակոտները լալիս էին, կտոր-կտոր լինում, և Ջաղացպանին դարձեալ թուաց, թէ մէկ ուրիշն է նրանց ներսը նստած լաց լինում, մի այնպիսի բան ինդրում, որը վաղուց, շատ վաղուց կորած և մասամբ էլ մոռացուած է արդէն...։

—Է՛հ, տուն դնալու ժամանակ է,—ուշքի եկաւ Ջաղացպանը.—Իսկ ես փող էի բերել Եանկէլին տալու...։

—Կարելի է։ Նրանց տեղ ես եմ ընդունում,—պատասխանեց վարձուորը մի կողմ նայելով։

Բայց Ջաղացպանը այնպէս ձեացրեց, իբր թէ չէ լսել։ Բերածը մի այնքան էլ փոքր գումար չէր, որ առանց ալևալլուութեան մի որ և իցէ վարձուորի ձեռը դնես, այն էլ մի այսպիսի թոկից փախած, պաչտօնաթող զինուորի։ Այդքան փողի համար, ինչպէս ասում են, աչքին-ունքին չէր նայիլ, թէ դրել ես-դրիր, ոչ թէ գիւղից, նահանգից էլ կարող էր փախչել։ Ցետոյ դնա ու ետևից մարդ։

—Մնաք բարով,—ասաց Ջաղացպանը։

—Երթաք բարով։ Բայց փողը կարող էի վերցնել։

—Ի՞նչ նեղութիւն, իրան կտամ։

—Ինչպէս կուզէք։ Առնելը ես էլ կառնէի, մի մեծ նեղութիւն չէ։ Էհ, օղեստունն էլ փակելու ժամանակ է։ Երևում է, որ ձեզանից զատ ոչ մի շուն չպիտի գայ այսօր։

Վարձուորը դարձեալ մէջքը դրան կողքին քորեց, Ջաղացպանի ետևից մի տեսակ անհաճոյ կերպով սուլեց ու ըսկսաւ դռները գոցել. դրան վրայ սպիտակ ներկով նկարած էր մի ամաս, մի բաժակ ու մի չիչ։ Իսկ Ջաղացպանը ցած իջաւ բլրակից ու, սպիտակ շորերը հագին, սկսաւ փողոցով առաջ գնալ, իսկ նրա ետևից դարձեալ վազ էր տալիս նրա սև, սիպսն ստուերը։

Բայց այժմ Ջաղացպանն արդէն իւր ստուերի մասին չէր, որ մտածում էր, հապա բոլորովին մի ուրիշ բանի մասին...

II.

Ջաղացպանը տասը սաժէն չէր անցկացել, որ փոքրիկ պարտիզում ցանկապատի ետևը մի բան խշխշաց, չրխկաց, կարծես երկու մեծ թռչուններ թռան։ Բայց այդ թռչուն չէր, հապա մի երիտասարդ ու մի աղջիկ, որ ստուերի միջից լանկարծ Ջաղացպանի դուրս գալուց վախեցել էին։ Սակայն, ինչպէս երևում է, երիտասարդը շատ էլ վախկոտներիցը չէր, —աւելի խորը, ստուերի մէջ հեռանալով, այնպէս որ հաղիւ բալուտի տակ սպիտակին էր տալիս երկուսի պատկերը, նա ձեռքով չփոթուած աղջկանը պինդ գրկած, դարձեալ շարունակում էր իւր զրոյցը։ Իսկ երբ մի քիչ էլ հեռացաւ, Ջաղացպանը մի այնպիսի բան լսեց, որ սաստիկ նեղանալուց կանգ առաւ...։

—Հէյ, ով ես չգիտեմ, բայց լաւ կանէիր մի քիչ համբերէիր ու չպաչպչէիր,—ասաց նա։—Թէ չէ այնպէս պինդ ես չփփացնում, ոնց որ սոխակը թփերում,—ասաց նա ցանկապատին մօտենալով։

—Իսկ դու, շուն չան որդի, ինչ բան ունիս, որ քիթդ ուրիշի բակն ես կոխում,—պատասխանեց ստուերում կանգնած երիտասարդը։—Սպասիր, այս բոպէիս ես քու ոտքը կը ջարդեմ։ Կհասկանաս, թէ ինչ ասել է ուրիշներին խանդարելը։

—Լա՛ւ, լաւ,—ասաց Ջաղացպանը հեռանալով։—Հէնց գիտենաս մի մեծ բանի վրայ ես...։ Եւ այնպիսի շտահով ես պաչում, որ լսողի նախանձն ես շարժում։

Նա կանգ առաւ, մտածեց, գլուխը քորեց ու յետոյ, ճանապարհից ծռուելով, թռաւ մի ցանկապատի վրայից և բանջարանոցի միջովն անցաւ, գնաց դէպի այրի կնոջ խրճիթը, այն՝ որ գեղի ծայրին, առանձնացած, բարձր սօսիների տակն է դտնւում...։ Փոքրիկ խրճիթ էր, ծռուած, գետին խոնարհած։ Լուսամուտն էլ այնքան մանրիկ բան, որ եթէ գիշերս մի քիչ մութը լինէր, չէիր տեսնիլ։ Բայց այժմ սաղ խրճիթը հէնց գիտենաս վառուած լինէր լուսնի լուսով. տանիքի յարդը կարծես ոսկի լինէր, պատը՝ արծաթ, իսկ լուսամուտը պատի վրայ, կկոցած աչքի նման, սեին էր տալիս։ Պատուհանից լոյս չէր երևում։ Երևի պառաւն ու աղջիկը

ընթրիքի բան չունէին, ուստի և կարիք չկար ճրագ վառելու։ Ջաղացպանը կանգնեց, երկու անգամ կամացուկ թրխկացրեց պատուհանն ու մի կողմ քաշուեցաւ։

Շատ չսպասեց և աղջկայ երկու թմբլիկ ձեռներ պինդ փաթաթուեցան նրա վզովը, իսկ երբ աղջկայ ջերմ շրթունքները Ջաղացպանի բերանին կպան, կարծես բեխերի արանքում մի բան վառուեց։ Է՛հ, ինչպէս ասեմ։ Թէ որ ձեզ այդպէս համբուրող եղել է՝ այն ժամանակ ինքներդ էլ կիմանաք, իսկ թէ մի այդպիսի բան ձեր կեանքում պատահած չէ, այն ժամանակ պատմել էլ չարժէ։

—Ֆիլիպկո, հոգիս, սիրելիս,—ասում էր աղջիկը քրքջնուելով,—եկար վերջ-պէս... սպասելուց աչքս ջուր կտրեցաւ. առանց քեզ չորացել, այդ անջուր արօտին եմ նմանել...։

«Է՛, փառք Աստուծոյ, որ դեռ չես չորացել»—մտածեց Ջաղացպանը՝ աղջկայ փափլիկ իրանը ձեռքով հուպ տալով։—«Փառք Աստուծոյ, դեռ բան չկայ»։

—Իսկ ինչ պէտք է հարսանիքի պատրաստուենք,—ասաց աղջիկը դեռ ձեռները Ֆիլիպպի ուսերին դրած և իւր, աշնանային դիշերուայ նման հրապուրիչ սև աչքերը նրան ուղղած։—Միր չուտով Ֆիլիպովկա է գալիս։

Այս խօսքերը այնպէս դիւր չեկան Ջաղացպանին, ինչպէս կուսական համբոյրները։ «Ցեսնում ես ուր է խփում»—մտածեց նա ինքն իրեն։ «Ախ, Ֆիլիպպ, Ֆիլիպպ, այժմ մի լաւ քու գլուխդ պիտի լուանար»։ Բայց և այնպէս սիրտ արաւ և աչքերը մի կողմ անելով, ասաց.

—Լաւ բան ես իմացել, Դանիա։ Իսկոյն հարսանիքն ես յիշում։ Այժմ այդ կարելի բան է, քանի որ ես արդէն իմ գլխին Ջաղացպան եմ դարձել և չուտով, կարելի է գեղի առաջին հարուստը դառնամ, իսկ դու—մի խեղճ այրի կնոջ աղջիկ ես։

Աղջիկը ցնցուեց, կարծես օձ խածած լինէր։ Նա թռաւ, Ֆիլիպպից հեռացաւ և ձեռներով սիրտը բռնեց։

—Իսկ ես կարծում էի... վայ իմ գլխին...։ Էլ ինչու էիր ուրեմն, անպիտան, պատուհանը թակում։

—Այ քեզ բան. ինչու էիր պատուհանը թակում...—պատասխանեց Ջաղացպանը։—Ինչու չպիտի թակեմ, քանի որ մայրդ ինձ փող է պարտք։ Իսկ դու դուրս սրծար և ուղղակի

սկսար համբուրուել։ Ի՞նչ անէիս...։ Ուրիշների չափ հպմբուրուել ես էլ գիտեմ։

Եւ նա դարձեալ ձեռքը նրան մեկնեց, բայց որ Ջաղացպանի ձեռքը աղջկայ իրանին չկպաւ, իրանը սարսռաց, հէնց իմանաս իժը խայթեց։

—Կորիր,—կանչեց աղջիկը մի այնպիսի բարկութեամբ, որ Ջաղացպանը ետ ետ գնաց։—Ես քու թուղթ մանէթանոցդ չեմ, որ քու սեպհականութեան պէս բռնում ես ինձ։ Հապա մի քիչ էլ մօտեցիր, էն չվաքը բերեմ գլխիդ, որ գիտցածդ էլ մտահան անես...։

Ջաղացպանը չփոթուեց։

—Ի՞նչ տաք աղջիկ ես եղել։ Ի՞նչ է, ես, մեղայ Աստուծու, Ջնուդ եմ, ինչ է, որ այդպէս անպատիւ ես անում։

—Ջհուդ չես, բաս ինչ ես։ Տասը շահին մէկ մանէթ ես դարձրել, այդ բաւական չէ՞ դեռ շահն էլ ինձանից ես պահանջում։ Կորիր, ասում եմ, ղղուելի մարդ։

—Աղջիկ եմ ասում հա,—ասաց Ջաղացպանը և ձեռքով երեսը ծածկեց, կարծես վախենալով, թէ մի դուցէ, ճշմարիտ, աղջկայ բռունցքը հասնի։—Ցեռնում եմ, որ խելքը գլխին մարդը կարող չէ հետդ խօսել։ Գնա, մօրդ կանչիր։

Բայց պառաւն առանց այդ էլ արդէն խրճթից դուրս էր եկել և խոնարհ դէպ ի տալիս Ջաղացպանին այդ աւելի դիւր եկաւ, քան թէ աղջկայ հետ խօսակցութիւնը։ Նա շտկուեցաւ, և նրա ոտ ստուերը պատի յերայ այնպէս գլուխը հպարտ-հպարտ վեր էր բարձրացել, որ մինչև անգամ Ջաղացպանն ինքն էլ միտք էր անում, թէ ինչպէս է որ գլխարկը գլխից վեր չէ ընկնում։

—Գիտես, պառաւ, ինչու եմ եկել,—ասում է Ջաղացպանը պառաւին։

—Ա՛խ, ինչպէս չգիտենամ։ Սրեի իմ փողի համար ես եկել։

—Հը՛, քու փողի համար չէ, պառաւ, հապա իմ փողի,—ծիծաղեց Ջաղացպանը։—Աւազակ հօ չեմ, որ դիշերով ուրիշի փողի համար օտարի տունը գնամ։

—Հէնց ուրիշի փողի համար էլ եկել ես,—դրդռուած ասաց Գալիան ձեռները կողքին դրած և դէպի Ջաղացպանն առաջանալով,—և ոչ թէ քու փողի։

—Թիւ, խելագար աղջիկ,—ասաց Ջաղացպանը էլի մի

երկու քայլ լեռ քաշուելով։—Աստուած վկայ, այսպիսի խելագար աղջիկ սաղ դեղը ման գաս, չես դտնիլ։ Ոչ միայն սաղ դեղը, հապա սաղ նահանգը։ Դէ ինքդ մտածիր, ինչ ես ասում։ Որ մենակ մայրդ չլինէր, ես քեզ դատարան քաշ կը տայի։ բայց մայրդ վկայ չի լինիլ ի հարկէ։ Մէկ լաւ միտք արա, աղջի։

—Ի՞նչ կայ միտք անելու, քանի որ ասածս ղուտ ճըշմարտութիւն է։

—Ի՞նչ ճշմարտութիւն, չէ՞ որ պառաւը պարտք է վերցրել ու չէ դարձրել։

—Սուտ ես խօսում, սուտ ես խօսում, չունն։ Երբ դեռ Ջաղացպանի աշկերտ էիր ու ինձ հետ սիլի բիլի անում, ուղում էիր տուն մտնես մեզ մօտ, այն ժամանակ հօ չէ՞իր ասում, թէ լեռ ես ուզելու։ Բայց հէնց որ աղաղ մեռաւ ու ինքդ Ջաղացպան դարձար, այն ժամանակ բոլոր տուածդ լեռ ստացար, դարձեալ քիչ է։

—Հապա ալիւրը։

—Ցեռոյ, ինչ է որ...։ Ի՞նչ արժէր ալիւրը։

—Չափը վաթսուն կոպէկ, ահա ինչ արժէր։ Ուր ուղում ես գնայ, դրանից աժան ոչ ոք չի տալ, թէ կուղ քեզ էլ վրադիր տաս։

—Իսկ մեզանից ինչքան ես աւելի վերցրել։

—Չես, տես, ուր է գնում։ Քու լեղուդ էլ... Խայրկօի լեզուից պակաս չէ։ Ես էլ դրան կպատասխանեմ—հապա շահը՞։ Հը, առնր։

Բայց Գայիան այլ ես ոչինչ չէր պատասխանում։ Աղջկերանց այդ լաճախ է պատահում,—կխօսեն կխօսեն, կասեն կասեն, ոնց որ Ջաղաց, ու յանկարծ կանդ կառնեն...։ Կը կարծես, որ Ջուրն է պակաս եկել...։ Բայց որտեղ։ Դառն արտասուքը աղբիւրի նման դուրս վազեց աղջկայ աչքերից։ Նա մի կողմ քաշուեց ու սպիտակ շապկի թեով սկսաւ աչքերը սրբել։

—Ցեղն է,—ասաց Ջաղացպանը մի քիչ շփոթուած, բայց և այնպէս ուրախանալով։—Ինչի՞ էիր մարդու վրայ յարձակւում։ Որ չհաջալիր, չէիր էլ լաց լինիլ։

—Լռիր, լռիր, լռիր, ղղուելի չունն։

—Դէ որ այդպէս է, ինքդ էլ լռիր։

—Լռիր, հոգի Ջան, լռիր,—ծանր հառաչելով ասաց

պառաւ մայրը։ Խեղճը վախենում էր, թէ Ջաղացպանը նեղանայ։ Երևում էր, որ պառաւը պարտք տալու ճար չունէր։

—Չեմ լռիլ, մայրիկ, չեմ, չեմ,—պատասխանեց աղջիկը. կարծես Ջաղացի բոլոր անիւները նորից սկսան պտտուել։—Սկի էլ չեմ լռիլ, թէ որ ուզում էք, նրա աչքերն էլ դուրս կքցեմ, որ մէկ էլ չհամարձակուի անունս կոտրել, պատուհանը թակել, համբուրուել.... Ինչու էիր պատուհանս թակում, ասա, թէ չէ հէնց կբռնեմ մազերիցդ որ... Չեմ մտիկ տալ, որ Ջաղացպան ես և հարուստ։ Առաջ հո քիթդ չէիր բարձրացրել, ինքդ էիր նշանուում ու անուշ խօսքեր ասում։ Իսկ այժմ այնքան ես ղլուխդ բարձրացրել, որ գլխարկդ էլ գլխիդ չի մնում։

—Ախ, սուս կաց, զաւակս, իմ խոնարհ որբուկս,—վրշտահար հառաչով նորից ասաց պառաւը։—Իսկ դուք, պան Ջաղացպան, մի նեղանաք աղջկանս վրայ, խելքը չի կտրում. Ջահել խելքն ու ջահել սիրտը—ոնց որ եռացող դարեջուր, մէկ է, համ պղտոր է, համ եռում։ Բայց որ նստի, խմողներին համ կտայ։

—Իսկ ինձ ինչ,—ասաց Ջաղացպանը։—Ես նրա ոչ դառնութիւնն եմ ուզում, ոչ քաղցրութիւնը. ես ձեր ընկերը չեմ։ Դու իմ փողս ինձ տուր, մէկ էլ ով է ձեր խրճթի վրայ նայողը։

—Ախ, ինչ անեմ, չունինք։ Մի քիչ էլ համբերիր, աղջկանս հետ կաշխատենք, կտանք։ Ախ, որ քարովը տամ դըլուխս, երկսիդ համար էլ ցաւի մէջ եմ ընկել, սիրելի Ֆիլիպպ։ Հո դիտես, որդուս պէս սիրել եմ քեզ, որ ասես մրքովս չէր անցնում, թէ այն պարտքն ինձանից պիտի առնես, այն էլ տոկոսներով...։ Դոնէ մէկ աղջկանս մարդու տալի, լաւ էլ փեսացուներ կան,—բայց նա պինդ կացել, ոչ ոքին չի ուզում գնալ։ Այն օրից, որ դու աղջկանս ժառեցար, դիւթել-հմայել ես նրան, ինչ ես արել։ Աւելի լաւ է, ասում է, ինձ սաղ-սաղ դերեզման դնես։ Իմ խելքիս ինչ ասեմ, որ լոյսէ լոյս թողնում էի, որ երկսով այստեղ ահա միասին անցկացնէք...։ Ա՛խ, վա՛յ ինձ...։

—Ես ինչ անեմ,—ասաց Ջաղացպանը։—Պառաւ, մեր բաներին քու խելքդ չի հասնիլ՝—հարուստ մարդու ծախսն էլ շատ կլինի։ Այ, ես էլ ջհուդին պարտք ունիմ—պարտքս տալիս եմ հո։ Դուք էլ ձեր պարտքը տուէք։

—Գոնէ մի ամիս էլ համբերիր։

Ջաղացպանը գլուխը քորեց ու մտածեց։ Պառաւը մի քիչ շարժել էր նրա դուրը, մանաւանդ որ մի քիչ դէնն էլ Գալիայի նախշած շապիկն էր սպիտակին տալիս։

—Դէ լաւ, թէ որ այդպէս է, տես, ուրեմն ես էլ մի տասը գրոշ վրայ կ՚դնեմ,—ասաց նա։—Բայց լաւ է վճարէիր։

—Ինչ արած, երևի ճակատիս դիրն է,—հառաչեց պառաւը։

—Դէ ուրեմն այդպէս էլ կլինի։ Ես ջհուդ հո չեմ, ես էլ սիրտ ունիմ։ Ուրիշը լինէր, հանտատ կասեմ, մի քսան գրոշ անպատճառ կաւելացնէր, իսկ ես միայն տասնով բաւականացայ և մինչև Ֆիլիպովկա էլ քեզ ժամանակ։ Բայց տես, այն ժամանակ արդէն վրադ գանգատ կտամ։

Եւ նա, պառանց մնաք բարով ասելու, շուռ եկաւ ու կողքի ճանապարհը մտաւ. նա մինչև անգամ մի չդարձաւ, չնայեցաւ խրճիթի կողմը, որի մօտ դեռ սպիտակին էր տալիս նախշաւոր շապիկը,—բալուտի տակ մութ ստուերի մէջ սպիտակին էր տալիս որպէս սպիտակաւուն աստղ,—և Ջաղացպանը չէր տեսնում, թէ ինչպէս լայ էին լինում սև աչքերը, ինչպէս սպիտակ ձեռները մեկնուած էին դէպի նրան, ինչպէս ախ ու վախ էր անում կուսական կուրծքը։

—Մի լար, հոգիս, մի լար աչքիս լոյսը,—ասում էր պառաւ Պրիսեան։—Մի լար, երևի Աստուած այս է գրել ճակատներիս։

—Ախ, մայրիկ, մայրիկ, գոնէ թողնէիր մէկ նրա աչքերը հանէի, գուցէ մի քիչ թեթևանալի։

Թարգ. ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

(Կը շարունակուի)

ՏԱԽՏԱԿԱՄԱԾ ՈԼԻՄՊՈՍԻ ՎՐԱՅ

ԱՒԱՆԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

(Հետևողութիւն Հ. Սենկևիչի)

Ցուրտ, անհաճոյ, մառախլապատ, խոնաւ ու ցեխոտ մի գիշեր է անտանելի, սրտամաշ ձմեռուայ անսովոր մի եղանակի։

Ո՛չ մի աստղ, ո՛չ մի երկնային լուսեղէն մարմին չէ երևում տօնավաճառի տախտակամած ոլիմպոսի նեղ ու սահմանափակ հորիզոնի մռայլում, որի խեղդիչ մըթնոլորտը արհեստական կերպով հազիւ թէ լուսաւորւում է հեռուից ինչ որ կպրած խարոյկների կարծես նորավառ հրդեհի թանձրածուխ ու բոցակէզ լեզուներով...

Խաւարեալ շրջակայքի գրեթէ ճահիճ դարձրած տեղերում անորոշ ու մութը կերպով ուրուագծւում են հին ու նոր աւերակների մնացորդներ, ուր գիշերային ոռնող գազաններ, կռնչող զազրալի գորտեր, գիշակեր թռչուններ և չարագուշակ բուեր խառներամ կազմելով՝ անճռռնի ու շփոթ խառնանուագ են սարքել տախտակամած ոլիմպոսին շրջապատող հեղձուցիչ օդը լցնելու իրանց խրխռան ու խռպոտ ձայներով։

Վայրկեան առ վայրկեան բոլորովին լռում, կտրւում են այս քստմնելի մահաշշուկ հռնչիւնները, և ապա թէ սկսում է տիրել այնտեղ դժոխային ամայութեան խորին մի լռութիւն՝ խոնաւալից ժանտահոտութեամբ լցուած։

Ո՜հ, սոսկալի գիշեր, անմիտ ու անգութ հրէշների գիշե՜ր։

Ահա այսպիսի աղետաբեր մի գիշեր իշառիւծի երկար մորթի հագած անյաղ գայլը, բուարծուի կոտրրուած փետուրներով ու ոչխարակովի ոլորուած սլոզերով զարդարուած խորամանկ աղուէսը, վագրակատուի բծաւոր կաշին վրան քաշած գիշախանձ բորենին և այ-

ծուխի փափուկ բրդում փաթաթուած մեծագլուխ արջը՝ մարդազգեստ կապկի միմոսական քարտուղարութեամբ, անտանելի հարահրոցով ու զարհուրելի դղրդոցով ելնում, բազմում են տօնավաճառի տախտակամած ոլիմպոսի վրայ։

Եւ ահա այստեղից այս ինքնակոչ արիսպագոսի անդամները — ծպտեալ գազանները սկսում են դատի կանչել այն բոլոր կենդանիներին, որոնք թշուառութիւն էին ունեցել այսպիսի մի սարսափելի գիշերուայ ժամին դուրսը մնալու և սոցա կեղծաւոր կոչը լսելով՝ հաւաքուելու նոյն տախտակամած բարձրութեան շուրջը, ասես պատսպարուելու համար։

Իշառիւծաձև գայլը նշան է անում իւր թաթով և խսկոյն շրջակայքի այն կողմից, ուր թշուառ պատահմամբ ժողովուել էին իբր թէ դատի ենթարկուելու կենդանիք՝ տառաջ է գալիս, շարուում է կարգով տախտակամածի առջև նախ փղերի մի երամ, որին թւում է թէ ներկայանում է կրկեսի իւր ծանօթ փղախաղ դերասանների հրամայուած վարժութիւնները կատարելու։

— Է՜յ, դուք, նախաջրհեղեղեան անճոռնի անասուններ, ոռնում է իշառիւծաձև գայլը, ի՞նչացու էք ձեր հաստապինդ դիմայկուն կաշուով և ծանրակիր ու անտաշ մարմնի կազմութեամբ։ Մի՞թէ չըպիտի ենթարկուիք դուք ընդհանուր փոփոխական զարգացման ազդու մեծ օրէնքին, և մի՞թէ մինչ այն աստիճան չըպիտի կերպարանափոխուիք բոլորովին, որ փղային ամեն տեսակ յատկութիւնից ազատուելով՝ կիսակենդան դիակներ դառնաք և ձեր անկմամբ օգուտ տաք գոնէ գիշակերութեան ընդհանուր գործին առհասարակ...

Յաղթանդամ փղերը լսելով այսպիսի անսպասելի յանդուգն մի վճիռ՝ զայրանում են սաստիկ, հակառակ իրանց հանգարտաբարոյ ու խոհեմ բնաւորութեան, և մազ է պրծնում, որ իրանց մի փոքրիկ հարուածով փշուր փշուր անեն այն տախտակամածը։ Բայց լաւ դիտելով սորա կարկատանների էութիւնը, անվախ վեր են ցցում իրանց հուժկու կնճիթները և առատ թուք արձակելով ըստ պատկանելոյն՝ մի կողմն են քաշւում

առ ժամ մի համբերելու, մինչև որ անցնի անմիտ հրբեշների այս թշուառ գիշերը...

Ապա գալիս, ներկայանում են աղջամղջի այս դատարանին նոյն գիշերը պատահմամբ նոյնպէս մոլորուած նժոյգներ, երիվարներ, ջորիք, էշեր և այլն, որոնց դիմում է նոյն իշառիւծաձև նախագայլը կղկնձող շարականով ոռնալով այսպէս՝

—Ի՞նչ էք դուք, էյ, և էլ ինչ բանի համար կաք ներկայ ժամանակիս մէջ։ Ի՞նչացու են, էլ ինչ նշանակութիւն ունին այն շաւիղներն ու ճանապարհները, որոնց միջով դուք շրջում, մոն էք գալիս և մարդիկ ու բեռներ էք փոխադրում ամեն տեսակ յարաբերութիւն պահպանելու համար։ Մինչև հիմայ չը լսեցիք, որ ձեզ այսուհետև անհամեմատ գերազանցութեամբ փոխարինում են շոգին, էլեքտրական և այլ նորահնար ոյժերն ու մեքենաները։ Դէհ, ուրեմն, շուտ արէք, չոքեցէք, գետին փռուեցէք, տապկուեցէք, ստակեցէք վերջապէս, որպէս զի ձեզնով ևս բազմանայ անկեալ գիակների թիւը այս գիշերիս մէջ և առատանայ ընդ միշտ գիշակերներիս լափելու պաշարը։

Խրտնում, ընդոստնում են բարկութիւնից այս օգտակար կենդանիները՝ ձիանքը խրխնջալով, աւանակները զռալով և ուղտերը կառանչելով, յետ են դարձնում, շրջում են գլուխները այն գիշասէր արիսպագոսից, և պոչերը վերքաշած աքացի ու աքացի տալով նորա թրխկացող տախտակներին, վազում հեռանում են այնտեղից և ապաւինում են փղերի կանգնած տեղերի մօտակայքում՝ անհամբեր սպասելով փրկարարշաղոյսի ծագելուն։

Այնուհետև առաջ են գալիս իրանց հերթին կորովի ցուլեր, գոմէշներ, ուժեղ եզներ. մոզիներ և ուրիշ արջառներ, որոնց հետևում են իրանց ցեղակից որոճողներից անխելք ոչխարների մի ամբողջ հօտ՝ առաջնորդուած երկարապոզ, մորուքաւոր նոխազներով ու այծերով և գալարապոզ ու հաստագմակ խոյերով։ Անսպասելի կերպով միանում են սոցա երկարավիզ, գիւրաշարժ եղջերուներ ևս, որ իբր թէ հալածուած նոյն սև գիշերուայ որսորդներից՝ ապաստանուել են կամե-

նում գամփռներով պահպանուող այս բազմաթիւ նախ-
րի մէջ։ Բայց աւելի զարմանալին այն է մանաւանդ,
որ մռայլ շրջակայքի մացառներից դուրս գալով աղտե-
ղասէր խոզերի երամակ՝ սաստիկ խռնչիւնով և խիստ
ճչիւնով, խառնուում է նոյնպէս այս ծրջառների ըն-
դարձակ նախրում, որին և առիթ է տալիս աղմկեալ
բչիւնի և շփոթեալ բառանչման մի խառնաշչիւն
բարձրացնելուն։

Անասնական այս խառնաշփոթ աղաղակը վերին
զայրացման հասցնելով բարկացկոտ եղջերաւորներին,
կատաղեցնում է սոցա մինչ այն աստիճան, որ էլ չը
սպասելով չոռապետ ատեանի կենդանակուլ վճռին, մի-
ահամուռ յարձակմամբ, իրանց սրածայր պոզերով հը-
րում, փլցնում են և այս անգամ սոքա արդէն փշուր
փշուր են անում տախտակամած ոլիմպոսի բոլոր խար-
խուլ շէնքը, որով և գլխիվայր ներքև է գլորուում իւր
շինծու բարձրութիւնից գիշակերների արիսպագոսը...

Լեղապատառ վախով զարթնում, վար են թափ-
ուում ծառերի վրայ թառած թռչունները, դողում,
թլանում և մարում են փոքրիկ թոյլ կենդանիքը, և
խաւարեալ շրջակայքի բոլոր կողմերում անասելի մի
խառնակութիւն է նկատուում, հրեշաձայն մի կռիւ գա-
զանական կծոտումներով, զարհուրելի «տուր ու դըմ-
փոցներով» և գետնին տապալուող «դղրդոցներով»։ Եւ
ահա լսում հասնում, միջամտում և մասնակցում են
արիւնարբու կոտորածին միշտ ցանկացող ահեղագոչ
իսկական առիւծներ, նենգաւոր վայրագ վագրեր, գաղ-
տագողի յարձակուող ինձեր և այլն մի կողմից, իսկ
յափշտակիչ արծիւներ, կորակտուց անգղներ և ուրիշ
վայրի գիշատիչ թռչուններ միւս կողմից...

Աննկարագրելի, անպատմելի է անխնայ կոտորած
—սպանդի այս քստմնելի տեսարանը, որ շարունակ-
ւում է ամբողջ թշուառ գիշերը՝ անթիւ ու անհամար
դիակներ սփռելով մռայլ շրջակայքի ամեն կողմը, մին-
չև որ լոյսն ու մութը իրարուց բաժանուելով, ծագում
է յուսալից արշալոյսը և իւր փրկարար ցերեկի իշխելն
է աւետում...

Ապա շուտով բարձրանում է արևելքից արիւնհե-

զուլթիւնն ասես իւր վրայ առ ժամ մի ցոլացնող կարմիր անհուն արևը և հետզհետէ արձակելով իւր զօրաւոր ճառագայթները վանում, արտաքսում է վերջապէս գիշերուայ իշխանութեան բոլոր մթութիւնները իրանց սոսկալի արհաւիրքներով...

Ահա այս ժամանակից է մնացած, ասում է աւանդական առասպելը, որ գիշատիչները սովորել են յարձակուել ամեն մի կենդանի արարածի վրայ...

Ն. ՑԱՐՈՑ



ՍԱՏԱՆԱՅԻ ԱՆՈՒՆՈՎ

Ձմեռն էր 1831 թուին։ Փարիզի ժամացոյցով առաւօտը շատ կանուխ էր և բոլոր տները դեռ փակ էին։ Մէկ մեծ, բարձր ու նեղ տան դռնապան նստած էր իւր փոքրիկ խցի մէջ և չնայելով խիստ ցրտին, նա ճրագի աղօտ լուսով կարկատում էր իւր կօշիկները, երբ յանկարծ դուռը ծեծեցին։

—Արդեօք ո՞վ կարող է լինել այսպէս վաղ ժամանակ, մրթմրթաց պ. Ժան Ժուալոզը։

Դուռը ծեծելուց յետոյ, անհամբեր այցելուն սկսեց խիստ կերպով զանգահարել։

Պ. Ժանը իւր գործը վար դրեց և սովորականից աւելի խոժոռած դէմքով գնաց դուռը բանալու։

Բայց երբ նա տեսաւ մի շատ կարգին հագնուած պարոնի, յարգանքով ողջունեց, համարելով նորան ոստիկանութեան գործակալ։

—Այստեղ վարձով բնակարան տրւում է։

Դռնապանը շփոթուած և լուռ էր։

—Աղատ բնակարաններ կա՞ն այստեղ թէ ոչ, պատասխանեցէք վերջապէս, շարունակեց անյայտ այցելուն։

—Այո՛, ողորմած տէր, կան՝ մէկը առաջին յարկում, միւսը երկրորդում. կայ և ամենավերջին յարկում աղքատ մարդկանց համար։

—Ուրեմն ինձ տարէք վերնայարկը։

—Մթթէ նա ուզում է վերնայարկում բնակարան վարձել, մտածում էր դռնապանը զարմացած։

Նա կարծում էր թէ անհնարին է, որ այդպէս լաւ հագնուած պարոնը կարողանայ ապրել մի որջի մէջ, որտեղ աղատ մուտք ունեն թէ քամին և թէ անձրևը։

—Երեւի խելագար է, մտածեց նա և աչքերի տակով նայեց եկուորի երեսին, մի քիչ վախ զգալով։

—Բայց պարո՛ն, այնտեղ վերեւում անյարմար է ձեզ պէս անձի համար, պսաց դռնապանը բարձր ձայնով, քիչ համարձակութիւն առնելով։

Անծանօթը անհամբեր շարժումներ արեց, չուզենալով աւելորդ դատղութիւններ լսել։

—Ես կը տեղափոխուեմ այնտեղ հէնց այսօր. պատրաստեցէք բնակարանը։

Եւ դռնապանի ձեռքը կարծես բնակարանի վարձի փոխարէն 20 ֆրանք դնելով, նա գնաց նստաւ մի փառաւոր կառքի մէջ ու անյայտացաւ։

*
* *

Պարոն և տիկին Ժուայոզները վերնայարկը կարգի բերելով խօսում էին հէնց նոր պատահած դէպքի մասին և իրանց երեւակայութեանը շատ զոռ էին տալիս։

Երբ անծանօթը փողը հանելիս ետ տարաւ իւր մուշտակը, ես իմ աչքերով տեսայ, ասաց պ. Ժանը, որ նա ունէր պատուաւոր լեգիոնի կարմիր ժապաւէնը։

Արդեօք ինչ ցնորք է, որ պատուաւոր լեգիոնի ասպետը ընտրեց իրան համար այս վերնատունը, ամենավատ բնակարանը, որտեղ կատուն մինչև իսկ չէր ուզենար ապրել...

—Կարելի է մի որ և է սիրային դէպք է, նկատեց տիկ. Ժուայոզը։

—Ի՞նչ սիրային դէպք, ինչ ես խօսում. ո՞վ հաւէս կունենայ սիրով պարապելու այս վերնատան մէջ. աւելի շուտ կեղծ դրամ շինող է... անկասկած այդ է... պէտք է արթուն լինել։

Բայց տիկին Ժուայոզը, որ մի ժամանակ թատրոնի խմբական երգչուհի էր և որ միշտ ձգտում էր դէպի ռոմանտիքականը... նա վճռեց, որ այդ անյայտ պարոնը անպատճառ Դոն-Ժուան է։ Այդպէս մտածելով, նա բոլոր ոյժով յատակը սրբում էր, չվախենալով մեծ-մեծ մկների երամակից, որ խանգարում էին նորան և զարմանում էին, թէ ինչպէս իրանց խաղաղ բնակարանում,

ուր նոքա այնպէս ազատ իշխում էին, մոռնք է գոր-
ծել աւելորդ։

Տիկին Ժուլյոզը նոր էր կարդի բերել այդ աղքա-
տիկ բնակարանը, որ կարող էր պէտք գալ միայն թա-
փառական խեղկատակների համար։ Երբ յանկարծ խոր-
հրդաւոր անծանօթը նորից եկաւ իւր շքեղ կառքով
և այս անգամ հետը բերել էր իւր սպասաւորին, որի
ձեռքին կար մի փոքրիկ, նեղ ու երկար արկղ, որ նման
էր մանկական դագաղի. սպասաւորն այդ դրեց ֆէր պա-
ռոնի նոր բնակարանում։

Պարոն Ժուլյոզը խորհրդաւոր հայեացք ձգեց իւր
ամուսնու վերայ ու ղղնչաց՝

— Մարդասպան է...

Յետոյ, իբր բոլորովին անտարբեր, հարցրեց ծա-
ռային, թէ ինչ կայ այդ արկղի մէջ։

Ծառան խորամանկ կերպով ժպտաց և պատաս-
խանեց՝

— Չգիտեմ։

— Հը... մասնակից է երևում, անցաւ պ. Ժուլ-
յոզի մտքից։

Խեղճ ամուսիններին արդէն պատել էր սպասողա-
կան դրութիւնը, վախն ու հետաքրքրութիւնը, երբ
յանկարծ խորհրդաւոր պարոնն ասաց դռնապանին՝

— Պարոն Ժիլլ, ոչ ոքի ինձ մօտ չթողնէք, բայց
մէկից։

— Շատ լաւ, պարոն, պատասխանեց դռնապանը,
բայց ինչպէս ես ճանաչեմ այդ մէկին։

— Նա ձեզ կասէ մի պայմանաւոր խօսք՝ «սատա-
նայի անունով»։

Այդ խօսքերը լսելիս ողորմելի դռնապանը աչքե-
րը չռեց և բերանը լայն բացեց. նա այնքան շփո-
թուած էր, որ ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել,
իսկ նորա կինը շարունակում էր զարգացնել իւր երևա-
կայութիւնը Ֆոն-Ժուանի մասին...

Միևնոյն ժամանակ ճանրեկը հանդարտ կերպով
բարձրանում էր սանդուխքի վրայով։

Շուարած ու սարսափած զոյգը դեռ աչքի չէր ե-
կել, երբ դանգակը խիստ կերպով քնշեցին։ Եկաւ միւս

անծանօթը չար դէմքով, յօնքերը կախած ու սուր նայուածքով։

—Այսօր այստեղ՞ տեղափոխուել է մի նոր բնակիչ՝ հարցրեց նա։

—Չեմ համարձակւում՞ հերքել, բայց թէ նա ոչ ոքի չի ընդունում։

—Չէ՞ ընդունում. ո՛չ, նա ինձ կընդունէ. ես եկած եմ «սատանայի անուշնով»։

Եւ այդ խօսքերով անյայտ այցելուն շտապ-շտապ բարձրացաւ վերև։

*
* *

Այդ օրուանից վերնայարկի նոր բնակիչը, որը թէև չէր դիշերում իւր աղքատիկ կացարանում, նոյնպէս և «սատանայի դեսպանը», ամեն առաւօտ միևնոյն ժամին գալիս էին վերնատունը, փակում էին դռները երկու կողպէքով և մնում էին այնտեղ մինչև իրիկուայ ժամի հինգը։

Դռնապանը և նորա կինը յուզմունքից ու հետաքրքրութիւնից հանգիստ չունէին. ինչե՞ր չէին նոքա հնարում, որ միայն թէ կարողանային յանկարծակի, անսպասելի կերպով բռնել յանցանքի մէջ այդ խորհրդաւոր պարոններին... նոքա կամաց-կամաց, թաթերի վրայ մօտենում էին վերնատան դռանը և շունչերը բռնած, սրտի բաբախումով, ականջները դնում էին դռան ծակին, որ մի բան իմանան, բայց զո՞ւր, այնտեղից լսւում էին միայն անորոշ ձայներ։ Նոքա աշխատում էին նայել, մի որևէ բան տեսնել բանալիքի տեղից, բայց այդ էլ ծածկուած էր շղերի խցաններով... Այդ սատանայական մարդիկ երևի թէ մեծ քանակութեամբ խմիչք են գործ ածում, որպէս զի իրանց խիղճը մեռցնեն, մտածում էր պ. Ժուայոզը։

Այդպէս անցաւ հինգ, թէ վեց շաբաթ։ Վերջապէս, մէկ օր, իրիկնապահին, դռնապանին յաջողուեց լսել մի քանի խօսք՝

—Մի՛ վախենաք, այս անպատճառ կըյաջողուի։

Նա ճանաչեց այդ ընակարանը վարձողի ձայնը։

Այն ժամանակ միւսը պատասխանեց՝

—Այնու ամենայնիւ սատանայի դերը շատ դըժուար է։

—Նոքա սատանայի հետ դաշն կապեցին, մտածեց տիկ. Ժուայոզը և իւր մարդու թեւից ամուր բռնեց, որը դեռ շարունակում էր ականջ դնել։

—Դուք գլխաւորապէս լաւ պատկերացրէք ձեզ այն վայրկեանը, շարունակեց առաջին խօսողը, երբ նա գերեզմանից դուրս է կանչում մեռելներին, յետոյ սատանայի երևալը իւր ամբողջ խմբի հետ և մէկ էլ, երբ նա լսում է բոլոր սատանաների պատասխանը...

Պարոն Ժանի համար արդէն այդքանը բոլորովին բաւական էր։

—Ո՛հ, աւազակներ, ինչպէս դուք համարձակւում էք այս պատուաւոր տան անունը խայտառակել ձեր յանցաւոր խորհուրդներով... ժամանակ է արդէն վերջ դնելու այս բանին։

Եւ նա վազեց ոստիկանատուն, պատմեց բոլոր մանրամասնութիւնները երկու անյայտ անձնաւորութիւնների մասին, ասաց ինչ որ լսել էր այն անթափանցելի գաղտնիքի մասին, որով նոքա իրանց շրջապատել են և յայտնեց նոյնպէս փոքրիկ դագաղի մասին։ Տիկին Ժուայոզն էլ լուրջ կերպարանքով հաստատեց ամուսնու խօսքերը։

Ոստիկանութեան գործակատարը նոցա երկար ըսպասեցնել չտուեց, որովհետև այդ զարհուրելի պատմութիւնը նորա վերայ էլ մեծ տպաւորութիւն գործեց։

Նա հետը տարաւ էլի չորս ոստիկանների և գնաց այն տունը, որտեղ ապրում էին այդ երկու չարագործները։

Գործակատարը դուռն ամուր ծեծելով ասաց՝ բացէք յանուն օրինաց։

Իսկոյն դուռը բացուեց։

—Ո՞վ էք դուք, ինչպէս է ձեր անունը, հարցրեց նա անծանօթներին։

—Ով եմ ես... Ես Ջիակոմո Մէյէրբերն եմ։

—Իսկ դո՞ւք, դիմեց նա միւսին։

—Ես մեծ օպերայի առաջին բասն եմ։

Բայց ոստիկանութեան գործակատարը դեռ բոլորովին չբաւականանալով այդ պատասխաններից, հարցրեց թէ ինչ էին տնում նոքա այդտեղ։

- Մենք սովորում էինք Բերտրամի դերը «Ռոբերտ Դիավոլ» օպերայից; որը շուտով պիտի ներկայացուի բեմի վերայ։ Եւ որպէսզի մեզ ոչ ոք չխանգարէ, մենք վարձեցինք այս բնակարանը, քաղաքի հեռու մասում։

Իսկ պ. Ժանը դեռ բոլորովին համոզուած չըլինելով, բացականչեց, մատով ցոյց տալով՝

—Իսկ այն դագաղաձև արկղ՞ը, արկղ՞ը...

Բայց պատասխանի փոխարէն լսուեց մի բարձր ծիծաղ։

—Դա ջուրթակի դատարկ ամանն է, ասաց փրբրթկալով մեծ Մայէստռոն։

—Դուք ուղղակի յիմար էք, բարկացած ասաց գործակատարը, դռնապանին։

Եւ խորը ողջունելով Մէյերբէրին, ներողութիւն խնդրեց անհանգստութիւն պատճառելու համար ու դուրս գնաց միւս ոստիկանների հետ։

*
* *

Պարոն Ժանը և տիկին Ժուայոզը, նախկին խմբական երգչուհին, պատիւ ունեցան առաջին անգամ Բեմի վրայ դրուած «Ռոբերտ Դիավոլ» օպերան լսելու 1831 թուին։ Տոմսակները նոցա ընծայել էր այդ նշանաւոր օպերայի յարգելի հեղինակը։

Թատրոնում, երբ լսուեց առաջին բառի խրոխտ ձայնը, որ գերեզմանից դուրս էր կանչում մեռելներին, Ժան Ժուայոզը չկարողացաւ իրան զսպել և իւր կնոջ ականջին խորհրդաւոր կերպով շշնջաց՝

—Բայց այնուամենայնիւ ես միանգամայն համոզուած եմ, որ դա ինքը իսկական սատանան է...

Նշանաւոր Կոմպոզիտորի կեանքի այդ դէպքը երկար ժամանակ Փարիզի հասարակութեան խոսակցութեան առարկան էր։

Թարգ. գերմ. ՏԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ.

ՄԵՆԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ *)



Ա.

Այն տարին՝ երբ մենք Կորիս գիւղից Ախալքալաք դաղթեցինք, վերջինս, իսկապէս, քաղաք չէր, այլ մի մեծ գիւղ կամ գիւղաքաղաք,— Սխաչ անունով մի եկեղեցի և մի քանի հարուստների տներ,—ահա այն շինութիւնները, որոնցով Ախալքալաքը այդ ժամանակ զանազանուում էր իւր շրջակայ հայկական գիւղերից, որոց թիւն 80 ից անց էր եւ որոց բոլորի բնակիչներն էլ Կարնոյ դաղթականներ էին։ Եկեղեցու դաւթում ձեռնարկուած դպրոցական, բաւականին մեծ և լարմար շինութիւնը՝ տակաւին վերջացած չէր, Ասսի «պտղիք ամբար» **) կոչուած մեծ շինութիւնը ժամանակաւորապէս դպրոցի էին վերածել։ Այդ ամբարի մանկլ կամարների տակն էին ուսում ստանում քաղաքի և մօտակայ գիւղերի հարիւրաւոր մանուկները, որոնց թուումն էր իմ ծանօթ Սպագն,—Կորիս գիւղի Տէր Մարգարի որդին։ Աշակերտների մի մասը կարդում էր «Բերական» կամ «տետրակ», մի մասը՝ «Սաղմոս» և միւս մասը՝ «Աստուածաշունչ»։—Սաղմոս և Աստուածաշունչ կարդացող աշակերտները միմիայն փայտեայ նստարանների վրայ էին նստում, միւսներն

---

*) Յիշողութիւններիս մի մասը տպուած է «Փորձ» ամսագրի 1877—78 թ. տ. № II-ում։

**) Գիւղերից հաւաքուած ցորեն ու գարին, որ թեմական արդիւնք է, այդ ամբարումն էին հաւաքում։

ժամանակ և դրում, իսկ միւսները՝ քարած և փսխթներով փռուած յատակի վրայ։ Ամբար-դպրոցում միջնորմներ չկային, այլ երեք բաժանմունքները կամ դասարանները՝ միմեանցից կամարներով էին բաժանուում։ Եւ չնայած դրան՝ դպրոցում համեմատական լուութիւն էր տիրում միայն «Քերականն» և «Սաղմոսի» բաժանմունքներում—թող ասենք, առաջին և երկրորդ դասարաններում, ուսուցանում էր Կարապետ վարժապետ Մնձատունեանցը, իսկ Աստուածաշնչի բաժանմունքում, կամ երրորդ դասարանում՝ չէր Սիմոն աւագ քահանան, կարծեմ Տէր Վարդանեանց ազգականն։— Մի դասարանից միւսը փոխադրուելու որոշեալ ժամանակ չկար, այլ դա կախուած էր ամեն մի աշակերտի ընդունակութիւնից, յառաջադիմութիւնից։ Դպրոցում պարապմունքները լինում էին թէ ճաշից առաջ և թէ յետոյ, մինչև երեկոյեան ժամերգութեանց սկսուելը։ Բացի հայերէնից՝ սովորացնում էին նաև կրօն, երգեցողութիւն և թուաբանութիւն։ Պարապմունքները հայ լեզուով էին լինում։—Սկզբի տարիներում հունարէն լեզու դեռ չէր աւանդուում։ Զմոռանամ ասել, որ ս. Խաչ եկեղեցու դաւթի դպրոցը կոչւում էր «Մեծ վարժատուն», որովհետև Ախալքալաքում, այդ ժամանակ,—և յետոյ էլ դեռ շատ երկար տարիներ,—կային նաև «փոքր վարժատուններ» քաղաքի դրեթէ ամեն մի մեծ փողոցում, ամէն մի թաղում,—ամէնքն էլ մասնաւոր անհատների ձեռներեցութեամբ հիմնուած։ Դրանցում ուսում աւանդողները՝ հէնց իրանք հիմնարկողներն էին՝ թէ տղամարդիկ և թէ կանայք, անխտիր։ Առանց խտրութեան այդ դպրոցներում ուսում էին առնում նոյնպէս և տղայք և աղջիկներ։ «Փոքր վարժատունները» դասընթացի որոշեալ ժամանակ թէև չունէին դարձեալ, բայց «Սաղմոսից» դէնը չէին կարող անցնել։ «Մեծ վարժատունը» միմիայն տղայքն էին ընդունում և այն ձրի, իսկ «փոքր վարժատուներում» սովորողները իրանց «վարպետներին» կամ վարժապետ և վարժուհիներին վճարում էին, ինչ որ ուզում էին և ինչքան որ կարողանում էին՝ փող, և ալիար, (վառելիք, որ կենդանիների աղբից են պատրաստում), և՝ ձու, և՝ իւղ, և՝ պանիր, և՝ հաց և այլն։

Սկզբնական դրագիտութիւն տարածելու գործում՝ Ախալքալակի այդ «փոքր վարժատունները» մեծ դեր են խաղացել ընդարձակ վիճակի բազմաթիւ հայ ժողովրդի համար։ Այդ տեսակ դպրոցներ մինչև վերջին տարիներս գոյութիւն ունէին, այս ինձ լաւ յայտնի է,—ոչ միայն Ախալքալակում, Ախալցխայում և Ալէքսանդրապոլում, այլ նաև այդ քաղաքների շրջականներում սփռուած փոքր ի շատէ յայտնի ամեն մի հայ գիւղում։

Բ.

Իւր բաղմանդամ ընտանիքը գիւղից քաղաք փոխադրելով՝ հայրս, բնականաբար, զբաղուած էր դեռ մի որևէ գործ ճարելու թէ իրան և թէ մեծ եղբայրներիս համար։ Իմ մասին ոչ ժամանակ ունէր հոգալու։ Գրեթէ ամեն օր ես մրտնում էի Ս. Խաչ եկեղեցու գաւիթը, հեռուից տեսնում էի իմ ծանօթ Սաղօլին և միւս բաղմաթիւ աշակերտներին կարդալիս, բազում խաղալիս և նախանձում էի նրանց վրայ։—Եւ տուն վերադառնալիս ամէն անգամ տխրում էի մօրս զանգատանել, որ չուտով ինձ էլ վարժատուն ուղարկեն։

Այդ ժամանակ ես հազիւ 8 տարեկան կը լինէի և թէպէտ 5 տարեկան հասակիցս սկսեալ, դեռ Կօրխում եղած ժամանակիցս, հօրս և մեծ քրոջս մօտ կարդում էի միշտ, սակայն դպրոց մտնելու փափագը իմ մէջ մի հիւանդութիւն էր դարձել։ Հայրս էլ, մեծ քոյրս էլ ինձ միշտ խրատում էին առ ժամանակ համբերել. նրանք ասում էին, որ ես արդէն դպրոցի շատ և շատ աշակերտներից առաջ եմ անցել, թէ «Սաղմոսը» ես արդէն ջրի նման կարդում եմ. թէ ես մինչև անգամ գրել էլ եմ իմանում, բայց և այնպէս մայրս իմ թախանձանքներից, քմահաճութիւններից չէր կարողանում ազատուել և, խեղճ մայրիկ, շատ անգամ ինձ ծեծել է և լաց եղել, անհամբեր բնաւորութեանս պատճառաւ և եթ։

—Հայրդ անգործ, եղբայրներդ անգործ,—լալագին աչքերով ասում էր մայրս — էլ ինչպէս կարողանանք քեզ վարժատուն ուղարկել, երբ ուտելու ցամաք հաց անգամ չենք կարողանում ճարել։ Եւ լետոյ բացատրում էր, որ ինձ նման բղբղուած տրեխներով, պատառոտուն շորերով ու վէրքերով լեցուած գլխով երեխային վարժատուն չեն ընդունում, թէ, անհրաժեշտ է, որ նախ և առաջ հայրս և եղբայրներս գործի լինին, ինձ համար շոր և կօշիկ առնեն, գլխս վէրքերը լաւացնել տան, որ ապա կարելի լինի ինձ դպրոց տալ։

Մօրս բացատրութիւնը, որ, երևի, ինձ չվշտացնելու համար սկզբից չէր յայտնում,—ինձ զղջացրեց։ Եւ ես ինքս ինձ սկսեցի կշռադատել։ Եւ, արդարև, դպրոցում տրեխաւոր աշակերտներ շատ կային, այդ ես միշտ տեսնում էի, բայց նրանց տրեխները իմ տրեխների նման հին ու մաշուած չէին։ Հին շորերով նոյնպէս շատ աշակերտներ կային, բայց նրանց շորերը՝ այն աստիճան կարկատած չէին ինչպէս իմ շորերը։ Գլխի վէրքերով աշակերտների ես նոյնպէս հանդիպում էի, բայց նրանց գլուխները «ձթած» էին, մինչդեռ իմ գլուխը ձթած չէր։ Ուրեմն, համաձայնում էի ես մօրս հետ,—որպէս զի ինձ կարելի լինի դպրոց մտնել, դեռ անհրաժեշտ են նոր տրեխներ կամ կօշիկներ, անհրաժեշտ են նոր շորեր,

վերջապէս անհրաժեշտ է իմ վիրայից գլուխը ձթել *)։— Իսկ այդ ամէն ծախսերը անելու համար՝ անհրաժեշտ էր, որ գոնէ միայն հայրս գործ ունենար։—Սակայն չունէր, չէր ճարւում։—«Երկինք, դեռինք» կապուած են մեզ համար,—ահա այն յուսահատ խօսքերն, որ ես լաճախ լսում էի իմ ծնողաց բերաններից։ Եւ երբ որ ժամանակ առ ժամանակ, էլի դիմելով մօրս՝ խնդրում էի իմ կօշիկների, շորերի և գլխի հոգսը քաշել, մայրս սպառնում էր, որ եթէ ես չարունակեմ իրան նեղացնել,—այն ժամանակ՝ հայրս կրկին մեզ գիւղ կը վերադարձնէ, որտեղ «դու էլ, քո փոքրիկ տեղով, ցորեն ու դարի էիր աշխատում մեզ համար, իսկ այստեղ մեր բերանի հացն էլ ես խլել ուզում»։—Այսպէս էր ասում մայրս և ինձ միանգամայն լռեցնում, յուսահատեցնում։

Գ.

Շաբաթներն և ամիսներն անցնում և ոչ հայրս, ոչ էլ եղբայրներս չէին կարողանում գործ ճարել։ Բայց ահա, յանկարծ, բաղդը ժպտաց մի օր։—Այդ ժամանակներում Ախալքալաքում երկու մարդիկ կային, որոց ձեռքն էր թէ Ախալքալաքի և թէ ամբողջ վիճակի ժողովրդեան կեանքն ու մահը։ Այդ երկու անձինք երբ փողոցներում անց ու դարձ էին անում, բոլոր մարդիկ ոտքի էին կանգնում, գլուխները բաց անում և խորը ղլուխ տալիս։ Երբ նրանք բարեհաճէին այս և այն մարդու հետ խօսակցել,—այդ բանը՝ արդէն ամբողջ քաղաքի խօսակցութեան նիւթ էր դառնում։ Կային մարդիկ էլ, որոնք այդ պարոններին, կամ մէկին ու միւսին հեռուից տեսնելիս՝ հեռանում, խոյս էին տալիս, որպէս զի միսեանց չը հանդիպին։—Կամ խորին ակնածումն և կամ խորին ոարսափումն,—ահա այն տպաւորութիւնը, որ թէ աշխարհիկ և թէ հոգևոր կոչման մարդկանց վրայ, անխտիր գործում էին այդ երկու անձինք իրանց երևալով, իրանց խօսքերով և վար-

*) 1830 թուականի գաղթական ժողովրդեան երեխաների «մեծադոյն մասը մինչև այսօր՝ տանջւում է գլխի վէրքերով, որ ժառանգաբար անցնում է որդոց որդու։—«Ռեալ» ահա այն տիղոսը, որ տրւում է այդ տեսակ երեխաներին երկու իսկ սեռից։ Այժմ ինձ յայտնի է այդ հիւանդութեան ինչ լինելն և ինչպէս բժշկուելը։ Իսկ մանուկ ժամանակ քեալերին բժշկում էին բացառապէս ընտանեկան դեղերով և միակ դեղն էր սև կապրը (ձիւթ) մի քանի խառնուրդներով։ Բժիշկները բացառապէս պառաւ կանայք էին լինում, որոց «կոթ ձեռք» էինք անուանում։ Այդ բժշկութիւնը շատ բարբարոսական է թէև, սակայն հիմնաւոր։ Ժամանակակից բժշկականութիւնը, իւր բոլոր միջոցներով կարող չէ հասնել այն արագ և փայլուն հետևանքին, ինչին որ հասնում էին, և այժմ էլ հասնում են «կոթ ձեռք» հինաւուրց պառաւները։ Եւ այս վկայում են իրանք բժիշկները։

Ծան յօդ.

մունքներով։—Դոքա էին՝ Աստուծ աղա Պողոսեանց և Մանվելի Կարապետ աղա Եաղուբեանց, կամ, ինչպէս ժողովուրդը, սովորաբարձ՝ նրանց անուանում էր, «հանի աղան» և «Աստուծ աղան» երկուքն էլ զինուորական չորերով և կոճակներով։ Պողոսեանը ուշաստիօղիս զանգդատել էր և 40—45 տարեկան, բարձրահասակ և վայելչակազմ, իսկ Եաղուբեանը հոգևոր գործերի կառավարիչ 55 - 60 տարեկան, բարձրահասակ և շատ լիք կազմուածքով,—մի կատարեալ մաքլուր։ Պաշտօնական լարաբերութիւններում ժողովուրդը Պողոսեանցին նաչալնիկ անունն էր տալիս, իսկ Եաղուբեանցին՝ կաթողիկոսի փոխանորդ *)։ Եւ, ճշմարիտ որ, այդ մարդը հոգևորական դասի հետ այնպէս խիստ և դաժան կերպով էր վարուում, որ հաղիւ թէ ինքը՝ կաթուղիկոսը այնպէս վարուելիս լինէր։ Քաղաքի քահանաներն էլ, դիւղի քահանաներն էլ, անխտիր և առանց բացառութեան, տերևների նման դողում, դողդողում էին նրա առաջ, որովհետև գիտէին, փորձերով տեսած էին, որ նրա «կապածը՝ կապած է, արձակածը՝ արձակած»։ Ախալքալաք մըտած օրից սկսեալ՝ մինչև մեր ընտանիքի այդ քաղաքից դաղթելն՝ ես ինքս շատ անգամ ականատես եմ եղել թէ՝ ինչպէս «հանի աղան» քահանաների մօրուքներիցը բռնոտած քաշքշում, փնտրում էր, նրանց ապտակում էր, հայհոյում էր, և այն էլ՝ ամենախայտառակ և զզուելի բառերով։ Տեսել եմ՝ թէ ինչպէս «հանի աղան» կօշիկներով տեղան էր բարձրանում և այնտեղից իւր պատուէրներն էր արձակում նկեղեցում խըռնուած քահանաներին, որոնք վիճակի գիւղերից, իւր հրամանով, եկած էին լինում Ախալքալաք՝ կաթուղիկոսի փոխանորդի հրամանները լսելու։ Տեսել եմ քահանաներ, որոնք «հանի աղալի» առաջ ծունկ չոքած, գլխաբաց և արտասուալից աչքերով՝ գութ և ողորմութիւն էին խնդրում նրանից։ Եւ այդ ամէնը՝ ոչ թէ ծածուկ, այլ՝ հրապարակաւ, եկեղեցում, եկեղեցու գաւթում, փողոցներում և քաղաքի դաշտերումն էին տեղի ունենում։

Ոչ պակաս բարբարոսական էր «հանի աղալի» վարմունքը և այն աշխարհականների հետ, որոնք այս և այն հոգևոր գործի համար՝ նրան էին դիմում։ Պէտք է իմանալ, որ «հանի աղան» անգրագէտ մարդ էր և բռի զիւղացոց մինը, միմիայն իւր զինուորական չորերովն էր զանազանուում։ Նա շատ էր սիրում և գործ ածում հայհոյական բառեր թէ ռուերէն և թէ հայերէն։ Իսկ նրա միակ քաղաքավարի բառն էր «ցիմարիմասուն» բառը, որով երբեմն սիրաշահում էր իւր յարգած քահանաներին։

Չնայած իւր անդրադիտութեանը՝ «հանի աղան» յաճախ

---

*) Յայտնի է, որ ներսէս Ե. Աշտարակեցի կաթուղիկոսը՝ հոգևոր գործերի վարումը աշխարհական անձանց էր յանձնել դատաստաններում։ Ծան. յող.

այցելում էր դպրոց և այն ու այն աշակերտին կարդալ տալիս նրա դասը։ Կիսաձայն անգամ ընդհատում էր կարդացողին՝ ասելով՝ նա սխալ է կարդում։ Աշակերտը կրկնում էր ուղիղ վարդապետը։ Բայց հաճի աղան պնդում էր թէ սխալ է։ Եւ այս կոմեդիան կրկնւում էր մի քանի անգամ։—Այնպէս որ, վերջ ի վերջոյ, աշակերտը իր գլխիցը մի կամ մի քանի սխալ բառեր շարադրելով և հաճի աղայի հաւանութեանն արժանանալով՝ հազիւ հազ պրծնում էր նրա ձեռքից։ Զարմանալին այն է, որ այդ ըղձենիներում ներկայ եղող վարժապետներ՝ Հաճի աղայի մոլորումն էր անցնում և նոյնպէս կրկնում էր, որ իբր թէ աշակերտը, արդարև, սխալ է կարդում։ Իսկ երբ Հաճի աղան հեռանում էր և մենք բացատրութիւն էինք խնդրում վարժապետից՝ վերջնիս միակ պատասխանը այս էր լինում. «Հաճի աղան մեծ մարդ է. չէ կարելի նրան նկատողութիւն անել»։ Այո՛ նա այդ մեծ մարդու ձեռքովն էին ընթանում լայնատարած վիճակի ամենատխուր հոգեւոր գործերը։ Նրա կատարած քննութիւններն էլ, արձակած վճիռներն էլ բանաւոր կերպով էին լինում։ Եւ ժողովուրդը նրանց ընդունում էր և սուս ու փուս կատարում։ Ոչ մի անդամ և ոչ ոքի մտքով չէր անց կենում «Հաճի աղայի» երեսն ի վեր ասել թէ՝ օրինակ՝ նա ինչ իրաւունքով և կամ ինչ խղճով, ամուսնալուծութեան գործերը քննելիս՝ մեղաւոր կողմին, դիցուք կնոջը, իւր մարդու չալակն էր տալիս և մարդու ազգականներին հրամայում էր կնոջ ռոզդի տալով՝ մինչև գեղ տանել։ Պէտք էր տեսնել թէ՝ ինչ վայնասուն, ինչ աղաղակ և ինչ տմարդի սրախօսութիւններ և ղրախօսութիւններ էին տեղի ունենում, երբ մանկամտդ կինը՝ իւր տակ եղող մարդու գըլուխն էր կծոտում, մարդը՝ իւր բեռան (կնոջը) ձեռքերը խածոտում, իսկ նրա ազգականները՝ կնոջ եսքից խփում էին և խփում անդադար։ Ո՛հ, այդ տեսարանները... ես մինչև մահս կարող չեմ մոռանալ։

Ինչ որ անում էր «Հաճի աղան» ժողովրդեան՝ նրա արա հոգեւոր գործերի վերաբերութեամբ՝ նոյնը անում էր և Աւետիս աղան մարմնաւոր գործերի վերաբերութեամբ։ Օր չէր անցնում, որ նրա դռան առաջ մի քանի մարդ «ռոզդի չուտէր»։ Դա դատաւորութիւն և դատավարութիւն չէր, այլ դահճութիւն և արիւնարուշտ ներկայացում, որոնց ժամանակ քանի քանի հանդիսատես կանայք ուշագնաց էին լինում, քանի քանի մանուկներ ճիչ ու աղաղակ բարձրացնում, լալիս, հեկեկում էին իրանց ծնողների և եղբայրների մարմնի վրայ եղած հարուածները տեսնելիս։ Ռոզդուց աղատ էին մնում միմիայն անչափահասները, քահանաները և նրանց որդիքը։

Թէ Նաղուբեանը և թէ Պօղոսեանը ոչ միայն հզօր ծառայողներ էին, այլ նաև հարուստ փողատերներ։ Գոնէ նրանց քնակարանների փառահեղութիւնը, էնտանիկան նիստ ու կա-

ցը, կենցաղավարութեան եղանակը՝ կենդանի վկայ էին։ Թէ Ախալքալաքի և թէ նրա ընդարձակ վիճակի այդ երկու «հոգեառ հրեշտակները», որքան ռոճիկ էին ստանում, կամ որքան եկամուտ ունէին,—այդ ես չգիտեմ։ Չեմ կարող նմանապէս ոչ մի հաստատուն կարծիք յայտնել, թէ նրանք, որպէս մարդ, ինչ լաւ կամ վատ յատկութիւններով էին օժտուած, ինչ սկզբունքներով և նպատակներով էին ղեկավարւում, և ժողովրդեան ղեկավարում. բայց ես, որ յաճախ ականատես էի այդ մարդկանց վերոյիշեալ գործողութիւններին,—ես այդ մարդկանց չկարողացայ սիրել, այլ մինչև նրանց մահն՝ ատելով ատում էի։ Եւ այդ ատելութիւնը հետևանք էր միմիայն և միմիայն իմ տեսած դաժան և արնաշաղախ տեսարաններին, որոնք այնքան զօրեղ տպաւորութիւն էին գործել իմ մանկական ուղեղի և սրտի վրայ։

Ինչպէս քիչ յետոյ կըտեսնենք, թէ Եաղուբեանը և թէ Պօղոյեանը Ախալքալաքում ինձ և մեր ամբողջ ընտանիքին մի մի կատարեալ բարերարներ հանդիսացան։ Եւ ես անձնապէս չնորհակալ և երախտապարտ եմ այդ մարդկանց, բայց այս հանգամանքը, այնու ամենայնիւ, չէ կարողանում խեղդել իմ ներքին ատելութիւնը դէպ ի նրանց։ Այդ էր անա պատճառը, որ նկարագրածս օրերից 16 տարի յետոյ, երբ Թիֆլիսում լսելով, որ Աւետիս Պօղոյեանցը իմ ծննդավայրում՝ Ախալցխայում, հոգևոր դպրոցի տեսուչ է ընտրուած՝ ես մի առակ գրեցի, որ յետոյ այնքան սուղ նստաւ ինձ վրայ։ Եւ այն մարդիկ, որոնք գիտէին, որ Պօղոյեանցը ինձ միմիայն բարիք է արել մի ժամանակ Ախալքալաքում և այնուհետև մենք միմեանց հետ ոչ տեսնուած և ոչ էլ որևէ գործ էինք ունեցած՝ զարմացան, ապշեցան և «ապերախտ» տիտղոսով՝ մկրտեցին ինձ. իսկ հայրենակիցներս ուզեցին հալածել ինձ, որ իրանց կովեր էի անուանել, իրանց երեխաներին՝ հորթուկներ, իրանց դպրոցը՝ ախոռ, իսկ տեսչին՝ «պող էշ», որ իրան յանձնուած հորթուկ-աշակերտներին սովորեցնում է բայի կովի նման բառանչելուց, նաև իշի պէս զռալ։—Այդ առակը՝ իմ պատանեկան առաջին գրուածքն էր, որ չգիտեմ «Հայկական աշխարհի» որ թուականի և որ ամսատետրում տպագրուեցաւ։

Գուցէ իմ առակը անտեղի և անարդար էր։ Գուցէ Պօղոյեանցը լաւ տեսուչ էր։ Այդ ես չգիտեմ։ Այս ես պէտք է խոստովանեմ, որ լիշեալ առակը գրելիս՝ ես գիտակցաբար ի նկատի չեմ ունեցել Ախալցխայի հոգևոր դպրոցի և նրա սաների չահը։ Այլ իմ գլխաւոր նպատակն է եղել խայթել, վիրաւորել Պօղոյեանցին, վրէժխնդիր լինել այն բարբարոսութիւնների համար, որ նա մի ժամանակ գործում էր Ախալքալաքում ուչասակովի դասեղատել եղած ժամանակը։ Սակայն դառնանք մեր լիշողութիւններին։

Գ.

Մի օր, երբ ես, ըստ սովորութեանս, եկեղեցու բագում նստած՝ մտիկ էի տալիս «պտղիի ամբարում» կարդացող աշակերտներին, այստեղից դուրս եկաւ «Հաճի աղան»։ Մեծ ակնածութեամբ նրան ճանապարհ էին ձգում ուսուցիչներ՝ Տէր Սիմոնը և Կարապետ Մեծատունեանցը։ Ինձ նստած տեսնելով՝ երկուքն էլ նշանացի հասկացրին, որ հարկաւոր է կանգնել և դլուխս բաց անել։ Ես այդպէս էլ արի և կարծելով, որ հաճի աղալի և ուսուցիչների մէջ ինձ աշակերտ ընդունելու մասին խօսք ու զրից է եղել, իսկոյն մօտեցայ հաջի աղային և ասացի՝ «հաճի աղա, ես եմ»։—Դու ո՞վ ես, հարցրեց հաճի աղան։—«Ես եմ», պատասխանեցի ես։—Տէր Սիմոնն ու Կարապետ վարժապետը ձեռքով ինձ յետ մղեցին կամացուկ։

—Ո՞վ է այս լակոտը, դարձաւ Եաղուբեանը դէպի ուսուցիչները։

—Չգիտենք, պատասխանեցին ուսուցիչները և ինձ յետ էին մղում նորից։ Բայց ես ոտքերս դէմ տուի՝ միանգամայն վիրաւորուելով լսածիցս և տեսածից։—Ինչի՞ էք վռնտում, ես էլ եմ ուզում վարժատուն գալ»,—ասացի և կանգնեցայ։

—Ծո՛, քեալ, դու ո՞ւմ մանչն ես, հարցրեց Տէր Սիմոնը։

—Թիւթիւնճի Աղաբաբին, պատասխանեցի և վիրաւորուեցայ Տէր Սիմոնի արտասանած քեալ (քաչալ) բառից։ Երևի տէր հայրն էլ, իւր հերթում, վիրաւորուած էր իմ իրան ցոյց տուած ընդդիմութիւնից։

—Ծո՛, հարդ ինչ սէնիաթ ունի, հարցրեց հաճի աղան։

—Թիւթիւնճի է, աղա։

—Ճանչէք կը, դարձաւ Եաղուբեանը ուսուցիչներին։

—Չէ, Հաճի աղա, ստրկական ձևերով պատասխանեցին նրանք։

—Աղա, Կօրխէն ենք մենք այստեղ եկել, վրայ բերի ես։

—Սաղ օրր ատեղ Ինչլոմէշ գէլլէ (թափառում է), վրայ բերեց տէր Սիմոնը։

—Ես կուզամ, որ վարժատուն մտնիմ, աղա, հաղիւ ասացի ես և ոստիկ վիրաւորուած Տէր Սիմոնի խօսքերից, ըսկսեցի արտասուել։

—Ծո՛, դու քեալ ես, քեալ, ինձ այրող ներքին կրակի վրայ ձէթ ածեց Հաճի աղան։

—Տիա՛, (ահա՛) ձեր վարժատունն ա (էլ) չատ քեալեր կան, աղա, ես ա (էլ) դլխուս ձուէթ ձգել կուտամ։

—Գնը՛ (գնա՛) հօրդ ղրկէ քովս, ասաց Հաճի աղան և հեռացաւ։

—Ծո՛, ինչ ազդունն (կատաղի) ես եղել, լակոտ, ասաց Տէր Սիմոնը և քայլերը դէպի դպրոցն ուղղեց։

—Բեալդան, քեօղան, չօլախդան («քաչալից, կոյրից և կաղից, պէտք է վախենալ») մնթինթաց Կարապետ վարժապետը և նոյնպէս դպրոց մտաւ։ Ցաճկական այս առածի վերջին երկու բառերը, այն ժամանակ ինձ անհասկանալի էին։ Սակայն հասկացայ, որ առաջին բառը ինձ ծաղրելու համար ասուեցաւ։ Բայց, կարծես բնազդմամբ, ըմբռնելով որ Հաճի աղան հօրս ուզում է տեսնել, որպէս զի ինձ դպրոց ընդունէ,—ուրախութիւնից դժի նման վազ տուի տուն՝ ճանապարհին երկու անգամ սայթաքուելով և վայր ընկնելով և քինթ ու պռունդս ջարդոտելով։

Ե.

Ինձ արնաթաթախ տեսնելով մայրս՝ քիչ էր մնում լեղաճաք լինի։—Մի կողմից նա իմ երեսս էր լուանում, արնոտած շորերս սրբում և միւս կողմից՝ անդադար հարց ու փորձ էր անում՝ «այ տղայ, ում հետ կռուեցար, քեզ ով թակեց, հօ դու էլ ուրիշին չես խփել, չես արնոտել»։—Եւ չէր ուզում հաւատալ, որ ես վայր ընկնելուց եմ միայն վիրաւորուել, որ «Հաճի աղան» խոստացել է ինձ վարժատուն ընդունել։ Մի քանի րոպէից յետոյ հայրս ներս մտաւ և ինձնից լսելով «Հաճի աղայի» պատուէրը՝ իսկոյն գնաց նրա մօտ։

Նոյն օրը, երեկոյեան, մեր տնեցւոց ուրախութեան չափ չկար։—Այդ օրը մենք առաջին անդամ ուրախ ընթրիք վայելեցինք, որ բաղկացած էր բացի ցամաք հացից, այլ նաև երեք հատ ոչխարի գլխներից, որ փողոցներում խաչում և հատը հինգ կոպէկով վաճառում էին աղքատ ժողովրդեան այն ժամանակ և մինչև այժմ էլ։

Բանը նրանումն է, որ «Հաճի աղան» հօրս պաշտօն էր լանձնել՝ ս. Խաչ եկեղեցու ժամկոչութիւնը,—որ, հօրս պատմածներին նայելով,—շատ շահաւէտ պաշտօն է եղել։ Որովհետև բացի ամսական 2 ռուբլի ռոճկից, բացի այլի մեռելների դիակները լողացնելու վարձից, բացի պատահական մանր մունր նուէրներից, ժամկոչը իրաւունք ունէր այն ժամանակ (թերևս և այժմ) ողջ քաղաքի ամեն մի ծխական տընից, և ամեն շաբաթ օրերում, հաց ժողովել,—«ննջեցեալոց բաժինքը»։—Հայրս հաշուում էր, որ շաբաթական ժողովելի հացերով՝ ոչ թէ միայն մեր դերդաստանի սննդեան համար հարկաւորեալ հացը այսպիսով կըհայթհայթէ, այլ նաև կարող կըլինի ամսական մի քանի մանէթի էլ հաց վաճառել ուրիշներին։

Եւ որովհետև մեր ընտանեկան այս արտակարգ բաղդաւորութեան պատճառը ես էի, ուստի ինձ տրուած օրհնութիւններին ու համբոյրներին և գովեստներին չափ չկար։ Այդ երեկոյին ես վատարեալ օրուայ հերոս էի դարձել։ Մի-

ան թէ—սիրաժպիտ ձայնով մի քանի անգամ նկատում էր հայրս ինձ,—մեծ մարդկանց և վարժապետների հետ խօսելիս ես պարտաւոր եմ շատ քաղաքավարի լինել, նրանց հետ համարձակութեամբ չպիտի խօսեմ, նամանաւանդ՝ նրանց առաջին և հրամայածին՝ ոչ մի ընդդիմութիւն չպիտի ցոյց տամ։ Սակայն իմ ուրախութեան պատճառը ոչ զովեստներն էին և ոչ էլ համբոյրները, այլ այն, որ հաճի աղան հօրս իրաւունք էր տուել իմ գլուխը ձթել և ապա ինձ դպրոց տանել։ Հօրս նկատողութիւնը,—ինչպէս նա յայտնեց,—հետևանք էին հաճի աղայի և եկեղեցու աւագ երէցի,—ընթերցողիս յայտնի Տէր Սիմոնի,—գանգատանաց։ Ես, որ չէի էլ իմանում թէ հաճի աղին և տէր Սիմոնին վիրաւորուած եմ եղել այդ օրը։ Խօսուցայ հօրս, որ իւր պատուէրների համեմատ կը վարուիմ այնուհետև և անկողին մտայ։ Բայց, կարծեմ, կամ ամենևին չքնեցայ և կամ քիչ քնեցայ։ Միմեանց հակառակ զգացմունքներ ողջ գիշերը ինձ հալ ու մաշ արին։ Մի կողմից անչափ ուրախ էի, որ վերջապէս դպրոց եմ մտնելու, միւս կողմից, տխրում, լուսահատում էի, որ գլուխս ձիթելու եմ։ Որովհետև գլուխ ձիթելու, նամանաւանդ 15 օրէնը մի անգամ ձութը պոկելու զարհուրելի արարողութեանը ծանօթ էի։ Եւ շատ անգամ հեռուից՝ տեսած և լսածներս աղեխարշ աղաղակներն և գոռիւն գոչիւններն՝ թր ճանում էին իմ հասակի և ինձանից մեծ և փոքր մանուկների «ձութ ձգող» անգութ պառաւների ձեռքից։

Զ.

Առաւօտեան զարթնելիս՝ մայրս պատմում էր, որ ես երազումս ջղային ցնցումներ եմ ունեցել, լաց եմ եղել, աղաղակել եմ, հայհոյել եմ։ Եւ երբ ես նրան բացատրեցի իմ տագնապը՝ գլուխս ձիթելու նկատմամբ,—նա իսկոյն յայտնեց, որ ինձ չի թոյլ տայ վարժատուն գնալու։ Եւ նախապատիւ է համարում, որ ես շարունակեմ ուսումս։ Բոլոր առաջնոյն, տանը հօրս և մեծ քրոջս մօտ։ Հայրս հակառակ էր մօրս կարծիքին նախ՝ որովհետև գլուխ ձիթելն այնքան էլ երկիւղալի բան չէ, ինչպէս ես եմ երևակայում։ Երկրորդ՝ որովհետև հայրս այժմ պաշտօն ունենալով՝ ինձ հետ պարապելու աղատ ժամեր կարող է չունենալ։ Գալով քրոջս՝ նա էլ իւր աղնեգործութեամբն է պարապելու։ Եւ որովհետև ես աւելի հօրս կարծիքին տրամադրութիւն էի ցոյց տալիս, ուստի երկար խօսելուց և վիճելուց յետոյ՝ ծնողքս տրոշեցին իմ գլուխը ձթել տալ։ Նոյն օրն և եթ հայրս ինձ տարաւ յայտնի ձութ ձգող Սալլի պառաւի մօտ։

—Անա, չէ կարելի առանց ձութ ձգելու իմ գլուխը լաւացնել, այս եղաւ անա իմ առաջին հարցմունքը պառաւին,

երբ սա գլխիս վերքերը տնտղեց վերջացրեց։—Չէ, որդի, դու փէշէրսուն ուոդաէշէն է, պատասխանեց ինձ պառաւը և հօրս դառնալով յայտնեց, որ յանձն է առնում ½ տարուայ մէջ բոլորովին բժշկել գլուխս։—Ես սկսեցի լաց լինել, մտածելով թէ այդքան ժամանակում քանի քանի անգամ ինձ պէտք է նահատակէ պառաւը՝ ամէն անգամ գլխիս ձութը պոկելիս։ Սակայն Սալվին՝ նորից տնտղելով գլուխս, հօրս էլ, ինձ էլ միամտացրեց միանգամայն, որ իմ գլխի վէրքերն այն տեսակիցն են, որ ամենաշատը երկու ամսէնը մէկ անգամ հարկը լինի՝ հին ձութը պոկել և նորը փակցնել։ Եւ ճիշտ այդպէս էլ եղաւ, պառաւ Սալվին թէ իւր արուեստին (ինչու չասել գիտութեանը) և թէ իւր խօսքին՝ կատարեալ տէրն եղաւ։

Պառաւի պստուիրուած դեղօրայքը՝ նոյն օրն ևեթ հայրս գնեց. գլուխս ածիլել տուեց և նոյն օրն և ևեթ իմ գլուխը ամբողջապէս ձիթուեց։ Նախչուն թաչկինակով գլուխս փաթաթած՝ միւս առաւօտը հօրս հետ՝ ես գնացի «մեծ վարժատունը», ուր ինձ հարցաքննելով ընդունեցին «Սաղմոսի» բաժինը, այսինքն բ. դասարանը։ Շատ ու շատ տարիներից յետոյ, 'ի հարկէ, ես հասկացայ, որ Կարապետ Մեծատունեանցը իւր ժամանակի վատ վարժապետներից մէկն է եղել։ Աշակերտներս նրա մօտ կարդում էինք 'ի հարկէ, առանց կարդացածներս մտքի չափ հասկանալու։ Թուաբանութիւն էինք սովորում, առանց հասկանալու և ըմբռնելու։ Մեծապէս տանջւում էինք նամանաւանդ պիւթագորեան աղիւսակը մեքենայաբար, անգիր սովորելիս։—Լաւ միտս է. մի անգամ երբ Մեծատունեանցը դառնալով ինձ հարցրեց՝ 4 անգամ 4 որքան է անում և ես սկսեցի մտքով մատներիս վրայ հաշուել, որ պատասխանեմ, մէկ էլ յանկարծ չրխկ, չրխկ, վարժապետս սկսեց ապտակել ինձ ասելով՝ «ահա քեզ մատներիդ հետ խաղալ, ահա քեզ մատներիդ հետ խաղալ»։ Թէև ես լաց չեղայ, ինչպէս որ շատերն անում էին այդպիսի դէպքերում,—և չեմ էլ իմանում թէ ինչի համար լաց չեղայ, բայց այդ դժբաղդ օրում իմ երեսին հասած ապտակները ողջ կեանքումս միանդամայն դժբաղդացրին ինձ.... թուաբանութեան և առհասարակ, մատեմատիքայի մէջ։ Գոնէ ես ինքս այսպէս եմ կարծում։ Այդ դժբաղդ օրից յետոյ՝ մինչև մեր դերդաստանի Ախալքալակից դաղթելը, չորս ամբողջ տարի ես ալևս չկարողացայ թուաբանութիւն սովորել։ Ախալցխայում ես մտայ նախ տեղուոյն հոգևոր դպրոցը և աւարտեցի, սակայն թուաբանութեան մէջ միշտ և հանապազ թոյլ և անպէտք եմ եղել։ Եւ ևեթէ մի դասարանից միւսն եմ անցել, այդ եղել է 'ի շնորհս վարժապետների, մանկավարժական խորհրդների և տեսուչների զիջողականութեան և միւս առարկաներում ունեցածս յառաջադիմութեան։

1861 թուականին ես գնացի Թէոդոսիայի Խալիպեան դպրոցը։ Այնտեղ էլ մատեմատիքական առարկաների մէջ իմ

գառաջադիմութիւնը մաղի չափ առաջ չգնաց։ Խալիպեան դպրոցում մատեմատիքան աւանդուում էր Պեաթին աղգանունով մի ուռա պարոն, որ մինչեւ ժամանակ, դպրոցի տեսուչն էլ էր և ամենապատուական մի մարդ և մանկավարժ։ Օրհնուած լինի նրա յիշատակը։ որքան ինձ փայփայում էր, որքան խրախուսում էր, որքան փոփոխում և դիւրացնում էր իւր հարցմունքները ինձ դաս հարցրած ժամանակ։—Բայց... 'իզուր։ Եւ, խեղճ Պեաթին, ինձանից աւելի, կարող եմ ասել, ինքն էր տանջւում և վշտանում հոգեպէս, երբ ես բոլոր ժամանակը արձանի նման գրատախտակի առաջ կանգնած գոյն էի տալիս և գոյն էի առնում։ Շատ յաճախ պատահում էր, որ խաղամիջոցների ժամանակ՝ ընկերներից ծածուկ ես մտնում էի դպրոցի ընդարձակ մթին և խոնաւ ներքնայարկը և ծունր չոքած ամենամեծ ջերմեռանդութեամբ աղօթում էի Աստծուն որ ինձ սրամտութիւն պարգեւէ։—Սակայն այս միջոցն էլ չէր օգնում։ Եւ եթէ Խալիպեան դպրոցում ևս ես փոխում էի դասարաններս՝ այդ լինում էր բացառապէս, տեսչի (Պեաթինի) և վերատեսչի (Դաբր. վարդապետ Այվազեանի) բարեհաճութեամբ, որոնք արդէն շատ լաւ իմանում էին, որ մատեմատիքայի մէջ ես մի անուղղելի բթամիտ եմ։

Է.

Բաւական չէ, որ տէր Սիմոնը աւանդելու որեւէ մէթոդ չունէրմ՝ այլ նա, միևնոյն ժամանակ, շատ բարկացկոտ մարդ էր։ Ուստի և ամեն մի դատարկ բանի համար՝ թակում էր մեզ, աշակերտներիս։ Ապտակ, «թաթ» կամ քանոնով ձեռքերի խփել, երբեմն նաև «փալախկայ» տալ՝ ս. Խաչ եկեղեցու աւագերէցի սովորական պատիժներն էին։ Եւ ամեն անգամ, երբ այս կամ այն չարաճճի (դու հասկացիր աշխոյժ և կենդանի) աշակերտը թաթ կամ փալախքայ էր ուտում, տէր Սիմոնը՝ քիթն ընկած ձայնով՝ անդադար կրկնում էր «օրհնեալ է վայտն, որով լինի արդարու...»։

—Խեղճ խաչափայտ, սիրոյ և համբերութեան «ով սուրբ քառաթեւ» *) քո անունով որքան չարութիւններ և դահճութիւններ են գործուել աշխարհիս երեսին։

Բնական է, որ տէր Սիմոնի նման մանկավարժներն՝ իրանց սաների կողմից սէր չէին կարող վայելել։ Եւ մենք ոչ միայն նրան չէինք սիրում, այլ և ատելով ատում էինք։ Եւ չնայած, որ սաստիկ վախենում էինք տէր հօրից, չնայած որ, սովորութեամբ արդեօք կամ բնաղդմամբ իմանում էինք, որ դէպի հոգևորականը՝ պէտք է յարգանքով վերաբերուել. այնուամենայնիւ յարմար առիթը եկած ժամանակ, երբ տէր

*) Նարական։

հայրն ուշ էր մտնում դպրոցն, կամ զանգակից առաջ հեռանում էր, աշակերտներից շատերը, երբեմն ամբողջ դասարանը, սկսում էինք տեր հօր «տնպզը տալ։ Մեզանից մինը՝ իւր աչքն էր շլացնում, միւսը քնթիցն էր խօսում, երրորդը՝ մի այլ ծամածռութիւն էր անում և այլն և այլն։

Այստեղ ես պէտք է ընթերցողին յայտնեմ հետեւեալը։ Այդ ժամանակներումը՝ Ախալքալաքի փողոցների մանուկների բերանում՝ մի երգ էր պտտւում։ Դա մի պասկվիլ էր, որ, ինչպէս վերջերում իմացուեցաւ, լոքինուած էր յատկապէս տէր Սիմոնի վրայ, որ այլ էր Փողոցային մանուկների բերանից՝ պասկվիլը անց էր կացել դպրոցի աշակերտների բերանը։ Գոնէ մեր դասարանի աշակերտներից շատերն ամբիր իմանում էին։ Իմացողների թւում ես էլ կայի։ Մի օր, երբ տէր Սիմոնը դեռ դասատուն չէր մտել, ես բարձրացայ ուսուցչի աթոռի վրայ և սկսեցի դիրիժօրի պաշտօն կատարել։ Եւ այսպիսով, ամբողջ դասատունը, իմ ղեկավարութեամբ, կամացուկ ձայնով սկսեցինք երգել՝

«Ախալքալաք, տէր Սիմոնդ
Զայն ինպէ ընդ Սիմոնդ
Գնուֆթան ուտէ ընդ քիմոն...

Եւ ահա յանկարծ դուռը բացւում է և... խեղճ քահանայ, պատն ի վեր արձանացած, զունատւում, դալրոյթիցը սկսում է դողդողալ։ Ես «փալախկայի» ենթարկուեցի, ութ ուրիշ աշակերտներ՝ «թամթի», իսկ մնացեալները առանց ճաչի։

Այս անցքից յետոյ՝ տէր Սիմոնը միշտ խէթ աչքով էր նայում ոչ միայն իմ, այլ և հօրս վրայ, որ արդէն իւր ստորադրեալն էր։ Եւ, ինչպէս յետոյ կը տեսնենք, իմ այս վարմունքի պատճառաւ՝ հայրս զրկուեցաւ իւր պաշտօնից, որ իմ միջոցաւ էր ստացել։

ՍԳԻՇԷ Գ. ԴԵՂԱՄԱՆԱՆՑ

(Վերջը միւս համարում)։

ԱԻԵՏԱՐԱՆ

Եղբայր իմ, թէ քեզ ճնշում են հոգսերը
Եւ հոգոյդ տիրում մրրիկ տրտմութեան,
Եւ դառն կարօտ ու եռուն իղձեր
Կրծքիդ տակ ծփում սեւ ալեաց նման.

Եւ թէ մենաւոր՝ լռիկ անկիւնում
Շուրջդ է խաւար. դու ինչպէս լալկան
Ս'իշտ անմխիթար արցունք ես քամում.
Ողբում մանկութիւն եւ գիրկ մայրական:

Կամ՝ ճշմարտութեան համար հալածուած
Սիրտդ վշտալի ու միտքդ վարան,
Սէր ես որոնում, լինել ափոփուած,
Կարդա՝ ամեն ժամ տուրք Աւետարան:

ԵՍ ՑԾՈՒՆԻ





Մ. Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎ

Պրոֆ. Պ. Վ. Վլադիմիրովի։

Միխայիլ Վասիլևիչ Լոմոնոսովն առաջին ռուս նշանաւոր բանաստեղծն ու գիտնականն էր։ Նա առաջին ռուս մարդն էր, որ իրաւամբ կարող էր դասուել եւրոպական գիտնականների շարքը իր բազմատեսակ, բազմաթիւ ու բնատիպ աշխատանքներով, որոնք նուիրուած էին բնաբանութեան, քիմիային, մետաղագործութեան, մեքենագիտութեան և այլն։ ԺԸ դարի առաջնակարգ գիտնականներն, ինչպէս՝ Էյլեր, Ռիխ և այլք Լոմոնոսովի տաղանդին ու աշխատանքներին արժանաւոր գնահատութիւն էին տալիս։ Ժամանակակից ռուս գիտնականները Լոմոնոսովի գործերի մէջ տեսնում են բնաբանութեան մասին արտայայտած լուսաւոր մտքեր, որոնք կանխում են իրանց դարը։ Բայց Լոմոնոսովը ժամանակի պայմանների ստիպմամբ չէր կարող իրան ամբողջովին նուիրել գիտութեան, և գլխաւորապէս հանդիսանում է իբր բնաբանութեան նշանաւոր ընդհանրացնող։

Լոմոնոսովի գլխաւոր ծառայութիւնը ռուս գրական լեզուն մշակելն է. այս կողմից նա «ռուս նոր գրականութեան հայրն է»։ Բացի արձակ ոճը՝ գիտական հեղինակութիւնների համար, նա ստեղծեց նաև բանաստեղծական լեզուն, գլխաւորապէս իր ձօներով։ Նա տուեց նաև լեզուի և բանաստեղծութեան տեսութիւն՝ առաջին ռուս քերականութեան ու ճարտասանութեան մէջ, որ ինքն էր գրել։ Համարեա մի ամբողջ դար այդ տեսութիւնը տիրապետում էր ռուս գրականութեան մէջ և նրա անունով էր դարձեալ, որ ԺԹ դարի սկզբում մեծ բանակռիւ սկսուեց Շիշկովի հետեւողների և Կարամզինի ու նրա նորասէր դպրոցի միջև։ Աւելի նշանաւոր փոփոխութիւններ ռուս լեզուն կրեց Պուշկինից յետոյ, որը չէր ընդունում Լոմոնոսովի արձակ ոճի «կէս սլաւ, կէս լատին» կազմն «մի-օրինակ ու ճնշիչ ձևերը»։

Լոմոնոսովի արած փորձերը դիցաբանություն, ողբերգություն ու պատմագրության մեջ աւելի նուազ յաջողություններ ունեցան և նա դեռ ևս իր կենդանության ժամանակ առաջին տեղն այդ կողմից թափուած էր ուրիշներին զիջելու։ Լոմոնոսովի գրական փառքի ստեղծողը նրա ձոները եղան, որոնց մէջ նա հանդիսանում է եւրոպական կեղծդասական ուղղության հետեւող։ Որպէս աղգային բանաստեղծ Լոմոնոսովն իր ձոների մէջ ցոյց տուեց հզօր և արտալայտիչ լեզու, յաճախ ճշմարիտ բանաստեղծական ոգեորություն, որ նրա մէջ ծնում էին բնության մեծ երևոյթները, գիտությունը, ժամանակակից պատմության փառաւոր դէպքերը, մասնաւորապէս Պետրոս Մեծի գործունեությունը և վերջապէս հայրենիքին փառաւոր ապագայ երազելը։ Որպէս անպայման հայրենասէր, Լոմոնոսովը «հայրենիքի սիրո, հոգմար» չէր խնայում ոչ ուժ, ոչ ժամանակ։ Բազմաթիւ ծրագիրների և նամակների մէջ նա որպէս հրապարակագիր և հասարակական գործիչ յայտնում էր իր մտքերը ռուս լուսաւորության զարգացման մասին և իբրև ժողովրդի հարազատ որդի, նրա բարեկեցությունը բարձրացնելու միջոցներ էր առաջարկում։ Ժամանակակիցները նրան անուանում էին «առաջին մեծության աստղ», «մեծ մարդ», «փառապանծ քաղաքացի»։ Պուշկինը չընդունելով հանդերձ նրա արձակ ոճը, Լոմոնոսովի նշանակության մասին ասում է հետեւեալը. «Մեծ մարդ էր Լոմոնոսովը. Պետրոս մեծից մինչև Կատարինէ II-ը նա է միակ մարդը լուսաւորության նախանձախնդիր։ Նա ստեղծեց ռուս առաջին համալսարանը. կամ աւելի լաւ է ասել, նա մեր առաջին համալսարանն էր»։

Լոմոնոսովը ծնուեց Արխանգելսկի նահանգում, Խոլմոգորու մօտերքը գտնուող Դենիսովկա գիւղում 1711 թ.։ Նրա հայրը մի ունեւոր գիւղացի էր, իսկ մայրը սարկաւագի աղջիկ։ Լոմոնոսովի հայրը թէ հող ունէր և թէ նաւակներ, և պարապում էր ձկնորսությամբ ու ապրանք փոխադրելով, որի համար հեռաւոր ծովային ճամբորդություններ էր անում։ Այդ ճամբորդություններին մասնակցում էր նաև պատանի Միխայլօն, որ լեռոյ այնքան ոգեորությամբ էր լիշում իր գիտնական ու քերթողական գրուածքներում հիւսիսային ովկիանոսը, Սպիտակ ծովը, նրանց ափերի բնոյթը, ծովի կեանքն ու հիւսիսափայլը։ Նրա գրական գործունեության վրայ մասամբ նը։ կատելի է և ժողովրդական բանահիւսության ազդեցությունը, որ այնքան դիմացկուն կեանք ունի Ռուսաստանի հիւսիսում։ Լոմոնոսովի թէ քերականության, թէ ճարտասանության և թէ բանաստեղծական երկերի մէջ մենք գտնում ենք այդ ազդեցության հետքերը։ Դեռ Սումարոկովը *) յանդիմանում էր Լոմոնոսովին «Խոլմոգորի» բարբառը գործ ածելու համար։

*) Նրա ժամանակակից աչքի ընկնող գրողներից մէկն է։ Մ. Թ.

Դեռ հայրենի գիւղումն էր նա, որ լսեց Պետրոս մեծի մասին և միաժամանակ սնուեց եկեղեցական-սլաւ մատենագրութեան ոգով որով ապրում էին Սպիտակ ծովի ափերն ապաստանած ռուս «հնադէս» (старообрядцы) կոչուած աղանդաւորները։ Մասամբ այդ մղումով էլ իր մօր ազդեցութեան տակ Լոմոնոսովը կարդալ-գրել սովորեց և ընթերցասիրութեան վարժուեցաւ։ Բայց Լոմոնոսովի մայրը չուտ մեռաւ, իսկ իւրի մայրը չէր սիրում նրա պարապմունքները։ Ինչպէս ինքն է պատմում մի նամակում, նա «ստիպուած էր կարդալ ու սովորել ինչ որ հնարաւոր էր, առանձնացած ու ամայի տեղերում, դիմանալով քաղցի ու ցրտի»։

Մի քանի գրագէտ գիւղացիներ մերձակայ գիւղից, որոնցից մէկը գործակատար էր Մոսկուայում, Լոմոնոսովի համար գրքեր էին բերում. այդ գրքերից նա մասնաւորապէս ծերեց Միլետի Սմոտրիցկու քերականութիւնը, Սիրէոն Պոլոցկու վանկաչափով գրած Սաղմոսը և Մագնիցկու թուաբանութիւնը։ Այդ նոյն գիւղացիներն էին, որ 1730 թ. օգնեցին Լոմոնոսովին դնալու Մոսկուա «գիտութիւններն սովորելու համար և վճարում էին նրա գլխաւարկը. նկատելու արժանի է, որ 1732 թուին նա հարկերի դրքում փախած է լիչւում։

Երկար թափառելուց յետոյ վերջապէս նա ընկաւ Մոսկուայի «սլաւ-լատինական» ճեմարանը կամ «դպրոցը», որտեղ դաս էին աւանդում Կիևի հոգևոր ճեմարանի սաները։ Այստեղ ուսումնասիրեց լատին լեզուն, պոլէմիկան, ճարտասանութիւնը և մասամբ փիլիսոփայութիւնը։ Այդ առաջին դպրոցական շրջանում վարած կեանքի մասին նա այս է գրում Ի. Շուվալովին 1753 թ. «Օրական ստանալով մի ալտին (3 կ.) ես չէի կարող ուտելու համար աւելի ունենալ, քան մի դենեժկի հաց և մի դենեժկի կուաս՝ Այս կերպ ես ապրեցի 5 տարի և ձեռք չքաշեցի գիտութիւններից» (1731—1736)։

Ենթադրում են, որ այդ շրջանում Լոմոնոսովը մի կարճ ժամանակ եղել է Կիևի ճեմարանում, թէև նրա դիւանում ոչ մի հետք չի մնացել Լոմոնոսովի մասին։ Դնեպր գետի ափերի նկարագրութիւնը «Իդիլիա Պոռֆիտոր» դրուագքում վկայում է այն կենդանի տպաւորութիւնների մասին, որ ստացել է նա «խաղաղ Դնեպրից», «որի մէջ արտացոլում են նրա դիք ափերին խիտ-խիտ բուսած ուռիները»։ բանաստեղծը լիշատակում է եղնտրին, սոխակին, հովուի սրինգը, Դնեպրի ժէռատները և այլն։

Դեռ ես Մոսկուայի ճեմարանումն էր, որ Լոմոնոսովը սկսեց ոտանաւորներ գրելը։ Կասկած չկայ, որ Մոսկուայի ճեմարանում ուսած պոլէմիկան ու ճարտասանութիւնը նշանակութիւն ունեցան Լոմոնոսովի զարգացման համար, օգնելով նրան իւր բանաստեղծի և ճարտասանի. բայց նա գլխաւորապէս պարտական է արտասահմանում ստացած կրթութեանը։

Մի բնաստեղծ դիպուած որոշեց Լոմոնոսովի վիճակը։ 1735 թ. Պետերբուրգի գիտութեանց ակադեմիան 12 ընդունակ աշակերտ պահանջեց Մոսկուայի Հեմբրանից։ Դրանցից մէկը Լոմոնոսովն էր, որ երկու ուրիշ ընկերների հետ 1736 թ. սեպտեմբերին ճանապարհ ընկաւ Գերմանիա, Մարբուրգի համալսարանը այն ժամանակները «հռչակաւոր պրոֆ. և լատնի փիլիսոփայ» Ոլֆի մօտ։ Ոլֆի առաջնորդութեամբ Լոմոնոսովը պարապում էր մաթեմատիկայով, բնագիտութեամբ և փիլիսոփայութեամբ, իսկ ապա՝ Ֆրայբուրգում պրոֆ. Հենկելի մօտ նաև քիմիայով և մետաղագործութեամբ—ընդամենը հինգ տարի։

Նրա առաջնորդները գովասանական կարծիքներ լատնելով նրա պարապմունքների մասին, միաժամանակ գրում էին նաև նրա վարած անկարգ կեանքի մասին։ Այդ կեանքին Լոմոնոսովը վերջ դրաւ Մարբուրգում, երբ պրպակուեց Եղիսաբէթ-Քրիստինա Ցիլխի հետ, որ քաղաքային խորհրդի հանդուցեալ անդամի աղջիկն էր։ Նրա վարած անկարգ կեանքը, քէֆերը, պարաքերը, մի քաղաքից մի ուրիշ քաղաք տեղափոխուելը, ոչ միայն Լոմոնոսովի յափշտակուող բնաւորութեան հետեանք էին, այլ և համապատասխան էին այն ժամանակուայ ուսանող երիտասարդութեան ընդհանուր բնաւորութեանը։

Նոյն գերմանական ուսանողութեան մէջ էր, որ Լոմոնոսովը տեսաւ այնպիսի յափշտակութիւն բանաստեղծութիւնով, որ արտայայտուեց 1738 և 1739 թ. արտասահմանից գիտութեանց ակադեմիան ուղարկած նրա երկու ձօնների մէջ.—մէկը՝ «Ֆենելոնի ձօնը», միւսը «Զօն Խոտինը առնելու առթիւ»։ Այս երկրորդ ձօնին նա կցել էր նաև մի նամակ «Ռուս բանաստեղծութեան կանոնների մասին»։ Չնայած այն ահագին նշանակութեան, որ այդ երկու ձօնն ունին ռուս բանաստեղծութեան զարգացման համար, իրանց ժամանակ նրանք լոյս չտեսան. և միայն ծառայեցին գիտութեանց ակադեմիայի աչքում որպէս ապացոյց Լոմոնոսովի գրական ընդունակութիւններ ունենալուն։

«Խոտինը առնելու առթիւ» գրած ձօնից ու նրան կցուած նամակից սկսում է ռուս նոր բանաստեղծութեան պատմութիւնը։ Ունենալով աւելի մեծ բանաստեղծական տաղանդ քան Տրեդիակովսկին, որ իրանից առաջ հանդէս էր եկել տնտիպական չարակազմութեան տեսութիւնով, Լոմոնոսովը ցոյց տուեց թէ որքան «անհիմն» է Լեհաստանից ռուսներին անցած սիլաբիական չարակազմութիւնը և առաջարկեց իր տաղաչափութիւնը, որ հիմնուած էր ռուս լեզուի յատկութիւնների և չեշտերի ուժի, և ոչ թէ երկար ոչ կարճ վանկերի վրայ։ Ուշադրութեան արժանի հանգամանք է այն, որ Լոմոնոսովն հէնց այդ առաջին փորձով հանդիսանում է ոչ թէ յանդգնութեան երկրպագու, այլ բանաստեղծական բա-

ռերի ընտրութեան ու նշանակութեան և ռուս լեզուի հարըստութեան վրայ մատնացոյց անող։

Զննաղան ձախորդ արկածներից յետոյ (նրան առնում են, գերմանական զինուոր անուն, փախչում է Վեղել քերդից) Լոմոնոսովը 1741 թ. վերադարձաւ Պետերբուրգ։ Նոյն թուականի «Примѣчаніе къ Петербургскимъ Вѣдомостямъ», թերթում լոյս տեսաւ նրա «Զօն ի հանդիսաւոր տօնախմբութիւն ծննդեան կայսեր Իօանն Ш-ի» և «Առաջին տրոֆէյք» նորին մեծութեան Իօանն Ш-ի չնորհիւ Շուէդացոց վրայ տարած փառաւոր յաղթութեան». այդ երկու ձօնն էլ այժմ շատ հազուագիւտ բան են, որովհետև նրանց էլ ոչնչացրին այն ամենի հետ, ինչ վերաբերում էր ԻօաննՂ Անտոնովիչ կայսեր ժամանակին։

Զնայած իր գրած ձօներին և բազմաթիւ զբաղմունքներին Լոմոնոսովը ոչ պաշտօն էր ստանում, ոչ ռոճիկ։ Միայն երբ 1742 թ. գահ բարձրացաւ Եղիսաբէթ կայսրուհին նրան ակադեմիայում բնագիտութեան ադիւնկտի պաշտօն տուին։ 1743 թ. Լոմոնոսովն սկսում է չափերի վերածել Դանիի սաղմոսներից մի քանին և գրում է իր լաւագոյն երկու ձօնը. «Երեկոյեան խորհրդածութիւն Աստծու մեծութեան մասին» և «Առաւօտեան խորհրդածութիւն Աստծու մեծութեան մասին»։

Այդ նոյն տարին Լոմոնոսովն իր յանդգնութիւնների համար, ինչպէս նաև ակադեմիկներին չենազանդուելու և հարբած ժամանակ գերմանացի պաշտօնակիցների հետ յաճախակի կռիւների համար եօթ ամիս «պահակի հսկողութեան տակ պահուեց» և ամբողջ տարին մնաց անռոճիկ։ Երբ նա խնդրեց, որ իրան ապրուստի միջոց տան, նրան թոյլ տուին ակադեմիայի հրատարակութիւններից 80 ր. արժողութեամբ գիրք վերցնել։ Խնդիր տալով, որ իրան քիմիայի պրոֆեսոր նշանակեն, նա չի դիշատակում իր ձօները, այլ միայն խօսում է «լատիներէնից, գերմաներէնից ու ֆրանսերէնից արած բնագիտական, մեքենագիտական և քերթողական գրքեր թարգմանելու, լեռնագիտութեան գիրք ու ճարտարանութիւն հեղինակելու մասին, դիշում է ուսանողներին դասաւանդելն ու քիմիական նոր փորձեր գտնելը»։ Լոմոնոսովի քիմիայի պրոֆեսոր նշանակուելն ու կնոջ արտասահմանից դալը միաժամանակ եղաւ։ Այդ ժամանակից սկսած Լոմոնոսովի կեանքն անցնում է աւելի ապահով ու հանգիստ գիտական աշխատանքների, դրական զբաղմունքների և լաւագոյն հասարակական յարաբերութիւնների մէջ։

1745 թ. Լոմոնոսովն աշխատում է ռուսերէն հրապարակական դասախօսութիւններ կարդալու իրաւունք ձեռք բերել, իսկ հետեւեալ տարին հոգում է թոյլտուութիւն ստանալ հոգևոր դպրոցներից ուսանողներ հաւաքելու—թարգմանական գրքերը շատացնելու, բնական գիտութիւնները գործադրելու և ուրիշ նպատակների համար։ Ոչ միայն բնագիտութեան թարգմանու-

թեան յառաջաբանում Լոմոնոսովը որոշ և հասկանալի ձևով պատմեց այն յաջողութիւնների մասին, որ ունեցան բնական գիտութիւնները ԺԷ և ԺԸ դարում։ Դա մի կատարեալ նորութիւն էր ռուս լեզուի համար, որ գիտական տերմիններ չունէր և որոնց պիտի ստեղծէր Լոմոնոսովը։ Գիտութեան ժողովրդականացնելը արտայայտուեց նաև Լոմոնոսովի ակադեմիական ճառերում քիմիայի օգտակարութեան մասին և այլն։ Սկսուած 1747 թուից Լոմոնոսովը բացի հանդիսաւոր ձօները, պարտաւոր էր տոնական վերտառութիւններ կազմել հրաւառութիւնների ու հրախաղութիւնների, նաւերն առաջին անդամ ջուրը թողնելու և դիմակահանդէսների առիթով, և մինչև անգամ պատուէրով ողբերգութիւններ գրել, այսպէս օրինակ «Թամիրան և Սելիմը», 1750 թ. և «Դեմոֆոնտը» 1752։ Նոյն թուին Եղիսաբէթ կայսրուհու ակադեմիային տուած նոր կանոնադրութեան ու նոր պաշտօններ հաստատելու առիթով, Լոմոնոսովը գրեց իր նշանաւոր ձօներից մէկը, որ սկսւում է այս յայտնի շարքերով. «Օ դու, երկնաւոր թագաւորների և թագաւորութիւնների խնդութիւն (սիրելի խաղաղութիւն, դու, բաղդաւորութիւն գիւղերի և պահապան քաղաքների, որքան օգտակար ու գեղեցիկ ես»։ Այս ձօնի մէջ էր, որ բանաստեղծը գովքեր երգեց իր իդէալին, իր կուռքին—Պետրոս Մեծին пославъ въ Россію чеповѣка և միանգամայն նաև գիտութիւններին—«Աստուածային, մաքրագոյն մաքի այդ պտուղներին»։ Այդ ձօնի վերջին տուներից մէկում Լոմոնոսովը բացականչում է «Օ դուք, որոնց սպասում է հայրենիքն իր խորքերից»—դիմելով ապագայի արդիւնաւոր զաւակներին։ Այս ձօնի մէջ հին դասական ձևերից մի քանի բան կայ վերցրած, այդ նոյն տարին նա չափական թարգմանութիւններ էր անում դասական հեղինակներից։

Միաժամանակ Լոմոնոսովը պարապում էր բնագիտութեամբ ու քիմիայով՝ շարունակելով իր գիտական զբաղմունքները, և լատիներէն դիսերտացիաներ էր տպագրում, որոնք ջերմ քաջալերութեան էին արժանանում արտասահմանի այն տեսակ գիտնականների կողմից, ինչպէս օրինակ Բերլինի ակադեմիկոս Էյլերը։ Նոյն այդ Էյլերի ուշադրութեան չնորհիւ Լոմոնոսովը վերջապէս կարողացաւ գլուխ բերել քիմիական վերլուծարանի հիմնարկութիւնը։

1748 թ. գիտութեանց ակադեմիային կից հիմնուեցին պատմական դեպարտամենտ և պատմական ժողով. այստեղ Լոմոնոսովը կռիւ մղեց գերմանացի արդիւնաչատ գիտնական Միլլերի դէմ, մեղադրելով նրան թէ գիտմամբ ստորացնում է սլաւոնների, Նեստոր տարեգրողին և ուրիշ ռուս հեղինակաւոր անձանց, գերադասելով միաժամանակ օտարներին։ Նոյն թուականին նա հրատարակեց և ռուս լեզուով լոյս տեսնող առաջին ճարտասանութիւնը, որը կազմելու համար օգտուել էր ոչ միայն լատիներէն հին ճարտասանութիւններից, այլև

և իր ժամանակակից Գոլդշտոյի և Ռիխի դրծերքից։

Լոմոնոսովի գիտական ու գրական վեճերի մեջ խիստ սկզբ կապ կար. նրա լաւագոյն ձօնը «Երեկոյեան խորհրդածութիւնը», որ լիքն է բանաստեղծական ոգևորութեամբ և անկեղծ զգացմունքով, հեղինակի ասելով բովանդակում է իր «վաղուջուայ կարծիքը, որ հիւսիսափայլը կարող է եթերի շարժումից առաջ գալ»։

Թէ ռուս լեզուին և թէ տաղաչափութեան արուեստին Լոմոնոսովը տիրապետում էր աւելի լաւ քան նորա երկու միւս ժամանակակից գրականներին՝ Սրետիակովսկին և Սումարոկովը։ Սրանք շարունակ բանակուի մեջ էին Լոմոնոսովի հետ, վէճ բանալով լեզուի, ոճի և գրականութեան մասին։ Երբեմն այդ վէճերը ժամանակի սովորութիւնների համեմատ արտայայտւում էին կոպիտ ձևով. բայց Լոմոնոսովը միշտ յաղթող էր դուրս գալիս։

1749 թ. ակադեմիայի հանդիսաւոր ժողովում Լոմոնոսովն արտասանեց «Գովաբանութիւն կայսրուհի Եղիսաբէթ Պետրովնային», որի մեջ ինչպէս իր ձօներում, փառաբանում էր Պետրոս Մեծին և գիտութիւնները՝ նրանց գործադրութեան կողմից օգուտ և ի փառս Ռուսաստանի։ Կայսրուհուն տուած գովաբանութիւնը պալատի ուշադրութիւնը դարձրեց Լոմոնոսովի վրայ. և պատճառ դարձաւ ակադեմիայում բաւականին թշնամիներ վաստակելու։

Մօտ 1750 թ. Լոմոնոսովը գտաւ մի «պատրոն», հովանաւոր. դա կայսրուհուն սիրելի Ի. Շուվալովն էր, որին բանաստեղծը մի քանի անկեղծ նամակ գրեց արձակ ու չափով, գնահատելի ինքնակենսագրական նշանակութիւն ունեցող։ Նամակներից մէկում Լոմոնոսովն ասում է իր մասին. «Միտքդ բերր, որ իմ ոգին հանգիստ չունի. միշտ իմ ջանքն ու աշխատանքը։ Կեանքս անցնում է պատերի մեջ ու կրակի մօտ. և միակ վայելչութիւնս ամառուայ մասին գրելն է. գրում եմ ամառուայ մասին, բայց ամառ չեմ վայելում. և վայելչութիւնս անրջելու մեջ եմ միայն որոնում»։ Այդ ժամանակները Լոմոնոսովը յատկապէս պարապած էր մոզաիկի և կեղծ մարգարտի և ապակու գործարանի վրայ։

Առաջին անգամ 1751 թ. նա լոյս ընծայեց իր հեղինակութիւնները. «Հաւաքածու զանազան հեղինակութեանց արձակ և չափածոյ»։ Ակադեմիայի նախագահի հրամանով Լոմոնոսովը գրեց «ճառ քիմիայի օգտակարութեան մասին» (1754 թ.)։ Ճառն սկսւում է մի շարք ապացոյցներով. որոնք հաստատում են Եւրոպացիների «ուսման գերազանցութիւնը» թափառաշրջիկ ամերիկացիների վայրենութեան հետ համեմատած։ Ապա նա խօսում է մաթեմատիկայի կարևոր նշանակութեան մասին քիմիայի նկատմամբ և գիտութեան ապագայ սպասելիք արդիւնքների մասին. այդ «ճառը» ինչպէս և դրան յաջորդող միւս ճառերը ցոյց են տալիս Լոմոնոսովի ինքնուրոյն փորձ-

նական այլաբանքները «գունավորություն» լայնածավալ ապարիզում. այդպես են «Նլեքտրական ուժից առաջ եկող օդային երևույթների մասին» (1755). «Լույսի ծագումը, որ նոր տեսություն է ներկայացնում գույների մասին» (1456.) մետաղների ծնունդը երկրի ճեղքվելուց» (1757). «Ծովային ճանապարհի մեծ ճշտության մասին» (1759) «Արուսեակի երևույթը արևի վրայ նկատած» (1761)։ Ուշադրության արժանի է Լոմոնոսովի խոսելու ձևը, վերացական գիտական գաղափարներից առօրեայ կեանքին, մանաւանդ ռուս կեանքին անցնելը։ Ամեն տարի Լոմոնոսովը ակադեմիայի հրատարակությունների մէջ լույս էր ընծայում լատիներէն դիսերտացիաներ։

1753 թ. Լոմոնոսովը մենաշնորհ ստացաւ ապակու և կեղծ մարգարտի գործարան հիմնելու. դրա հետ նա ստացաւ հող և 211 ճորտ։ Այդ ժամանակներն էր անա, որ նա գրեց իր նշանաւոր խրատական ոտանաւորը. «Նամակ ապակու օգտակարության մասին», ուղղուած Շուվալովին։ Այս նույն Շուվալովի միջոցով Լոմոնոսովը հնարաւորություն ունէր կարևոր ծրագիրներ ընդունել ապրու և իրագործելու. այսպէս էր օրինակ 1755 թ. ռուս առաջին համալսարանի հիմնարկությունը Մոսկուայում, որի համար Լոմոնոսովը կազմեց մի նախագիծ, հիմնուելով արտասահմանի համալսարանների «հիմնարկության, օրինաւորման, ծէսերի և սովորության» վրայ։ 1753 թ. նրան երկար ժամանակ զբաղեցնում էր եղեքտրականության հարցը, որ կապ ունէր պրոֆ. Ռիխմանի դժբախտ վաղճանի հետ, որին սպանել էր կայծակի հարուածը եղեքտրական մեքենայով փորձ արած ժամանակ։ Լոմոնոսովը գրում է Շուվալովին, որ Ռիխմանի ընտանիքին թոշակ նշանակուի և կցում է թէ «այս դէպքը թող չմեկնուի ի վնաս գիտությունների բարգաւաճման։

Լոմոնոսովի «Ռուս քերականությունը» լույս տեսաւ 1755 թ. և տասնեչորս տպագրություն ունեցաւ։ Չնայած որ այս քերականությունը հիմնուած է Սմոտրիցկու քերականության վրայ, որով նա սնուել էր, բայց և այնպէս այն ժամանակուայ համար նա շատ ինքնուրոյն բան ունէր իր մէջ։ Լոմոնոսովն արդէն տասը տարբերում է ձայնից և իբր բնավորձ ձայների ծագումը որոշում էր անդամահատական—բնախօսական և ձայնաբանական տեսակէտով, խօսում է ռուս լեզուի երեք բարբառների մասին, այն է՝ Մոսկուայի, հիւսիսի և Ուկրայնի, հնչաբանօրէն ներկայացնում է հնչիւնների արտաբերությունը բառերի մէջ։ Օրինակները շատ անգամ նա իր կեանքից է բերում, օրինակ՝ «բանաստեղծելն իմ զուարճությունն է, բ'ադիտությունն իմ վարժությունները»։

Մի տարի լեռոյ նա պաշտպանում էր ռուս ստորին դասի իրաւունքը դիմնազներում ու համալսարանում կրթուելու, որին ընդդէմ էր Միլլերը։ Զարմանքի արժանի է Լոմոնոսովի փառակությունն ու արիությունը, եթէ աչքի առաջ ունենանք

որ նա շատ անդամ նեղն է ընկել ենթարկուած ծանր մեղադրանքներից։ Իր «Օրհներգ մօրուքին» գրուածքը առիթ տուեց շատ կոպիտ յարձակումների Տրետեակովսկու և ուրիշների կողմից։

Մոսկուայի նոր հիմնած համալսարանի տպարանից 1757 թ. Ի. Շուվալովի ձեռնտուութեամբ լոյս տեսան Լոմոնոսովի շարադրութիւնները հեղինակի պատկերով, որի մէջ առաջին անդամ տպուեց նրա դատողութիւնը «Եկեղեցական գրքերի օգտակարութեան մասին»։ Այս դատողութիւնը տեսականապէս պարզում էր այն, ինչ որ գործնականապէս իր ամբողջ կեանքի ընթացքում արել էր Լոմոնոսովը, սկսած իր առաջին գրական փորձերից.—նա պարզում էր ռուս գրական լեզուի ստեղծելը։ Եկեղեցական լեզուով գրած գրականութեան մէջ Լոմոնոսովը շատ «անհասկանալի» տեղեր էր գտնում, որ առաջ էին եկել թարգմանութեան մէջ «սլաւ լեզուին օտարոտի յունական յատկութիւններ» մտցրած լինելու պատճառով։ Ժամանակակից ռուս գրականութեան մէջ նա նկատում է «վայրենի և տարօրինակ բառեր», որ մտել են օտար լեզուներից։ «Ռուս մաքուր լեզուի» տեսութիւնը նա հիմնեց եկեղեցական-սլաւ լեզուի և ռամկական ռուսերէնի ձուլման վրայ, ընդունելով իբր պիտանի ռամկօրէն բացառապէս Մոսկուայի բարբառը։ Իր «Դատողութեան» մէջ Լոմոնոսովը ընդհանրապէս ընդունում էր ռուս լեզուի և եկեղեցական-սլաւերէնի մերձաւորութիւնը և նրա կարծիքով ռուս բարբառներն իրար աւելի մօտ էին քան թէ գերմանական բարբառները և այլն։

Իր ուսմունքը ոճերի մասին, Լոմոնոսովը հետևեալ հիմքերի վրայ էր դնում. պէտք է տարբերել ռուս լեզուի բառերը՝ 1) բառեր, որ գործածական են թէ եկեղեցական-սլաւ և թէ ռուս լեզուում, 2) մատենագրական (հին) բառեր, բացի չափազանց մաշուածներն ու չգործածուողները և 3) ռամկական բառեր, բացի «զզուելի և ստոր» բառերը։ Սրանցից Լոմոնոսովը կազմում է իր երեք ոճը. «բարձր» ոճ, կազմած սլաւ-ռուսական բառերից՝ դիւցազներգական քերթուածներ, ձօներ և բարձր նիւթերի մասին արձակ ճառեր կազմելու համար, «միջին» ոճ, «ոչ վերասլաց և ոչ էլ ստոր»—եկեղեցական-սլաւ և ռուս բառերից կազմած՝ բարեկամական չափածոյ նամակներ, երգիծանքներ, էկլոգներ, եղերերգեր և նկարագրական արձակ կազմելու համար։ Եւ «ստորին» ոճ, կազմուած միջին ոճի և ռամկական «ստոր բառերի» միացումից՝ կատակերգութիւններ, էպիգրամներ, երգեր, արձակ բարեկամական նամակներ ու «առօրեական գործեր գրելու համար»։ Լոմոնոսովի ոճաբանական այս տեսութիւնն էր ակա, որ նրա գրական լեզուի համաձայնական ղէնքի հետ միացած՝ ստեղծեց ԺԸ դարի ռուս գրական լեզուն—այսինքն բանաստեղծական, ճարտասանական և արձակ ոճը։

Թէ որքան յարգում էին բանաստեղծին նրա ժամանա-

վակիցներն ու հովանաւորներն, ինչպէս օրինակ Շուվալովը, երևում է սրա հեղինակած չարքերից, որ դրուած են Լոմոնոսովի պատկերի տակ 1757 թ. հրատարակութեան մէջ. «Մոսկուայի Պառնասն ալտոեղ պատկերացնում է այն առաջնորդին, որ բպնաստեղծական ու արձակ մաքուր ոճ բերեց Ռուսաստանը, ինչ որ Կիկերոնն ու Վիրգիլիոսն էին Հռոմում, նա ինքը միայնակ ամփոփել է իր մէջ բնութեան տաճարը նա բացարաւ ռուսների հարուստ լեզուով, նրանց (ռուսների) դիտութիւնների մէջ ունեցած չնորհքի ապացոյցը—Լոմոնոսովն է։» Նոյն իսկ նրա թշնամի Սումարոկովն ապագայում ասում էր նրա մասին «նա Մոլիէրն է մեր երկրի, նա նման է Պինդարին»։

Այդ ժամանակները Լոմոնոսովը տեղափոխուեց ակադեմիայի պետական բնակարանից իր սեփական տունը, Մոսկուա։ 1759 թ. նա զբաղուած էր դիմնազ հիմնելով և նրա ու համալսարանի համար կանոնադրութիւն մշակելով. նա բոլոր ուժով պաշտպանում էր ստորին դասի կրթութեան իրաւունքը և հետևել առարկութիւններն անում այն մարդկանց, որոնք ասում էին թէ «ինչ կանենք ուսումնական մարդիկ։» Լոմոնոսովի ասելով դիտուն մարդիկ հարկաւոր են «Սիբիրի համար, լեռնային գործերի, գործարանների, ժողովրդին պահպանելու, ճարտարապետութեան, արդարադատութեան, բարքերն ուղղելու, վաճառականութեան, անարատ կրօնի միութեան, երկրագործութեան և եղանակը դուշակելու, ռազմական գործերի, հիւսիսային ճամբորդութիւնների և արևելքի հետ շփուելու համար»։

Միաժամանակ Լոմոնոսովը պարապում էր նաև աշխարհագրական դեպարտամենտում, Ռուսաստանի մասին տեղեկութիւններ հաւաքելով։ 1760 թ. նա հրատարակեց «Համառօտ տարեգրութիւն ռուսաց, աղդաբանութեամբ հանդերձ» իսկ երեք տարի յետոյ կազմեց «Հին պատմութիւն ռուսաց, սկզբից մինչև մեծ իշխան Յարոսլաւ I-ի մահը կամ մինչև 1054 թ». որ լոյս տեսաւ հեղինակի մահից յետոյ 1766 թ.։ Չնայած որ Լոմոնոսովի պատմութիւնը միտումաւոր գրութիւն է և ճարտասանական ուղղութիւն գէնի, բայց, ռուս հռչակաւոր պատմաբան Ս. Մ. Սոլովեվի կարծիքով, այնտեղ նշանաւոր է հեղինակի օտար աղբիւրներից օգտուելը սլաւների ու Ռուսաստանի մասին գրելիս և այն մօտեցումը, որ նա թոյլ է տալիս հին հեթանոսական հաւատալիքների և ռամկական սովորութիւնների, պարերի ու երգերի միջև։

1760—61 թ. Լոմոնոսովը լոյս ընծայեց իր կիսատ մնացած «Պետրոս Մեծ» դիւցազներգութիւնը։ Չնայած որ ընդհանուր առմամբ այդ երկը մի թոյլ գործ է, բայց նա նշանաւոր է հեղինակի հայրենի հիւսիսի նկարագրութիւնով։ Սումարոկովը առիթից օգտուեց և մի չափածոյ գրուածքով ծաղրեց այդ դիւցազներգութիւնը։ Զուր էր աշխատում Ի. Շուվալովը, մասամբ հանաքի տալով, մօտեցնել ու հաշտեցնել այդ երկու նշա-

նաւոր գրողներին։ Լոմոնոսովը Շուվալովին մի երկար պատասխան-նամակ գրեց, որի մէջ, իր բարձր նշանակութեան ու արժանիքի սովորական գիտակցութեամբ, ասում է. «ոչ միայն անուանի պարոնների կամ որևէ երկրաւոր իշխանի առաջ տխմար չինել չեմ ուզում, այլ և Աստծու առաջ, որ ինձ խելք է տուել»։

Իր գրած մի շարք թղթերում, օրինակ «Գիտութեանց ակադեմիան բարելաւ դրութեան հասցնելու մասին» սա պաշտպանում է այն միտքը, որ «օտար գիտնականները սիրով չեն վերաբերում ռուս երիտասարդներին», նրանց ուսուցանելուն։ Շարունակ խնդիրմատոյց լինելը ընդհանուր ու անձնական գործերի համար՝ երբեմն շատ ծանր էր դալիս Լոմոնոսովին և ահա նա մի ուռանաւոր գրուածքում նախանձում է ճպուռին «որ ոչ ոքից ոչինչ չի խնդրում ու ոչինչ էլ պարտք չէ ոչ ոքի»։ Իսկ նամակներում դանդատւում է, որ շարունակ ստիպուած է «ղլուխ վեր բերել ծառայողներին»։

Իր նշանաւոր նամակներից մէկում, (1761) «Ռուս ժողովուրդը պահպանելու և բազմացնելու մասին», նա հանդէս է գալիս իբր մի նշանաւոր հրապարակագիր։ Զուր չէր, որ նա մի քանի անդամ, թէև անաջող ջանք էր անում լրագիր կամ ամսագիր հրատարակելու իրաւունք ստանալ։ Նա այդ նամակում ասում է, որ անհրաժեշտ է լաւ բժշկական օգնութիւն հասցնել ժողովրդին, որ պէտք է ոչնչացնել նրա մահաբերութիւնը և մեղմել պաս պահելու չափազանց եռանդը, պէտք է տօնական չափից անցնող քէֆերի և անհաւասար ամուսնութիւնների առաջն առնել։ Բացի այս Լոմոնոսովն ի նկատի ունէր չօշափելու հետևեալ հարցերը։ «անդործութեան ոչնչացումը, բարքերն ուղղելը, ժողովուրդն աւելի ևս լուսաւորելը, երկրագործութեան կարգի բերելը, արհեստներն ու ճարտար արուեստները կարգի դնելն ու տարածելը, վաճառական դասի օգուտները, լաւագոյն պետական տնտեսութիւնը և ռազմական արուեստի պահպանութիւնը՝ երկարամեայ խաղաղութեան ժամանակ»։ Նշանակելի է այն հանդամանքը, որ այդ նամակն ամբողջովին լոյս տեսաւ միայն 1871 թ. իսկ մինչև այդ ժամանակը լոյս էր տեսնում խոշոր պակասներով...

Կատարինէ II-ի դահ բարձրանալուց յետոյ Լոմոնոսովը գրեց մի ձօն, որի մէջ նոր կայսրուհուն համեմատելով Եղիսաբէթի կայսրուհու հետ, ասպանում էր, որ Կատարինէ II-ը «Ոսկի դար կէրբերի դիտութեանց համար, և արհամարհանքից կազատի սիրած ռուս ազգին»։ Նոր ձօնների մէջ Լոմոնոսովը գովեստով էր հանդիպում նոր կայսրուհու խոշոր գործերի սկզբնաւորութիւնը Ռուսաստանի լուսաւորութեան ու դաստիարակութեան օգտին։ Այս ձօները խառնւում էին Դերժաւինի ձօներին, որ նոր կայսրուհու փառաբանիչը դարձաւ։ Լոմոնոսովի գրուածներում մենք տեսնում ենք այս տեսակ խօսքեր կայսրուհուն ուղղած. «Նա մեղմացնում է ժողովրդի կոպտութիւնը և բոլորին երանութեան մօտեցնում նորոգած իրաւունքների միջոցով»։

Լոմոնոսովի «Սիբիրի ովկիանոսով Արևելեան-Հնդկաստան գնալու մասին» դրուածքի ազդեցութեան տակ 1764 թ. կազմակերպուեց մի գիտական ճամբորդութիւն Սիբիրի հիւսիսային ափերով։ Նոյն ժամանակները Լոմոնոսովը տպագրեց մետաղագործութեան տարերքը և սկսեց հանքաբանութեան մասին մի աշխատութիւն պատրաստել։

Կեանքի վերջին նա ընտրուեց Ստոկհոլմի և Բոլոնի ակադեմիաների անդամ։ 1764 թ. Կատարինէ II կայսրուհին այցելեց Լոմոնոսովին իր տանը և երկու ժամ նայում էր նրա «մոզային ճարտար արուեստի աշխատանքներին, նրա նոր գտած բնագիտական գործիքներին ու արած մի քանի բնագիտական ու քիմիական փորձերին»։ Հեռանալիս Լոմոնոսովը կայսրուհուն ոսկեայ չնորհակալութիւն մատոյց։ Մինչև կեանքի վերջը նա չէր դադարում իր ծնող ազգականներին օգնելուց, կանչում էր նրանց Պետերբուրգ և նամակագրութիւն էր պահպանում նրանց հետ։ Պահպանուել է նրա քրոջը գրած նամակը մահից մի ամիս առաջ. նա մեռաւ 1765 թ. ապրիլի 4-ին։ Լոմոնոսովի թաղումը Ալեքսանդր Նևսկու լաւրայում փարթամ էր և բազմամարդ։ Նրա թղթերը, կարգի բերելուց յետոյ, պահում էին պալատի սենեակներից մէկում։ Նրա մարմարէ մահարձանը, որ մինչև այսօր էլ կայ, դրել է կանցլեր Գր. Որոնցովը։ Լոմոնոսովը իրանից յետոյ մի աղջիկ թողեց։ Նրանց ցեղը մինչև այսօր էլ կայ, 1825 թ. նրան արձան կանգնեցին Արխանգելսկ քաղաքում, իսկ նրա կիսարձանները դրուած են Մոսկուայի համալսարանի և Պետերբուրգում ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան շէնքի առաջ։

Լոմոնոսովի նշանակութիւնը ԺԸ դարի ռուս գրականութեան մէջ արտայայտուել է ոչ առանձին աչքի ընկնող հեղինակութիւնների և ոչ էլ նրանց ներքին բովանդակութեան մէջ, այլ նրա գործունէութեան ընդհանուր բնաւորութիւնով ու ուղղութեամբ։ Լոմոնոսովը ռուս գրական լեզուի վերափոխիչն էր։ Նրան Պետրոս II-ի հետ համեմատելը, ո՛չ առաջին անգամ 1816 թ անում է Բատիշկով բանաստեղծը՝ իսկ յետոյ աւելի ընդարձակից Բելինսկին—լիովին հիմնաւոր է, քանի որ, Պետրոս Մեծի քաղաքական ալբոմբէն ստեղծելը, որ աշխարհիկ դրականութիւնը բաժանեց եկեղեցականից՝ Լոմոնոսովի դրական լեզու ստեղծելն է յիշեցնում, որ նոր լեզուն բաժանեց եկեղեցական-սլաւերէնից։ Լոմոնոսովի զուտ գրական երկերը միայն պատմական նշանակութիւն ունին. նրանց մէջ ոչ մի աչքի ընկնող, ամբողջական բան չկայ, բացի ձօները, որոնց մէջ ցոլանում է Եղիսաբէթ կայսրուհու ժամանակը։ Ռուս դրական լեզուի նորոգիչը չկարողացաւ նորոգիչ լինել նաև դրականութեան մէջ, նա մինչև վերջն էլ ամեն տեղ մնաց կեղծ-դասական դպրոցի հետևող։

Թարգ. Ն. Ա.



ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻՈՑ ԿԱՑՍԵՐԱԶՆՈՐՀ ՀՐԱՎԱՐՏԱԿԸ ԵՒ ՆՈՅՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ

(Պատմական պատկերներ)

Ա.

Ն որ Նախիջևանի հիմնադիր Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանն իւր բոլոր գործողութիւնների մէջ թէ քաղաքի վինութեան և թէ կառավարութեան գործերում ղեկավարում է երկու գլխաւոր սկզբունքով։ Նախ, նա աշխատում է ընտելացնել ժողովրդին այն նոր կարգ ու կանոնին, այն նոր պայմաններին, որոնց մէջ նա ստիպուած էր ապրել, և այն իրաւունքներին և արտօնեալ դրութեանը, որ տուել էր նորան Ռուսաց տէրութիւնը, երկրորդ, նա ամեն ձեռքից եկած միջոցներով ճգնում է ամուր կապերով կապել նորան Մայր-Աթոռի հետ, սէր և համակրութիւն ներշնչել նորա մէջ դէպի Ս. Լուսաւորչի Աթոռակալը։ Առաջին դէպքում նորան իբրև առաջնորդի ղեկավարում է կայսերաշնոհ հրովարտակը, որի մէջ յիշուած էին գաղթականներին շնորհուած իրաւունքներն ու արտօնութիւնները, երկրորդ դէպքում նորան առաջնորդում են դարձեալ նոյն հրովարտակը, որի զօրութեամբ գաղթականները դրուում էին Այրարատեան Մայր Աթոռի իրաւասութեան ներքոյ, իւր եպիսկոպոսական ուխտը, որ պարտականութիւն էր դնում նորա վերայ իբրև Ս. Էջմիածնի միաբանի ամեն տեղ պաշտպանել Ս. Աթոռի շահերը և, վերջապէս, այն ընդհանուր ազգային կապակցութեան շաղկապը, որ ձգտում էին պահպանել

ազգի մէջ ինքն երջանկայիշատակ Սիմէօն կաթուղիկոսը և նորա բոլոր ձեռնասուն աշակերտները։

Նախիջևանցոց արտօնութիւնների հրովտարակը շնորհուած է գաղթականներին նոցա 1778 թուի Յուլիսի 16-ին Բաղչիսարայից ուղարկած խնդիրքի հիման վերայ և գրուած է Պրուսայեցի Պետրոս Մարկոսեան վարդապետի անունով իբրև նոցա հոգևոր առաջնորդի և ներկայացուցչի։ Նորա մէջ արտայայտուած է այն ձգտումը, որով 'ի սկզբանէ անտի առաջնորդուել է Ռուսաց Տէրութիւնը Հայերի հետ ունեցած յարաբերութիւնների ժամանակ—ամեն տեսակ արտօնութիւններ շնորհելով, գրաւել Հայերի համակրութիւնը և գաղթեցնել նոցա Ռուսաստանի սահմանները։ Այդ ձգտումը, որ մօտ անցեալում Ռուսաց տէրութիւնն երկու գլխաւոր նպատակի էր հասցրել՝ նախ, թուլացրել էր թշնամի մահմեդական տէրութիւնները, խլելով նոցանից նոցա երկրի աշխատաւոր ոյժը, և երկրորդ, ձեռք էր բերել մի խաղաղ, աշխարհաշէն, կուլտուրական ժողովուրդ և նոցա միջոցով մարդաբնակ անելով տէրութեան ամայի տեղերը, շէնացրել, ծաղկեցրել էր երկիրը առևտրով, զանազան արդիւնաբերութիւններով ընդհանրապէս և մասնաւորապէս այգեգործութեամբ և շերամապահութեամբ, այս անգամ Նախիջևանցիների վերաբերութեամբ ևս ապարդիւն չի մնում։ Ճիշդ է, նոցա, ինչպէս Հաշտարխանցւոց, Ղզլարցւոց և Մոզդոկցւոց, չի յաջողում Դոնի ափում ծաղկեցնել այգեգործութիւնն ու շերամապահութիւնը, որոնց մասին ակնարկւում է հրովարտակում, բայց առևտրի և միւս արդիւնաբերութիւնների կողմից նոքա բոլորովին արդարացնում են տէրութեան նոցա վերայ դրած յոյսերը։ Այգեգործութեան և շերամապահութեան գործի անյաջողութիւնն էլ չ'պէտք է վերագրել գաղթականների ծուլութեան, տգիտութեան, կամ մի որ և իցէ այլ այդպիսի յատկութեան, այլ Դոնի երկրի կլիմայական պայմաններին և հողի յատկութեան։ Նոքա գործ են դնում ամեն տեսակ միջոցներ, որ այդ կողմից ևս արդարացնեն յոյսերը. նոքա իսկոյն գետափում փոքրիկ այգիներ ձգելու փորձեր են անում, կամաւոր պարտականութիւն են

յանձն առնում իւրեանց տների բակերում թթենի տընկել և քաղաքից դուրս առանձին հողաբաժիններ սահմանելով, աշխարակներ են շինում, ընդարձակ տարածութեամբ թթենու պարտէզներ են տնկում, բայց ոչ մի կողմից նոցա աշխատանքը յաջողութեամբ չի պսակւում։ Թթենիները թէև արմատ են բռնում և մեծանում, բայց նոքա, նախ, խիստ շուտ ցրտահար են լինում և չորանում, երկրորդ, խիստ մանր տերևներ են արձակում, որով և բաւականին կեր չեն կարողանում մատակարարել շերամի որդերին։ Իսկ այգիները համարեա թէ գլուխ չէն գալիս. գլուխ եկածներն էլ այնպիսի թթու և անհամ կութ են տալիս, որ չեն արժենում այն մեծ աշխատանքին և նիւթական զոհողութիւններին, որ գործ էին դրում նոցա վերայ։

Հրովարտակը բաղկացած է երկու մասից՝ ընդհանուր դրութիւնից, որի մէջ արտայայտւում է երջանկայիշատակ Եկատերինէ Կայսերուհու վեհանձն ցանկութիւնը և կամքը ազատելու Ղրիմի Հայերին թաթար մահմեդականների բռնութիւնից, վերաբնակեցնելու նոցա Ռուսաստանում և տալու նոցա այն խաղաղութիւնն ու տպահովութիւնը, որ վայելում էին Ռուսիաբնակները, և արտօնութեան մասից, որի մէջ յիշւում ու շեշտւում են այն բոլոր արտաքոյ կարգի արտօնութիւնները, որ սէտք է վայելէին գաղթականները Ռուսաստանում։

Հրովարտակի բնագիրը գրուած է երեք մեծածաւալ մագաղաթեայ թերթի վերայ. թերթերը մէջտեղից բաժանուած են երկու մասի՝ ձախ կողմը գրուած է ռուսերէն բնագիրը, աջ կողմը—հայերէն թարգմանութիւնը։ Մագաղաթի եզերքը, գրուածքի չորս կողմում զարդարուած է զանազան խորհրդաւոր, գեղեցիկ պատկերներով, գոյնզգոյն զարդերով և նկարներով, որոնք համապատասխանում են բնագրի բովանդակութեան։ Առաջին երեսի վերայ, որտեղ ամփոփուած է Ռուսաց կայսրների ընդարձակ տիտղոսը, նկարուած է իւր՝ Եկատերինէի պատկերը. նորան շրջապատում են մի քանի գեղեցիկ, հրեշտականման կանայք, աղջիկներ և մանուկներ, որոնցից մէկը մի ձեռքով գրկել է խաչը,

միւսով կայսրուհու գլխին մի սկիտձև բաժակ է բռնել, իսկ միւսները աչքերը յառած նայում են դէպի կայսրուհին, կարծես ողորմութիւն են խնդրում նորանից։ Երկրորդ երեսի վերայ, որտեղ խօսւում է Պետրոս Մարկոսեան վարդապետի և Արարատեան Մայր-Աթոռի մասին, նկարուած են կաթուղիկոսական խոյր, երկգլխանի և մի գլխանի գաւազաններ։ Երկրորդ երեսի վերայ, որտեղ յիշւում է, թէ ինչ գործերով կարող են պարապել գաղթականները, նկարուած են ցորենի հասկեր, նաւակ և ձկնորսական գործիքներ և վերջապէս, չորրորդ երեսի վերայ, որտեղ խօսք է լինում այն պաշտպանութեան մասին, որ պէտք է գտնեն գաղթականները կայսերական կառավարութիւնից, նկարուած են սուր, վահան, հրացան և այլն [1]։

Այդ մագաղաթեայ նուրբ ճաշակով զարդարուած ու գրուած թերթերի ամեն մի երեսը ծածկուած է նոսր, թափանցիկ մետաքսեայ գործուածքով, իսկ բոլորը միասին ամփոփուած է մի շքեղ կազմի մէջ, որի մի երեսին թաւշանման տեղի վերայ ճառագայթների ու ճաճանչների մէջ ոսկեթել և արծաթաթել հիւսկէն նկարներով ասղնագործած է Ռուսաց կայսերութեան նշանները՝ թագ, գայիսոն և գունտ, միւս երեսի վերայ դարձեալ ճառագայթների և ճաճանչների մէջ ձևացրած է տէրութեան զինանշանը։ Կազմից կախուած է մեծ ոսկեղէն կնիքը, որ զարդարուած է մի զոյգ արծաթ խնամով՝ ի մեծէն ի կաճառս Օծելոց՝ Սգոստափառ Կայսերէն և Ինքնակալէն ամենայն Ռուսաստաց. Տպագրեցեալ հրամանաւ՝ բազմարդիւն բարեայսպարտ երախտաւորութեամբ ընկալեալոյ՝ պարգևացս՝ Հոգէբնտիր Հայրապետի Տեառն Տեառն Յովսէփայ Արքեպիսկոպոսի Կաթուղիկոսի Սրբոյ դերեզմանի Աթոռոյն Էջմիածնայ, և ծայրագոյն Պատրիարգի ամենայն Հայոց։ Ամի Տեառն 1800, Հոկտեմբերի 29. ի Հաշտարխան»։

---

[1]) Հրովարտակի նկարների մեկնութիւնը կարելի է գտնել «Թարգմանութիւն Պրիվիլէկացն Հայոց» կոչուած գրքում, որ տպագրուած է Հաշտարխանում 1800 թուին Յովսէփ արքեպիսկոպոսի հրամանով։ Այդ գրքի լիակատար վերնագիրն է՝ «Թարգմանութիւն Պրիվիլէկացն Հայոց։ Ընակեցելոցն ի զանազան դաւառս մեծին Ռուսաստանու, ընորհեցելոցն Աստուածարար խնամովք՝ ի մեծէն ի կաճառս Օծելոց՝ Սգոստափառ Կայսերէն և Ինքնակալէն ամենայն Ռուսաստաց. Տպագրեցեալ հրամանաւ՝ բազմարդիւն բարեայսպարտ երախտաւորութեամբ ընկալեալոյ՝ պարգևացս՝ Հոգէբնտիր Հայրապետի Տեառն Տեառն Յովսէփայ Արքեպիսկոպոսի Կաթուղիկոսի Սրբոյ դերեզմանի Աթոռոյն Էջմիածնայ, և ծայրագոյն Պատրիարգի ամենայն Հայոց։ Ամի Տեառն 1800, Հոկտեմբերի 29. ի Հաշտարխան»։

ծաթաթել և ոսկեթել ծոպերով և ամփոփուած է մի-
կնքաձև պղնձեայ պահարանի մէջ [2]։

Հրովարտակի հայկական թարգմանութիւնը հետևեալ կերպով է ներկայացնում մեզ գաղթականներին շնորհած արտօնութիւնները։ «Հաւատարմին մերոյ Մարկոսեան Պետրոս վարդապետի ամիս հասարակութեանց Խրիմոյ քրիստոնէիցն Հայոց գաւառութեամբ ամենից կոչմանցն առհասարակ և իւրաքանչիւրոց յատուկ անձանցն Մեր Կայսերական Ողորմածագունեղ Բանն.

Առհասարակ կամեցողութեամբ առաջադրութիւն ձեր՝ յաջողեսցէ ոչն Բարձրելոյն Մեք վերահարու եղաք 'ի ձէնջ առաքեցեալ առ Մեզ 'ի Բաղչասարայոյ անցեալ յամի 16-րդ յուլիսի ամսոյն հասարակութեամբ և յօժարակամ հիմնաւորեալ խնդրոյն՝ սակս ազատութեան ձեր ամենեցուն 'ի սպառնալի լծոյ և տառապանացն՝ ընդունմամբ 'ի յաւիտենական բնակութիւն 'ի կայսերութեանս ամենայն Ռուսատաց, շնորհելով հրամայեմք Մեք ոչ միայն ընկալնուլ զձեզ ամէն ենթ ամենաողորմածագունեղի հովանաւորութեան Մերոյ և որպէս զսիրելագունեղ զաւակք հանգստացուցանել 'ի ներքոյ նորին, ադադրել զկեանս այնքան բարեկենցաղս՝ որքան ցանկութիւն մահկանացուաց, և անդադար ջանացողութիւն Մեր առ նոյնն հասուցանել կարէ։ Հետևելով սորին շնորհեմք ձեզ արդիւնաւորիլ 'ի տէրութեան Մերում ոչ միայն այնոքիւք ամենիւք իրաւամբք և առաւելութեամբք որպիսեօք ամենայն ժողովուրդք Մեր ի Մէնջ և ի նախնեաց Մերոց ի վաղնջուց ժամանակաց վայելեն, այլ և բաց ի յայսցանէ հրամայեմք Մեք.

Նախ։ Առ ի ներկայական անդրաբնակութեան ձերոյ ի գաւառին ազօվոյ, Մերիւք ծախիւք բերել ի Խրիմոյ զայն ամենայն ինչս ձեր զորս միայն բերելն կարելի իցէ։ որ և կարգաւորեցեալ ի Մէնջ դրամոցն՝ արդէն կատարումն եղեալ է.

---

[2]) Այս չքիզ հրովարտակն այժմ պահպանուում է Նոր Նախիջևանի քաղաքային վարչութեան դիւանում։ Դոյն հրովարտակի մեծաղիր պատկերը հին ժամանակներից ընդօրինակուած է իւր բոլոր զարդերով, շրջանակի մէջ է առնուած և կախուած քաղաքային խորհրդարանի դահլիճում։

Երկրորդ։ Վասն յարմարագոյն բնակութեան ձերոյ ի գաւառին ազգվոյ զատեալ այլոց բնակչացն՝ տալ ձեզ ի շրջանակին ամրոցի սրբոյն դիմիտրեայ ռօստովսկուն, ըստ սահմանակարգութեան դօնոյ զօրացն՝ թողլով ի տեղեացն վասն խոտաճարակութեան ամրոցականացն երիս հազար դեսեթինս, և վասն բնակչացն չորրորդ մասրն ձկնորսութեան դօնոյ գետոյնչ բաց յայսցանէ որքան նոյն գետովն տեղիք գոն ի նոյն շրջանակոջն ի վերուստ բերանոյ գետոյն տեմերնիկայ, և եթէ անբաւական լիցի տեղիսն վասն բնակութեան ձերոյ և ի շրջանակի ամրոցին ազգվոյ ծուր յանդիման բնակութեանց ձերոց ձկնորսութիւնքս ամենառողրմածաբար շնորհեմք ձեզ յաւիտենականաբար ի յարդիւնս և ի շահաւէտութիւնս ամենից հասարակութեանց ձերոց թարց ամենայնի պահանջողութեան զհարկս ի գանձարանս Մեր.

Երրորդ։ Յետ յատկացուցանելոյ զզանազանութիւն ժողովրդական կացութեան ամենառողրմածաբար տամք ազատութիւն ամենից արքայական հարկաց և սպասաւորութեանց որպիսի անուամբ և իցեն մինչև ի տասն տարի։ այլ ի անցանիլ նոյնոյ ժամանակին պարտաւորին վճարել Մերոյս գանձարանին իւրաքանչիւր տարւոջ՝ վաճառականքն ի յընչից իւրեանց հարիւրին մին, արհեստաւորք և մեշչանիք իւրաքանչիւր տանց երկուքառուբլի, իսկ գեղական հողագործք՝ ոչ ի անձանց այլ ի գետնոյ համարելով իւրաքանչիւրոջն երեսուն դեսեթինին, պարաւանդին տալ իւրաքանչիւր դեսեթինից ի տարւոջն հինգ կոպէյկ, չքաւոր գիւղականին օգնեցեալք լինելոց են ի գանձարանէ Մերմէ ոչ միայն բաւականացուցմամբ առաջին տարւոջ՝ այլ և վասն երկրագործութեան զանազան սերմամբ ցորենեաց, անասնովք և ամենիւք ոք առ տնաշինութիւնս պատկանին, որք և պարտաւորին առնել զվճարումն զամենայն զայնոսիկ ի գանձարանս՝ զկնի տասն ամաց։ և վասն շինելոյ տանց նոցին՝ փայտ և այլ նիւթքն տացի ի գանձարանէ թարց պահանջելոյ զգինս նոցին։ հարուստքն ի նոցանէ զնոցա տրեցեալ տեղւոջն՝ կարեն շինել տունք, խանութք, ամբարանք, ֆաբրիկք, և այլ ամենայն զոր ինչ ին-

քեանք կամեցեն՝ յստուկ և սեպհական ծուխիւք իւրեանց, և եղիցին ամենեքեան հասարակօրէն միշտ ազատք յամենից պծատօղեանց՝ բաց ի յայնցանէ պատահմանց, մինչ պատերազմական զինուորք առ բնակութեամբ ձերով անցանիցեն։ յաւիտեան եղիցին ազատք ի տալոյ զպատերազմական զինուորս, բայց եթէ ոք ըստ ինքեան ծառայել Մեզ յօժարիցէ.

Չորրորդ։ Ամենասղոցմածարար յանձնեմք Մարկոսեան Պետրոս վարդապետին մինչև ցմահ նորին զհրվուռթիւն ամենից այսոց ելանողացն ընդ նմայ ի Խրիմոյ հայոց. և հրամայեմք նոցա շինել զեկեղեցիս և զանգակատունս ըստ ծիսի և օրինաց նոցին ազատօրէն գործ ածել զամենայն եկեղեցական պաշտամունս և հոգևորական արարողութիւնս, և որպէս յիշեալ վարդապետն՝ նոյնպէս և հայոց քահանայքն եղիցին միայն ընդ իշխանութեամբ հայոց հայրապետին՝ որ ի արարատեան հայրապետական ամթոռոցն իցէ։

Հինգերորդ։ Զկնի բնակութեան ձերոյ ի յստուկ քաղաքոջ յանուանեցեալ Նախիջևան ի կողմն պօլուդենկին՝ տալով վասն խոտաճարակութեան նոյնոյ քաղաքին երկոտասան հազար դեսեթինս գետնոյ, հրամայեմք հաստատել անդ մագիստրատ, և անդ ըստ ձերոյ օրինաց և սովորութեանց վարել դատաստանս և զիրաւունս, ընտրելով ի ձէնջ զդատաւորս վիճակաձգութեամբ, որք և արդիւնաւորեցեալք լիցին աստիճանօք և վարձիւք ըստ կարգադրութեան ազգոյ գաւառին, և եղիցին ենթ իշխանութեան նամէստնիկական կառավարութեանն։ ի քաղաքոջ և ի գիւղօրայս սակս պահպանութեան յամենայն հարկաւոր պատահմանց՝ կարգեսցի յստուկ անձինս ի ռուստաց, որք և ոչ ունիցին մասնակցութիւն դատաստանական գործոց սոյն բնակչացն՝ այլ եղիցին միայն պահպանիչք և այցելուք նոցին։ Դարձեալ՝ յետ մտանելոյ իւրաքանչիւրոց և ընտրելոյ վասն ինքեանց զորսիսի և իցէ ցեղ կացութիւնս ի տէրութեանս։ այսպիսեացն շնորհեմք արդիւնաւորել ի յաւիտեան մշտնջենաբար յետադայիւք իւրեանց այնոքիւք ամենայնք՝ զորս ըստ հնաբարակ կանոնագրութեան Մերոյ իւրաքանչիւր ցեղ բնակչաց տէրութեանս

ազդիւնաւորենք որպիսիք են. ազատօրէն գործածումն առարոյ և վաճառաց՝ որպէս արտաքոյ նոյնպէս և ի միջի տէրութեան Մերոյ, և վասն առաւել շահաւէտութեան ի նոյնս թոյլատրեմք ձեզ ձերով ծախիւք շինել զծովային նաւս վաճառականական, յօրինել զպիտանի և արդիւնաւորել ֆաբրիկք, զաւօդք, մրգային այգիք որ ընդ աճէն նոյնոց ամենայն կերպ գինի ի խաղողոյ շինել, ներ բնակութեան ձերոյ մանր մանր չափիւք և այլ ուրեք ի մէջ յերկրին ռուսաց տանել և բօչկով վաճառելն կարէք։ Ֆրակնսուզի արաղ շինեսցէ իւրաքանչիւր ոք, սակայն ոչ տարցէ ի մէջ երկրեացս ռուսաց։ միով բանիւ ամենայն արհեստս բազմացուցանել զայն ամենայն ըստ յօժարութեան և կարողութեան իւրաքանչիւրոց, և վայելել ամենիւք նոքօք ենթ ամենաողորմածագուններդի Մերոյ հովանաւորութեան և պահպանութեան օրինաց արդիւնաւորել։

Զայս ամենայն մանաւանդ կանութիւնս շնորհելով Մեք հանդիսօրէն ամենայն հասարակութեան և յետագայիցն ի յաւիտեանս ժամանակաց՝ վասն առաւել հաստատութեան ստորագրեցաք ձեռօք Մերօք և թագաւորական կնքով ամրացուցանել հրամայեցաք. յուեալ եղև ի արքայանիստ քաղաքոյ Մերում Սանկթ Պետերբուրգ յամին ի ծննդենէ Քրիստոսի հազար եօթն հարիւր եօթանասուն ինն Նոյեմբերի 14=և ի թագաւորութենէ Մերոյ տասնութն յամի» [3]։

---

[3]) Այդ հրովարտակում յիշուած արտօնութիւնները յետագայում հաստատուել է և Եկատերինէ կայսերուհու բարեյիշատակ յաջորդ Պօղոս կայսրից։ Աւելորդ չենք համարում դնել այստեղ այդ մասին ծերակուտին տուած բարձրագոյն հրամանի պատճէնը. «Указъ Нашему Сенату. Права и преимущества Нахичеванскому Армянскому обществу. Нашею Любезнѣйшею Родительницею, блаженной памяти Императрицею Екатериною II., въ 1779 году дарованныя и въ грамотѣ изображенныя Всемилостивѣйше всему Нахичеванскому Армянскому обществу на вѣчныя времена утверждаемъ. Данъ 4 Генваря 1799 года»։ Նոյն հրովարտակը լեռոյ 1802 թ. Նախիջևանի հասարակութեան խնդիրքով վերահաստատում է և Աղէքսանդր Առաջին կայսրը առանձին հրովարտակով, որի հայկական թարգմանութեան պատճէնը աւելորդ

Հրովարտակի այս թարգմանութիւնը թէև ճիշտ չէ ոչ լեզուի, ոչ բովանդակութեան ոչ էլ մտքի կողմից, թէև նա լիքն է քերականական և կէտադրական սխալներով և առհասարակ գրաբառ լեզուին անտեղեակ մարդու գործ է, բայց գրուած է շատ գեղեցիկ ձեռքով. երևում է, որ թարգմանիչը կամ արտագրողը գեղեցիկ ճաշակի տէր է եղել և հմուտ հայկական հին գրչագրութեան արուեստին: Նա գրուած է մաքուր, խոշոր բոլորագրով և ծաղկեայ գլխագրերով. թարգմանիչը, ինչպէս երևում է, աշխատել է բառացի թարգմանութիւն անել և հէնց այդ պատճառով, գուցէ, բազմիցս մեղանչել է թէ ոճի հարթութեան և թէ

չենք համարում դնել այստեղ՝ «Նոյլորօսսխկու դուպեռնի քաղաքէն Նախիջևանու, Հայոց Հասարակութիւնն ի դիմաց իւրեանց առաքեալ էին դիմթ զԿարապետն Սահակեան և Մկրտիչն Նազբրովեան, որովք և մատուցին Մեզ ամենախոնարհական իւրեանց խնդիր՝ վասն վերահաստատելոյ զիրաւունս նոցա և զառաւելութիւնս՝ շնորհեցեալսն ի յերանելի հանգուցելոյ Մեծի կայսերաց նախնեաց Մերոց: Եւ մեք Ամենաողորմաբար զիջեալ ի սոյն խնդիր և ի նշան մշտագոյն բարեհաճութեան Մերոց, որ առ անխախտ հաւատարմութիւն և ջերմեռանդութիւն Նախիջևանու Հայոց հասարակութեանն, ամենայն իրաւունս՝ և զառաւելութիւնս՝ նոցա յատկացուցեալս, — և մինչև ցայժմ անփոփոխ կայուն աւորեցեալսն, որովհետև համեմատք են ընդհանուր թագաւորական օրինաց բարոք համարեցաք հաստատել և մշտապէս արժանահաւատ առնել, որպէս և սովաւ հաստատեմք և հաւատարիմս առնեմք ըստ բոլորի զօրութեան իւրեանց, և թարց ուրուք ձեռնամխութեանն: Որոց ի հաստատութիւն, զայս մեր վերահաստատեալ շնորհեցեալ դրամատս՝ սեպհական ձեռամբ ստորագրեցաք, և թագաւորական կնքով ամրացուցանել հրամայեցաք: Տրեցաւ ի Սանկտպետերբուրգ ի հազար ութն հարիւր երկրորդ ամի և ի Դեկտեմբերի քսան և մէկ երրորդ աւուր: Եւ թագաւորութեան Մերոյ յերկրորդ ամի»: Այդ հրովարտակներն առաջնի հետ միասին այժմ պահւում են քաղաքի դիւանում: Երջանկայիշատակ Աղէքսանդր կայսեր հրովարտակի պատճէնն էլ ընդօրինակուած, շրջանակի մէջ է առնուած և կախուած է քաղաքային խորհրդարանի դահլիճում: Այդ ընդօրինակութեան մէջ հետաքրքրական են Կարապետ Սահակեանի և Մկրտիչ Նազբրովեանի պատկերները, որոնք նկարուած են կանգնած և երկու կողմից բռնած հրովարտակը:

մտքի կանոնաւորութեան, հետևողութեան և պարզութեան դէմ։

Յովսէփ արքեպիսկոպոսի սկզբունքները, որոնցով նա ղեկավարում էր իւր գործունէութեան մէջ և որոնց մասին մենք վերը յիշեցինք, արտայայտւում են գլխաւորապէս Հայկական Մագիստրատի և Հոգևոր դատարանի մէջ, որոնք հաստատուել ու գործում էին նորա հսկողութեան տակ անմիջապէս։ Հայկական Մագիստրատը պարունակում էր իւր մէջ թէ քաղաքի և թէ գիւղերի բոլոր կառավարչական հաստատութիւնները. նա գաղթականների և դատաստանատունը և՝ ոստիկանատունը և քաղաքային խորհրդարանն էր։ Հայկական Մագիստրատի դատաստանական մասը բաժանւում էր երկու առանձին մասերի՝ Հայկականի և Ռուսականի։ Հայկական դատաստանը կատարւում էր Հայոց լեզուով, Հայոց ծիսով և սովորութեամբ և կազմակերպուած էր Հայոց դատաստանագրքի հիման վերայ, իսկ Ռուսականը կատարւում էր Ռուսաց լեզուով և կազմակերպուած էր տէրութեան ընդհանուր օրէնսդրութեան հիման վերայ *)։

Բ.

Հայկական դատաստանագիրքը մի մեծ, կտպտագոյն թաւշեայ կազմով ձեռագիր մատեան է, որ գրուած է մօտաւորապէս 1749—50 թուականներին Հաշտարխանում և բերուած է Նախիջևան Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռքով։ Որ նա գրուած է Հաշտարխանում—, այդ երևում է գրքի յիշատակարանից, որ պատմում է գրքի ուրիշ հին օրինակներից դաղափարուելու և պաշտօնական անձերից ձեռագրի ճիշտ գաղափարած լինելը հաստատելու մասին։ «Շնորհիւ տն այս. Ստեփաննոս արքեպիսկոպոս և առաջնորդ ազգին Հայոց, ասուած է յիշատակարանում, որք բնակեցեալք են ի կողմն և ի բևեռն հիւսիսայնոյ ի քաղաքն Աստարխան վերա-

*) Տես մեր «Նոր Նախիջևանի Հայկական Մագիստրատը». Լումայ, 1901 թ., գիրք Բ., էջ 1—2.

հասու եղեալ տեսի զսոյն դատաւորական մատեանս որ և գտի զսա ըստ ամենայնի ուղիղ և թարց սղալանաց, և մանաւանդ համեմատ նախագաղափարի գրբելոյ դատաստանական մատենին, որ կարգեցեալ էր ի բարեպաշտ կայսերն. Յուստինեանոսէ՝ որ և սակս հաւատարմութեան և հաստատութեան ստորագրեցի ուստ ձեռամբ իմով և կնքեցի. Ստեփաննոս արքեպիսկոպոս [4])»։

---

[4]) Դատաստանագրքի այս նոր ընդօրինակութիւնը, բացի Ստեփաննոս արքեպիսկոպոսից, վաւերացրել են և աւագերէց Տէր-Եսային և Աստրխանայ կաթուղիկէ եկեղեցւոյ մեծաւոր Պատրի Ռոմուլթուսը։

Այդ վերջին հանգամանքից երևում է, որ Հաշտարխան քաղաքում այդ ժամանակները գոյութիւն է ունեցել և մի կաթոլիկ հայ համայնք, որ ժամանակի ընթացքում ձուլուել, միացել է իշխող տարրի հետ։ Այդ մասին մենք տեղեկութիւն ունինք և հ. Սուքիաս Էփրիկեանի «Բնաշխարհիկ բառարանից», որ մաս-մաս տպագրւում է «Բազմավէպի» համարներում, (Տես 1900 թուականի «Բազմավէպի» 5 թիւը, էջ 212)։

Աստրախանի մէջ կանխաւ կային, ասում է հ. Էփրիկեանը, նաև կաթուղիկէ Հայեր, որոց թիւը թէև քիչ էր, սակայն լաւ դիրք ունէին։ Դեռ 1830 ին ժամանակները իրենց թիւը կհասնէր մօտ 300-ի, և ունէին կրկին եկեղեցիներ. մին՝ վերափոխման՝ գեղեցիկ և նորաշէն, երկու զանգակատամբ։ Եկեղեցւոյս մօտ էր կրկնայարկ վանատուն մը 8 սենեակներով, և ուրիշ մերձաւոր շէնքի մը ստորին յարկի մէջ ալ կուսանէին կաթուղիկէ Հայոց մանկունք։ Միւս եկեղեցին կը գտնուէր քաղաքէն դուրս իրենց գերեզմանատան մէջ և կը կոչուէր Գաբրիէլի հրեշտակապետի։ Այժմ ցաւ ի սիրտ պէտք ենք ըսել, թէ այդ հասարակութիւնն զուրկ մնալով իմաստուն և աղդասէր հովիւներէ, ժամանակի ընթացքի մէջ կորսընցնելով իրենց աղդային ինքնուրոյնութիւնը, ձուլուեր և միացեր է Ռուսաց հետ։ Ներկայապէս թէև կան մի քանի ընտանիք, սակայն աղքատին ու չնչին ապրուստով հազիւ կարող են ապրեցնել իրենց գոյութիւնը»։

Բնորոշ են հ. Սուքիասի վերջին խօսքերը։ Ի՞նչ է պատճառը, կհարցնենք մենք, որ Հաշտարխանի Հայադաւանն հայ համայնքը մինչև ցայսօր էլ դեռ գոյութիւն ունի նոյն քաղաքում և պատուաւոր դիրք է բռնում բազմատարր և բազմամբոխ քաղաքի աղդաբնակութեան մէջ, իսկ կաթուլիկները ձուլուել կորել են. չէ՞ որ Հայադաւանների հովիւները ևս մի երևելի գիտնական ու աղդասէր մարդիկ չեն եղել։ Դարձեալ նոյն հին և յարատև պատճառը—կպատասխանենք մենք,

Իսկ որ նա գրուած է 1749—50 թուականներին—, այդ էլ երևում է գիրքը կնքող և ձեռագրի ճիշտ եղածը վկայող առաջնորդի Ստեփաննոս անունից։ Այդ անկասկած այն Ստեփաննոս արքեպիսկոպոսն է, որի

որ Հայն իւր մայրենի եկեղեցու գրկից դուրս գալուց յետոյ, այլ ևս իրեն հայ չի ճանաչում, այլ «փրանկ», «կաթոլիկ ազգ»։

Աւելորդ չենք համարում այստեղ մէջ բերել մեր մի համեմատաբար հասկացող հայ-կաթոլիկ տիկնոջ հետ ունեցած խօսակցութեան բովանդակութիւնը մեզ հետաքրքրող խնդրի մասին։ Տիկինը, նախ և առաջ, չէր հաւատում, որ պապը, որին նա փաղաքշաբար «Պապուսեա» էր կոչում, կարող է հիւանդանալ և մինչև անդամ մեռնել. մեր խօսակցութիւնը ներկայ պապի հիւանդութեան ժամանակն էր,—երկրորդ, նա անդադար իւր խօսակցութեան մէջ կրկնում էր «մեր ազգը» բառերը։ Եւ երբ որ մենք հետաքրքրուեցինք և հարցրինք, թէ տիկինն ինչ է ուզում ասել, կամ ինչ է հասկանում «մեր ազգը» խօսքերից, նա զարմանալով պատասխանեց, թէ «մենք կաթոլիկներս»։

Ակներև էր, որ տիկինը հայ-կաթոլիկներին մի առանձին ազգութիւն էր համարում, և ոչ թէ նոյն իսկ Հայերը։ Այդ, ի հարկէ, այն դատարակութեան արդասիքն է, որ արդոյապատիւ պատերազմները, փոռոնները և բարեպաշտ կոչսերը տալիս են հայ աղջիկներին։ Եւ, որ զարմանալին և բնորոշն է,—երբ որ մի որևիցէ հայ-կաթոլիկ համայնք հանդամանքի բերմամբ ձուլուում է մի ուրիշ տարրի հետ, նա ձուլուում է ոչ թէ Հայազգաւանների հետ, այլ անպատճառ ուրիշ ազգերի հետ։ Միաբանասէրների աշխատանքով Հայաստանում կազմակերպուած հայ-կաթոլիկ համայնքները կորան, բայց նոքա չձուլուեցան Հայազգաւանների հետ, այլ մահմեդականացան։

Այս հանդամանքի վերայ դարձնում ենք «Բազմավէպի» գրախօսական ակնարկների հեղինակ Կ. Տ. Ս-ի ուշադրութիւնը, որ գրախօսելով «Լումայ» հանդիսի 1900 թուականի Բ. գիրքը, ի միջի այլոց, մի քանի խօսք էլ մեր հայցէին էր ուղղել մեր այն դատողութեան առթիւ, որ մենք արել ենք մեր «Էմին» գրուածքում Լատինաձէս Հայերի կորչելու մասին։ Նա նկատել էր «բայց այդ կորուստը, այսինքն Լատինաձէս Հայերի կորչելը, կրօնից աղդեցութիւնն է թէ պարագաներուն. և դարձեալ ինքնին քահանայապետը չէ՞ խստիւ պատուիրողը՝ որ կաթուղիկեայք պահպանեն իրենց ազգային ծէսերը»։ (Տես 1903 թուականի «Բազմավէպի» 9 թիւը, էջ 430.)

ժամանակ Ռուսաստանի Հայերը մտնելով Աղուանից կաթուղիկոսի իրաւասութեան ներքոյ և ընդունելով Աղուանից կաթուղիկոսից ձեռնադրուած Ստեփաննոս եպիսկոպոսի իշխանութիւնը, 1749 թուին արքունի հրաման բերել տուին և արգելեցին Ս. Էջմիածնի նուիրակների մուտքը Ռուսաստան։

Թէև գրքի յառաջաբանի տակ գտնւում է երեք մարդու ստորագրութիւն՝ Նուաստ Սարգիս դի յոհաննի, Գրիգոր դի Սաֆար Կանպանեան և Եղիազար Գրիգորեան, բայց մենք կարծում ենք, որ ձեռագիրը նոցա գրուածքը չէ, որովհետև, նախ, մատեանի ձեռագիրն ամենևին նման չէ ստորագրութիւններին, երկրորդ, ամբողջ 285 մեծադիր երեսներից բաղկացած մատեանը գրուած է մի ձեռքով։ Հաւանական չէ կարծել, որ յառաջաբանը ստորագրող երեք հոգին էլ կարողանային այնպէս միմեանց նման գրել, որ անկարելի լինէր զանազանել նոցա ձեռքերը։ Պէտք է կարծել, որ այդ երեք հոգին «գաղափարել», թարգմանել են լատիներէնից և յետոյ տուել են արտագրելու մի ուրիշ անձնաւորութեան, որ հմուտ է եղել մեր հին ձեռագրութեան արուեստին։

Դատաստանագրքի թարգմանելու հանգամանքը մանրամասնօրէն յայտնուած է յառաջաբանի մէջ, որ բռնում է չորս մեծադիր թերթ և մի երես, և գրուած է նոյն գեղեցիկ խոշոր բոլորագրով, որով գրուած է և ամբողջ մատեանը։

Գաղափարողները խօսելով ընդհանրապէս յառաջաբան գրելու կարևորութեան մասին և յայտնելով, թէ օրէնքները կարող են գրուել թագաւորներից և հանճարեղ մարդկանցից միայն ժողովրդի խնդիրքով և ցանկութեամբ, նպատակ են դնում իւրեանց գրած դատաստանագրքի վերաբերութեամբ պարզելու չորս հանգամանք։ Նախ, թէ որպիսի գրքերից են գաղափարել և

Մենք դորա դէմ ուրիշ բան չենք ասիլ, բայի այն, որ կրկնեցնենք մեր ազգային առածը, որ ասում է. «Գառը դէլին են պահ տուել»։ Միթէ Մխիթարեան հայրերն այդ բոլորը լրջօրէն են գրում։

որպիսի վաղնջական սովորութիւններից են հաւաքել՝ երկրորդ, ինչ է պատճառը, որ այդ դատաստանագիրքը ծանօթ չէ Հայերին և բոլորեքեան տեղեկութիւն չունին նորա մասին, երրորդ, դատաստանագրքի գրելու պատճառը ինչ է եղել և, չորրորդ, ինչպէս պէտք է գործածել այդ գիրքը և ո՞ւմ վերայ է տարածւում նորա զօրութիւնը։

Նախագաղափար Հայոց դատաստանագրքի նոքա համարում են Յուստինեանոս կայսեր կոդեքսը [5]։ Նոյա ասելով, Յուստինեանոս կայսրը Կոստանդիանոսի, Թէոդոսի, Լէոնի, Արկադեայ, Հոնորեայ, Զենոնի, Անաստասի, Մարտինեայ, Գրացիանոսի և միւս մինչև իւր ժամանակները եղած կայսրների հրատարակած հրամաններից և օրէնքներից կազմելով մի ընդհանուր դատաստանագիրք, հրամայում է նորան գործածել ոչ միայն բուն կայսերութեան սահմաններում, այլև բոլոր հնդատակ երկրներում։ Ահա այդ ժամանակ Հայաստանը ևս, իբրև Բիւզանդիոնի հպատակ երկրներից մէկը, իբր թէ ստանում է դատաստանագրքից մի օրինակ և թարգմանելով նորան հայերէն, սկսում է գործածել իւր դատաստաններում երկար ժամանակ, քանի որ

---

[5]) Այստեղ խօսքը, յայտնի բան է, Բիւզանդիոնի օրէնսդիր կայսր Յուստինեանոսի (527—565 թ.) և նորա կազմած կոդեքսի մասին է։ Յուստինեանոսը իւր նշանաւոր զօրավար Վելիսարիոսի միջոցով իւր իշխանութիւնը տարածելով և Արևմտեան կայսրութեան մեծ մասի վերայ, կամենում է դարերից ի վեր մշակուած, բայց այդ ժամանակները խանգարուած և վերին աստիճանի խճճուած դրութեան հասած Հռովմայեցոց օրէնքները կարգի բերել։ Ահա այդ նպատակով նա ականաւոր Տրիբոնեանի նախագահութեամբ ինը հոգուց բաղկացած մի գիտնական յանձնաժողով է կազմում և օրէնքների կարգի բերելու գործը նորան է յանձնում։ Յանձնաժողովը կատարելով կայսեր հրամանը, հրատարակում է օրէնքների չորս տեսակ հաւաքածու՝ ա.) Կոդեքս, բ.) Պանդեկտներ, գ.) Դիգեստ, դ.) Ինստիտուտներ, ե.) Նովելլներ։ Կոդեքսը, որ Հայոց դատաստանագրքի գաղափարողների կամ թարգմանիչների ասելով, Յուստինեանոսը Հայաստան է ուղարկում, պարունակում էր իւր մէջ հասարակաց իրաւունքին, տէրութեան ու կառավարութեան կազմակերպութեան վերաբերեալ բոլոր դեկրետները և հրամանները։

գոյութիւն է ունենում Հայոց իշխանութիւնն ու տէրութիւնը։ Նոքա գտնում են Յուստինեանոսի այդ կոդեքսը և շատ բան, որ չէր համապատասխանում նոցա այն ժամանակուայ կացութեան, բաց թողնելով նորա միջից, գաղափարում են իւրեանց նոր դատաստանագիրքը։ Իսկ ինչ որ վերաբերում է այն վաճառականական օրէնքներին և սահմանադրութիւններին, որ չէր կային կոդեքսում, բայց գտնւում են դատաստանագրքում, — նոքա այդ հաւաքում են Հայոց վաղնջնական սովորութիւններից, հնացեալ սովորութիւնները օրէնք համարելով։

Հայերին դատաստանագրքի անծանօթ լինելը նոքա մեկնում են Հայոց թագաւորութեան անկմամբ և Հայերի նեղութեան մէջ կ. Թուրքերի ու Պարսից իշխանութեան տակ ընկնելովը։ Թուրքաց մասի Հայերը, նոցա ասելով, մոռանում են իւրեանց դատաստանագրքի գոյութեան մասին, որովհետև իրաւունք չեն ունենում իւրեանց սեփական օրէնքը գործ դնելու, այլ ստիպուած են լինում ամեն մի դէպքում վարուելու իշխանաւորների օրէնքով, իսկ Պարսից մասի Հայերը թէև բացի արեան դատաստանից, իրաւունք են ունենում իւրեանց ազգային օրէնքը բանեցնելու, բայց հետևելով Պարսիկների սովորութեան, իւրեանց դատավարութիւնը ևս կատարում են բերանացի, որից իբրև թէ առաջ է գալիս այն հանգամանքը, որ նոքա ևս մոռանում են գրաւոր օրէնքները։ Դատաստանագրքի մոռացուելուն, բացի Թուրքաց աշխարհում և Պարսկաստանում եղած կարգ ու կանոնից և ընդունած սովորութիւնից, նպաստում է և այն ընդհանուր նեղութիւնը, որի մէջ առհասարակ ընկնում են Հայերը Հայոց թագաւորութիւնը վերջանալուց յետոյ։ Հայերի կրած նեղութիւնները օտար բռնակալների սարսափելի լծի տակ այնքան բազմաթիւ և անհամբերելի են լինում, որ հազիւ-հազ նոքա կարողանում են իւրեանց կեանքը, լեզուն և կրօնքը պաշտպանել։ ուր մնաց, որ նոքա շարունակէին զանազան գիտութիւններով զբաղուել, շարունակէին այն մտաւոր շարժումը, որ կար Հայերի մէջ Հայոց տէրութեան ժամանակ, և մանաւանդ պահպանէին

իրաւաբանական կամ դատաստանական գիտութիւնը, որ աւելի մանաւագիտականին էր վերաբերում։ Հայոց դատաստանագիրքն այդպիսի հանգամանքներում բոլորովին մոռացւում է և միայն առաջնորդների ու իմաստուն մարդկանց մտքի մէջ է մի աղօտ յիշողութիւն պահպանւում նորա գոյութեան մասին։

Հայոց դատաստանագրքի նորից գաղափարելու պատճառը թարգմանիչները մեկնում են Հայերի գաղթականութեամբ։ Հայերը, ասում են նոքա, հին ժամանակներից վաճառականական գործերով երթևեկելով Ռուսաստան, կամաց-կամաց սկսում են մշտական բնակութիւն հաստատել այդ երկրում։ Պետրոս Մեծի ժամանակ 1705 թուին նոքա ստանում են իրաւունք եկեղեցի շինելու Հաշտարխան քաղաքում, որ իբրև նաւահանգիստ և առևտրական կենդրոն, միւս բոլոր տեղերից աւելի շատ հայ բնակութիւն ունէր։ Խրախուսուելով մեծ թագաւորի տուած այդ իրաւունքից, նոքա վստահանում են դիմել նորան և խնդրել, որ պաշտօնական թոյլ տրուի Հայերին Ռուսաստանում ազատ կերպով առևտուր անելու, բնակութիւն հաստատելու, և հրովարտակ հրատարակուի այդ մասին, որ և ստանում են 1723 թուին։ Դորանով ևս չ'բաւականանալով, նոքա ուղարկում են թագաւորի մօտ իւրեանց նշանաւոր քահանաներից մէկին՝ չէլէպի յորջորջուած Տէր-Անտոն քէխվային և թոյլտուութիւն են խնդրում տնով-տեղով տեղափոխուելու Ռուսաստան և գաղութներ հաստատելու Կասպից ծովի այդ ժամանակները Ռուսաստանին պատկանած երկրներում։ Թագաւորը սիրով ընդունում է Տէր-Անտոնին և հաճութեամբ 1724 թուին հրովարտակ տալով, հրամայում է Կասպիական երկրի այդ ժամանակուայ զինուորական կառավարիչ «ժեներալ մայեոր» Կրոպոտովին ամենայն պատրաստականութեամբ ընդունել գաղթող Հայերին և բնակութեան տեղ տալ նոցա Ս. Խաչ ամրոցի «առ գետովն Սուլախու, Կարախանու, Թարքու» և միւս տեղերում, որտեղ որ նոքա կ'ցանկանան։ Այդ հրովարտակի և մանաւանդ Պետրոսի արժանաւոր յաջորդ Եկատերինէ Ալէքսէյովնի նոյն նպատակով արձակած հրովարտակների հիման վերայ

Հայերը դուրս գալով թէ իւրեանց Արարատայ բնիկ երկրից և թէ գաղթականութեան տեղերից՝ Ալանաց երկրից, արքայանիստ Նոշից, Մազանդարանից, Համադանից, Ղազվինից, Թաբրիզից և Թուրքաց երկրից, գալիս են Ռուսաստան, գաղութներ են հաստատում Հաշտարխանում, Ղզլարում և ուրիշ տեղերում և սկսում են պարապել առևտրով, հողագործութեամբ, այգեգործութեամբ, շերամապահութեամբ և արհեստներով։ Երբոր այսպէս հայ ժողովրդի թիւը բուսականին բազմանում է Ռուսաստանում, այն ժամանակ տէրութիւնը նորան աւելի ևս գրաւելու և Ռուսաստանի հետ կապելու համար, բացի ազատ կերպով առևտուր անելու, երկրագործութեամբ և արհեստներով պարապելու, եկեղեցիներ շինելու և իւրեանց կարգով իւրեանց կրօնական պաշտամունքը համարձակապէս կատարելու իրաւունքից, 1746 թուին շնորհում է նոցա և իւրեանց ծիսով ու սովորութեամբ դատուելու արտօնութիւն, որ յետոյ աւելի ընդարձակ կերպով 1765 թուի Յունուարի 12-ին հաստատում է իւր հրովարտակով և Եկատերինէ կայսերուհին։ Ահա հէնց այդ ժամանակները Հայերը հետևելով Ռուսաց և Եւրոպացւոց օրինակին և նոյն ժամանակ 'ի նկատի առնելով, որ առանց գրաւոր օրէնքի դատաստան կտրելը շատ անյարմարութիւններ ունի, ինքեանք էլ ցանկանում են հայկական գրաւոր օրէնքներ ունենալ, և յիշում են իւրեանց մուացուած դատաստանագրքի մասին» «Քանզի, ասուած է այդ մասին դատաստանագրքի յառաջաբանում, դատաւորն թէպէտ և կատարեալ տեղեակ իցէ օրինաց և իրաւանց, սակայն առանց դատաստանական մատենի 'ի բազումս կարէ վրիպիլ. վասն զի դատաստանագիրքն է ճանապարհ արքունական, որով ընթացողքն ոչ խոտորին 'ի յաջ և 'ի ահեակ և է դամբար լուսոյ որ առաջնորդէ առ վարումն ուղղութեան ուստի եթէ ոք արասցէ զիրաւունս առանց դատաստանական մատենից, նման լինի տուն յիմարի որ 'ի մթին գիշերի շրջի առանց լուսոյ ճրագի»։

Նոքա թէև իւրեանց ձեռքի տակ ունենում են Հայոց դատաստանագրքից չորս ձեռագիր օրինակ, բայց նո-

ցանով չեն բաւականանում, այլ գտնում են Յուստինեանոս կայսեր բուն դատաստանագիրքը և նորանից նոր ի նորոյ գաղափարում կամ թարգմանում են հայկական դատաստանագիրքը։ Եղած գրչագիր օրինակներով չբաւականանալու պատճառը լինում է, նախ, նոցա մաշուած և թերի լինելը, երկրորդ, օրէնքների զանազան մասերի անկարգ և խառն կերպով դասաւորուած լինելը, երրորդ, նոցա մէջ աւելորդ օրէնքների գտնուելը, ինչպէս, օրինակի համար, զինուորական և երկրի կառավարութեան օրէնքները, որոնք ամենևին չէին համապատասխանում նոցա այն ժամանակուայ կացութեան, և չորրորդ, գրչագիր օրինակների լեզուի և մտքի վերին աստիճանի աղաւաղուած լինելը, որ, յայտնի բան է, առաջ էր եկել արտագրողների անհմտութիւնից։ Գաղափարողները, բացի նորանից, որ նոր ի նորոյ թարգմանում են բոլոր դատաստանագիրքը, այլ և նորա մէջ աւելացնում են և վաճառականութեան վերաբերեալ օրէնքները, որ նոքա հաւաքում են Հայոց վաղնջական սովորութիւններից և գլխաւորապէս Պարսից մասի հայոց սովորութիւններից, որովհետև թուրքաց մասի Հայերի վաճառականական սովորութիւններն էլ մասամբ մոռացուել, մասամբ էլ սաստիկ աղաւաղուել էին։

Այս օրէնքների զօրութիւնը, նոցա ասելով, տարածւում է եղել բոլոր Հայերի վերայ, որ քաղաքից և երկրից և լինէին նոքա, իսկ ինչ որ վերաբերում է այն «կտակագրերին», «բարաթներին», «սանադներին» և այլ այս տեսակ թղթերին, որոնք գրուած էին նախ քան այս դատաստանագրքի գործածութեան մէջ մրտնելը, և կամ նոցա, որ ապագայում կարող են գրուել օտար երկրներում,—չպէտք է վարուել սորանով։

Մի կողմ թողնելով այն խնդիրը, թէ ինչ օրէնքներով են վարուել Հայերը Հայոց տէրութեան ժամանակ, կամ թէ մինչև նշանաւոր Մխիթար Գօշը նոքա ունեցել են արդեօք գրաւոր օրէնքներ, թէ կառավարուել են միայն սովորութեան օրէնքներով, որի լուծման համար, բացի մասնագիտական իրաւաբանական գիտութիւնից, պէտք է մեծ աշխատանք գործ դնել և

մանրակրկիտ ու երկար հետազոտութիւններ կատարել, մենք այստեղ չենք կարող մատնացոյց չանել այն հակասութիւնների և անճշտութիւնների վերայ, որոնք տչքի են ընկնում այդ յառաջաբանի մէջ։ Նախ, եթէ ճիշտ որ Յուստինեանոս կայսրն իւր կոդեքսն ուղարկել է Հայաստան և հրամայել է գործ դնել նորան Հայոց դատարաններում, Հայերն էլ կատարել են նորա հրամանը և գործ են ածել նորան մինչև իւրեանց տէրութեան վերջանալը, ապա ուրեմն պէտք է կարծել, որ այդ դատաստանագրքի օրինակներից խիստ շատ պէտք է տարածուած լինէր Հայաստանում։ Ապա ինչպէս է պատահել, որ մինչև ցայսօր այդ ձեռագիր օրինակներից ոչ մէկը մեր ձեռքը չի հասել։ Մենք դրժուարանում ենք կարծել, որ ընդարձակ Հայաստանի բոլոր դատաստանատների ատեաններում եղած բազմաթիւ դատաստանագրքերը բոլորն էլ ոչնչացել ու կորել են, քանի որ պահպանուած ենք տեսնում այնպիսի ձեռագիր մատեաններ, որոնցից այնքան շատ օրինակ չպէտք է որ արտագրուած լինէր։ Երկրորդ. յառաջաբանում ուղիղ ասուած է, որ քանի Հայոց տէրութիւնը գոյութիւն է ունեցել, բոլորեքեան տեղեկութիւն են ունեցել դատաստանագրքի մասին։ Եթէ այդ այդպէս է, ապա ինչով պէտք է մեկնել այն հանգամանքը, որ Հայոց տէրութեան ժամանակ ապրած և իւրեանց հեղինակութիւնները գրած հայ պատմաբանները ոչ մի խօսք չեն ասում այն նշանաւոր փաստի մասին, որ Յուստինեանոսն ուղարկել է Հայաստան իւր կոդեքսը և հրամայել է գործածել նորան Հայոց դատարաններում։ Երրորդ, Հայոց տէրութիւնը վերջանալուց յետոյ թէև Ժողովուրդը մոռանում է դատաստանագրքի գոյութեան մասին, բայց առաջնորդները և իմաստուն մարդիկ, նամանաւանդ Պարսից մասի և քրիստոնեաների երկրները երթևեկող վաճառականները, չեն մոռանում։ Հաշտարխանի Հայերը մինչև անգամ իւրեանց հետ տարած են լինում դատաստանագրքից չորս ձեռագիր օրինակ։ Եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն պէտք է որ Հայոց տէրութեան վերջացած ժամանակ ապրած և իւրեանց պատմութիւնները գրած հեղինակ-

ները չիշէին նորա մասին. ոչ պապքէն Հայաստանի այն ժամանակուայ հանճարեղ և իմաստուն մարդիկը նոքա են եղել։ Զորրորդ, Մխիթար Գօշը, որ իւր դատաստանագրքի համար աշխատել է ամեն տեղից նիւթ ժողովել, աշխատել է մինչև իւր ժամանակը Հայաստանում եղած եկեղեցական և քաղաքական ամենայն օրէնքներն՝ մի հաւաքել, կարող էր արդեօք չիմանալ և չօգտուել մի այնպիսի դատաստանագրքից, որ կայսեր հրամանով ուղարկուած էր Հայաստան և այնքան երկար ժամանակ գործ էր ածուել Հայոց տեսաններում, կարող էր չիմանալ նորա մասին, չօգտուել նորանից Սմբատ պատմիչը, որ կազմել է Ռուբինեանց դարպասի գրաւոր օրէնքները, թարգմանելով Անտիոքի «Անսիզները» և քաղելով՝ թէև առանց անունը չիշելու, Մխիթարի դատաստանագրքից։ Հինգերորդ, մենք լաւ չենք ըմբռնում թարգմանիչների գործածած Յուստինեանոսի ուղարկած դատաստանագիրքը գործ է ածուում Հայոց տեսաններում, «ցորքան գոյր տէրութիւն և իշխանութիւն Հայոց մինչև ի ժամանակս ձիգս» խօսքերի իմաստը։ Եթէ Հայոց տէրութիւն ասելով, նոքա հասկանում են Հայոց անկախ իշխանութիւնը, — իսպառ սխալւում են, որովհետև Յուստինեանոս կայսրը թագաւորել է 527—565 թուականներին, իսկ Հայաստանը այդ միջոցներում և դորանից յետոյ դեռ երկար ժամանակ իւր սեփական իշխանութիւնը չի ունեցել, այլ բաժանուած է եղել առաջ Յունաց և Պարսից, ապա՝ յետոյ Յունաց և Արաբացւոց մասերի։ Իսկ եթէ նոքա Հայոց տէրութիւն կամ իշխանութիւն ասելով, հասկանում են միայն Հայերի տեղական ինքնավարութիւնը, այն ժամանակ նոքա Հայաստան բառն այդպէս ընդհանուր մտքով չպէտք է գործածէին, որովհետև Յուստինեանոսն իրաւունք չունէր Պարսից մասի Հայոց տեսանների համար դատաստանագիրք ուղարկել։ Վերջապէս, ինչով պէտք է մեկնել այն հանդամանքը, որ Հաշտարխանի Հայերը չիշում են իւրեանց դատաստանագրքի մասին և երբ հարկաւոր է լինում, իսկոյն նորից նորան դաղափարում են, հաստատել են տալիս տէրութեան և սկսում են գործածել իւրեանց դատարանում,

իսկ Լեհաստանի Հայերը, որոնք նոցանից շատ առաջ էին թողել իւրեանց հայրենիքը և աւելի առաջ Լեհացւոց թագաւորներից իրաւունք ստացել սեփական դատարան ունենալու, չեն օգտւում արդէն պատրաստի դատաստանագրքից, այլ քաղուածք են անում Գոշի օրէնսգրքից և առաջարկում են Լեհաց թագաւորների հաստատութեան, ընծայելով իւրեանց այդ նոր օրէնսգիրքը Հայոց Յովհաննէս—Սմբատ թագաւորին և մի ոմն անյայտ Թէոդ թագաւորի։

Իրաւաբան վարդապետ հանգուցեալ Վահան Բաստամեանցն իւր հրատարակած Մխիթար Գոշի դատաստանագրքի յառաջաբանում Հայոց մինչև Մխիթարը գրաւոր օրէնքներ ունենալու կամ չունենալու գիտնական հետազօտութեան առաջին յաջող փորձն անելով և գալով այն եզրակացութեան, որ «մինչև Մխիթար Գոշը չկար Հայոց մէջ որ և իցէ աշխարհական օրէնսգիրք կամ դատաստանագիրք» ի միջի այլոց, խօսում է և Նախիջևանի դատաստանագրքի մասին և հերքում է նորա յառաջաբանում յայտնուած փաստը։ Նա ասում է, որ Նախիջևանի դատաստանագիրքն երբէք գործածուած չի եղել Հայաստանում և Յուստինեանոս կայսրը մի այդպիսի դատաստանագիրք Հայերին չի ուղարկել, այլ նախիջևանցիք կամենալով իւրեանց դատարանում իւրեանց սովորութեամբ և ծիսով դատավարութիւն անել և վախենալով, որ եթէ տէրութեան հաստատութեան առաջարկեն մի այնպիսի դատաստանագիրք, որ Հայոցը չլինի կամ Հայաստանում գործածուած չլինի, մերժուի տէրութիւնից, դիմել են մի այնպիսի կեղծիքի, որ մի անգամ արդէն յաջող կերպով գործ էին դրել Անեցիք Լեհաստանում։ Նոքա ուղղակի թարգմանում են Յուստինեանոսի օրէնսգրքից հարկաւոր օրէնքները և աւելացնելով նոցա վերայ «մի քանի նոր յօդուածներ», առաջարկում են նոցա տէրութեան, ակնարկելով, որ այդ դատաստանագիրքը թէև Յուստինեանոսի կազմածն է, բայց իւր մէջ պարունակում է և Հայոց օրէնքներ և գործ է ածուել և Հայաստանում[6]։

---

[6]) Տես «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց» յառաջաբանութիւն՝ էջ 38—53։

Հիմնուելով յառաջաբանի մէջ գտնուած վերոյիշեալ հակասութիւնների և անճշտութիւնների վերայ, չէ կարելի չհամաձայնել Հանգուցեալ Բաստամեանի մէջ բերած դիտողութեան հետ, բայց մենք չենք հասկանում, թէ ինչու համար Հանգուցեալն ընդդէմ է այդ դատաստանագրքի հայկական կոչուելուն և ինչու է զարմանում, որ Ռուսաց տէրութիւնը տեսնելով, որ դատապետնագիրքը քաղուած է Յուստինեանոսի օրէնքներից, դարձեալ կոչում է նորան «Հայկական դատաստանագիրք»։ Մենք կարծում ենք, որ տէրութիւնը նորան ուրիշ պէս կոչել էլ չէր կարող. նա, ճիշտ է, տեսնում էր, որ օրէնքները քաղուած են Յուստինեանոսի օրէնսգրքից, որովհետև դատաստանագրքի ճակատին ուղիղ գրուած է՝ «Դատաստանական բահմանադրութիւն բարեպաշտ կայսեր Յուստինեանոսի» [7]), բայց

---

[7]) Նախիջևանի պատմագրքի կազմողները ասելով, որ իւրեանց դատաստանագիրքը նոյն իսկ այն օրէնսգիրքն է, որ մի ժամանակ Յուստինեանոս կայսրը ուղարկել է Հայաստան, անկասկած օգտուել են այն հանգամանքից, որ Հայաստանի Յունաց մասը Յուստինեանոսի ժամանակ կառավարուել է Հռովմայեցւոց օրէնքներով։ Իսկ որ Յուստինեանոսն իւր օրէնքներն երբեմն ուղարկել է Հայաստան—, այդ երևում է այն հատուածներից, որոնք գտնուում են Հռովմայեցւոց օրէնքների մէջ և պարունակում են իւրեանց մէջ տեղեկութիւններ Հռովմայեցւոց օրէնքների Հայաստան ուղարկուելու մասին։ Այդ հատուածներում Յուստինեանոսը պատուիրելով Հայաստանի պառոկոնսուլ Ակակիոսին գործադրել Հռովմայեցւոց օրէնքները Հայաստանում, ուղղակի ասում է. «Apmeniorum regionem bene legibus gubernare volentis et nihil ab alia nostra differre republica, et administrationibus illam Romanis ornavimus prioribus eam liberantes nominibus et figuris uti Romanorum assuevimus; sanctionesque non alias esse apudeos quam quas Romani nominant...», այսինքն «Ցանկալով Հայաստանը բարուք օրէնքներով կառավարել, այնպէս որ նորա և մեր տէրութեան մէջ ոչ մի տարբերութիւն չլինի, մենք չնորհեցինք նորան Հռովմայեցւոց օրէնքներ, փոխեցինք

նոյն ժամանակ տեսնում էր, որ այդ օրէնքները պէտք է գործածուեն Հայոց ատեանում, Դեսնում էր, որ դատաստանագրքի մէջ մի ամբողջ բաժին՝ վաճառականական օրէնքները քաղուած են ուղղակի Հայոց վաղընջական սովորութիւններից։ Այնտեղ դատաստանագրքի «Հայկական» յորջորջումի մտքի տարբեր հասկացողութեան թիւրիմացութիւն կայ միայն։ Տէրութիւնը Նախիջևանի դատաստանագիրքը «Հայկական» կոչելով՝ հասկացել է մի օրէնքի հաւաքածու, որ Հայերը պէտք է գործածէին իւրեանց դատարանում, իսկ Հանգուցեալ Բաստամեանը դատաստանագրքի նոյն «Հայկական» յորջորջումը հասկացել է իբրև Հայոց ատեաններում գործածուած և Հայերից մշակուած օրէնսգրքի յորջորջում։

Մենք նոյնպէս չենք հասկանում, թէ ինչ հիման վերայ Հանգուցեալ վարդապետը կարծել է, թէ դատաստանագիրքը գաղափարել են լատինէրէնից, կեղծել են Նախիջևանցիք, չէ՞ որ դատաստանագիրքը, ինչպէս մենք տեսանք նորա լիշատակարանից, գրուած է Հաշտարխանում և կնքուած ու վկայուած է այնտեղի Ստեփաննոս եպիսկոպոսից։ Նախիջևանցիք իւրեանց նորահաստատ դատարանի համար կարիք չունէին մի նոր դատաստանագիրք կամ օրէնքների հաւաքածու կազմելու և նորան տէրութեան հաստատութեան առաջարկելու, քանի որ Ռուսաստանի Հայոց առաջնորդանիստ Հաշտարխան քաղաքում արդէն տէրութիւնից հաստատուած թէ Հայկական դատարան և թէ օրէնսգիրք կար [8])։

Նախիջևանի դատաստանագիրքը կազմուած է երեք մասից՝ «Կանոնք իրաւանց և, վաճառականութեանց»

նորա հին կարգերը և յարմարեցրինք Հռովմայեցւոց սովորութիւններին, հրամայելով, որ նա այսուհետև այլ ևս, բացի Հռովմայեցւոց օրէնքներից, ուրիշ օրէնք չունենայ»։ Տես „Собраніе актовъ, относящихся къ обозрѣнію исторіи Армянскаго народа“. Часть II, стр. 34—45.

[8]) Դատաստանագիրքն այժմ պահւում է Նոր Նախիջևանի քաղաքային դիւանում։ Դորա մի ընդօրինակութիւնն էլ մենք ուղարկել ենք Ս. Էջմիածնի մատենադարանը։

որ իւր մէջ բովանդակում է 23 գլուխ և 940 յօդուած (բան), «Յաղագս պարտաւորութեան դատաւորաց, դատաստանական պաշտօնէից և այլ դատաստանական կարգաց», որ ունի 15 գլուխ և 107 յօդուած, և «վասն կիրառութեան դատաստանական գործոց», որ ունի 14 գլուխ և 88 յօդուած [9]։

ՍՐ. ՇԱՀԱԶԻԶ

---

[9]) Բացի հանգուցեալ Վանդի վարդապետ Բաստամեանից մի փոքրիկ «Армянскій Судебникъ» խորագրով ուսումնասիրութիւն էլ Նոր-Նախիջևանցւոց Դատաստանագրքի մասին հրատարակել է 1870 թուին ռուսազգի Ալէքսէեվը։

ԹԵՐԹՄԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՂԻԿՆԵՐ

«Ֆարրարի քարոզներիս» առիթով «Նոր-Դարի» մէջ արծարծուեցաւ թարգմանութեան արուեստի խնդիրը։ Թերթի մէջ թեր և դէմ բաւական դրուեցաւ անպտուղ կերպով, առանց լուսաբանութիւնն առաջ մղելու, անժամանակ խնդիրը սպառուած համարուեցաւ, փակուած վիճաբանութիւնը մի անգամ էլ շարունակուեցաւ, ի վերջոյ բանն այնպէս տարտամ վիճակի մէջ մնաց, ինչպէս որ սկզբումն էր։ Արդեօք ո՞րի չնորհիւ խնդիրն այսպէս մեռեալ ծնուեցաւ, փոյթ չէ ինձ համար, միայն ես անվիճելի եմ համարում, թէ կենսական է այդ խնդիրը մեր դրականութեան համար, որ քիչ է արտադրում ինքնուրոյն գրուածքներ. իսկ իւր խեղճ կեանքը վարում է առաւելապէս թարգմանութիւններով։

Թարգմանութիւնը սերտ կապ ունի լեզուի հետ։ Այժմ ամէնքը դժգոհ են մեր աշխարհաբար լեզուից, բայց ոչ ոք քաջութիւն չունի գրականական աշխատանքը հանդէս գալ և իրօք նպատակ խնդրի լուծման և ոչ թէ խեղկատակի դեր կատարել։ Լ. Արդսեանի դասագրքի լեզուն չեն հաւանում, նա խռովում է և ասում է, թէ քննադատութիւնը թշնամութիւնից է ծագել. խնդիրը սպառուեցաւ։ «Հանդէս Ամսօրեան» «Մշակի» լեզուն չի հաւանում, «Մշակը» հայհոյում է և բուն վիճաբանութիւնն անպատասխան է թողնում. խնդիրը սպառուեցաւ։ Մխիթարեանները Վիէննայից Վենետիկն, Վենետիկից Վիէննային վիրաւորում են ասղի ծակոցներով և խնդիրը փակում են։ Վերջապէս տաճկահայերն էլ սկսել են նոյն օրինակ սաստիկ դժգոհութիւններ յայտնել իրարից, բայց այնպէս, որ մի խենդի ձգած քարը փոսի մէջ՝ հանել չպիտի կարողանան տասը իմաստուններ. դարձեալ խնդիրը փակում է։ Այսքան գանգատաւորների մէջ դատաստան կտրողն ով պէտք է լինի։

Ինչու մեր մթնոլորտը միշտ պղտորուած է և մէջը լոյս չի սփռուում։ Խճճուած կծիկը բաց անելու համար՝ արդեօք ընդունակութիւն թէ կամք է պակասում մեզ։ Մի մեծամիտ յանդգնեցաւ պնդել, թէ մեր գրականութեան մէջ չկայ 10 հատ լաւ թարգմանութիւն, որ օրինակ համարուին մեզ՝ թարգմանիչներիս համար։ Ի՞նչ է պատասխանում նորան ամենօրեայ թերթի խմբագրութիւնը, հասարակաց կարծիքին ուղղութիւն տուողը. «Եթէ մի հատ էլ չունենանք, դու պարտաւոր ես լաւ թարգմանել»։ Այս պատասխանը ծոյլ մարդու և աչքի մէջ թող փչողի պատասխան է, որ փոխանակ իւր գրադարանը բաց անելու, ուր որ թարգմանիչներից ձրի եկած մի մի օրինակ գրքեր կան (եթէ խնամով պահուել են), և փոխանակ 10 վերնագիր արտաղրելու և մեծատի աչքը կոխելու, նա ճգնում է իւր ծուլութիւնն ու թանձրամտութիւնը ֆրազով և նէյնիմով քողարկել։ Իսկ լրագրի ընթերցողն ինչ իմացաւ. նա շատ բան կարդաց թեր և դէմ, բայց այն չիմացաւ, թէ յիրաւի ունինք արդեօք 10 լաւ թարգմանութիւն։ Եւ ինչպէս իմանայ ընթերցողը, երբ որ ինքը խմբագրութիւնն իրան հաշիւ ու համար չի տուել այդ մասին։ Եթէ շատերի համար այդ հարցմունքը առեղծուած է, ես ասել եմ և դարձեալ պընդում եմ, որ ռուսահայոց թարգմանական հմտութիւնը խիստ անմշակ է մնացել, և այդպէս էլ պէտք է լինի, եթէ ի նկատի առնենք մեր մամուլի թեթև վերաբերմունքը այս արհեստին. ապացոյց՝ մեր ամենօրեայ թերթերի վերջին երեսները, ուր որ ամենայն օր ընծայում են հեռագրական լուրերի, գծի տակ թերթոնների, քաղաքական լօդուածների և մասնաւոր անձանց յայտարարութիւնների անխիղճ թարգմանութիւնները, ամօթ համարելով դէթ այդ մասում տաճկահայերից բան սովորելու։ Պէտք է զարմանալ, թէ որչափ անհետևողութեամբ մեր ամեն կարգի խմբագրութիւնները մի երեսում ամպրոպ են հանում և չանթեր են թափում թարգմանիչների դլխին, դատ և խրատներ են կարդում այնպիսիներին, որոնց աշակերտ կարող էին լինել, իսկ միւս երեսում իրանց հիանալի թարգմանութեանց մարգարիտներ են շարում։

Նախ քան առաջ դնալը, հարկ եմ համարում խոստովանել, թէ մեր մէջ ենթադրոյն դրութիւնը, լեզուի տեսակէտից, բաւական առաջ է դնացել. ապացոյց՝ այժմեան և տարիներ առաջուայ «Մշակի» թերթերը, ուր որ ամէն տեսակ խառնի-

ճաղանճ լեզուի հետ՝ հայ-քրիստոնէի լինելու ևս հնչում է։ Եւ ուրեմն կարելի է, թէ ոմանք մեղադրեն իմ ծայրայեղ յոռետեսութիւնը։ Բայց ես իսօսում եմ ոչ՝ թէ ինքնուրոյն չարաղրութեան՝ այլ թարգմանութեան մասին։ Վերջինս իրօք որ յանաչադիմութիւն ցոյց չի տալիս, այլ կարծես թէ տգեղութիւնները մինչև անգամ սրբայնում և նուիրագործում է, մինչդեռ առաջ տգեղը հէնց «տգեղ» էլ կոչւում էր։ Լաւ թարգմանութեան շատ քիչ ենք պատահում. բայց վաղուց է, որ այնպիսի վարժ թարգմանութիւն չենք կարդացել։ Ինչպէս որ էր Անցեալներում «Մէակի» մէջ տպուած մի կտոր թարգմանութիւն ասելիներից—Թիֆլիսի բաղնիքների մօտ գտնուած անանկանոցների մասին։ Կրեում էր, որ այդ կտորը շտապով է թարգմանուած, բայց ամէն տողից նշմարւում էր գրչի հըմտութիւնը օտարի միտքը հայերէն լեզուով արտայայտելու շնորհքը։ Ահա մենք այդպիսի թարգմանութիւններ ենք փընտռում, բայց չենք գտնում մեր արևելեան հայոց գրականութեան մէջ։

Թարգմանութեան անկեալ վիճակը առընչութիւն ունի երկու հանգամանքի հետ. մէկ այն, որ մեր մէջ ուսումնական գրքեր էլ չեն տպագրւում, երկրորդ այն, որ հայոց մամուլը մեր ինտելիգենցիային տնունդ չի տալիս։ Այդ երևոյթներից որն է պատճառը և որը՝ հետևանք, ես չեմ փորձի որոշել, ես միայն իրողութիւնն եմ արձանագրում։ Մեղ կառարկեն, թէ լուսաւորեալ աշխարհի բոլոր գրականութիւններում գրքերի թիւը ձգտաստւում է, պարբերական թերթերի բազմանալու համեմատութեամբ։ Սակայն այս առարկութիւնը թիւրիմացութեան ծնունդ է. ոչ մեր երկու և կենդ թերթերը բազմացած կարող են համարուել, և ոչ էլ մեր գրքերի պոլոչը— մասին է խօսքը, այլ մեր ցաւը այնպիսիների իսպառ դադարումն է։ Իսկ աւելի ուշադրութեան արժանի հանգամանքն այն է, որ Եւրոպայում գրքերի նիւթը՝ պարբերական թերթոններում է տեղ գտնում. իսկ այդպիսի պաշտօն մեր թերթերը չեն կատարում։ Մի երեսանոց տարի առաջ եթէ մեզանում մի գիրք հրատարակուէր, այն ձեռք կէր բերէր և կէր կարդար, կամ դէթ հարեանցի կը թերթէր և բժիշկը, և՝ փաստաբանը, և՝ աստիճանաւորը, և վաճառականը։ Այժմ էլ ոչ ոք չի հետաքրքրւում, թէ որ տպարանից ինչ գիրք է լոյս գալիս։ Մինչև անգամ սնահոգի աստեղների հանդէս կը դան, բացարձակ քարոզելու

որ գիրք չհրատարակեցին։ Իսկ հրատարակուածը չը կարդացուին։ Մտէք ռուսայ խմբագրատուն, իսկոյն խմբագիրը ձեզ ցոյց կը տայ մի գիրք, ասելով. «Ահա մի շահաբերիւ գիրք, կարդացէք։ Սա երիտասարդ փիլիսոփայ Գիւլիոի շարադրութեան ռուսերէն թարգմանութիւն է, անունն է Դաստիարակութիւն և ժառանգականութիւն»։ Եւ դուք կը կարդաք երկու պատճառով, նախ՝ որ ձեզ յանձնարարել է ոչ հայ խմբագիրը, երկրորդ՝ որ հայերէն թարգմանութիւն չկ։ Բայց թող ս. Էջմիածնի տպարանից լոյս տեսնէ նոյն գիրքը հայերէն թարգմանութեամբ, դուք այդ մասին բնաւ տեղեկութիւն չէք ունենայ։ Եւ եթէ մի քանի տարուց յետոյ մեր դրասէր բժ. Բուդուղեանցը ճիշդ նոյն վերնագրով (ժառանգականութիւն և դաստիարակութիւն) մի տետրակ հրատարակէ, ոչ նա և ոչ դուք չէք իմանայ, թէ ոչ անուանով արդէն վաղուց ունինք մի հաստ գիրք, ս. Էջմիածնի տպարանում տպած։ Ինչպէս էք հաւանում մեր ազգային ինքնաջրիմութեան այսպիսի նշոյլը։ Այսպիսը բաւական չէ, այլ մեր միամիտ խմբագրունները էլ չնորհակալութեամբ կը ստանան պ. Բուդուղեանցից այն տետրակի ձրի օրինակը, չհասկանալով, թէ մի տան մէջ մի անունով երկուորեակներ ենք ունենում, և չլիշելով, թէ արդէն մի քանի տարի առաջ նոյնպէս չնորհակալութեամբ ստացել են այժմեանի երկուորակիցը։ Մենք տակաւին առողջ կոոպերատիւ չենք կազմում, այլ իւրաքանչիւրս մի մի բնեռում նստած, ոչ ազգի վերայ ենք կանդնեցնում ամրոցներ։ Մենք աշխատողներ ենք, բայց ուրիշի աշխատութիւնը յարգող չենք։

Գրական երկերի նկատմամբ այսպիսի վերաբերմունքը նոր չէ. մեր մամուլը վաղուց լուսաւորութիւն է քարոզում հասարակ ժողովրդեան համար մայրենի լեզուով, իսկ ինտելիգենցիայի համար հերիք է համարում օտար լեզուների աղբիւրը։ Ինտելիգենտը սոսկականին ասում է. «Դու կարդա հայերէն, քո խելքի համար այդ լեզուն բաւական է, իսկ ես իմ անձիս համար հայերէնի կարիք չեմ զգում, ես լուսաւորուած եմ։ Քո խելքի բան չէ Գիւլիո կամ Ֆարրարը. այդպիսի հաստ գրքեր թող տպարանի շտեմարանում անկտրում կուտակուած մնան, ոչ քեզ և ոչ ինձ են հարկաւոր, դու կարդա մեր առաջնորդողները, որ քեզ համար և՛ քարոզ են, և դաստիարակութիւն...» Ինտելիգենցիան ժողովրդին առաջարկում է այնպիսի

միջոց (մայրենի լեզու), որ ինքը արհամարհելով արհամարհում է։ Հասկանալի է, թէ ինչ պէտք է լինի այսպիսի կեղծ բարեպաշտութեան հետևանքը. ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի, ժողովուրդն էլ, բայի բամբասանքներից, ուրիշ բան չի կարդում, նա ինտելիգենցիայից նախ և առաջ սովորում է արհամարհութիւն։ «Մեր ընթերցող հասարակութիւնը, ինչպէս որ կասէր ինտելիգենտը, զոհ է դառնում ցեղական միմիկրիի (կապկութեան), այսինքն օտար տիպարի վատ պատճէն է ձևացնում»։ Եթէ ուրիշ ազգերի մէջ մայրենի լեզուով են լուսաւորում ժողովրդեան, և մենք էլ նոցա օրինակով ենք ուզում ընթանալ, մենք մոռանում ենք, որ այն տեղ նախ և առաջ իրանք լուսաւորողներն են յարգում, սիրում և ճոխացնում այն լեզուն։ Այս ընթացքն այլ է, քան մեր փոխ արածը, ուստի և մեր ծառի պտուղը դառն է։ Մեր ինտելիգենտը երբէք շնորհակալութիւն չի յայտնի, եթէ իրա համար մի գիրք հրատարակէք. թող մի եպիսկոպոս Դրեպէր թարգմանէ, մեր քուրմերը կը ծիծաղեն, թող մի աշխարհական քարոզներ թարգմանէ, մեր հաւատաքննիչները խարույկ կը շինեն քարոզներից, թող մի թարգմանիչ քաջութիւն ունենայ ցոյց տալու ողորմելի ինտելիգենտներին, որ կարելի է «գողարիկ հայերէնով արտայայտել ֆրանսիացու նուրբ, թեթև և զեղեցիկ ոճը, ֆրանսիական բարձր սալոնի գեղեցկախօսութիւնը», այդ սոխակին մեր վայրենիները կասեն, թէ եկ, մեր խոռոզից սովորիր թարգմանելը։ Մեր ինտելիգենցիան ոչ միայն հայերէն գիրք չի կարդում, այլ իւր մտաւոր պահանջների համեմատ պարբերական թերթեր էլ չի հիմնել։ Այսպիսի թերթ լինելու է ձգտում փորձի համար, զոր օր. «Հանդէս Ամսօրեան», որ գրեթէ դադարելու վերայ է, հարկաւոր չափով բաժանորդ չունենալու պատճառով։ Եթէ մենք վայրենի ժողովուրդ չենք և հոգևոր շահերով ապրելու ընդունակ ենք, այսպիսի թերթից զրկուիլն ինտելիգենցիային վիշտ պէտք է պատճառէր։ Բայց ինտելիգենտը չարախնդութեամբ ինչ խրատներ տալ չարաբաստիկ Հանդիսին. «Դու ուզումես մեզ՝ ինտելիգենտներիս լուսաւորել, քեզ համար պահիր քո լուսաւորութիւնը. արի քո բարձրութիւնից իջիր մեր մակերևոյթը, մեզ պէս դարդակ խրատներ քարոզիր, և այն ժամանակ կը վայելես մեր աջակցութիւնն ու քաջալերութիւնը»։

Փորձեցէք մեր ինտելիգենտին յայտնել հայերէն լեզուով

մի Ասիական նորութիւն, զոր օր. թէ հոգեբանութիւնը քալլ առաջ է դնացել երգի մեկնութեան մասում։ Նա այդ բանով չի հետաքրքրուի, մինչև որ հաստ ժուրնալներ չըստանալ, մինչև որ իւր բիբլիան չկարդայ։ Իսկ եթէ հայերէն լօղուածը կարդայ, այդ քաջութիւնը կը գործի ոչ թէ բան հասկանալու համար (որպիսի ընդունակութիւն արդէն կորուսած ունի, երբէք հայերէն սասունցոց լեզուին վարժուած չլինելով), այլ որպէս զի իւր քաղաքացիական պարտքը կատարէ և հայերէն լօղուածն առանց քննադատելու չթողնէ, այսինքն առանց աքացի տալու չթողնէ։ Այստեղ նա անսպատճառ երեք անշնորհութիւն պիտի գործէ. նախ՝ լեզուն կանուանէ դրաբարարառն, այսինքն թէ վատ է (այս ամենից հեշտ գործ էր), երկրորդ՝ խրատ կը տայ, թէ որ խոռոզից դասեր առնենք (այս էլ իւր որտին եղ քսելու համար է), երրորդ՝ բուն նիւթի մասին ձայն ծպտուն չի հանի (հէնց լեզուի մասին խլացնող թմբկահարութեամբ դատաստան անելու խորամանդ նպատակն այն էր, որ թմբկահարողի հիմնական տգիտութիւնը ծածկուի)։

Թէ ինչպէս է կազմուել այս Աւգեան ախոռը, բաւական է մի ակնարկով պատկերացնել այն աւաղանը, որի մէջ որ մկրտուել են մեր սրտացաւ առաջնորդողները։ Մեր մամուլը խիստ սրտաշարժ կերպով նկարագրում է բարձրագոյն կըրթութեան բարենորոգումները, իսկ թէ մինչև այսօր այդ օրրանից օրպիսի տարերք են մտել մեր առաջնորդող մամուլի մէջ, այս մասին մարդիկ ամենայն խոհեմութեամբ լռում են, կարծես թէ հէնց իրանք մի հրաշալի բացառութիւն են կազմում և բոլոր արատներից զերծ են մնացել, թէպէտ միևնոյն բոյսիցն են ներկուել։ Այն մարդիկ, որոնք հաստ ժուրնալներ կարդալով, բուռն սէր են ստացել ժողովուրդը լուսաւորելու համար, բայց էժան պրծնելու համար՝ գիտութեան սէր չեն ստացել, լուրջ կերպով աշխատելու ընդունակութիւնը ձեռք չեն բերել,—ինչպէս պէտք է ծառայեն մի ժողովրդեան, որի լեզուն չգիտեն։ Նոքա այս բանից ամենևին չեն քաշուում. սահման քաշաց զէնք իւրեանց, նոքա իրանց փոխ առած և կցկցած լդէանների համար հերիք են համարում և այնչափ սակաւաթիւ բառերի խղճուկ պաշարը, որ քաղում են մեր լրագիրներից, վերան ուն.ացնելով ռուսաց քերականութեան կը-

նիքը և եւրոպական տերմինների անմարս խառնուրդը։ Այսպէս է թխում մեր աշխարհաբարը։

Որովհետև ամենաքիչ աշխատութեամբ է ստեղծում այսպիսի միջազգային հայերէնը, այսպիսի վօլապիւկ հայերէնը, դժուար է երևակայել անգամ, թէ ազգական հանաքը որչափ ծանր հետևանքներ է առաջ բերում։ Անձնապատան լեզուն արհամարհում է կոսմոպոլիտիզմը, արհամարհում է գրաբար ուսումնասիրութիւնը, արհամարհում է Մխիթարեանների դաստուած ԼԱՐՓՄՈՍԼԷԱՆ օրինաչը, արհամարհում է նաև փոքր ինչ ՀՈՆՈՍՈՒ աշխարհաբարը, որ նոյն արհամարհած գործոնների աղդեցութեամբ է ձևացել. և այս այսպէս էլ պէտք է լինի, վասն զի, բնական օրինաց, բարբարոսական խրթնութիւնը չի կարող համբերել մշակուած և հարուստ լեզուն։

Ցավչտակութիւնն այն պակասութիւնն ունի, որ յանկարծ բռնկուելուց յետոյ, շուտ էլ անցնում, սառչում է։ Մեր երիտասարդը երիտասարդ է առաւելապէս այդ պակասաւոր կողմով։ Նա տակաւին ուսանողական նստարանի վերայ բուռն ցանկութիւն է ստանում իւր սովորածները մայրենի լեզուով արտայայտելու, և լուսաւորիչ հանդիսանալու։ Սակայն իւր լեզուն անկատար է։ Իդէաներ կան, արտայայտիչ գործիք չը կայ. ինչ անէ նա։ Երիտասարդը վեր է առնում Աւետարան, Եղնիկ, Խորենացի—բայց գրաբարը ծանօթ առեղծուած է, ուրեմն պէտք է քերականութիւն սովորել, պէտք է աշխատել... Նա փորձում է իւր աշխատութիւնը հեշտացնել. դիտէ յունարէն, լատիներէն և ուրիշ լեզուներ, ուստի և դիմում է Մխիթարեանների թարգմանութիւններին, բաց է անում Հոմերոս, Սոփոկլէս, Վերդիլիոս, Կիկերոն, Տակիտոս, Միլտոն և այլն։ Սակայն այստեղ էլ մտադրութիւն է պահանջում, պէտք է բառ առ բառ, նախադասութիւն առ նախադասութիւն համեմատել ընագիրը թարգմանութեան հետ, պէտք է աշխատել... Նա փորձում է զանց առնել գրաբարը, դիմում է աշխարհաբար գրուածքներին, կարդում է Այտընեանի Քննական քերականութիւնը։ Այս հաստափոր գիրքը աւելի տանելի է թուում, սակայն զարմանալի կերպով կարդալուց յետոյ գլխում քան չի մնում, պէտք է աշխատել... Վերջապէս փորձում է կարդալ Աբովեանի Վէրք Հայաստանին—կիսաստուած Ցարդի խորհրդով (որ այժմ ոչ թէ կէս, այլ ամբողջ դև է համարուում մի և նոյն բանակում։) Այստեղ դայթակղութեան վէմ է դառ-

նում գրքի հէնց առաջին երեսը. տասն անդամ միևնոյն երեսը կարդալիս, բնաւ չի պարզւում շարադրութեան կապակցութիւնը... ուրեմն այստեղ էլ հարկաւոր է աշխատել... լուրջ աշխատել...

Շուարած երիտասարդների համար անակնկալ օգնութիւն է հանում։ Ամբոխի միջից ձայն է լսւում. «Թող կորչի դրաքարը, թող կորչին Վենետկի և Վիէննայի սքոլաստիկները, թող կորչի Աբ... Վէ... (լեզուն կակազում է), թող կորչին դրաբարախառն գրիչները։ Ցալտնի է, որ մէկի հրաւէրը, թէ бей его, ՝՝՝

վիգենտը չի վրիպի և Խորենացու պատմութիւնը առասպելաբանութիւն կանուանէ, մեծաբանելով, թէ Գլ-ԸՆ-ԸՆ արդէն քեռեռաձև արձանագրութիւններից հանել է բոլորովին զատ պատմութիւն։ Գիտութեան անունով այսպէս ջարդողները իրանց համար աւելորդ են համարում մի փոքր բան—նոյն իսկ գիտութեան տէր դառնալը. իրանք խօսում են գիտութեան մասին, իսկ գիտութիւնը թողնում են ուրիշների ձեռքում։ Ֆրանսակալեցէք, որ մեր մէջ քեռեռագիր կարդացող մէկը չկայ. մինչդեռ այս այն հմտութիւնն է, որ կարելի է հանկանալ և ըմբռնել... մինչև որ մի պապիրոս ծխի և մոխիր դառնայ։ Զուարթնոց Եկեղեցու աւերակներում գտնուեցաւ քեռեռաձև արձանագրութեան մի մեծ կոթող. «Օր գիտութեան համար մեծ գիւտ, մեծ գիւտ է», հնչուեցաւ դարձեալ կախաններից, իսկ գէթ մի կարդացող չգտնուեցաւ, մինչև որ Նարարեանը ու Բասմաճեանը օգնութեան չհասան։ Թերևս մեզ ընդդիմախօսեն. «մի թէ Բասմաճեանը հայ չէ՞, այո, հայ է, բայց ոչ այն աւաղանում մկրտուած, որի մասին որ մենք խօսել ենք։ Մեր արիստոկրատ ինտելիգենտը իւր գիտութիւնները բերան առնել և քաղել գիտէ երկրորդ ձեռքերից—հատ ժուրնալներից, էնցիկլ. բառարաններից, «Братская помощь»-ից, իսկ բուն աղբիւրից օգտուիլը թողնում է Բասմաճեանների պէս նոր հայ ուսող մշակներին։ Մինչդեռ «Հանդէս Ամսօրեան» բուն աղբիւրներից «Նարարի Ուրարտուի» պատմութիւնն է տալիս. ով, ինչ ձանձրալի ընթերցանութիւն...

«7. Եղամացի Խումբանիգաթին զորութիւնը խորտակեցի, Գարալում և Սարդա երկիրները, Պիշիսիմ և Խարխար քաղաքները ոչնչացուցի, Մեդացոց աշխարհին վերայ՝ մինչև Բիկնի լեռն և Բլիպիլ երկիրը՝ Ասորեստանցիները դրի։

8. Ուրարտու երկիրն աւերեցի. Մուճաթիր քաղաքն աւարեցի. Անցիա և Զիկիրտու երկիրները կոծանեցի և այլն, և այլն, և այլն...»

Մեր ինտելիգենտը ոչ «Հանդէս Ամսօրեայ» և ոչ «Բանասէր» կրկարդայ։ Թերթերն անգամ չկարդալով (դոքա հայերէն են), այլ կրապասէ, մինչև որ մի տքնող ճշնող ռուս, գերմանացի և անգլիացի ասորեստանեան և պարսիկ, Վանայ և Զուարթնոց Եկեղեցու և միւս բոլոր սեպաձև արձանագրութիւններից մի ոճով բանակարգութիւն և կոկիկ շարադրութիւն ձևացնէ... ահա ժամանակ կրկարդայ, ինչու չէ։ Նա սիրում է պատրաստ աշխատութիւնը, թողնելով որ անմշակ

նիպթը ուրիշի ձեռքով մշակուի։ Եւ քանի նա ֆէոուդէն կանչէ, իմանաք, որ ապայէպ է նորա գիտութիւնը։—Մեր ինտելիգենտը ոչ միայն հայերէն լեզուով գիտութիւն չի մշակում, այլ մշակուած գիտութիւնը ժողովրդականացնել չի կարողանում։ Նա իր պղնձէ փողերով հնչեցրել է Դարուինի և Նիչէի հռչակը, մինչև պլսոր շնորհքով գրուածքներ չի արտադրել այդ կոդքերի մասին։ Նա աղնութիւն էլ չունի խոստովանելու, թէ այդպիսի սխրագործութեան համար զարգացած լեզու չունի, մինչդեռ ցած հոգւով ծաղրում է գրաբարախառն լեզուով թարգմանիչներին, որոնք որ չէին դժուարանալ նորա պակասը լրացնելու։ Կարելի է, թէ մենք շատ բան պահանջեցինք, որ հայերէն լեզուով գիտութիւն հնչուի և գիտութիւնը ֆոնվ-դոնոսոդի։ Բայց մեր ինտելիգենտը հայերէն լեզուով գիտութիւն ոչ-ոչ չի կարողանում։ Նա սիրով կրկարդայ հայերէն թերթերից մեր բամբասանքները, մեր վէճերը, մեր յիշոցաբանութիւնները, մեր անուանարկութիւնները, բայց մի ատուածաբանական յօդուածը (տարէն մի անգամ, յունուարի 1-ին քրիստոնէական սիրոյ մասին առաջնորդող գրելու համար), մի փիլիսոփայական յօդուածը, մի հոգեբանական հետազօտութիւնը նոյն իսկ հայ օրաթերթի հեռագիրը՝ երբէք։ Այդ բաների համար նա բաց կանէ ռուսաց թերթեր։ Սակայն դժբաղդաբար կան մի քանի ճիւղեր, որ օտար լեզուով չեն գրուի, այլ միայն հայերէն են գրուել։ Մեր ինտելիգենտը երդուել է այդ բաները երբէք չկարդալ և չուսումնասիրել։ Հայոց պատմութեան ինդէնֆէն ուսուցիչը (ունինք և այդպիսիք) այն պատմութիւնը չի ուսումնասիրի հայկական աղբիւրներից, պարզ այն պատճառով, որ հայերէն կարդալ չգիտէ, բայց նա կըպատճառաբանէ, թէ հայք այդ ճիւղը չեն մշակել։ Ոչ մի ինտելիգենտ մատեմատիկոս հայոց օրացոյցն ու տոմարագիտութիւնը չի ուսումնասիրի, որովհետև կարդացածը չի հասկանայ։ Ոչ մի ինտելիգենտ երաժիշտ հայոց խոնդ-պոն չի ուսումնասիրի, որ այդ արուեստի արժէքը ուսումնական կերպով լուսաբանէ և այլն, և այլն։—Էհ, որ մէկը թուենք, հերիք է և այսքանը։ Մենք ունինք ինտելիգենտ գրող, բայց չունինք ինտելիգենտ կարդացող. ուր է այն կենդանի մտաւոր հաղորդակցութիւնը, երբ որ եթէ մէկը գրէր «Հիմա էլ լռենք», իսկոյն պատասխան կըտանար «Հիմի էլ խօսենք»։

Իսկ ինչ պէտք է լինի լուսաւորիչու բուռն ցանկու-

թեան և հետը նաև լեզուի արհամարհութեան պտուղը, եթէ ոչ, փոխանակ ժողովրդական գրականութիւն ծաղկեցնելու, բարգաւաճել ամբոխի գրականութիւնը։ Միտքն և զգացմունքը պէտք է թուլանան հարստանալու և աղնուանալու հրնար չունենալով, և պէտք է մնուի միայն բնազդումը, կոյր բնազդումը։ Գիտութեան անունով պոռոտախօսը և լեզուի մուրացիկը՝ հետզհետէ պէտք է աւելի և աւելի նեղ գծէ իր բառերի և գաղափարների արդէն իսկ աղքատ շրջանը, ազգային բառարանի կէսը խուզելով և ջուրը չպռտելով, պէտք է մի անգամ քարողածը շարունակ ծամծմէ, կրկնութիւններով կշտացնէ, իսկ ուր որ մտաւոր աղքատութիւնը նշմարելի դառնալու վտանգ լինի, իսկոյն պէտք է օգնութիւն կանչէ բառնցքն ու փրփուրը, հուր և սուրը, մի խօսքով ստեղծէ «կիրակնօրեայ զրոյցների» և «Վրձինի մանրանկարների» հոգեմաշ գրականութիւնը և էլ դուրս չգայ այդ մոգական շրջանակից։

Մեզ կարող են առարկել. «հապա Լէօ-ները»։ Դոքա մի ինչ որ դժբախտ թիւրիմացութեամբ իրանց տաղանդը վաճառել են անարդար դատին և լուտանքների գրականութեան։ այս բոլորին չնայելով, կասկած չկայ, որ դոքա այլ աւաղանումն են մկրտուել։

Ս. Մ.

(Մնացեալը յաջորդ անգամ)

ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲՆԵԳԻՐԸ

1764 թուին Կ. Պոլսում լոյս տեսաւ Եղիշէի պատմութեան անդրանիկ տպագրութիւնը։ Այն օրից մինչև ներկայս նոյն երկը 21 անգամ հրատարակուեցաւ. լոյս տեսան նորա աշխարհաբառ և օտարալեզու թարգմանութիւնները, հայերէն և այլալեզու համառօտ և ընդարձակ տեսութիւններ, ուսումնասիրութիւններ և այլն։ Որքան և մխիթարեան են աղգային և օտար բանասիրութեան առաջ բերած այս արդիւնքները, չէ կարելի սակայն չխոստովանել, որ Եղիշէի պատմութեան մինչ ցայս ծանօթ օրինակների մէջ մի բաց տեղ մնում է։ Այդ բաց տեղը նորա հինգերորդ լեղանակն է։

Ինչպէս յայտնի է, բոլոր տպագրութիւնների մէջ եօթն լեղանակներն և «արտաքոյ եօթն լեղանակի» ութերորդն էլ կան։ Կարծես նոքա այդպէս և կազմուած են եղել և կրում են հեղինակի նշանակած հարազատ խորագիրը։ Սակայն գրչեայ օրինակների օգնութեամբ կարելի է համոզուել, որ տպագրի և ձեռագրի մէջ այդ կողմից սերտ համաձայնութիւն չկայ։ Դոնէ այս են ցոյց տալիս մեր ձեռի տակ եղած փաստերը։

Բանն այս է, որ ս. Էջմիածնի մատենադարանում մեզ պատահել է ստուգել ութն զանազան գրչեայ օրինակներ և դիտել այն, որ բոլոր ութի մէջ էլ միշտ մի լեղանակ պակաս է. թէև մեզ ծանօթ բնագիրն անթերի կայ։ Այսպէս՝ հինգ օրինակ չունին Ե. լեղանակ, երկու օրինակ Զ. լեղ. և մէկ օրինակ Ը. լեղանակ։ Ահա նոցա համառօտ ցանկը, թուահամարները ս. Էջմիածնի մատենադարանի ցուցակինն են.

1. թ. 1687	դրուած	1174 թ.		
2. թ. 1657	—	1570 թ.		չունին Ե. լեղանակ.
3. թ. 1625	—	1641 թ.		
4. թ. 2463	—	1672 թ.		
5. թ. 1381	—	1674 թ.		
6. թ. 1683	—	անթուական		չունին Զ. լեղանակ.
7. թ. 524	—	նոյնպէս		
8. թ. 1685	—	1207 թ.		չունի Ը. լեղանակ.

Եթէ այսպէս է, ինչ ունին ուրեմն պակաս տեղում չիշեալ գրչեալ օրինակները։ Նոցանից մէկը՝ թ. 2463 Դ. յեղանակից լեռոյ ունի փոխանակ Ե.-րդի 2½ թերթ բաց տեղ, երեսները բոլորովին մաքուր, իսկ թ. 1625 նոյն տեղում լուսանցքի վերայ դնի այս նկատողութիւնը. «Եւ յայսմ տեղւոջ ղընթերցողն (sic) մի ցնորի վասն հինգերորդ յեղանակին, զի օրինակն ոչ կայր, և մեղ այլ եղև ոչ պակաս ցնորումն։ Ինչ վերաբերում է թ. 1687, թ. 1657 և թ. 1381, նոցա մէջ Ե. յեղանակի անուն ամենևին չկայ, այլ Դ.-րդին անմիջապէս յաջորդում է Զ.-ին։ իսկ թ. 1683 և թ. 524 օրինակների մէջ Ե.-րդի խորագիրն է «Հինգերորդ՝ կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից» և Է.-րդինն է «Եթներորդ յեղանակ, յորում կարգադրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարչգոյն ես երևի անօրէնութիւնն Վասակայ»։ Ըստ այմ՝ ինչ որ 1, 2 և 5 օրինակների մէջ Զ. յեղանակ է, 6 և 7 օրինակներում նշանակուած է իբրև Ե.-րդ, և այն, ինչ որ 1, 2 և 5 օրինակների մէջ Է. յեղանակ է, 6 և 7 օրինակներում մնում է դարձեալ Է.-րդ. ուրեմն 6 և 7 իսկապէս Զ. յեղանակ չունին։ Գալով թ. 1685, որ գրուած է 1207 թուին, հրատարակենք, որ այնտեղ Ա. Բ. Գ. և Դ. յեղանակները նման են 1, 2 և 5 օրինակներին, Ե. և Զ. յեղանակները 6 և 7 օրինակներին, իսկ Է. ի փոխարէն գրուած է Ը.-ի խորագիրն այսպէս. «Ինքնաքոյ վեց հղանակն ե-ինգերորդ դարձեալ վասն նորին նպատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն»։ Այս ցոյց է տալիս, որ ութներորդ օրինակը ճանաչում է միայն վեց յեղանակ և արտաքոյ վեցի եօթներորդ, որի բովանդակութիւնը սակայն մեզ ծանօթ Ը.-ինն է։

Զեռագրների այս ցուցումներից յետոյ անցնենք տպագիր օրինակներին։

Թէպէտև մենք տեսած չենք անդրանիկ տպագրութիւնը, բայց չենք կարող չհաւատալ 1828 թուին Վենետիկում լոյս տեսած օրինակի հրատարակիչներին, որոնք յայտնում են թէ նոյն անդրանիկ տպագրութեան հրատարակիչն էլ լինում է, որ ոչ մի գրչագիր օրինակի մէջ հինգերորդ հեղինակի խորագիր չկայ եղել և որ հինգերորդի վերայ նշանակուած է եղել վեցերորդի խորագիրը, և հինգերորդ ու վեցերորդ յեղանակների բնագիրն անընդհատ, առանց որևէ բաժանման նշանի, չա-

յունակաւ մէ եղել իբրև մինչպաղաղ մի հատուած մինչև եօթ-ներորդ լեղանակը։ Նոյն անդրանիկ հրատարակիչն այս էլ է յայտնած եղել, որ միայն մի գրչագիր ունեցել է Ե. լեղանակ այն էլ Զ-րդի խորագրով. այդ պատճառով և նա ինքը բաժանել է Զ. լեղանակն երկու մաս, անուանելով Ա. մասն Ե. լեղանակ և Բ. մասն Զ-րդ *)։

Այս տեղեկութիւնից ակներև է լինում այն ինչ որ փոքր ինչ յառաջ դիտել տուինք։ Մեզ ծանօթ չէ այն ձեռագրի թուականը, որից գաղափարել է անդրանիկ հրատարակիչը։ Կ. Պոլսի երկրորդ տպագրութեան **) յառաջաբանում ասուած է որ անդրանիկ հրատարակութիւնն եղել է մի հանրիկ վատ օրինակից [«ունելով առձեռն պատրանտ զմիմբայն գաղափար աղաւաղ և սխալ»]։

Մեր ձեռքի տակ կայ և մի այլ ցուցումն։ Եղիշէի երկրորդ տպագրութեան հրատարակիչը նոյնպէս յայտնում է թէ «խորագիր հեղինակին հինգերորդ գլխոյն չէր յօրինակին»։ այդ տպագրութիւնը լոյս տեսաւ Ս. Պետերբուրգում 1787 թուին. նորա մէջ Ե. լեղանակի խորագիրն «Յարձակումն արևելեայց» վակագծի մէջ է՝ իբրև բնագրում չեղած բան» ժամանակով այդ հրատարակութիւնն հեռու չէ առաջինից. սակայն ակներև է, որ Կ. Պոլսի և Ս. Պետերբուրգի հրատարակիչները, չնայելով իրենց տեղերի հեռաւորութեանը, միևնոյն տեղեկութիւնն ունին Ե. լեղանակի մասին։ Այլ կերպ ասած, ԺԸ-րդ դարու բանասէրներին ծանօթ է եղել, որ Եղիշէի պատմութեան Ե. լեղանակը պակաս է, ուստի դեռ այն ժամանակ նոքա հետաքրքիր են եղել բացատրելու այդ երևոյթը։ Այսպէս՝ Ս. Պետերբուրգի հրատարակիչը կարծում է, որ Ե. լեղանակի մեծն խորագիրն է պակաս, և այդ պատճառով Ե. և Զ. լեղանակներն իրար հետ մրացած են եղել Զ-րդի խորագրի տակ ***)։

*) «Որպէս և Բիւզանդացոց առաջին տպագիրն ազգ ասնէ, խորագիր հինգերորդ լեղանակի չէք և ոչ ի մի գրչագիր, այլ վեցերորդ զայն մակագրին նորին վեցերորդին վերնագրովն և միահետ տանին մինչև ցութներորդն, բայց միայն ի միոյ, որ հինգերորդ կոչէ զայն, սակայն և նա նորին վեցերորդին մակագրովն»։ Տ. Եղիշէ, տպուած Վենետ. 1828։

**) «Պատմութիւն նահատակութեան սրբոյ Վարդանանց և Ղեւոնդեանց քահանայից» Կ. Պոլիս 1823»։

***) «Մեր չեղեալ ձեռնհաս սուրբ գրքոյս կրկին օրինակաց՝ ունելով զխիղճ մտաց՝ ոչ սակաւ տարմանալ եղէ (sic) թէ գուցէ գլուխն

Ս. Պետերբուրգի այս հրատարակութեանն յաջորդեց 1823 թուին Կ. Պոլսի երկրորդ տպագրութիւնը, որ վերջ նշանակուեցաւ։ Ադրիանուպոլսեցի Պողոս պատրիարքն իւր համառօտ յառաջաբանի մէջ յիշում է, որ նորա բնագիրը լոյս տեսաւ «նորոգ սրբագրութեամբ» «ըստ ընտրելագոյն և անսխալ գաղափարին», որ 1781 թուին մի հնագոյն օրինակից հանել է Պալատցի դպիր Գէորգը։ Վերջինս իւր յիշատակարանում յայտնում է, որ իւր նախագաղափարը գրուած է եղել Արարատեան աշխարհում Հայոց ՈԺԶ (1167) թուին Ս. Ներսէս Շնորհալու հայրապետութեան օրով։ Քանի որ այդ հրատարակութեան մէջ գրչագրի այլ հանգամանքների մասին տեղեկութիւններ չկան, պէտք է մտածենք, որ տպագիրն համեմատ է գաղափար ընտրուած գրչագրին։ Այստեղ Ե. յեղանակի խորագրի մասին ոչ մի խօսք չկայ. սակայն վերջում մի յաւելուած կայ, որ առնուած է Թովմայ Արծրունու պատմութիւնից. երկու մասից է բաղկացած այդ յաւելուածը. առաջինն սկսւում «բայց իբրև եղև մեծ պատերազմն» և վերջանում է «ցուցանեմ քում ուսումնասէր քաջամտութեանդ», իսկ երկրորդն սկսւում է «վասն արիւնահեղին Բարծումայի ընդ ժամանակս Պերոզի» և վերջանում է «ի սաղրելոյ Բարսումայի ամբարշտի» խօսքերով։ Նոյնը տեսնում ենք և թ. 1687 ձեռագրի մէջ, որտեղ վերջում կայ յաւելուածս «ի պատմութենէ Թովմայի վարդապետի» ճշդիւ այնպէս, ինչպէս յիշուեցաւ։ Այս յաւելուածի ներկայութիւնը մթթէ ակնարկ չէ այն կասկածի մասին, որ գոյութիւն է ունեցել Եղիշէի պատմութեան պակասի նկատմամբ և որի ազդեցութիւնից չեն ճողոպրել 1823 թուի հրատարակիչներն, աչքի առաջ ունենալով և իրենց ձեռքի տակ եղած գրչագիրը։ Կ. Պոլսի 1823 թ. տպագրութեան մէջ խօսք չկայ ամենևին 1787-ին Ս. Պետերբուրգ և 1813-ին Կ. Պոլիս տպուած օրինակների մասին։

1828-ին լոյս տեսաւ Վենետիկում Եղիշէի պատմութեան մի նոր օրինակ տարբեր ընթերցուածների հետ միասին։ Այդ ժամանակ արդէն գոյութիւն ունէին ոչ միայն մեր յիշած երեք տպագրութիւնները (1764, 1787 և 1823), այլև մի քանի ու-

---

այն պակասեալ իցէ, թէև ըստ իմն իմացմանն խորագիրն այն ինչ սոսկ հատեալ, գէթ վերերորդինն է անդ մուծեալ, ուստի ըստ խոստման սրբոյն եղև կարգաղրեալ։ Տ. Դիրք որ կոչի Եղիշէ պատմադիրք, և այլն, 1787, Ս. Գեա. եր. 408։

րիչները, որոնք մենք տեսած չենք և որոնք զուցէ ծանօթ չէին Մխիթարեան հայրերին։ Եւ իսկապէս զարմանալի չէ, որ այդպիսի հրատարակութիւնների մէջ են. ոչ միայն Նոր Նախիջևանի 1787, Կ. Պոլսի 1813 և Կալկաթայի 1816, այլ մինչև անգամ Վենէտիկու 1825 թուի տպագրութիւնները։ Մենք չը գիտենք, թէ ինչու Մխիթարեանները բոլոր եօթն հրատարակութիւններից լիշում են միայն երեքի մասին՝ այն էլ առանց նշանակելու թէ յատկապէս որը։ Նոքա իրենց նոր տպագրութեան համար բնագիր ընտրել են 1671 թուին գրուած մի օրինակ, որն այն ժամանակ իրենց ձեռքի տակ գտնուած հնագոյնն էր. սակայն նոքա ունեցել են նաև երկու ուրիշ ձեռագիր 1697 և 1758 թուերին գրուած, որոնցից վերջինը հրատարակիչների ասելով, 1167 թուի գրչագրից է հանած։ Եթէ այս այսպէս է, մենք ունինք ուրեմն 1167 թուականից երկու տարբեր գրչագրեր, մէկը 1758 և մէկ 1781 օրինակուած, որոնք տպուեցան 1823 և 1828 թուերին, առաջինը գրեթէ անխառն, իսկ երկրորդը բաղդատութեամբ ուրիշ օրինակների։ 1828-ի հրատարակիչները ծանօթութեան մէջ յայտնեցին այն, ինչ որ վերևն լիշուեցաւ Ե. լեղանակի մասին. միևնոյն ժամանակ նոքա չուզեցան չեղուիլ նախորդ երեք տպագրութիւններից, որոնց մէջ լեղանակների դասաւորութիւնն և խորագիրն Եղիշէի ընծայականին համեմատ են. «Մեր ըստ յառաջաբանի մատենագրին մակագրեալ դ-ն (Ե. լեղ.) անհամ են նոքա, զգլուխ վեցերորդին չկամեցաք առ ժամս խախտել չեբից յոՀՀՀ-ց ֆոն ՀՀՀ ՀՀՀՀՀՀՀՀ.» իսկ կամենալով թիւրիմացութիւնը պարզել և անկարող լինելով, նոքա միմիայն այսպիսի հարցեր են տալիս. «Հինգերորդ լեղանակն ինքն արդեօք կորուսեալ լցէ, կամ ի Բարձումայէ խորամանկեալ, եթէ գլուխ վեցերորդին այսր անդր անկեալ վտարանդի.» հարցեր, որոնց լուծումը նոցա համար ևս առաւել դժուարին էր, քանի որ նոքա համոզուած էին թէ «Կարդ պատմութեանն, Ե՛ՊԷՔ ՈՆՇԳԿՈՔ, չտայ ինչ հաւաստի գիտել։» Այսպիսի հարցեր տալով, Մխիթարեան հրատարակիչները կողմնակի յայտնում են իրենց համոզումը Եղիշէի պատմութեան բնագրի թերի լինելու մասին։ Եւ այս ամենից լեռոյ զարմանալի չէ, որ հայ և օտար բանասէրների մէջ ընդհանրացաւ նոցա տեսութիւնը։ Գերմանացի հայագէտն Նիւմանն Եղիշէի վերայ խօսելու ժամանակ ասում է, որ նոքա

պատմութեան մէջ այնպէս, ինչպէս որ այն հասել է մեզ, բաց տեղ չկայ, թէև բոլոր գրչագրերի մէջ հինգերորդ յեղանակը պակաս է»։ Նա գիտէ և այն, որ անդրանիկ հրատարակիչն երկու մաս է բաժանել Զ. յեղանակը, և այդ է համարում պատճառ, որ միւսների համեմատութեամբ Ե, և Զ. յեղանակներն համառօտ են. իսկ թէ արդարևոյն գլուխ (յեղ.) պակաս է՝ բնագրից, և ինչ նշանակութիւն է ունեցել այն նշումը դժուարանում է որոշել. նա միայն կարծում է, որ Եղիշէի պատմութեան գրչեալ օրինակները բնագրի միւս մասերում ոչնչին նշանակութիւն չունեն, և ինքն այդպիսիների մասին լիովին է, ինչպէս գտնում է, լաց ծանօթութիւնների մէջ, որոնք նա կցել է Եղիշէի անգղիերէն թարգմանութեանը։ *) Մի այլ գերմանացի հայագէտ, Ֆէթթերը, գրեթէ կրկնում է Նիւմանի խօսածն Ե. յեղանակի մասին, բայց «որովհետև հին տպագրութիւնները ձեռքի տակ չունի, իսկ նորերն այդ մասին բան չեն յիշում, ինքն էլ շուտութիւն է պահպանում»։ Նորա այդ նկատողութեան հանդէպ Հ. Տաշեան պէտք է համարում յայտնել թէ 1764 թուի տպագրութեան մէջ «տեղ մաղ ակնարկութիւն չկայ, թէ հինգերորդ գլուխն իւր ձեռագրին մէջ կը պակասէր և թէ հրատարակիչն վեցերորդին մէկ մասն հինգերորդ գլուխ հաշուած ըլլայ»։ Նորա այս որոշ ցուցումն **) անշուշտ հիմնուած է 1764 թ. տպագրի անմիջական ծանօթութեան վերայ, այնպէս, որ այժմ երկու անհաշտ մտքեր դիմադէմ են դրուած. Վենետիկու հայրերը հրատարակում են, որ 1764 թուի տպագրութեան մէջ զեկուցուած է Ե. յեղանակի պակաս լինելու և Զ-ի երկու մաս բաժանուած լինելու մասին, իսկ Հ. Տաշեան ընդհակառակը պնդում է, որ այն հրատարակութեան մէջ այդպիսի բան չկայ։ Չենք կարող մտածել, թէ քննադատելի կէտի նկատմամբ տարբեր աղբիւրներ լինէին մէկի կամ միւսի ձեռքը. կը մնայ ասել, որ ժամանակը մեզ համար պարզէ Վենետիկու հրատարակիչների նկատմամբ այս թիւրիմացութիւնը։ Զմոռանանք, որ Պօղոս պարբիարքի խօսքերից էլ է երևում, որ անդրանիկ տպագրի նախապաշա-

*) Տ. „Versuch e. Geschicte d. Armenischen Literatur, von C. Neumann. Leipzig 1836“ և „History of Vartan etc, by Elisaeus, London 1830“.

**) Տ. Հայկակ. աշխատ. հայագէտ Ֆէթթերի, Վիեննայ 1895, եր. 1.0 ծնթ.

փարը միայն մի վատ Դրինակ է Եղել, ինչպէս վերևն արդէն լիշուեցաւ։ Մեզ գրաղեցնող հարցս վերայ լուսագայ հրատարակութիւնները գրէթէ ոչ մի նոր փաստ չեն յայտնում. բացառութիւն է միայն Անձնացեաց օրինակը՝ որ լոյս տեսաւ 1861 թուին Թէոդոսիայում. մինչ ցայս ծանօթ դրչագրների մէջ այդ օրինակն, անկասկած, հնագոյնն է, ինչպէս կարելի է հաստատի լինել հրատարակչի ներածութեան մէջ բերուած տեղեկութիւններից. սակայն այս էլ ունի իւր քննադատելի կողմերը. լեղանակների խորագրի նկատմամբ կան քաներ, որ նրման չեն, ինչպէս կը տեսնենք լետոյ, մեզ ծանօթ միւս օրինակներին. հին դրչագրիներն են արդեօք այդ տարբերութիւնները թէ նորամուտ, չենք կարող ասել քանի որ հրատարակիչն այդ մասին լուռ է։

Այժմ տեսնենք թէ ինչպէս է կազմուած Եղիշէի պատմութիւնն և որքան անթերի է այն։

Գիրքն սկսում է մի ընծայականով, որից իմանում ենք թէ Եղիշէն «Հայոց պատերազմ» պատմութիւնը գրել է «Դաւիթ երէց Մամիկոնի» հրամանով։ Անշուշտ, նա իւր այդ ընծայականը գրել է պատմութիւնն աւարտելուց լետոյ, այլ կերպ անհասկանալի են «Զքոնն, զոր պատուիրեցեր, արարի», «Ահա նշանագրեցի» «վարգագրեալ և եղեալ ծայրալիր պարապմամբ» *) և այլն խօսքերը։ Իւր ձեռնարկութեան նախապատճառի հետ խօսելով, Եղիշէն պարզապէս դնում է նորաստեղծ մի վերջացած, ամբողջացած գործ։ Թէ արտաքին ձևով և թէ ներքին բովանդակութեամբ այդ գործի մասերն այնքան որոշ էին, որ հեղինակը կարող էր գրել. «Ահա նշանագրեցի չայսմ եօթն լեղանակիս՝ առաջին զժամանակն, երկրորդ զվիրացն պատահումն լիչխանէն արևելից, երրորդ զմիջանութիւն ուխտին եկեղեցւոյ, չորրորդ զերկպառակութիւն ոմանց բաժանելոց ի նմին ուխտէ, հինգերորդ զյարձակումն արևելեայց, վեցերորդ զընդդիմանալն Հայոց պատերազմաւ, եօթներորդ զերկարումն իրացն խռովութեան». այդ եօթն գլուխների մէջ և լիովին պատկերացուցած է եղել հեղինակը «զսկիզբն և զմիջոցն և զկատարածն»։ Մենք իրաւունք ունինք մտածելու, որ իւրաքանչիւր լեղանակի խորագիրը բնագրի մէջ այն

*) պարապմամբ, 1174 թ. դրչագրումն է պատահմամբ, իսկ Կ. Պոլսի 1813 թ. օրինակում պատարմամբ։ Հայկազեան բառգրքին ծանօթ վերջինս, որ և նախադասելի է իմաստին համեմատ

է եղել, ինչ որ Եղիշէն գրել է իւր ընծայականում, այսինքն՝ ա, ժամանակը, բ, իրացն պատահումն չիշխանէն արեալից, գ, միաբանութիւն ուխտին եկեղեցւոյ, դ, երկպառակութիւն բաժանելոց ի նմին ուխտէ, ե, սրձակումն արեալեայց, զ, ընդդիմանալն Հայոց պատերազմաւ, և է, վերկարումն իրացն խռովութեան։ Բոլոր այս եօթն մասերի մէջ ներքին սերտ կապն, «սկիզբը, միջոցն և կատարածն», ակներև է. և այսպիսի խիստ կարգաբանութեան արդասիք է եղել Եղիշէի պատմութեան սկզբնական բնագիրը։

Մեզ ծանօթ գրչագիր և տպագիր օրինակներում լեղանակները մակագրուած են ընծայականին համեմատ. բացառութիւն են հետեւեալը.

Դ. լեղանակի խորագիրը ճիշդ է միմիայն Անձևացեաց օրինակի մէջ, «երկպառակութիւն բաժանելոցն ի սուրբ ուխտէն», այն ինչ միւս օրինակներումն է «վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և անօրէն ընկերաց իւրոց»։ Մեր կարծիքով այս վերջին խորագիրը հեղինակինը չէ, քանի որ ընծայականի մէջ չկայ։

Զ. լեղանակի խորագիրը բոլորի մէջ էլ անճիշդ է։ Անձևացեաց օրինակն ունի «Պատերազմն Հայոց», իսկ միւս օրինակները «Կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից»։ Ակներև է, որ «կրկին անգամ» խօսքերն անտեղի են, քանի որ թէ Զ. լեղանակի բովանդակութեանն և թէ ընծայականի ցուցմանն հակառակ են. չէ՞ որ վերջինիս մէջ լիշուած է միայն «ընդդիմանալն Հայոց պատերազմաւ»։

Է. լեղանակի խորագիրը միմիայն Անձևացեաց օրինակումն է ճիշդ, այն է «Ցերկարումն իրացն խռովութեան». իսկ միւս օրինակներն ունին «եօթներորդ լեղանակ, լորում նկարագրի (այլ օր. «կարգագրի») դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ»։ Այս վերջին խորագիրը չկայ ընծայականի մէջ և մեզ թւում է նորամուտ, որովհետև ընծայականին և Զ. լեղանակի իմաստին համեմատ է միայն Անձևացեաց օրինակի խորագիրը։

Եղիշէի պատմութեան ընծայականի այդ սկզբնական մասի արժանահաւատութեան և նախնականութեան վերաբերեալ մենք տարակոյս չունինք, ինչպէս որ բնագիրն ինքն էլ ցոյց է տալիս։ Աչքի առաջ ունենալով և այն, ինչ որ ասուեցաւ լեղանակների տարբեր խմբագրութեան վերաբերեալ, մենք գալիս ենք

այն եզրակացութեան, թէ Եղիշէի պատմութեան բաժանումներն և իւրաքանչիւրի խորագիրը իւր նախնական վիճակի մէջ ալսպէս է եղել. Ա. Ժամանակքն, Բ. Իրացն պատահումն վիշխանէն արևելից, Գ. Միաբանութիւն ս. ուխտին եկեղեց. ոյ, Դ. Երկպառակութիւն ոմանց բաժանելոց ի նմին ուխտ. Ե. Ցարձակումն արևելեալց. Զ. Ընդդիմանալ Հայոց պատերազմաւ և Է. Ներկարումն իրացն խռովութեան։

Այս ամենից յետոյ հարկ է պարզել այն խնդիրը, թէ բոլոր յեղանակների բովանդակութիւնն համապատասխան է իրենց խորագրին։

Այս խնդիրը պարզելուց յառաջ պէտք է յիշել, որ Եղիշէի պատմութիւնն անաղարտ հասել չէ մեզ. նորա մէջ տեղ են գտել ներմուծումներ, յապաւումներ, թերևս և տեղափոխութիւններ, նմանապէս յատուկ անունների, բառերի և դարձուածների աղճատումներ և այլն։ Սակայն խնդիր հանելով յեղանակների խորագրի և բովանդակութեան մէջ կապ լինելու մասին, մենք ամենևին մտադիր չենք խօսել այդպիսի փոփոխութիւնների վերայ։ Մենք գործ ունինք Եղիշէի պատմութեան ամբողջի հետ և կամենում ենք համոզուել, որ բնագրի մէջ այնպիսի պակաս տեղ չկայ, որ պատմական բովանդակութեանը վնաս պատճառէ։

Այդ կողմից հարցը մեզ համար շատ պարզ է։ Բոլոր յեղանակների բովանդակութիւնը համեմատ է նոցա խորագրին։ Ե-րդէ։ Վերջինիս ճակատին գրուած է «Ցարձակումն արևելեալց»։ Իւրաքանչիւր ոք մեզանից սպասում է, որ հեղինակն այդ խորագրի իմաստին համեմատ պատմէ պարսից բանակի Հայաստան դալն և նորա գործողութիւնները։ Սակայն երբ ուշի ուշով հետևելու լինենք Ե. յեղանակի բովանդակութեանը, կըտեսնենք, որ այնտեղ շատ հարևանցի և համառօտ լիշւում է միայն պարսից զօրագլխի և բանակի Հեր և Զարևանդ հասնելը, այնտեղ նստելն և այնտեղից Հայոց դաւառների վերայ ասպատակներ արձակելը, իսկ Հայոց բանակի կողմից Առանձար Ամատունու դուրս գալն երկու հազար մարդով (ըստ Փարպ. 300 մարդով) և այդ ասպատակներին յետ մղելը, շտտերին ջարդելն և մնացածներին փախուստի ստիպելը։ Այնպէս որ՝ բացի այս դէպքից, որի նկարագրութիւնը միայն 17 տող բան է (տպ. Վենետ, 1859), ուրիշ այնպիսի պատմութիւն չկայ, որի ճակատը կարելի լինէր մա-

կազրել «Ցարձակումն արևելեայց։» Ընդհակառակն Ե. յեղանակի մէջ պատմուած է ս. Վարդանի Արտաղ հասնելն, այնտեղ իւր բանակն յարդարելը, և Վասակի ջանքը սուտ քահանաների միջոցով ուխտապահներին խաբելու. նմանապէս նոյն յեղանակի մէջ ընդարձակ տեղ են գրաւում ս. Վարդանի ճառը և ս. Ղեոնդի քաջալերական իրատն ու բացատրութիւնը՝ Հայոց բանակի և Վասակի պատգամաւորների առջև։ Այս ամէնը մասն է Զ-րդ յեղանակի, որի սկզբնական խօսքերն «Ցետ այսորիկ իբրև ետես զօրավար գնդին Պարսից, եթէ հատան պատգամաւորք ի միջոյ» և այլն, պարզապէս շարունակութիւն են նախընթաց պատմութեան, որով վերջանում է Ե-րդ կոչուած յեղանակը։ Մեր խօսքին իբրև հաստատութիւն են այն ձեռագրները, որոնք չունին Ե-րդ յեղանակ (տ. վերևն 1—5)։ Նոցա մէջ Դ-րդ յեղանակից յետոյ անմիջապէս յաջորդում է Զ-րդը, որի սկզբնական խօսքերն են «Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր» և վերջանում է ոչ թէ «Հաւասարեսցէ մահս մեր» բացագանչութեամբ, ինչպէս է տպագիր օրինակի մէջ, այլ «վասն այնորիկ և հրամանի թագաւորին վաղվաղակի ոչ կարէին հաւատալ։» Այնպէս որ տպագրի Ե. և Զ. յեղանակներն այն ձեռագրների մէջ կազմում են միայն Զ. յեղանակ, իսկ այն օրինակներում, որոնք Զ. յեղ. չունին (տ. վերև 6 և 7), Ե. յեղ. սկսում է «Մեծ է սէրն Աստուծոյ» և վերջանում է «հրամանի թագաւորին վաղվաղակի ոչ կարէին հաւատալ» խօսքերով, որոնք և տպագրի Ե. Զ. յեղանակներն են։

Այսպէս ուրեմն Եղիշէի պատմութեան բնագրից ամբողջապէս պակաս է Ե. յեղանակը, որի խորագիրն է «Ցարձակումն արևելեայց» Թէ ինչ է եղել այդ յեղանակի բովանդակութեան մանրամասնութիւնը, որքան ընդարձակ է եղել այն, և ինչպէս է հանուել բնագրից, այդ հարցերին բաւարար պատասխան տալ շատ կանուխ է։ Հարկ է նախ համախմբել նոցա վերաբերեալ տեղեկութիւններն և սպասել դուցէ ժամանակն օգնէ նոցա առաջնորդութեամբ նորանոր նիւթեր հրապարակ հանել խնդրի լուծման համար։ Այս կը մնայ մի այլ անգամ։

Ե. Ա.

15 դեկտ. 1901
Ալէքսանդրապոլ։

Ց. Գ. Դնում ենք այստեղ Եղիշէի գրականութեան վերաբերեալ կարևոր աղբիւրները, նոցա լիակատար ցանկը թողնելով ուրիշ աւելի պատեհ ժամանակի.

ա. Տպագրութիւնները. Կ. Պոլիս 1764, 1813, 1823, 1866 և 1871.—Ս. Պետերբուրգ 1787.—Նոր-Նախիջևան 1787 (1774). Կալկաթա (թէ՞ Մադրաս) 1816.—Վենետիկ 1825, 1828, 1832, 1838, 1840, 1852, 1859, 1864 և 1893 — Թէոդոսիա 1861.— Մոսկով 1861 և 1892.—Երուսաղէմ 1865.—Զմիւռնիա 1867.— Տփխիս 1879 և փարիզ (թուակ. անծանօթ).—ա. Bibliographia Caucas. et Transcauc. I. M. Міансаровъ, 1876 С.П.Б. եր. 519.—Հայկակ. Մատենագիտ. Վենէտ. 1883, եր. 167.—Գ. Խալաթեանց, Եղիշէի Վարդանանց պատմ. հրատ. Խ. Յովհաննիսեանի, Թիֆլիս 1892.— Teza E' La Storia dei Vartaniani etc. Roma 1893 (նոյնը տես Բազմավէպ 1893 եր. 513).—

բ. Աշխարհաբար թարգմանութիւնները. Մ. Սիմէօնեանց, 1863 Մոսկով. Հ. Ղուկասեանց, 1891 Թիֆլիս (տ. մատենախօս. Հ. Յ. Տ. Հանդէս Ամսօրեայ 1892).—Եղիշէի ուսումնասիրութեան նպաստ «Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց» 3 գիրք, Կ. Կոստանեանցի, 1877 Վիէննա (տ. մատենախօս. Գրիչ, Փորձ 1877 դ. Արարատ 1878 և այլն).

Գ. Օտարալեզու թարգմանութիւնները. անգղիերէն Neumann C. 1830 London, իտալերէն Cappeletti G. 1840 Venezia, դաղղիերէն Kabaradgy G. 1840 Paris, Langlois V. 1868 Paris ռուսերէն Шаншіевъ П. 1853 Тифлисъ և Дилленъ Е, 1884 Харьковъ.

դ. Տեսութիւններ և ուսումնասիրութիւններ.— Հ. Գ. Զարբհանալեան Պատմ. Հ. դպրութեան 1897 Վենէտիկ.— Դարբաշեան Ա. Քննական Պատմ. Հայոց (մասն Դ.) Թիֆլիս 1895.— Յովհ. Հարունի, Խորհրդածութիւնք Եղիշէի վերայ, Վենէտիկ 1896 (տ. նաև Բազմավէպ 1897).—Հ. Յ. Տաշեան, Հայկական աշխատասիր. Ֆէլիքէրէ, տ. Աղգ. մատենադարան, Վիէննա 1895 (տ. նաև Յուց. Վիէն. Մխ. մատենադարանի—«Եղիշէ»). —Neumann C. Versuch einer Geschichte des Armenischen Litteratur Leipzig 1836.—Léve F. L'Arméeie Chretienne etc. Louvain 1886.—Պարբերական հրատարակութիւնների մէջ լոյս տեսած աշխատութիւններից ուշադրութեան արժանի հատուածներն են.—Կոնդէրէր Ֆ. «Եղիշէի պատմ հատակտորք» տ. Հանդ. Ամս. 1893.—Փորձաքաղ. Մ. «Եղիշէի պատմ. շարադրութեան ժամանակը» տ. Բազմավէպ 1898.—Գ. Տէր-Պողոսեան, «Նկատողութիւններ Եղիշէի պատմ. վերաբերեալ» տ. Հանդ. Ամս. 1896.—Գ. Խալաթեանց, «Եղիշէի աղբիւրների առթիւ» տ. Հանդ. Ամս. 1895, և այլն և այլն։

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ.

(Լևոն Գ-ի պատկերի առթիւ)

Մանրանկարչութիւնը (Miniaturmalerei) քրիստոնէական եկեղեցու արուեստի մի ճիւղն է, որ հեթանոսութիւնից առնելով ինքնուրոյն կատարելութեան է հասցրել։ Հռոմայեցիների մէջ նոր որութիւն էր բարձրաստիճան անձանց ոսկեգիր, ծիրանեզարդ մագաղաթի մատեաններ նուիրել, այսպէս երբ Մաքսիմինը դպրոց սկսեց յաճախել, իւր ազգական մի տիկնոջ կողմից ընծայ ստացաւ ոսկեգիր և զարդարուած Հոմերոսը։ Մանկավարժական մի մեթոդ էր այդ, երեխաներին գրքի բովանդակութեամբ աւելի հետաքրքրելու։

Քրիստոնէութիւնն ևս իւրացնելով այս արուեստը՝ նպատակ է ունեցել մասամբ սրբ. Գիրքը վայելուչ կերպով զարդարելու և մասամբ բովանդակութիւնը ընթերցողներին մատչելի անելու. սակայն առաջին հանգամանքը միշտ գերակշռող նշանակութիւն է ունեցել, ուստի և քրիստոնէութեան սիրելի արուեստներից մէկը դարձել։ Քրիստոնէական մանրանկարչութեան ամենահին յիշատակարանները ծագում են Դ. դարում, ինչպէս 354 թ. գրուած Ներացոյցը և Վեննայի կայսերական մատենադարանի ծննդոց գիրքը 48 պատկերով։ Երկուսն էլ հրատարակել է Գրացի համալսարանի ուսուցչապետ Ստչիգովսկի (Stzygowski), այն գիտնականը, որ մի յատուկ մենագրութիւն է գրել Մայր Աթոռի մատենադարանի փղոսկրեայ աւետարանի և ընդհանրապէս հայոց մանրանկարչութեան մասին։ Այնուհետև իրենց հնութեամբ և արուեստով նշանաւոր են Ս. Սոֆոնի Աստուածաշունչը, Վատիկանում գտնուած Յեսուի գրքի փաթեթը, Բաբուլայի աւետարանը 7 մեծ պատկերով և ուրիշ մանրաղարդերով, Codex Rossanensis Գերմարտի և Հարնակի հրատարակութեամբ, որ պատկերների բազմաղանութեամբ ամենից հարուստն է։ Յիշեալ ձեռագրերը բոլորն էլ Ե.—Զ. դարու գործ են համարուում, Բաբուլայինը ասորական, իսկ Codex Rossanensis-ը եգիպտական ծագումով։ Սոցա վերայ պէտք է աւելացնել նաև Մայր Աթոռի փղոսկրեայ աւետարանի մի քանի մանրանկարները, որ ըստ Ստչիգովսկու ասորական ծագումն ունին և Ե.—Զ. դարու արդիւնք են։

Բայց քրիստոնէական մանրանկարչութիւնը, բարձրագոյն պատարելութեան է հասել Բիւզանդիայում Թ.—ԺԱ. դարում, երբ հայկական (մակեդոնական) հարստութիւնն էր իշխում։ Այս հարստութեան ժամանակ ոչ մի միայն բիւզանդական պետութիւնը վերակենդանացաւ քաղաքականապէս, այլ և դիտութիւնը, գրականութիւնն ու արուեստը հասան կատարելագոյն զարգացման. կայսրներից շատերը հովանաւորում էին դիտութիւնն ու արուեստը, իսկ ոմանք էլ անձամբ մասնակցում նորա զարգացմանը. Կոստանդին Զ. ծիրանածին նկարիչ էր և ոսկերիչ։ Սակայն արուեստներից ամենից աւելի մեծ ուշադրութեան արժանանում է մանրանկարչութիւնը։ Փարիզի ազգային մատենադարանում պահուած սաղմոսարանը (№ 139) իւր մանրանկարներով, Կոնդակովի կարծիքով, բիւզանդական արուեստի կատարելութիւնն է ներկայացնում, որ Ժ. դարու գործ է։ Սակայն անուանի հնագէտ արուեստագէտներից ոմանք, ինչպէս Կրաուզէ, Դ. դարու բնագիրների ընդօրինակութիւն է համարում այս սաղմոսարանի նկարները։

Իսկապէս մեր նիւթից դուրս էր կանգ առնել մանրանկարչութեան պատմութեան վերայ, մեր նպատակն էր ընթերցողին գաղափար տալ այս արուեստի ծագման մասին, որ ոչ պակաս կատարելութեան է հասել նաև Հայոց մէջ։ Հայերը դրացի լինելով Բիւզանդացիներին իւրացրել են նրանց քաղաքակրթութեան այլ և այլ կողմերը ի միջի այլոց և մանրանկարչ. արուեստը։ Ցարաբաղդաբար արուեստի այս ճիւղը համարեա terra incognita է մնացել հայ բանասէրների համար այն հասկանալի պատճառով, որ մեծ ծախս է պահանջում այդ արուեստի մնացորդների նոյնատիպ, գունաւոր հրատարակութիւնը։ Սակայն այդ մի անհրաժեշտ գործ է, որ չպէտք է վրիպէ հայ ժողովրդի հոգևոր քաղաքակրթական կեանքի, դիտութեան և արուեստի վերակենդանութեան և բարդաւաճման բարեկամ մեծատուններից ոչ քիչ։ Հայ ժողովրդի և նորա եկեղեցու մէջ մնում է այժմ նախնեաց ստեղծագործող ոգին, սակայն նորից վերակենդանացնել կարելի է այն, եթէ հին արուեստը ուսումնասիրենք, մատչելի դարձնենք կրթուած հասարակութեան և հետևենք եկեղեցիների շինութեան կամ վերանորոգութեան ժամանակ։ Մեր եկեղեցու ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը պէտք է արտայայտուի նաև իւր ճարտարապետութեան և ընդհանրապէս արուեստի մէջ։

Ե՞րբ է սկսուած մանրանկարչութիւնը Հայոց մէջ. դժուար է դրական պատասխան տալ։ Մեր ձեռքը Ե.—Ը. դարու ձեռագիրներ չեն հասել, որպէս զի ըստ այնմ դատել կարողանայինք. վերջերս միայն «Հանդէս Ամսօրեայի» մէջ (1 01 թ. փետր.) Ս. Ե. Խ. հաստատում էր, որ Երուսաղեմի մատենադարանի ձեռագրներից մէկը Է. դարու գործ է, *) բայց

*) Ձեռագրի լիշատակարանը հետևեալն է. «Լոյ. թուա-

տարաբաղդաբար յոդուածագիրը տեղեկութիւն չէ տալիս, մանրանկարներ կան ձեռագրի մէջ, թէ ոչ։ Լազարեան ճեմարանի աւետարանը, որ Հայոց հնագոյն ձեռագրերից մէկն է՝ 887 թ. գրուած, մանրանկար չունի։ Իսկ ԺԴ. դարու մեր տեսած ձեռագրերի մանրանկարները թէ գաւառներում և թէ Մայր Աթոռի մատենադարանում, մեծ մասով կոպիտ են և դուրկ գեղարուեստական նշանակութիւնից, բացառութեամբ վրոսկրեայ աւետարանի, որը հնագոյն աստրեկան ծաղում ունեցող պատկերներից զատ խաչական ճաչակով մանրագրեր ևս ունի, անչուշտ հայ գրի գործ։ Այս հանգամանքներն ի նկատի ունենալով, կարծես ճշգրտում է ուսուցչապետ Սաչիգովսկու այն կարծիքը, թէ Հայաստանում մինչև ԺԱ. դարը մանրանկարչական արուեստը չէ զարգացել։

Սակայն դժուար է առանց այլ և այլութեան համակերպուիլ այս կարծեաց հետ։ Զ. դարից սկսած Հայերը ամենասերտ յարաբերութիւն ունէին բիւզանդացիների հետ մինչև Արաբացիների կատարեալ տիրապետութիւնը. բիւզանդական քաղաքակրթութեան ազդեցութեան լաւագոյն ապացոյցը կարող է Զուարթնոց եկեղեցու բիւզանդական ոճով շինութիւնը համարուել։ Տ. Խաչիկ վարդապետի շնորհիւ աւերակների տակից հանուած քանդակներն ու զարդարանքներ, սիւների մնացորդներն ու խոյակները ցոյց են տալիս, որ այդ եկեղեցին համբակների ձեռքով չէ կառուցուած, այլ արուեստի մասին հասկացողութիւն և ճաշակ ունեցող անձանց ձեռքով։ Է. դարում և շինուած նոյնպէս Թալինի մեծ եկեղեցին։ Նոյն դարում նաև Հռիփսիմեանց գաղտրիկ տաճարը Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով։ Կարելի է ենթադրել, որ Հայերը Բիւզանդական ճարտարապետութիւնն ու քանդակագործութիւնը, նոյնիսկ մոզաիկի արուեստը *) իրացնելուց յետոյ՝ միանգամայն անծանօթ մնալին մանրանկարչական արուեստի հետ։ Բացատրել այս հանգամանքը պատկերամարտների չարժամբ, որին համակիր էր հայ կուսակցութիւնը Բիւզանդիայում, դժուար է։ Աւելի հաւանական է, որ այդպիսի ձեռագրերը ոչնչացել են, ինչպէս ոչնչացել են և այժմ շատ հազուագիւտ են Բագրատունեաց շրջանի ձեռագրերը։ Ժ. դարից մնացած մի երկու ձեռագրի կոպիտ մանրանկարչութիւնը մեզ համար համոզեցուցիչ ապացոյց չէ, որ մինչև այդ ժամանակ Հայաստանում այդ արուեստը չէ ծաղկել։ Այս առարկութիւնը մէջ բերելով, չենք կամենում պնդել, թէ մանրանկարչութիւնը Հայոց մէջ անպատճառ աւելի վաղ է սկսուել և զարգացման հասել. դրական կարծիք յայտնելու համար հարկաւոր են աւելի փաստեր, քան ունինք մինչև այժմ։

կան ԾԱ։ ԶՃԲ։. գրեցաւ լԱՃի լաւուրս Մուշեղի. Գրիգոր եբէցէ»։

*) Զուարթնոց եկեղեցու աւերակների մէջ գտնուած։

Սակայն ԺԱ. դարու կէսերէն ի յարդէն ընտիր մանրանկարներ ունինք, թէև տարաբաղդաբար ոչ բազմաթիւ. Մայր Աթոռի մատենադարանի ձեռագրերէն մէկը՝ որ գրուած է 1066 թ. բիւզանդական արուեստի կատարելութեամբ մանրանկարներ ունի, տարաբաղդաբար մի քանիսը գողցուած կամ տգիտութեամբ պոկուած։ Այս աւետարանը սեպհականութիւն է եղել Ներսէս Շնորհալու, Գրիգոր տղայի և Հռովմկլայի ուրիշ հայրապետներու և իւր յատուկ պատմութիւնն ունի, որի մասին յուսով ենք, առիթ կունենանք մի անգամ գրելու։ Գուցէ ԺԱ. դարու գործ լինի Գրիգորիս կաթուղիկոսի սեպհականութիւն եղած Գրիգոր աստուածաբանի ճառերի ժողովածուն, ընտիր

միջին երկաթագրով և մանրպզարդերով, էնթագրութեամբ կոք ասում, որովհետև հաստատուն թուականը չունի. ձեռագիրը, այլ մի քանի տեղ լիշում ստացողի «Գրիգորէս» կաթողիկոսի անունը։ Կան և առանց լիշատակարանի ձեռագրեր Փ.—ԺԱ. դարու, բայց այդպիսիները ի նկատի չունինք։ Մեծն Հայաստանի հնագոյն ձեռագիրները շատ սակաւաթիւ են, որոնց մէջ պէտք է լիշել Խաչենոյ Վախթանգ թագաւորի և նորա թագուհու Խրիլիշահի աւետարանը, թարգմանչաց վանքի աւետարանը, Սպասալարքէզի մեծ իշխաններից մէկի աւետարանը, ամենքն էլ թանգագին և կարևոր մանրանկարչական արուեստի պատմութեան ուսումնասիրութեան համար։

Մանրանկարչական արուեստի և հայ գրչութեան ծաղկման ոսկեդարը պիտի համարել ԺԲ. դարու վերջերից մինչև

ԺԴ. սկիզբը։ Լեւոն Բ-ի Հեթում Ա-ի, Լեւոն Գ-ի և նորա որդի Հեթում Բ-ի ժամանակ Կիլիկիայում ծաղկում է մի այնպիսի գրչութիւն ու արուեստ, որ մրցել կարող էր ժամանակակից բոլոր ազգերի նոյն կարգի արուեստների հետ։ Հայերը սերտ յարաբերութիւն ունէին ոչ միայն Խաչակիրների, այլ և Բիւզանդացիների հետ։ Հայոց թագաւորներն ու թագաւորազունները ոչ միայն արուեստի և գիտութեան հովանաւոր էին հանդիսանում, այլ և իրենք անձամբ մասնակցում են ժամանակի գիտութեան և արուեստի զարգացման։ Այս ժամանակին ենվերաբերում մեր գրչագրերի ամենից աղնիւ սեռակները։ Հայ թագաւորներն ու իշխանները, կաթողիկոսներն ու եպիսկոպոսները բարեպաշտական զգացմունքից դրդուած մեծածախս ձեռագիրներ են պատրաստել տալիս այս կամ այն վանքին կամ անձնաւորութեան նուիրելու կամ անձնական գործածութեան համար։ Չլիշելով Պետրոս գետադարձի, Խաչենոյ Վախթանգ թագաւորի և այլոց սեպհականութիւն եղած ձեռագրերը, Ռուբինեանց շրջանի լաւագոյն արտադրութիւններն են։ Ներսէս Լամբրոնացու նարեկը սքանչելի փոքր երկաթագրով և մանրանկարներով զարդարուած։ Յակոբ Կլայեցի կաթողիկոսի Աստուածաշունչը ստացողի պատկերով, Լեւոն Դ-ի գեղահրաշ ճաշոցը, Հեթում Բ-ի Եաւալի Նչեցու Աստուածաշունչները, Յովհաննէս Երզնկացու ընտիր գրչութեամբ և մանրանկարներով ու ծաղկագրերով, Վարդան պատմագրի աւետարանը, Յովհաննէս արքայեղբօր պատրաստած ձեռագրերը զարմանալի մանրանկարներով զարդարուած, որոնք Մայր Աթոռի մատենադարանի զարդն են կազմում և հայ գրչութեան ու արուեստի լաւագոյն արտադրութիւնները։ Կիլիկիայի վանքերից սկսուած շարժումը անցնում է մեծն Հայաստանի Երզնկայից մինչև Տաթեւ, ուր ոչ պակաս կատարելութեամբ ձեռագրեր կան գրուած։

Այնուհետև առժամանակեայ թմրութիւնից յետոյ ԺԶ. դարու վերջերից հայ գրչութիւնն ու մանրանկարչութիւնը նորից վերակենդանանում է Էջմիածնի կաթողիկոսների շնորհիւ։ Ղազար և Նահապետ կաթողիկոսների անունները հայ արուեստի պատմութեան մէջ շատ պատուաւոր տեղ պիտի գրաւեն։ Այս վերջին շրջանի արուեստը աւելի սրեալ պարսկական ընտանութիւն ունի։ Մի առանձին գլուխ կարող է կազմել եւրոպական ազդեցութեան երթարկուած մանրանկարչութիւնը, զլխաւորապէս լեհահայոց մէջ։ Առանց գրքերի, յիշողութիւնից գրուած այս մի քանի թռուցիկ նկատողութիւններով մեր նպատակն էր ընթերցողի առաջ դնել այն ընդարձակ ասպարէզը, որ կարօտ է ուսումնասիրութեան և որի հետ կապուած է մեր նախնեաց փառքն ու եկեղեցու գիտակցական յառաջադիմութիւնը։ Մայր Աթոռից պէտք է սպասել հոգեւոր կեանքի և քաղաքակրթութեան այս նոր արշալոյսը, եթէ հայ ժողովուրդը իւր սիրով ոռոգել կամենայ այն անդաստանը, որը

ունակութիւն ունի այդ մտքով պտղաբեր լինելու։

Հետաքրքրական է և կարևոր նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ մանրանկարչութեան սովորական մոտիւներից զատ, որ ս. գրքի բովանդակութեան են վերաբերում, երբեմն հանդիպում ենք պատմական անձնաւորութեանց կամ եղելութեանց պատկերների։ Մայր Աթոռի մատենադարանում պատմագրերի (Խորենացու և այլոց) մի ժողովածու կայ, եթէ չեմ սխալւում ԺԶ. դարու գործ, զարդարուած բովանդակութեան համեմատ պատկերներով։ Սակայն պատմական անձնաւորութեանց պատկերներ ունինք աւելի վաղ ժամանակներից։ Գրիգոր Նարեկացու պատկերն ունինք Լամբրոնացու նարեկի մէջ, Ղեւոնդ Շնորհալու պատկերն ունինք մի ժամագրքի մէջ, որի թուականն ու գրիչը չեմ յիշում։ Հանգուցեալ Ալիշանը իւր Սիսուանի մէջ ղետեղել է Լևոն Գ-ի պատկերը (եր. 481) ժամանակակից նկարիչ Սարգիս Պիծակի գործ, իսկ եր. 235 նոյն իսկ նկարչի՝ Սարգիս Պիծակի պատկերը։ Սակայն հաղուագիւտ չեն պատմական անձնաւորութեանց նկարները մեր գրչագրերի մէջ. մեզ յայտնի են թագաւորներից Հեթումի, Յակոբ Կլայեցու, Նաալի Ղէեցու, Եղիազար և Նահապետ կաթողիկոսների պատկերները, բոլորն էլ ժամանակակից նրկարիչների գործ։ Սոցա թուին է պատկանում և ներկայ պատկերը, որ Լևոն Գ-ինն է, ինչպէս ընթերցողը համոզուել կարող է հետևեալ տողերից։

Մաղաղաթեայ սոյն երկթերթը առնուած է մի գրչեայ աւետարանից, որի մասին առաջին անգամ տեղեկութիւն է տուել Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեան իւր ճանապարհորդութեան Բ. մասի մէջ, եր 457։ Ձեռագիրը այժմ էլ գտնուում է Ն. Նախիջևանի Լուսաւորիչ նկեղեցու պահարանում։ Ինձ յայտնի չէ, թէ երբ, ում ձեռքով են պոկուած այս թերթերը և Մայր Աթոռ բերուած։ Այս թանգագին պատառիկը այժմ սրբութեամբ պահպանուում է Մայր Աթոռի եկեղեցական թանգարանում, բայց ցանկալի էր ամբողջ ձեռագիրը Մայր Աթոռ փոխադրել և պոկուած պատառիկը նորից հաստատել իւր սկզբնական տեղում։

Պատկերի խորանի տակ աջ և ձախ կողմից, ինչպէս ընթերցողն անձամբ ստուգել կարող է, գրուած է «ԼԵՒՈՆ ՈՐԴԻ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԻ»։ Իսկ միւս երեսում հետևեալ ձօնն է գրուած ոսկեգոյն գրերով տող առ տող.

Տն Կոստանդեա կաթողիկոսի
Ձաւետարանս այս ըղձալի
Որդոյ Հեթում թագաւորի
Առ ի նշան արքաութե դատել
Ըստ հաւատոյ դաւանութեան
Որ յուղղափառացն Լդեալ սահման
Ի յիշատակ իւր յաւիտեան։

Հեթումի որդի Լևոնը ուրիշ ոչ ոք լինել չէ կարող,

բայց եթէ Լեոն Գ. Ռուբինեանց ամենահամակրելի շրջանի իշխաններից մէկը, որի ժամանակ գրչութիւնն ու արուեստը մեծ կատարելութեան հասաւ։ Նորա ճաշոցը, որ գտնւում է Մայր Աթոռի մատենադարանում, գուցէ մանրանկարչական արուեստի ամենից աղնիւ երեսոյթը պէտք է համարել Հայոց մէջ։ Հեթում առաջինն էր միայն, որ Լեոն անունով որդի ունէր, որը դերի ընկաւ Եգիպտոսի Սուլթանի ձեռքը և ազատուելուց յետոյ արքայական դահը բարձրացաւ նոյն իսկ հօր կենդանութեան ժամանակ։ Հեթում Բ-ը կուսակրօն էր և իրեն ժառանգ նշանակեց իւր եղբօրորդի Լեոն Դ-ին։ Բացի դորանից Կոստանդին ըստ վկայութեան Վարդան պատմչի Հեթումի որդոց՝ Լեոնի և Թորոսի դաստիարակն էր և ապրեց մինչև Թորոսի մահը և Լեոնի գերութիւնը, որ շատ ծանր տպաւորութիւն թողեց ծերունի հայրապետի վրայ։ Աւետարանի վերոյիշեալ ոսկեզիր յիշատակարանն էլ, ինչպէս ընթերցողը տեսաւ, նոյնն է հաստատում։ Ըստ Ալիշանի *) Կոստանդին կաթողիկոսը բազմաթիւ աւետարաններ է գրել վանքերին և եկեղեցիներին, ինչպէս նաև իր սան արքայազուններին նուիրելու համար։ Այդ ձեռագիրներից մէկն է Ն. Նախիջևանի Լուսաւորիչ եկեղեցու աւետարանը, որից առնուած է սոյն պատկերը։ Աւետարանը գրուած է Լեոնի գերութիւնից և Կոստանդին կաթողիկոսի մահից՝ այսինքն 1268-ից՝ **) առաջ։ Անհրաժեշտ էր անշուշտ մանրամասն նկարագրել մանրանկարի մեծութիւնը, գոյներն ու գեղարուեստական արժէքը, բայց առանց բնագրի անկարելի էր այդ։

ԴԱՐՅԻՆ ՎԱՐԴ. ՑՈՎԱԿԵՓԵԱՆ

---

*) Սիսուան

**) Չամչեան II եր. 268

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

(Նորա գրական ու մանկավարժական քառասուն եւ հինգ ամեայ գործունէութեան առիթով):

I.

1901 թ. սեպտեմբերին թողեց հայ ուսուցչական փշոտ ասպարէզը և հեռացաւ Ներսիսեան դպրոցից մեր բազմաշխատ և քրտնաջան վաստակաւոր սակաւաթիւ մշակներից մէկը, ամենքից յարգուած Գէորգ Բարխուդարեանը։ Քառասուն և հինգ տարուայ անընդհատ մանկավարժական և գրականական աշխատանքը այնքան թուլացրել էին նորա աչքերը, որ նա ստիպուած եղաւ իւր սիրած և վայելուչ ուսուցչական ասպարէզը թողնել։

Մօտ կէս դար հայ մատաղ սերնդի դաստիարակ հանդիսանալով՝ թէ գիւղական պետական և հայոց ծխական և թէ քաղաքային դպրոցներում, թէ գիմնազիոնում և թէ Ներսիսեան Հոգևոր դպրոցում, վարելով ուսուցչի, տեսչի, վերատեսչի և թեմական տեսչի պաշտօններ ալ. Բարխուդարեանն այնպիսի զգացմունքներ էր ներշնչում իւր սաներին, այնպիսի խնամատար հոգացողութիւն ունենում նրանց վերաբերութեամբ, որ սոքա՝ թէ աշակերտութեան միջոցին և թէ տուաւել ևս ապագայում միշտ խորին ակնածութեամբ են յիշել նորա անունը։ Մեղմ, ընկերասէր և մարդասէր բնաւորութիւնը սիրելի էին դարձնում նորան նաև իւր ընկերակիցների, պաշտօնակիցների, իշխանաւորների և ստորադրեալների շրջաններում։ Նորա համեստութիւնն օրինակելի և մինչև անգամ կարելի է ասել, չափից

աւելի էր. Նորա պարզ և քաղաքավարի ձևերն ու խոսակցութիւնը տպաւորութիւն էին թողնում։

Այո՛, միմիայն այդպիսի բնատուր ձիրքերի շնորհիւ կարող է մարդ քառասուն և հինգ տարի պաշտօն վարել, թոքեր մաշել, խրատել, ազդել, դաստիարակել, կրթել և միևնոյն ժամանակ հոգւով միշտ թարմ մնալ և անխոնջ աշխատել։ Որքան որ ծանր է ուսուցչի տևական աշխատանքը, այնքան ևս ուրախ է Նորա սիրտը՝ միշտ շրջապատուած լինելով մատաղ, թարմ հոգիներով, որոնք մարդկային կեանքի մշտադալար և ծաղկաշատ գարունն են ներկայացնում. մարդկային կեանքի արշալոյսն է պատանեկութիւնը, այդ նորաբողբոջ և երփներանգ ծաղիկների գեղատեսիլ և հոտաւէտ փունջը։ Ուսուցիչը բաղդ ունի այդ մշտատև գարունն իւր աչքի առաջ ունենալ շարունակ և այդ պատճառով էլ, երբ Նորա ճակատն արդէն ծածկւում է խորշոմներով, մարմինը կորանում և մազերը ձիւնափայլ սպիտակում, այնուամենայնիւ սիրտը, հոգին թարմ է մնում. նա երջանիկ է զգում իրեն՝ կեանքի արշալոյսը դիտելով շարունակ և բարոյապէս մխիթարւում՝ գարնան այդ նորածիլ ծաղիկներին սնունդ և մտաւոր աճման նիւթ մատակարարելով։ Ո՛չ միայն ներկան, այլ և ապագայի յոյսերը թև ու թիկունք են ուսուցչին. նորաբողբոջ ծիլերը պէտք է աճեն, ուռճանան, ծառ դառնան, պտղաբերեն և իրենց կողմից նոր շիւղեր արձակեն. ուսուցչի գաղափարներով սնուած պատանիները պէտք է երիտասարդանան, խելահաս դառնան, իդէալներ ունենան, պէտք է գործեն հասարակութեան մէջ, յարգանք վայելեն և միշտ յիշեն իրենց մտաւոր սնունդ տուողին, իրենց նախկին փոքրիկ ուղեղների մէջ գաղափարներ պատուաստողին, ահա՛ ուսուցչի բարոյական ու վսեմ մխիթարութիւնը, որի համար նա տանում է անձնուիրաբար ամեն տեսակ զրկանք և նիւթական կեանքի դառնութիւնները։

Պարոն Բարխուդարեանն ամուրի լինելով ու սեպհական զաւակներ չունենալով՝ իւր սիրտն ու հոգին նուիրել էր իրեն մշտապէս շրջապատող սաներին և հայրական խնամքով փայփայում էր նրանց զգացմունքները,

առաջնորդում էր դէպի բարին, բարոյականը. յորդոր էր կարդում նրանց՝ լինել առաքինի, ազնիւ, խոհուն և պարտաճանաչ. գուցէ նորա ասածներն ու յորդորները այնքան էլ չազդէին մատաղ սրտերի վերայ, եթէ ինքն անձամբ իբրև կենդանի օրինակ չհանդիսանար։ Պատանեկութեան համար երբէք խօսքն այնքան նշանակութիւն և ազդեցութիւն չունի, որքան անձնական բարի օրինակը. պատանեկութեան աչքը սուր է և երբեմն խորը թափանցող, նա զգում և զանազանում է դատարկ խօսքը սրտաբուղխ զգացմունքներից, նորա սիրտը չէ կպչում լոկ տեսականապէս դատողին, այլ յարատև ձգտումն ունի դէպի անկեղծութիւնը։ Անկեղծ սրտով խօսող ուսուցչի խօսքերը միայն մշտապէս տպաւորւում են պատանիների հոգեւոր պէս պարզ և լերան կրծքից բղխող աղբիւրի պէս վճիտ հոգիների վերայ. կեղծաւորութեան և անսրտութեան դափնիները շատ կարճատև են և շատ աւելի շուտ են թառամում, քան թէ կարծում են միամիտ աղաւնիների վերայ չսփ ու ձևով և դիտաւորեալ նպատակներով ազդել ցանկացողները։ Այդպիսիների խօսքերն ու քարոզները ապառաժի վերայ ընկած սերմի նման շուտ կաճեն, բայց շուտով էլ կչորանան, կոչնչանան և ամենափոքր հետք անգամ չեն թողնի իրանց ետևից։

II.

Նոյն բնորոշ յատկութիւններն է արտայայտում նաև Գէորգ Բարխուդարեանի գրիչը՝ իբրև բանաստեղծ և թէ առ հասարակ իբրև գրական գրիչ. նոյն համեստութիւնը, նոյն ազնիւ ոգևորութիւնը, նոյն անկեղծ բնաւորութիւնը։ Մենք կարող ենք համարձակ ասել, որ նորա գրիչը միշտ անբիծ և մաքուր է մնացել. նա կուսակցական ոգւով չէ շեղուել ճշմարտութիւնից, անձնական հաշիւներ չէ հրապարակ բերել, իւր գրիչը թշնամիներին վրէժխնդիր լինելու համար չէ գործածել, իւր մաղձը չէ թափել այս կամ այն անձի վերայ՝ կծու և խայթող ոճով բանաստեղծութիւններ գրելով (ինչպէս օրինակ մեր վերջին ժամանակների ա-

մենամեծ բանաստեղծ Գամառ-Ֆաթիպան)։ Ինչպէս որ ինքը բանաստեղծութիւնը բարձր է ամենօրեայ, սովորական կենցաղից, այնպէս էլ Բարխուդարեանը բարձր է պահել իւր մուսայի ներշնչումները և գաղափարական աշխարհում սաւառնելով միշտ, ոգևորուել է Գէօթէի, Շիլլերի, Շէքսպիրի, Լէսսինգի նման համաշխարհային տաղանդների ստեղծագործութիւններով և դրանց իդէալների թարգմանն է հանդիսացել։ Մասամբ նաև այդ դասական գրուածքների իդէալական ազդեցութեանն ենք վերագրում այն հանգամանքը, որ Բարխուդարեանի գրիչը չէ զբաղուել առօրեայ կեանքի երևոյթներով և շատ քիչ է շօշափել հասարակական կեանքի ելևէջները։ Սակայն այդ սպակասը նա լրացրել է Շիլլերի «Զանգակի երգը» հնչեցնելով արթնացած հայի ականջներին, «Վիլհէլմ Տէլլի» «Օրլէանի կոյսի» հայրենասիրական ազդու հնչիւնները տարածելով հասարակութեան մէջ, ոգևորելով հայ երիտասարդութիւնը։ Եւ ի՞նչ զարմանք, որ մեր բանաստեղծը ինքը ոգևորուէր և ուրիշներին էլ ներշնչէր այդ գաղափարական ոգևորութիւնը, քանի որ ամբողջ Եւրոպան, կարելի է ասել, ամբողջ քաղաքակիրթ աշխարհը սքանչանալով է կարդում այսօր ևս այդ հոգեշունչ մարդկանց հեղինակութիւնները, քանի որ դեռ այժմ էլ շատ քիչ եւրոպացի գրագէտ կգտնուի, որի սեղանի վերայ այդ միշտ թարմ մնացող հեղինակութիւններից մէկն ու մէկը չգտնուի։

Սակայն որտեղ և ինչպէս է առնում մեր բանաստեղծն այդ դասական երկերի ճաշակը. և ինչ միջավայրումն է նա ենթարկւում այդ իդէալների ազդեցութեանը—Դորպատում։

Դորձեա՛լ Դորպատ։

Ո՞վ կարող էր երազել, թէ հիւսիսային երկրի այդ քաղաքակրթուած փոքրիկ անկիւնն այդպիսի վերածնող դեր կկատարէ մի ասիական խոր քնի մէջ ընկղմած փոքրիկ ազգութեան մի մասի վերաբերմամբ, որի գրականութեան փառաւոր շրջանը դարերից ի վեր թանձր փոշու տակ էր մնացել և որի դաւակները ասիական բռնակալ պետութիւնների ճնշման ներքոյ ամեն բան մո-

ռացած՝ հազիւ էին իրենց նիւթական գոյութիւնը պահպանել։ Հայ ժողովուրդը վաղուց արդէն մոռացել էր իր նախահայրերի մշակած ճոխ, ճկուն լեզուն ու գրականութիւնը, իսկ իւր խօսած ոչ հասկանալի լեզուով ոչինչ չունէր կարդալու և հասկանալու։ Նոյն իսկ իր թշուառ գոյութեան տառապանքներից սիրտը թեթեւացնելու մտքով՝ դէպի Ամենաբարձրեալն ուղղած աղօթքի մրմունջների խօսքերը չէր հասկանում այլ ևս։ Հայ ժողովրդի այսպիսի ողբալի դրութեան միջոցին էր ահա, որ արշալոյս ծագեց Դորպատից։ Արշալոյսի առաջին ճառագայթներն ընկան մեր անմահ Խաչատուր Աբովեանի վերայ և նորա միտքը լուսաւորելով՝ հիմք դրուեց ժողովրդի սրտին ու մտքին մատչելի աշխարհաբար լեզուի և գրականութեան։ Արշալոյսից յետոյ Դորպատի արևի ճառագայթներն հետզհետէ հորիզոնից բարձրանալով՝ խորը թափանցեցին Ստեփաննոս Նազարեանի, Ռաֆայէլ Պատկանեանի, Պետրոս Սիմէօնեանի, Գէորգ Բարխուդարեանի և այլոց սրտերը, ջերմացրին դրանց և դրանց շնորհիւ հայ ժողովուրդն ունեցաւ իւր վիշտն ու ցաւը իրեն հասկանալի լեզուով երգող ծիծեռնակները։

Մեր նոր գրականութեան այդ անմոռանալի մարդիկն էին, որ եւրոպական քաղաքակրթութեամբ զինուելով ու ոգևորուելով Դորպատում, մտան հայ ժողովրդի մէջ և դրանցից ամեն մէկը մի որոշ ճանապարհով աշխատում էր թանձր խաւարից դէպի ճշմարտութեան լոյսը հանել իր հայրենակիցներին։ Խաչատուր Աբովեանը թափանցեց բուն ժողովրդի սիրտը և իւր հայրենասիրական գաղափարներով տոգորուած «Վէրք Հայաստանին» գրելով՝ աշխարհաբար գրականութեան հիմնադիրը հանդիսացաւ, Ստեփաննոս Նազարեանը մընաց հեռու հիւսիսում և «Հիւսիսափայլով» իւր պզգակիցներին առաջնորդում էր դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը, Ռաֆայէլ Պատկանեանը (Գամառ-Բաթիպան) հայրենիքից դարձեալ հեռու, սակայն հայութեան մէջ մնալով՝ իւր տաղանդաւոր գրչով արտայայտեց հայ ժողովրդի սրտի խորքերում թագնուած և մինչև այդ ժամանակ անյայտ մնացած վշտի, ուրա-

խութեան, վառ յոյսերի և այրուած սրտի զգացմունքները՝ ամենքին հասկանալի լեզուով։ Հրապարակախօս Պետրոս Սիմէօնեանը «Մեղու Հայաստանի» լրագրով ազգային եկեղեցու անկախութեան սկզբունքները պաշտպանեց. իսկ Գէորգ Բարխուդարեանը եւրոպական մեծ իդէալիստների մտքերը մատչելի դարձրեց իր հայրենակիցներին։

Սոքա բոլորն էլ յաւ ըմբռնելով դաստիարակութեան նշանակութիւնը մի ժողովրդի քաղաքակրթութեան համար, բացի վերոյիշեալ ասպարէզներից՝ գործեցին նաև իբրև դաստիարակ-ուսուցիչ հայ մանկուոյ։

Մեր նոր գրականութեան պատմութեան ամենափառաւոր էջը պէտք է կազմեն «դորպատեանները» իրենց գաղափարական գործակիցներով։

Գէորգ Բարխուդարեանի գրիչը հաւատարիմ մնաց «դորպատեանների» աւանդական իդէալներին և մինչև այսօր էլ շարունակում է իւր բեղմնաւոր գործունէութիւնը յօգուտ հայրենի գրականութեան։

III.

Գէորգ Բարխուդարեանը ծնուել է Տփխիսում 1835 թ. Նոյեմբերի 10-ին։ Զարմանալի զուգադիպութիւն. նոյեմբերի 10-ին է ծնուել նաև այն մեծ բանաստեղծ Շիլլերը, որի սքանչելի երկերը հայ գրականութեան սեպհականութիւն դարձան Բարխուդարեանի գրչի շնորհիւ։

Նորա պապ Սարգիսը գաղթել է Ղարաբաղից-Վրաստան և բնակուել Սուրամի մօտ գտնուող Վաղո կոչուած գիւղում, Բէգթաբէգեան իշխանին պատկանող կալուածքում։ Այստեղ լոյս աշխարհ է գալիս Գէորգի հայրը, Նիկողայոսը և մեծանում իբրև կալուածատիրոջ ճորտ, որովհետև այդ ժամանակ Վրաստանում ճորտութիւնը վերջացած չէր։ Ինչպէս երևում է, Նիկողայոսը պէտք է մի աշխոյժ ու աչքաբաց պատանի եղած լինէր, որովհետև ճորտատէր իշխան Բէգթաբէգեանը իւր սեպհական գործով Պետերբուրգ գնալիս, պատանի Նիկողայոսին էլ հետն է տանում և տալիս է մի գերմանացի դերձակ յայտնի վարպետի, որպէս զի նրան սովորեցնէ իւր արհեստը։ Նիկո-

գայոսը մի քանի տարի աշխատելով գերմանացու արհեստանոցում՝ իւր աչքաբացութեամբ իւրացնում է այդ արհեստը և ապա ինքնուրոյն գործելով՝ մօտ տաս տարի մնում է հիւսիսային մայրաքաղաքում։ Այնուհետև Բէգ-թաբէգեանը վերադառնում է Տփխիս՝ իւր հետ բերելով նաև ճորտ վարպետ Նիկողայոսին։ Վերջինս վրաց մայրաքաղաքում դերձակի արհեստանոց է բաց անում ու իբրև մեծ մայրաքաղաքից եկած վարպետ՝ լաւ անուն է հանում ու յաջող գործ ունենում թէ քաղաքացիական և թէ զինուորական պաշտօնազգեստներ կարելով։ Խոհուն ու հեռատես Նիկողայոսը հասակն առնելով՝ չէ ուզում պակուիլ ճորտական վիճակում, որպէս զի իւր զաւակներն էլ իր նման ճորտ չլինին և իւր վաստակածից յետ ձգելով եօթը հարիւր ռուբլի, որ այն ժամանակ բաւականին մեծ գումար էր, տալիս է իշխանին և թափում է իւր գլուխը ճորտութիւնից ու ազատ մարդ դառնում։ Այդ միջոցին Տփխիսում ապրում էր «Շերմազանենց» ընտանիքը — երբեմն Տփխիսի քաղաքագլուխ և յայտնի Գալուստ Շերմազանեանցի հայրը — որ իւր պաշտպանութեան ու խնամակալութեան տակ էր առել պարսկաստանից գաղթած իրենց ազգական օրիորդ Թամարին։ Վարպետ Նիկողայոսը ծանօթանալով Շերմազանենց՝ ընտանիքի հետ, ամուսնանում է օր. Թամարի հետը։

Նիկողայոսը ինը զաւակ է ունենում. չորս տղայ և հինգ աղջիկ, որոնցից մէկը ամուսնանում է յայտնի ուսուցիչ ու բանաստեղծ Ստեփաննոս Պալասանեանի հետ։ Անդրանիկը լինում է Գէորգը։ Թէ հօր և թէ մանաւանդ մօր ազդեցութիւնն ապագայ բանաստեղծի բնաւորութեան վերայ բաւականին նշմարելի է։ Նիկողայոսի գործը յաջող գնալով՝ միշտ լաւ է տրամադրուած եղել և առհասարակ ուրախ բնաւորութեան տէր լինելով՝ «քէֆ» սիրող է եղել. — Օրթաճալա ու Կրծանիս ծառ չեմ թողել, որի տակ քէֆ արած չլինիմ» ասելիս է եղել հանգուցեալը։ — Ինքը մեղմ բնաւորութիւն ունենալով երեխաների հետ էլ մեղմ է եղել, բայց միևնոյն ժամանակ և խստապահանջ։ Գէորգը պատմում է, որ ինքը գիմնազիա յաճախելիս, մի անգամ ինչպէս է լինում, մի տօն օր մաղթանքի չէ գնում. գիմնազիայի տեսուչն

անձամբ ծանօթ լինելով Նիկողայոսի հետ, յայտնում է նրան Գէորգի բացակայութիւնը։ Հայրը բարկանում է Գէորգի վրայ, թէ ինչպէս է համարձակուել պարտազանց լինել իշխանութեան առաջ և «զորս դու պատուիրեցեր» մի չաւ թակում է Շիլլէրի ապագայ թարգմանչին։ Նիկողայոսի խելացի մարդ լինելը ապացուցում է նաև նրանով, որ նա իւր աղջիկներին ևս կրթութիւն է տալիս այդ այն ժամանակի համար հարկաւ աչքի ընկնող երևոյթ է, քանի որ աղջիկներին ուսում տալը շատ հազուագիւտ էր—հրաւիրելով իբրև տնային ուսուցիչ Երեմիա Սահակեանին» Հիւսիսափայլի աշխատակից և «Երգ նժդեհի» քանաստեղծութեան հեղինակին։

Գէորգի մայր Թամարը մի բարեսիրտ, աստուածավախ և տնտես տանտիկին է հանդիսանում և ընտանիքի բարւոք տնտեսական դրութիւնը մասամբ ևս շնորհիւ նորա է լինում. տնային ոչ մի աշխատանքից փախուստ չտալով՝ կոպեկները խնայում են և որդոց դաստիարակութեան ծախքերը հոգացւում։ Գիծաքիրտ Թամարը սովորեցնում է փոքրիկ Գէորգին մի քանի աղօթքներ, նոյն իսկ ամբողջ «եկեսցէն» և համարեա ամեն գիշեր ասեցնել տալիս, քնելուց առաջ։ Այս սրբազնութիւնը Թամարը բերում է Ներմազանեանց տնից, ուր ամեն գիշեր ասելիս են եղել ամբողջ «եկեսցէն»։

Այսպիսով տեսնում ենք, որ Բարխուդարեանի մեղմբարեսիրտ, և պարտաճանաչ բնաւորութիւնը կազմակերպուել է ընտանեկան ծջաղում և ծնողների ազդեցութիւնը զրոշմուել է նորա վերայ։

IV.

Գէորգը դառնում է 7 տարեկան. հայրը մտածում է արդէն նորա ուսման մասին և տալիս է Մողնու սբ. Գէորգ եկեղեցու ժամկոչ Յարութիւնին, որ եկեղեցու գաւթում եղած սենեակներից մէկում հաւաքել էր մատքսան տղայ և «այբ ժէ ճէ ռայ»ի և «ինիմ, ինիմ Աստուած իմ»-ի մեթոդով լցնում էր փոքրիկների գլուխները և ամեն մէկից ամիսը մի քանի աբասի ստանում։ Մի երկու տարի Գէորգն էլ գետնին նստած՝ սովորում

է «Խաչ օգնեա՛ ինձ»-ը, վերջացնում է տեսրը, սաղմոսը և երբ սկսում է աւետարանը, հայրն ազատելով նորան այդ «ժամկոչական» դաստիարակութիւնից, տալիս է քաղաքի «գաւառական» կոչուած դպրոցը։ Այդ ժամանակ արդէն վաղուց գոյութիւն ունէր երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսի հիմնած «Հայոց ուսումնարանը»։ Այն հանգամանքը, որ վարպետ Նիկողայոսը իւր որդուն Ներսիսեան դպրոց չէ տալիս, այլ գերադասում է գաւառական դպրոցն ու ապա գիմնազիան, մենք վերագրում ենք այն շրջանի ազդեցութեանը, որի հետ յարաբերութիւն ունէր վարպետը։ Նա ամեն տեսակ պետական աստիճանաւորների և պաշտօնեաների նշանագգեստները կարելով՝ հարկաւ պէտք է որ անձամբ ծանօթ լինէր դրանցից շատերի հետ, որոնք և կարող էին դիւրացնել նորա որդու գաւառական դպրոց կամ գիմնազիա ընդունուելու գործը։ Մօտ տաս տարեկան հասակում Գէորգը մտնում է գաւառական դրպրոց, ուր ուսուցումը հարկաւ տեղի էր ունենում ռուսաց լեզուով։ Այստեղ աշակերտները թէև գետնի վերայ չէին նստում, սակայն գրում էին աւազի վերայ, որ աւծած էր լինում աշակերտական սեղանների երեսի տախտակի վերայ. գրում էին փայտեայ փոքրիկ ձողիկներով։ Երբ աշակերտները տուած դասը գրում վերջացնում էին աւազի վերայ, շրջում էին նստարանի կողքին ամրացրած մի երկար ձողի վրայի տախտակի երեսը դէպի ուսուցիչը, այդ երեսի վերայ գրուած էր «վերջ» և այդպիսով ուսուցիչն առանց հարցնելու և պատասխան ստանալու աշակերտից՝ իմանում էր, որ նրանք վերջացրել են իրենց աշխատանքը։ Այդ եղանակով աշակերտներն այդտեղ սովորում էին ռուսերէն, թուաբանութիւն, կրօն և վայելչագրութիւն։

Մօտ երկու տարի Գէորգը սովորելով այդ ուսումնարանում և միևնոյն ժամանակ տանը մասնաւորապէս պատրաստուելով՝ մտնում է այն ժամանակում Թիֆլիսի միակ պետական գիմնազիան, որ եթէ չենք սխալւում՝ «ազնուականների դպրոց» էր կոչւում։ Այդտեղ ընդհանուր առարկաների թւում պարտադիր կերպով հայերին աւանդւում էր նաև հայոց լեզու և այդ մի-

ջոցին հայոց լեզուի ուսուցիչը յայտնի Առաքել վարժապետ Աբարատեանն էր։ Գէորգն արդէն ժամկոչ Յարութիւնի մօտ սովորած լինելով հայերէն, Աբարատեանի յառաջադէմ աշակերտներից մէկն է լինում և Թիֆլիսում գործածուած հայերէնով շարադրութիւններ է գրում՝ «մի դատէք, զի մի դատիցիք», «եթէ ոք ածցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո՛ նմա և զմիւսն» բնաբաններիս մասին։ Այդ միջոցներին նա մեծ սիրով կարդում է Գոգոլի, Պուշկինի և Լերմոնտովի գրուածքները և վերջինիս բանաստեղծութիւններից շատերն անգիր է անում։ Երբեմն, երբեմն, Գէորգն էլ փորձում է յանգերով տողեր գրել և ռուսերէնից գրաբար է թարգմանում, բայց ափսոս որ այդ առաջին փորձերը չեն պահուած մինչև այժմ։ Միայն մէկը մենք լսել ենք հեղինակից, որ արտասանել է իւր հայր Նիկողայոս վարպետի յիսնամեայ տարեդարձի օրը։ Ահա այդ անպաճոյճ ոտանաւորի երկու տունը.

«Ուղարք և քայրք, եկէք, եկէք,
«Այսօր մեր հոր ասնը երգենք.
«Այսօր յիսուն տարի առաջ՝
«Ծնաւ մեր հայրը զուարթ ու քաջ։
«Հիմա պատուելի բարեկամք,
«Որոնք այստեղ ժողովուած էք,
«Ուրախ սրտով, համբուրելով,
«Իմ հօր կենացը խմեցէք»։

Այս միջոցին Դորպատի անունը սիրելի էր դարձել Թիֆլիսի հայ երիտասարդների համար և շատերը ցանկանում էին գնալ այնտեղ՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու։ Արդեօք Դորպատի այս ժողովրդականութիւնը մեր մէջ Խաչատուր Աբովեանի և Ստեփաննոս Նազարեանի յաջող փորձերի հետևանքն էր, թէ ուրիշ հանգամանքների ծնունդ, դեռ չէ պարզուած, սակայն իրողութիւնն այդպէս էր։ Դորպատեան այդ հովերը չգիտենք ինչ աղբիւրներից դիպչում են նաև Գէորգին և նա այնքան է ոգևորւում այդ գաղափարով, որ նոյն իսկ չէ սպասում, որ գիմնազիայի դասընթացն աւարտէ, այլ վեցերորդ դասարանից դուրս է գալիս ու պատրաստւում է տանը լատիներէնից։ Լատիներէնը մասնաւորապէս աւանդում է նորան

Ներմազանենց և սորա միջոցով նաև իրենց տան բարեկամ յայտնի բժիշկ Յարութիւն Յովհաննիսեանը (Աբգար Յովհաննիսեանի հայրը)։ Վարպետ Նիկողայոսը չէ հակառակում որդու Դորպատ գնալու ցանկութեան—երևի իւր վարպետ գերմանացուց լաւ յիշողութիւններ է ունենում—և որոշում է նորա համար ամսական քսանհինգ ր., որ այն ժամանակ քիչ փող չէր։ Ծնողների ցանկութեան համաձայն Գէորգը որոշում է, որ Դորպատում բժշկութիւն սովորէ և 1851 թ. սեպտեմբեր ամսին հրաժեշտ տալով ծնողներին ու բարեկամներին, ֆուրգոնով մի քանի ընկերների հետ, ի թիւս որոց և 10 ամեայ Սմբատ Շահազիզը, ուղևորւում է Վլադիկաւկազ և այնտեղից առանձին կառքով ամիս ու կէսուայ ընթացքում հասնում է Մոսկուա, ուր թողնում է Շահազիզին Լազարեան ճեմարանում, իսկ ինքը Պետերբուրգի վրայով գնում է Դորպատ *)։

ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

(Կշարունակուի)։

---

*) Այս արկածալի ճանապարհորդութիւնը Բարխուդարեանը նկարագրել է 1894 թուի Արձագանքի 3, 5 և 7 №№.

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Начало сношеній Эчміадзинскаго патріаршаго престола съ Русскимъ правительствомъ. Историческое изслѣдованіе по неизданнымъ документамъ Г. А. Эзова. Тифлисъ, 1901 г.

Էջմիածնի պատրիարքական Աթոռի գրագրութիւնների սկիզբը ռուսաց կառավարութեան հետ։ Պատմական հետազօտութիւն չհրատարակուած վկայագրերի հիման վրայ, Կ. Եզեանի։ Թիֆլիս, 1901։

Տոհմային գրականութեան, պատմութեան, լեզուի և կեանքի վերաբերեալ ուսումնասիրութիւններ և հետազօտութիւններ շարունակ լոյս են տեսնում օտար լեզուներով, և սակայն դոցանից շատերը անյայտութեան մէջ են, մի քանիսների մասին կցկտուր տեղեկութիւն ունինք, իսկ աւելի ևս քիչ մասն է հայերէն թարգմանուած։ Հեռու չգնանք և բազմաթիւ օրինակներից առաջ բերենք մէկը. այս գրքի հեղինակը, որի առթիւ է իմ խօսքը, 1898 թ. լոյս ընծայեց մի պատկառելի աշխատութիւն ընդարձակ պատմական տեսութեամբ՝ «Сношенія Петра Великаго съ Армянскимъ народомъ» վերնագրով։ Այդ յառաջաբանը մի գեղեցիկ ուսումնասիրութիւն է և արժանի լուրջ աշխատութեան. լուր տարածուեց, թէ յառաջաբանը թարգմանւում է, որ մի պատուական գործ կը լինէր մեր գրականութեան համար, բայց տարաբաղդաբար մինչև օրս ոչինչ չի երևում։ Նոյն մեծարգոյ հեղինակը այժմ լոյս է ընծայել մի ուրիշ հետազօտութիւն, որ, երևի, նոյն վիճակին կ'արժանանայ, որին շատ շատերն են արժանացել։ Այս աշխատութիւնը, որի բովանդակութեան հետ ես մտադիր եմ մանրամասնօրէն ծանօթացնել ընթերցողներին, նուիրուած է այն հարցին, թէ Մայր Աթոռը երբ է

սկսել իւր գրաւոր յարաբերութիւնները ռուսաց կառավարութեան հետ։ Դրքի մէջ առաջ են բերուած ուշադրութեան արժանի պատմական նոր տեղեկութիւններ։

Յայտնի է, որ ռուսաց կառավարութիւնը դեռ Մեծն Պետրոսի ժամանակ գրագրութիւններ է ունենում հայ հոգևորականների հետ Կասպից ծովի ափը ձեռք բերելու նպատակով և ապա՝ Ղարաբաղի մելիքների առթիւ, սակայն գրագրութիւնները լինում են ոչ թէ ս. Էջմիածնի ծայրագոյն պատրիարքի, այլ Գանձասարի կաթուղիկոսների հետ. իսկ Մայր Աթոռը անմիջական գրագրութիւն է սկսում ռուսաց կառավարութեան հետ միայն XVIII դարու երկրորդ կիսում, Եկատերինէ II կայսրուհու օրով։ 1760 թ. յուլիսի 20-ին առաջին անգամ Յակոբ կաթուղիկոսն է դիմում ռուսաց թագաւորին և խնդրում՝ «զազգն մեր ողորմելի և զազգն վերոյ հոգալ» [1]. բայց այդ բարեխօսութիւնը այնպիսի անորոշ և ընդհանուր դարձուածներով և ոճերով է գրուած լինում, որ ոչ մի հետևանք չէ ունենում։ Անցնում է վեց տարի, և Սիմէոն կաթուղիկոսը գրագրութիւն է սկսում կառավարութեան հետ, բայց աւելի գիտակցաբար է անում գործը, մանաւանդ որ ունէր և յարմար շարժառիթ։ Սիմէոն կաթուղիկոսի օրով Հաշտարխանի հայերը չէին կամենում ճանաչել Մայր Աթոռի գերիշխանութիւնը, այլ Գանձասարի կաթուղիկոսինը։ Այս դէպքը սաստիկ վրդովում է Սիմէոն կաթուղիկոսին, եպիսկոպոսներին ժողովում է և որոշում է Դաւիթ վարդապետին օրհնութեան կոնդակով Պետերբուրգ ուղարկել։ Այդ կոնդակով նա խնդրում էր հետևեալը. «1) որ կայսերութեան մէջ ապրող ս. Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի դաւանութեան պատկանողները, ինչպէս մինչև այժմ էին, յետոյ էլ հոգևոր գործերի վերաբերութեամբ՝ եկեղեցական կարգադրութիւնների և տնօրինութեանց կողմից իւր պատրիարքական աթոռի իշխանութեան ներքոյ լինին։ 2) Որ այդ հայերի վրայ նշանակուող արքեպիսկոպոսը նոյն աթոռի ընտրութեամբ լինի, իսկ իրան պատրիարքին անյայտ և ինքնագլուխ

[1]) Դիւան Հայոց պատմութեան. Դ. գիրք, էջ 121.

օտար՝ երկրներից եկող եպիսկոպոսների համար մուտքը արգելուլ։ 3) Որ իրան Բարձրագոյն հրովարտակ պարգևեն, որպէս զի այդ հրովարտակը մնայ տեղական տարաձարում ի յիշատակ յաւէրժական պարգևատրութեան ի յիշողութիւն բարեբախտիկ թագաւորութեան» [2]։ Կոնդակի հետ միասին նա ուղարկում է նուէր կայսրուհուն և գնհատառանգին ս. Յոհաննէս Մկրտչի, տ. Հռիփսիմէ կոյսի, ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքները և Նոյեան տապանից մի կտոր։

Նուիրակ Դաւիթ վարդապետը Պետերբուրգի արքունիքում շատ տիրալիր ընդունելութիւն է գտնում, և կայսրուհին հրամայում է, որ հրովարտակ Յպատրաստեն և տան նորան տեղ հասցնելու։ Այդ հրովարտակում, որ կայսրուհին փուել էր 1768 թ. յուլիսի 30-ին, ասուած է, թէ նախորդների օրինակով «հաւատարչափ քարեհաճում ենք, ինչպէս այժմեան պատուականագոյն Սիմէոն նպատրիարքին, այնպէս և պատրիարքական աթոռի նորա ապագայ յաջորդներին, նմանապէս իւզբաշիներին և կառավարիչներին և համայն պատուական հայ ժողովուրդը մեր կայսերական ողորմութեան և բարեհաճութեան մէջ ունենալ։ Նոյնպէս բարեհաճում ենք Մենք, որ յիշեալ Սիմէօն պատրիարքը և պատրիարքական գահի նորա յաջորդները ուսցց կայսերութեան մէջ գտնուող հայ ազգի և օրէնքի մարդկանց՝ հոգևոր գործերի և եկեղեցական ծէսերի վերաբերութեամբ իրենց տեսչութեան ներքոյ ունենան... և սորա համար՝ երբ Նոքա (հայերը) կը պահանջեն՝ ուղարկել արքեպիսկոպոս կամ ուրիշ աստիճան ունեցող՝ նորա, պատրիարքի, գրած վիկայականով, առանց այդ վիկայականի մեր կայսերութեան մէջ նոքա չեն ընդունուիլ... Սակայն Մենք յուսադրում ենք՝ երբոյիշեալ պատուական Սիմէօն պատրիարքին, պատուական իւզբաշիներին և կառավարիչներին բոլոր հայ ժողովրդի հետ միասին՝ մանաւանդ Մեր կայսերութեան մէջ եղողներին, Մեր Կայսերական ողորմութեամբ և հովանաւորութեամբ. ընդ սմին իմանալ ենք տալիս, որ Դաւիթ

---

[2]) Арх. Москва II. Д. 111—23; 1780—1801 г. № 1.

վարդապետի հետ Սիմէօն պատրիարքի Մեզ Ուղարկած մասունքները... Մեր առանձին բարեհաճութեամբ ընդունուեցան... և յիշեալ Դաւիթ վարդապետը... բերանացի կարող է յուսադրել համայն պատուական հայ ժողովուրդը Մեր Կայսերական ողորմութեան բարեհաճութեան կողմից, որով և մնամք»։[3]) Բացի հրովարտակից Դաւիթ վարդապետը ընծաներ է տանում մեր կաթուղիկոսի համար։ Այս առաջին փորձի յաջողութիւնը շատ խրախուսում, քաջալերում է Սիմէօն կաթուղիկոսին։

Մի քանի տարուց յետոյ, 1773 թ. Սիմէօն կաթուղիկոսը, Բարձրագոյն հրովարտակի համաձայն, Ռուսաստանի հայերի համար եպիսկոպոս է նշանակում իշխանազն Յովսէփ Երկայնաբազուկ-Արղութեանին, որ տակաւին 30 ամեայ երիտասարդ էր։ Գալով Պետերբուրգ, սա իւր արտաքին գեղեցկութեամբ, բարեկիրթ վարուեցողութեամբ և նուրբ խելքով գրաւում է ռուս բարձրաստիճան հոգևորականներին և պետական պաշտօնեաներին։ Ունենալով փառասիրութիւն, միևնոյն ժամանակ սիրելով և իւր ազգը, նա ջերմ պաշտպան է հանդիսանում հայ եկեղեցու և ժողովրդեան կարիքների, միաժամանակ օգուտներ տալով և ծառայութիւններ մատուցանելով ռուս տէրութեան, որոնց համար մի քանի անգամ նա արժանացել էր բարձրագոյն պատիւների, իսկ Պաւել Ի-ը շնորհում է նորան Աննա շքանշանի I աստիճանը և ռուսաց կայսերութեան իշխանական տիտղոս է պարգևում, որովհետև մինչև այդ ժամանակ Յովսէփը վրաց իշխան էր։

1780 թ. յուլիսի 26-ին վախճանւում է Սիմէօն կաթուղիկոսը։ Մահուան անկողնում, միաբանների հետ խօսելու ժամանակ, նա մատնացոյց է լինում Ղուկասի վրայ, որպէս արժանաւոր յաջորդի, որին և օգոստոսի 2-ին կաթուղիկոս են օծում։ Ղուկաս կաթուղիկոսի ընտրութիւնը, աւելի ճիշտ ասած, ընտրութեան եղանակը Կ. Պոլսի Ջաքարիա պատրիարքի կողմից դժուարութիւնների է հանդիպում. սա ոչ Բ. Դռնից բէրատ է խնդ-

---

[3]) Полное собраніе законовъ. Общее положеніе т. XI, № 13139.

րում, ոչ էլ կարգադրութիւն է անում, որ եկեղեցիներում ժամասացութեան ժամանակ, ինչ տեղ պէտք է, անունը յիշատակեն։ Թէ Կ. Պոլսի պատրիարքը և թէ Դանձասարի Իսրայէլ կաթուղիկոսը ս. Էջմիածնի գահը բարձրանալու ցանկութիւն ունէին։ Ղուկաս կաթուղիկոսին սաստիկ վրդովում է Զաքարիա պատրիարքի վարմունքը. այնչափ նորա ինքնասիրութիւնը չէ վիրաւորում, որչափ Մայր Աթոռի սրբութիւնն ու հեղինակութիւնը պաշտելու զգացմունքը։ Այդ պատճառով էլ Ղուկաս կաթուղիկոսը 1780 թ. դեկտեմբերի 15-ին գրում է Կ. Պոլսի պատրիարքին, թէ իւր պարտականութիւնն է համարել ընդունել ընտրութիւնը, աչքի առաջ ունենալով կաթուղիկոսական գահի շահերը, և եթէ հրաժարուէր, ծանր և արդարացի մեղադրանքների պիտի ենթարկուէր։ Միևնոյն ժամանակ Ղուկաս կաթուղիկոսը գրում է նորան, որ եթէ տաճկահայերի կողմից նա, Զաքարիան, ընտրուի, ինքը որպէս մի սոսկ աբեղայ կը հեռանայ։ Մինչ գրագրութիւնը շարունակւում էր նոցա մէջ, Ղուկասը հրաժարւում է կարգադրութիւններ անելուց, որպէս կաթուղիկոս և մինչև անգամ վանքում կաթուղիկոսական գահի վրայ չէր բազմում։ 1801 թ. մայիսի 30 ից Կ. Պոլսի ռուսաց դեսպան Թամարան գրում է. «Ղուկաս պատրիարքը, որին անձամբ ես նոյնպէս ճանաչում եմ, հայ ժողովուրդը կառավարելու գործում շատ արժանաւոր մարդ էր, և նորա ամենախորհրդաւոր պարգևութիւնները... սակայն համեստ և լուսամիտ ցանկութիւններ էին, վերականգնել իւր ազգը Ռուսաստանի օգնութեամբ, երբ տպա հանգամանքները և դրութիւնը հիմնական յոյս կը տան հայ ժողովրդի օգտի և ոչ կորստեան համար նորա հովանաւորութեան դիմելու» [4]։ Սակայն Կ. Պոլսի հայ հասարակութիւնը, որդիական ակնածութեամբ վերաբերուելով ս. Էջմիածնին, փոխում է պատրիարքին, իսկ սորա յաջորդը, չկամենալով երկպառակութիւնը շարունակել, Բ. Դռնից ստանում է բէրատ և տնօրինում, որ եկեղեցիներում Ղուկաս կաթուղիկոսի անունը

---

[4]) Арх. Мин. ва Ин. Д. 111—23, 1780—1801 г. № 1.

ղիշեն։ Միայն 1800 թ. հոկտեմբերին է նա տալիս սովորական անդրանիկ կոնդակը իւր հօտի անունով և մի կոնդակ էլ ուղարկում է Ռուսաստան, որով օրհնում է կայսրուհուն և երկիրը։

Ղուկաս կաթուղիկոսը, միշտ մտածելով ս. Էջմիածնի Աթոռի իրաւունքը պաշտպանելու վրայ և երկիւղ կրելով, որ Գանձասարի Իսրայէլ կաթուղիկոսը կարող է իւր իրաւունքները տարածել Ռուսաստանում ապրող հայերի վրայ, առանձին ուշադրութիւն է դարձնում Բարձրագոյն հրովարտակի (1768 թ.) այն կէտի վրայ, որով արգելւում էր ծայրագոյն պատրիարքից վկայութուղթ չունեցող եպիսկոպոսների մուտքը Ռուսաստան։ Այդ նպատակով նա դիմում էր ո՛ւր որ և ո՛ւմ որ կարելի էր և խնդրում իշխանութիւն ունեցողներից, որ հետևեն Բարձրագոյն հրամանի այդ կէտը կատարելու։

Ռուսաց կառավարութիւնը հովանաւորում էր ոչ միայն իւր սահմաններում ապրող հայերին, այլ և մահմեդական երկրներում եղողներին։ Այսպէս, 1780 թ. Յովսէփ արքեպիսկոպոսը դիմում է Արտաքին գործոց Կոլլեգիային և խնդրում, որ Ի. Դուռը ուղարկուած ռուսաց նախարարին պատուիրեն «օգնել և պաշտպանել հայոց պատրիարքի կողմից տաճկաց մայրաքաղաքը ուղարկուող հոգևորական կառավարիչներին, երբ կարիք կ'ունենան»։ 1781 թ. յունուարի 23-ին Բարձրագոյն հրաման է գնում Կ. Պոլսի ռուսաց նախարար Ստախևին, որով պատուիրւում է նորան կաթուղիկոսի կողմից Պոլիս եկող հոգևորականներին պաշտպանութիւն ցոյց տալ, որպէս քրիստոնէական օրէնքի մարդկանց։ Նոյնը կրկնւում է և 1798 թ. մարտի 16-ին. հրամանագիր է ուղարկւում Պոլսի ռուսաց դեսպան Թամարային միևոյն բովանդակութեամբ։

Այդպէս են եղել ռուսաց կառավարութեան յարաբերութիւնները հայերի հետ ընդհանրապէս և եկեղեցու հետ մասնաւորապէս. հովանաւորութիւն եղել է ո՛չ միայն գահի բարձրութիւնից, այլ և պետական բարձրաստիճան գործիչների կողմից, որոնք այս և այն դէպ-

քում ցոյց են տուել իրանց աջակցութիւնը, և այդ պարգ երևում է Ղուկաս կաթուղիկոսի՝ իշ. Պատեմկինին, կոմս Ռումեանցևին, կոմս Պանինին և ուրիշների գրած նամակներից։ Այդ նամակներում հայ եկեղեցու պետը իւր գոհունակութիւնն էր յայտնում հայ ժողովրդեան և պատրիարքական գահին ցոյց տուած հովանաւորութեան, բարեհաճութեան և բարեկամութեան համար, հաւատարմութիւն և այն աջակցութեան համար, որ ցոյց էին տալիս Յովսէփ արքեպիսկոպոսին։

Քուչուկ-Կայնարջիի դաշնագրութիւնից յետոյ Խրիմի խանութիւնը Տաճկաստանից անկախ է ճանաչւում, և ռուսաց կառավարութիւնը սկսում է միջոցներ գործ դնել Նովոռոսսիյսկիի կողմերը, որ նոր էին ձեռք բերել, մարդաբնակ դարձնել, և այդ նպատակի համար մտադիր էին հայերին և յոյներին գաղթեցնել այդ կողմերը. զանազան արտօնութիւններով և խոստումներով ռուսաց կառավարութիւնը սկսում է գրաւել հայերին։ 1778 թ. մարտի 3-ին Բարձրագոյն հրամայուած էր իշ. Պատեմկինին, որ Խրիմից գաղթելու ցանկութիւն յայտնած բոլոր հայերին և վրացիներին «ամենայն փութաքշանքով և օժանդակութեամբ ընդունի, ճանապարհին պաշար տալով... որպէս զի այս նոր գաղթականները մեր սահմանները մտնելու օրից ոչ միայն իրանց սնունդի կողմից ամենափոքր կարիք անգամ չունենան, այլ և ըստ ձեր հայեցողութեան թէ բաւականաչափ հող ունենան և թէ մեր գանձարանից անհրաժեշտ նպաստներ ստանան՝ տներ շինելու համար. սակայն մենք չենք յապաղիլ տալ նոցա կարևոր արտօնութիւններ»։ Խրիմի բոլոր քրիստոնեայ ազգաբնակութիւնները յունաց միտրոպոլիտի միջոցով դիմում են կառավարութեան և բարեխօսում, որ Բարձրագոյն անունով խոստացած արտօնութիւնների համար կայսերական հրովարտակ տան պետական կնքով վաւերացած, որպէս զի ռամիկ ժողովրդի կասկածները փարատուեն։ Բայց հայերը ընդունում են կառավարութեան հրաւէրը, որովհետև այնչափ էին վախեցած տաճկական լծից, որ յոյս էին դնում քրիստոնեայ հզօր տէրութեան վրայ, դուրս գալին երկիւղ չկրելով գաղթելու դժուարութիւններից։

Խրիմի խանը, ինչպէս և ամբողջ մահմեդական ժողովուրդը, երբ լսում են ռուսաց տէրութեան այս նոր ձեռնարկութեան լուրը, սաստիկ վախենում են, որովհետև նախ զրկւում էին իրանց գոյութեան ամուր նեցուկից, իրանց արդիւնքների աղբիւրից։ Այդ լուրը վերաստուգելու նպատակով Խանը դիմում է դեներալ-պորուչիկ Ա. Վ. Սուվորովին, որից պատասխան է ստանում, թէ Կայսրուհին՝ մարդասիրական զգացմունքից և քրիստոնէական սպարտքից դրդուած, բարեհաճել է դէպի իւր սահմանները գաղթեցնել քրիստոնեաներին, ազատելով նոցա «սպառնացող աղէտներից և խսլառ բընաջինջ լինելուց», և աւելացնում է, թէ «ինչ որ Ձեր անձնաւորութեան է վերաբերում, ամեն բան ըստ կարելոյն կը պահպանուի և կը վարձատրուի»։ Ի հարկէ Խանը այդ պատասխանը ստանալուց յետոյ չհանգստացաւ, ինչպէս և մահմեդականները չհանգստացան. նոքա փորձեցին խնդիրք, նաև պատգամաւորութիւն ուղարկել Պետերբուրգ, որպէս զի քրիստոնեաներին կտրողանան բռնել իրանց սահմաններում, բայց բոլորը աշխատանքը ի զուր անցաւ. հայերը սկսեցին գաղթել։

Խրիմից հայերը սկսում են գաղթել 1778 թ. յուլիսին Պետրոս վարդապետ Մարկոսեանի առաջնորդութեամբ և նոյն տարուայ օգոստոսին մտնում են Ռուսաստանի սահմանները։ Հէնց սկզբից նոքա մեծ նեղութիւնների են պատահում. որովհետև Եկատերինէ II-ը և իշ. Պատեմկինի և Սուվորովի պէս նորա գործակիցներն էին հոգս քաշում հայերի վիճակի բարելաւութեան մասին, այնչափ քիչ էին գործում տեղական կառավարիչները։ Ոչ ճանապարհին ուտելիք էր բաւականութիւն տալիս նոցա, ոչ էլ հողեր ստացան բնակութեան համար։ Եկատերինոսլաւ և Սամարա (այժմ Նովոմոսկովսկ) հայերը ստիպուած եղան կանգ առնել և այստեղ, բացօթեայ, առաջին անգամ նոքա ծանօթացան մինչև այդ ժամանակ իրանց չտեսած ձմեռուայ արհաւիրքների հետ, որ, տարաբաղդաբար, այդ տարի շատ դաժան էր եղել։ Սասելը անգամ աւելորդ է, որ քաղցածութիւնից, հիւանդութիւններից և ցրտից շատերը կոտորւում են, դէս ու դէն են փախչում, շատերն էլ,

նոցա թուում և Պետրոս վարդապետը, նոյն թուակա-նին մեռնում են։ Գարնանամուտին նոքա վստահանում են դիմել Սուվորովին։ «Խրիմից դուրս բերելու ժամա-նակ, — գրում են նոքա 1779 թ. ապրիլի 19 ին, — քա-ցի յայտնի 14 կէտերից բարեհաճեցիք խոստանալ մեզ, որ մեր թողած տների փոխարէն պատրաստները կը տան մեզ, կը տան և հող մեր ցանկութեամբ. կը տան ռոճիկ և ուտելիք։ Սակայն գալուց յետոյ տուել են տեղեր, ուր ոչ ջուր կայ ոչ էլ բուսականութիւն, և ստիպում են իւրաքանչիւրիս, որ ստորագրենք, թէ մեզ տուած տեղերը յարմար են, բայց մենք այդ անել չենք կարող, որովհետև անպէտք են։ Սկզբում ռոճիկ և ուտելիք ամենքին տալիս էին, իսկ այժմ մի քա-նիսներին բոլորովին չեն տալիս. երկրագործ մարդկանց 120 վերստ մեզանից հեռացնում են... և ոչ միայն վարձատրութիւն չեն տալիս, այլ և վերջին ունեցածից զրկուել ենք աւազակների կողոպուտների և ուրիշ նե-ղութիւնների պատճառով, և այնպիսի ծայրայեղու-թեան ենք հասել, որ առաջ մեր տեղում լաւ սնունդ ունեցողները այժմ ողորմութիւն են հաւաքում, իսկ ուրիշները սովից՝ շատ քիչ փողի կամ հացի համար բո-լորովին տալիս են իրանց երեխաները։» [5]) Հայերի պատգա-մաւորները նոյն տարուայ յուլիսի 15 ին դիմեցին և իշ. Պատեմկինին խնդրագրով և յայտնեցին, թէ «խընդ-րել են (նոքա), որ իրենց բնակեցնեն սբ. Դմիտրի Ռոստովեանի Փորշտատում և այդ խնդիրը արժանացել է Ձերդ պայծառափայլութեան հաւանութեանը, Բայց... Աղովեան նահանգի կառավարութեան նահանգապետի օգնական Գերսևանովը բոլոր հողագործներին ստիպում է բնակութիւն հաստատել Ծերսա գետի մօտ և սմե-նասարսափելի կերպով հրամայում է, որ այնտեղ շինեն իրանց տները, իսկ երբ նոքա չէին ընդունում, կա-պանքների մէջ դնելով մի քանի օր բանեցնում էր։ Բացի դորանից, ամենքը՝ բնակութեան համար տներ չունենալով, շարունակ մնում են տափաստանի արևի

---

[5]) Дубровинъ Н. Присоединеніе Крыма къ Россіи, т. III. № 47.

և յաճախակի եկող անձրևների տակ և ծայրայեղ կարիք կրում, որովհետև նահանգապետի օգնականի հրամանով երեք ամսից աւելի է որ բնակարաններից դուրս ենք բերուած և այժմ բաց օդի մէջ ենք գտնուում, այնպէս որ այդ փոփոխութիւնների պատճառով քիչ մարդ չմեռաւ... [6]) ուստի պատգամաւորները խնդրում էին «թոյլ տալ, որ մեր հասարակութիւնը միայն սբ. Դիմիտրիի բերդի փոքշտատում և շրջակայքում բնակեցնեն»։

Հայերը միաժամանակ յայտնում են իրանց թշուառութիւնները և Յովսէփ արքեպիսկոպոսին, որ այդ ժամանակ Հաշտարխան էր։ Լուրը ստանալուն պէս Յովսէփ արքեպիսկոպոսը ճանապարհ է ընկնում դէպի Պետերբուրգ բարեխօսութիւնների համար, և հետևանքը շատ լաւ է լինում. թեթևացնում են գաղթականների վիճակը, ընակութիւն հաստատելու համար տեղ են տալիս Դօն գետի մօտ, ուր Ռոստով քաղաքն է, տալիս են և արտօնութիւններ։ 1780 թ. հայերը ըսկըսում են քաշուել դէպի իրանց ընծայած տեղը, իսկ հետևեալ թուականի ապրիլի 21-ին Յովսէփ արքեպիսկոպոսը հիմն է դնում Նոր-Նախիջևան քաղաքին։ Նոյն 1780 թ. նա կազմակերպում է Հաշտարխանում հոգևոր ատեան դատարան (կոնսիստորիա), իսկ սեպտեմբերի 9-ին օծում է Մոսկուայի ս. Խաչ եկեղեցին. Պետերբուրգի եկեղեցին նա օծել էր մի փոքր առաջ՝ նոյն տարուայ փետրուարի 18-ին։

Մոսկուայի եկեղեցին օծելուց յետոյ Յովսէփ արքեպիսկոպոսը կամենում էր Հաշտարխան վերադառնալ բայց իշ. Պատեմկինը չէր թողնում, որովհետև այդ ժամանակ պատրաստութիւններ էին տեսնում երկրորդ տաճկական պատերազմի համար, և իշխանն ուզում էր, որ Յովսէփ արքեպիսկոպոսը հետը գնայ Խրիմ և ապա պատերազմի դաշտը, աչքի առաջ ունենալով նորա ազդեցութիւնը տաճկական գաւառներում բնակուող հայերի վերայ և նորա ծանօթութիւնը Արևելքի, տեղական բարքերի և լեզուների հետ։ Այդտեղ իշ. Պա-

---

[6]) Նոյն։

տեսմկին յանձնարարում է Յովսէփ արքեպիսկոպոսին շրջել Մոլդաւիայի, Վալաքիայի և Բուկովինայի այն քաղաքները, ուր հայեր կային և դարձեալ նորա յանձնարարութեամբ՝ տաճկական քաղաքները նուաճելուն պէս հայերին դուրս էր բերում և բնակեցնում Պուրսասարի մօտերքը, ուր շուտով գոյացաւ մի քաղաք, որ յանուն սբ. Գրիգորի Լուսաւորչի կոչուեցաւ Գրիգորուսլօրիա։ Այս ամենամ էլ կառավարութիւնը ամեն տեսակ օգնութիւն է հասցնում հայերին. գանձարչնից նիւթական միջոցներ էին տուել մայր եկեղեցու, վանքի, երկու ծխական եկեղեցիների, առաջնորդարանի, Կոնստանդինոսի շինութեան համար և սորան կից մատղիր էին գիմնազիան կառուցանելու. գանձարանը նոյնպէս իւր վերայ է առնում մագիստրատի, վաճառականաց տան, բնակչաց տների, արհեստաւորաց խանութների, ջրանքի ծախքերը և այլն, և մինչև անգամ նպաստներ էր տուել, որ գաղթականները անհրաժեշտ կահ-կարասիքներ ու իրեղէններ ձեռք բերեն։ Բացի այդ բոլորից՝ 1793 թ. փետրուարի 13-ին Կայսրուհին հրամայում է, որ տպահովեն նոցա գոյութիւնը, «որպէս զի ոչ միայն այն ամենքը, որ անցել են Մեր սահմանները, պահպանուած լինեն, այլ և արտասահմանում գտնուող նոցա հաւատակիցները, տեսնելով սոցա բարեկեցիկ վիճակը, միանան սոցա հետ»։

Եկատերինէ II կայսրուհին ջերմ պաշտպան և հետևող էր Մեծն Պետրոսի մահմեդական իշխանութիւնը խորտակելու և նոցա ստրկացրած քրիստոնեայ ազգերին վերակենդանութիւն, անկախ կեանք տալու գաղափարին։ Ռուսները կամենում էին, որ ամենայն հայոց կաթողիկոսը դիմէ կառավարութեան և օգնութիւն խնդրէ։ Այդ նպատակով Էջմիածին ուղարկուեց Ղուկաս կաթողիկոսի մօտ բժիշկ Եակով Ռէյնէգսը, [7]) որ

---

[7]) Բժ. Եակով Ռէյնէգսը ծնուել է 1744 թ. Էյսլէբէնում։ Նորա իսկական ազգանունը Էյլիս էր, որ, յայտնի չէ թէ ինչու, նա փոխել էր Ռէյնէգսի։ Երիտասարդական հասակում ուսումնասիրում է բնական գիտութիւնները և գլխաւորապէս բժշկականութիւնը։ Արևելքում ճանապարհորդելու սէրը ստիպեց նորան թողնել հայրենիքը. 1776 թ. Վենակի վրայով դնաց Կ. Պոլիս, այցելեց Թոխատ, Էրզրում և այն տեղից Ղարսի վրայով դնաց Պարսկաստան ս. Էջմիածնի վանքը այցե-

հետը ընծաներ և նամակ տարաւ իշ. Պատեօմկինից, նոյնպէս նամակներ Յովսէփ արքեպիսկոպոսից, Յովհաննէս Լազարեանից և Մանուչարեանից։ Այդ տգաջին փորձը անյաջող եղաւ. Ղուկաս կաթուղիկոսը բացէ ի բաց հրաժարւում է որևէ առաջարկութիւն ունենալուց։ Երկիւղ կրելով, որ ս. Էջմիածինը աւելի սոսկալի աղէտների կարող է ենթարկուել։ Այնուամենայնիւ Եկատերինէ II-ը յետ չը կանգնեց իւր մտադրութիւնից և ռուսաց զօրքերը Վ. Մ. Զուբովի առաջնորդութեամբ դիմեցին դէպի Պարսկաստան։ Զօրքերը Գանձակ էին հասել, և Օիմէօն կաթուղիկոսը արտատրոփ սպասում էր, որ Էջմիածին կըգան, բայց անսպասելի

լելու համար. պէտք է ենթադրել, որ այդ 1778 թ. ամրանն է եղել։ Պատրիարքական գահի վրայ այդ ժամանակ սրբազնագոյն Սիմէոնն էր, և իւր ամբանոցումն էր, որ և ներկայացրին բժ. Ռէյնէգգին Նորին Սրբութեան, որ Պոլսի պատրիարքից յանձնարարական նամակ էր բերել։ Ռէյնէգգի ասածով, Նորան մի վրան էին յատկացրել, որ զարդարուած էր գորգերով և ամէն տեսակ անհրաժեշտ պիտոյքներով ճոխ սարքուած բան արևելեան սովորութեան։ Ռէյնէգգը զարմացած էր կաթողիկոսի վեհ, բարեսիրտ արտաքին տեսքի և գրաւիչ վարուելակերպութեան վրայ։ Ինչպէս վկայում է Ռէյնէգգը, կաթողիկոսը վայելում էր ընդհանուրի յարգանքը, իւր արած ճանապարհորդութիւնների շնորհիւ շատ տեղեկութիւններ էր ձեռք բերել և նորա հաղորդածները պիտանի են եղել Ռէյնէգգի համար։ Նա 9 օր էր մնացել և ասում է դուսկով պիտի թողնէր հիներս ամբողջ աշխարհիս այս ամենալաւ տեղը». Նա շտապում էր կատարել վրաց Իրակլ թագաւորի հրաւէրը. Թիֆլիսում նա մնաց մէկ ու կէս տարի, որպէս թագաւորի բժիշկ։ Ինչպէս ենթադրում են Ռէյնէգգի կենսագրողները, նա սպասած է լինում հեռանալ Թիֆլիսից այն պատճառով որովհետև թագաւորը չէր կատարել իւր խոստումները։ Նա դնաց Պետերբուրգ, տեղեկագիր ներկայացրեց իշ. Պատեօմկինին Վրաստանի վիճակի մասին և ջերմ մասնակցեց այն բանակցութեան, որ Ռուսաստանը իւր հովանաւորութեան ներքոյ առնէ Վրաստանը։ Նորան յետ ուղարկեցին Վրաստան, որպէս Ռուսաստանի ներկայացուցչի։ 1783 թ. Նորա վրայ քաղաքական բնաւորութեան յանձնարարութիւն դրին Ղուկաս կաթողիկոսի մտա գնալու։ Յանձնարարութիւնը վերջացնելուց յետոյ նա Պետերբուրգ վերադարձաւ։ Այնուամ էր իշ. Պատեօմկինի վստահութիւնը, ուստի տակական պատերազմի ժամանակ իշխանը Մոզդոկ կանչեց Նորան, ըստ երևոյթին՝ նա մօտ էր Յովսէփ արքեպիսկոպոսին, Լազարեանին և Մանուչարեանին։ Յովսէփ արքեպիսկոպոսը իւր յիշատակարանում ասում է, թէ 1793 թ. հիւանդութեան ժամանակ Նորան Ռէյնէգգն է բուժել։ Մեռաւ 1793 թ. ունենալով Ատենական խորհրդականի աստիճան, բժշկական ինստիտուտի տնօրէն և բժշկական խորհրդարանի գիտական ատենադպրի պաշտօնների մէջ։ Biographische Skitze des Rüssich-Kaiserl. Collegien Raths D-r Iacob Keineggs von I. D. Gerstenlerd. Gotha nnd St. Petersb urg. Bei Gerstenberd rnd Dittmar. 1797, էջ 333-835, 377—382, 387=389.

կերպով հանգամանքները փոխուեցին—մեռաւ Եկատերինէ կայսրուհին և զօրքը յետ կանչեցին։

Կայսրուհու մահից յետոյ շուտով մեռնում է և Ղուկաս կաթուղիկոսը, այն է՝ 1799 թ. դեկտեմբերի 28-ի գիշերը։ Առաջ է գալիս նոր կաթուղիկոսի ընտրութեան հարցը. թեկնածուների ցանկում լինում են սկզբում երեք հոգի—Կ. Պոլսի Դանիէլ պատրիարքը, Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը և Ստեփանոս եպիսկոպոսը, բայց յետոյ Յովսէփի անունը հանում են ցուցակից, վախենալով այն հանգամանքից, որ նա մասնակցել է մահմեդականների դէմ եղած արշաւանքներին, իսկ յետոյ վերստին մտցնում են։ Յովսէփ արքեպիսկոպոսը հաւատացած էր, որ ինքը պիտի կաթուղիկոս լինի, տեսնելով որ ռուսաց տէրութիւնը պաշտպան կը լինի իւր թեկնածութեան, եթէ պէտք լինի, և վրաց թագաւորն էլ համակրում է իւր թեկնածութեան։ Այդ բովանդակութեամբ էլ նա գրագրութիւններ էր անում Կ. Պոլսի պատրիարքի, վրաց Գէորգի թագաւորի, թագաժառանգ Դաւթի, Թիֆլիսի իւր ազգականների և այլոց հետ։ Նորան ս. Էջմիածնի միաբանութիւնը հրաւիրում էր, բայց նա չէր կամենում գնալ, ասելով որ Պոլսի հայ համայնքը ընդունի իւր ընտրութիւնը։ «Մենք զսոյն կոչումն ոչ կամիմք լինել միայն ի թագաւորաց և ի կայսերաց,—գրում է Յովսէփ արքեպիսկոպոսը,—կամ յերևելի իշխանաց և ի մարդկանց, այլ նախ յԱստուծոյ, և ապա ի բոլոր հասարակութենէ հայկազուն, քրիստոսասէր ժողովրդոց, որոց բազմութեան ձայն, ձայն Աստուծոյ հաւատալով կարասցուք յանձն առնուլ յօժար ընդունելութեամբ։ Միևնոյն միտքը նա կրկնում է իւր նամակում, որ գրուած է փետրուարի 23-ից։ «Վեհագունից հրաման յետին համարեցի և համարիմ, զի մի բռնութիւն նովաւ մտցէ ի սուրբ աստիճանն, այլ տեղի ետուս ազգային սովորութեանց, զի ազգն զիս և ես զազգն ընդրկելոց եմք։ Ոչ կամիմք ինքնին կարևոր իշխանութեամբ նպաստաւորաց մերոց ելանել ի սուրբ գահդ, այլ կամամբն Աստուծոյ և համահաճութեամբ հասարակ զաւակաց սուրբ Մօրն մերոյ, զի բազմասցի և վերակրկնեսցի սէր և խաղաղութիւն առ ամենեսին,

որովք և մեք կարասցուք զգենուլ զզօրութիւն ի բարձանց առ ի հովուել զհօտն Աստուծոյ և կրել զծանրութիւն լծոյս այնորիկ» [8]։

Երկար ժամանակ բէրաթ չէր ստացուում, և Յովսէփ արքեպիսկոպոսի ականջին լուրեր էին հասնում, թէ Կ. Պոլսի պատրիարքը աշխատում է, որ ինքը կաթուղիկոս լինի, այդ պատճառով Յովսէփը գրում է նորան, թէ ինքը և թէ Ռուսաստանում ու Վրաստանում բնակուող հայերը ուրիշ ոչ մի կաթուղիկոս չեն ընդունիլ, ուստի թող միջոցներ գործ դնէ, որ ժողովրդի մէջ երկպառակութիւն չլինի։ Բայց դորանից՝ 1800 թ. փետրուարի 28 ին նա թուղթ է գրում գաղտնի խորհրդական Ս. Լ., Լաշկարեօվին, [9] յայտնում կաթուղիկոսի մահը, երկու թեկնածուների ընտրութիւնը և խնդրում, որ եթէ հարկաւոր կը համարի, զեկուցանէ ում որ պէտք է։ Դորա հետևանքը այն է լինում, որ մարտի 16 ի Պոլսի ռուսաց դեսպան Թամարան Բարձրագոյն հրովարտակ է ստանում հետևեալ բովանդակութեամբ. «Հայ ժողովրդի պատրիարքական ընտրութիւնների առթիւ աշխատեցէք, որ Բ. Դուռը չմերժէ այս դէպքում հայ ժողովրդին տուած իրաւունքները. և այդ աստիճանի համար անարժան մարդու ընտրութեան առաջն առէք, որ կարող է հասնել այդ աստիճանին խարդախ ճանապարհով և փողի միջոցով, այդ աստիճանին, որ միայն հայերի ընդհանուր համաձայնութիւնից է կախուած»։ Նոյն տարուայ ապրիլի 16-ից դեսպանը յայտնում է Լաշկարեօվին, թէ չնայելով որ ժողովուրդը համակրում է Յովսէփ արքեպիսկոպոսին, բայց հոգևորականութիւնը և աւագները վախենում են նորան ընտրել, երկիւղ կրելով, որ պատրիարքական գահը և հայ ժողովուրդը կարող է մեծ ճնշման և հալածանքի ենթարկուել պարսից կառավարութեան կողմից, իսկ Բ. Դուռը չէ խառնուում այդ գործերին։ Այս հանգամանքների շնորհիւ Կ. Պոլսի Դանիէլ պատրիար-

[8]) Ձեռագիր։

[9]) Արտաքին գործերի պետական յանձնաժողովի Ասիական գեղարտամէնտի անդամ էր և մեծ ազդեցութիւն ունէր ասիական գործերի վրայ, այդ պատճառով նորան է դիմում արքեպիսկոպոսը։

քի կաթուղիկոս ընտրուիլը ապահով բան էր, և նա արդէն պատրաստուում էր ճանապարհ ընկնել դէպի ս. Էջմիածին, երբ գործին միջամտեց Թամարա դեսպանը: 16/28 մայիսի ամենահպատակաւորէն ներկայացրած զեկուցումից երևում է, որ նա հասկացնում է Բ. Դռանը, որ Պոլսի հայերը, լիովին ըմբռնում են Յովսէփ արքեպիսկոպոսի առաւելութիւնները, ուրիշ թեկնածուների հետ համեմատելով, բայց երբէք չեն համարձակուիլ նորան ընտրել, վախենալով որ Դուռը կը նեղէ իրանց. մինչդեռ Թագաւոր Կայսեր համար հաճելի կը լինի, եթէ հայերը կաթողիկոս ընտրեն Յովսէփին, ամենաարժանաւորին, ինչպէս խոստովանում են հայերը, և հայ եպիսկոպոսներից տաղտկանին, որ բայի դորանից, անձամբ յայտնի է Նորին Մեծութեան: Սուլթանը տալիս է իւր հաւանութիւնը և նոյն օրը հրամայում է Դանիէլին Տենէդոս կղզին աքսորել, իսկ Դաւթին, որ նոյնպէս հակառակ էր Յովսէփի ընտրութեան, Լեմնոս կղզին՝ այն նպատակով, որ Դանիէլի գնալուց յետոյ նոր.ան փոխանորդ կը նշանակէ Կ. Պոլսում: 1800 թ. յունիսի 16/28 ին Թամարան ամենահպատակաւորէն զեկուցանում է, որ Յովսէփ արքեպիսկոպոսի ս. Էջմիածնի պատրիարք ընտրուիլը այս օրերս կայացաւ՝ յուրախութիւն համայն հայ ազգի», որ նախամեծարութիւնը նորան էր տուել ստորագրութիւնների խոշոր մեծամասնութեամբ: Ստացուում է սովորական բերաթը, որ Կ. Պոլսի նորընտիր պատրիարքը յանձնում է Դաւիթ եպիսկոպոսին ս. Էջմիածին տանելու և դորանով ազատում է նորան սպառնացող աքսորից: Ապա Պաւել I Բարձրագոյն հրովարտակ է հրատարակում կաթողիկոսի հաստատութեան առթիւ, իսկ յետոյ՝ նոյեմբեր ամսին, հրաման արձակում Կ. Պոլսի Թամարա դեսպանին, որ կաթողիկոսի կողմից տաճկաց մայրաքաղաք գնացող հոգևորականներին հարկաւոր եղած դէպքերում օգնէ և պաշտպանէ: Յովսէփը Բարձրագոյն հրովարտակը և սուլթանի բերաթը ստանում է Հաշտարխանում նոյեմբերի 18-ին և շուտով մեկնում է այն տեղից: Յետոյ գալիս է նորա Թիֆլիս հասնելու, հիւանդանալու և մեռնելու պատմութիւնը, որ ես աւելորդ եմ համարում կրկնել: Ահա համառօտ կերպով

պ. Կ. Եղեանի գրքի գլխաւոր կէտերի բովանդակութիւնը, որ ես քաղուածօրէն առաջ բերի։

Ես կը կամենայի ամփոփել այս թռուցիկ տեսութիւնը նոյն խօսքերով, որով ինքը հեղինակն է վերջացնում. «Այսպէս՝ Մեծն Պետրոսի ժամանակ Ռուսաստանի և հոյ ժողովրդեան մէջ գոյացած կապը և վստահութիւնը լիովին դիտակցաբար ամրացաւ Եկատերինէի իմաստալի կառավարութեան օրով. Ռուսաստանի ամեն կողմի հայերի ինքնագոհ անձնուիրութիւնն ու մատուցած ծառայութիւնները, որոնք վաւերացուած են գահի բարձրութիւնից բազմաթիւ հրովարտակներով յանուն հոյ ժողովրդի և նորա հովուապետների, այս յարաբերութեանը բնական հետևանքն էին։ Պահպանել այս զգացմունքները, նպաստել նոցա զարգանալուն իւրաքանչիւր քաղաքացու սրբազան պարտականութիւնը պիտի համարուի, որ իւր հայրենիքի բարիքն է փափագում, մանաւանդ իշխանութիւն ունեցող անձանց. վատ ծառայութիւն են անում նոքա, որոնք թուլացնում են այդ բարոյական կապերը և փոխադարձ անվստահութիւն են արծարծում այնտեղ, ուր դորա համար պատմական հող չկայ։ Անցեալի հետ ծանօթանալը հեռացնում է տարաձայնութիւնների շարժառիթները և փոխադարձ յարգանքի ու համակրանքի բարի զգացմունքներ է ներշնչում։ Մեզ երջանիկ կը համարենք, եթէ մեր հետազօտութիւնը այդ կողմից որքան և իցէ օգուտ բերէ»։

Մ. ԹԱՐԽՈՒԴԱՆՑ.

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ. **ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՄԸ ԽՕՍՔԵՐԸ.** *Վիեննա, 1901. գին է 3 ֆրանկ։ էջ 8+224։*

Այս ամենաբնտիր թղթի վրայ տպուած և դեղագիտական ոչ մի թերութիւն չունեցող հրատարակութեամբ լոյս տեսած գիրքը պարունակում է Ցաճկանալոց մանկավարժական և գրականական ասպարիզում գործող յայտնի Ռեթէոս Պէրպէրեանի զանազան դէպքերում արտասանած ճառերը։ Ռեթէոս Պէրպէրեանը հիմնադիրն ու տէրն է Կոստանդնուպոլսի մեծ անուն վաստակած Պէրպէրեան միջնակարգ դպրոցի, որի

գոլութեան յոբելեանը մեծ չքով տօնեց այս տարի Կ. Պոլսի հայ Ինտելիգենտ հասարակութիւնը։ Գիրքը հեղինակի յոբելեանի առիթով տպագրուած լինելով՝ նուիրուած է յոբելեանը կազմակերպող մասնաժողովի նախագահ Ամենապատիւ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանին, Կոստանդնուպօլսի հայոց Պատրիարքին։

Ցառաջաբան կազմում են Պէրպէրեանի Օրմանեան Պատրիարքին ուղղած երախտագիտական և շնորհակալութեան սրտաբուղխ խօսքերը—Սրբազան Պատրիարքը յատուկ կոնդակով դրուատելով Պէրպէրեանի ազգին մատուցած ծառայութիւնները՝ յորդոր էր կարդացել հայ ժողովրդին՝ ըստ արժանւոյն դնահատել նորա աշխատանքը և մասնակցել յոբելեանին—և Պատրիարք Հօր պատասխանը։

Սրբազան Օրմանեանի պատասխանի մէջ մի բնորոշ և շատ միխիթարական կէտ կայ. շնորհակալութիւն յայտնելով Պէրպէրեանին իրեն ուղղած ձօնի առթիւ՝ Պատրիարքն ասում է. «...բայց մնծագոյն պատիւ կ'զգամ, տեսնելով որ առաւել ուսուցչի և դասատարակի կոչմանս կը լենուք Ձեր ձօնին առթիւ, որ հաստատուն ախտութեանց հետ համեստ արդիւնաւորութեան դոհունակութիւնն ալ կը դրդռէ ի իս։» (էջ է.) Ուրեմն ամենից մեծ պատիւն իրեն համար՝ ուսուցիչ եղած լինելն է համարում մի մարդ, որ ամբողջ Ցաճկահայոց եկեղեցական ու քաղաքական պետն է։ Սրբազան Պատրիարքը ուսուցչութիւնն «ընդարձակագոյն ասպարէզ» է համարում։ Մենք այդ խօսքերը բնորոշ անուանեցինք, որովհետև դա ցոյց է տալիս հայ ժողովրդի յառաջադիմութիւնը և քաղաքակրթութիւնը, որ այդպիսի գաղափարի տէր մարդ է ընտրում իբրև պետ և ղեկավար։

Գիրքը բաղկացած է չորս մասերից. ա. Վէրջին խօսքեր—Պէրպէրեան դպրոցի շրջանաւարտներին ուղղած զանազան ժամանակ—բ. Հոդվածներ—զանազան հանդէսներում արտասանուած ճառեր. գ. Կիրակնասուր խօսքեր—և դ. Հրաժեշտի խօսքեր—դամբանականներ։—Թէև գրքի մէջ պարունակուած հատուածներն համարեա թէ բոլորն էլ նախապէս տպուած են եղել զանազան պարբերական թերթերում և ուրիշ հրատարակութեանց մէջ, այնուամենայնիւ այս փոքրիկ հատորը մի գրական նորութիւն է՝ այժմի ամեն մի դրագէտի գրասեղանի վերայ դրուելու։

Ի՞նչ պիրկ, սա՛ուն, պարզ և հասկանալի լեզու. ինչ ընտիր ոճեր. ինչ դեղարուեստաւորէն կազմուած նախադասութիւններ։ Կարդում ես, կարդում և չես ձանձրանում, դարձեալ ուզում ես կարդալ, որովհետև մէջը մրտք կայ, հոգի կայ, գիտութիւն կայ, գրական հմտութիւն, լանաստեղծական աւիւն, նիւթի բազմազանութիւն և այլն. ուստահալ նոր գրականութեան մէջ հազիւ թէ գտնուի մի այնպիսի գրիչ, որ թե-

թէոս Պերպէրեանի չնորհալի գրչի բոլոր յատկութիւնները ամփոփէ իւր մէջ. ափսոս, որ մենք չենք կարդում Տաճկահայ գրողների հեղինակութիւնները և չատ վայրի վերոյ գաղափար ունինք նոցա մասին։ Ժամանակ չէ՞ արդեօք սկսելու։

ԲՐԻԶ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ. ՊԷՊՕ։ Կոմեդիա կրնք արարուածով. Բ. տպ. ուղղած. Թիֆլիզ. տպ. Մն. Մարտիրոսեանցի. գ. 50 կ. էջ XIV+122։

Մեր ծերունազարդ, տաղանդաւոր թատերագիր Գ. Սունդուկեանի գլուխ գործոցն է «Պէպօն» և իրաւամբ վայելում է ամբողջ աղգի համակրութիւնը։ 1901 թ. Ապրիլի 30-ին լրացաւ Պէպօի ներկայացման 30 ամեակը. հայ հասարակութիւնն ամեն տեղ հանդիսաւոր կերպով տօնեց այս դասական գրուածքի ներկայացման երեսնամեակը և այդ առիթով իւր խորին յարգանքները մատոյց ալեզարդ հեղինակին։ Առանձին չքով և հանդիսաւորութեամբ տօնեցին այդ յոբելեանը Թիֆլիզի հայ, վրաց և ռուսաց թատրոնական բեմերը։

«Պէպօն» դեղեցիկ և ճշգրիտ նկարագիր է Թիֆլիզի «կինոտ», «պաժարնիյ» կոչուած ու ամենքից արհամարհուած դասակարգի կենցաղի և բարոյական գաղափարների։

«Պէպօն» տպագրութեամբ առաջին անգամ լոյս է տեսել 1876 թ. և այժմ միայն լոյս է տեսնում երկրորդ տպագրութեամբ։ Այսպիսի մի ժողովրդական ու ամենքին սիրելի դարձած գրուածքի այսքան քիչ տարածուելը և այսքան ուշ երկրորդ տպագրութեամբ լոյս տեսնելը նորից ապացուցանում է, որ մեր ժողովուրդը չէ սիրում թատերական գրուածքների ընթերցանութիւնը, թէև բեմի վրայ դրանց ներկայացումը տեսնելիս՝ չափազանց ոգևորութիւն է արտայայտում։

Գրքիս յառաջաբանը, ինչպէս, և գիրքն ամբողջապէս նուիրուած է պ. Գէորգ Զմշկեանին, Պէպօի տիպը մարմնացնողին, և նկարագրում է «Պէպօի» գաղափարը յղանալու հանգամանքները։ Այս յառաջաբանն ամբողջովին արտատպուած է գրքի առաջին հրատարակութիւնից։

Երկրորդ տպագրութիւնը մի քանի մանր փոփոխութիւններով է հրատարակել հեղինակը. ճիշդ է, դրանք մանր են, սակայն նրբութիւններ են արտայայտում. բերենք մի երկու օրինակ. երկրորդ արարուածի գ. տեսիլում Էփեմիան ծառային ասում է. «Ու դուն էլ էնէնց հաքի, վուր դիփունանց «ճէր վէն հայ...». հեղինակն այժմ սրբագրում է. «...վուր դիփունանց «ճէրը ֆոռանայ...» (էջ. 45)։

Նոյն արարուածի ու նոյն տեսիլի մէջ դարձեալ Էփեմիան ծառային ասում է. «...Մէ խօսկով՝ իստակ, կարքիկ քաղաքավարի տուն ու դուռ կօնիս...». այժմ հեղինակը բարեք է համարել աւելացնել այդ խօսքերին. «Ռոզ ոեռնէն ռա ճշեկէվէն.» (էջ. 46.) և այլն։

«Պէպօն» Թիֆլիզի բարբառով լինելով գրուած՝ հարկաւ այնպիսի արտայայտութիւններ ունի, որ հասկանալի չի լինի այդ բարբառը չգիտցողին. նամանաւանդ մի քանի ձայնաւորների արտասանութեան եղանակը. հեղինակը ծանօթութեանց մէջ բացատրում է այդ տառերի արտասանութեան ձեր և թարգմանում է մի քանի պարսկերէն երգերը։ Այս հանգամանքը շատ բնական գտնելով՝ թոյլ ենք տալիս մեզ մի առաջարկութիւն անել յարգելի հեղինակին. «Պէպօն» այժմ ոչ միայն Թիֆլիզի բեմի զարդն է, այլև մեր նորագոյն գրականութեան թանկագին գանձերից մէկը. «Պէպօն» այժմ ներկայացուում է և դաւառական հայ բեմերի վրայ. մեր դաւառացի երիտասարդներն էլ շատ անդամ ստանձնում են Պէպօի և Կակուլու դերերը. չէ՞ որ դերակատարները պէտք է հասկանան թէ ինչ են ասում իրենց դերի մէջ։ Պէպօի մէջ կան բազմաթիւ զուտ Թիֆլիսցոյն դոյն հասկանալի բառեր և վերցրէն խօսքեր, որ անհասկանալի պէտք է մնան հայախօս դաւառացիների համար. լաւ չէր լինի, որ այդ բառերը գոնէ բացատրուէին ծանօթութեանց մէջ։ Միայն առաջին արարուածի մէջ մենք թուեցինք մօտ 35 այդպիսի բառեր, որոնք անհասկանալի են մնում ոչ Թիֆլիզցուն և վրացերէն չիմացողին. մի քանի օրինակներ. «Ղ-ամ - ղ-ոֆբերիք ինձ. (էջ. 2) «էէէ-» (էջ. 3) «-ռ-ֆբ-» (էջ 8), «..Ցօ, ը՞ռ ցբ-ռ հանաք է.» (էջ 1) «վա. ը՞ ռ-ֆէ-ֆբռ, Պէպօ.» (էջ. 16) «ակ-ռ-ռ-» (էջ 16.) «..բանը ֆշշ-ռ է ըլում. (էջ 18). «էթ-ռ-» (էջ 24). «..թէ ռ-ոբէ. ոբ չին կորչի և կու տեանիս...» (էջ 24). «Նէ-ռ-ի ռ թամաշա անիլ տան... (էջ 2), «Ուրդնքէն առնիս ռ-ֆէէրն, (էջ 33) «ռ-ռ-ռ», «Նորչի» (էջ 37) «..ոչ-ռ-ռ-ռ վրայ ինչով իս աւել» (էջ 38) և այլն և այլն։

Գրքի արտաքինը համապատասխանում է ներքինին. ճաշակագէտ հեղինակը ջանք չէ խնայել, որպէս զի մաքուր ու գեղեցիկ լինի հրատարակութիւնը. թուղթն ընտիր և տպագրութիւնը լաւ ափսոս միայն, որ գիրքը կազմուած չէ ինչպէս հարկն է. թերթերը ծալած դրուած են միայն և բանալիս ինքոյն թափթփուում են։

Ցանկանք, որ էլրորդ տպագրութիւնը շուտ և անթերի լինի։

ԹՐԻՔ

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԴԵՕԶԵԱՆ. Գերմանիայի հայ ուսանողութիւնը. Թիֆլիզ. տպ. Կ. Մարտիրոսեանի. գ. 20 կ. (հրատ. № 61 Աղբիւր-Տարազի):

Այս 94 էջ ունեցող գրքոյկը բաղկացած է VIII հատուածներից և յառաջաբանից։

Յառաջաբանում պ. Մ.-Կ.ը Եւրոպայի հայ ուսանողութեան «Տեղեկագրից» առաջ բերելով այն աչքի ընկնող հանգամանքը՝, որ 1899 թ. Եւրոպայում եղել են 230 հայ ուսանողներ և նկատելով, որ այդ թիւը հետզհետէ աճում է՝ հայ հասարակութեան համար հետաքրքրական է գտնում՝ զբաղուել այն հարցով՝ թէ այդ ուսանողութիւնն ինչ է անում, ովքեր են կազմում այդ ուսանողութիւնը, որոնք են նրա ձգտումները, ինչ և որպէս է նա ուսանում, թէ նա արտասահմանից ինչ է բերում» և այլն։

Համակրելի է հեղինակի տեսակէտը, որովհետև այդ ուսանողութիւնը հայրենիք վերադառնալով ու գործելով կեանքի ու գրականութեան մէջ՝ հարկաւ պէտք է որոշ ազդեցութիւն ունենայ մեր հասարակական կեանքի կազմակերպութեան վրայ։ Ուսանող երիտասարդութիւնն ամեն ազգի մէջ ևս նկատւում է՝ իբրև ապագայ սերնդի դաստիարակութեան գործոններից մէկը, այդ պատճառով էլ ամեն մի ժամանակաշրջանի ուսանողութեան հայեացքներն ու ձգտումները փայփայւում են և ուշադրութեան առնւում։

Հեղինակն իւր ուսումնասիրութեան նիւթ է դարձնում ոչ բոլոր եւրոպական հայ ուսանողութիւնը, այլ միայն գերմանականը, որովհետև այդ խնդրի վերաբերմամբ հրատարակուած նիւթեր չկան *), իսկ երկրորդին հեղինակն աւելի ծանօթ է անձամբ. Եւրոպայի հայ ուսանողութեան տեղեկագիրը, որ վերաբերում է 1897—1899 թ. ուսանողներին, լոկ ստատիստիկական տեղեկութիւններ է հաղորդում և հետևեալ տարին այլ ևս լոյս չէ տեսել յաջորդ տեղեկագիրը։

Այս ընդհանուր ակնարկից յետոյ՝ տեսնենք թէ հեղինակն ինչպէս է կարողացել հասնել իւր ծրագրած նպատակին և թէ որքան ճիշդ են նրա հայեացքներն ու լուսաբանութիւնները։

Գրքոյկի I հատուածի մէջ պ. Մ.-Կ. խօսում է առհասարակ Ռուսահայ և Ցանկահայ ուսանողների տարբեր ձգտում-

---

*) Մեզ ծանօթ է պ. Խ. Յարութիւնեանի աշխատութիւնը. «Գերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունէութիւնը և հայ ուսանողները», որտեղ նոյնպէս մասամբ նկարագրուած են այդ հաստատութեանց մէջ սովորող հայ ուսանողների գործունէութիւնը։

ների մասին, Ցաճկահայերին բաժանելով երկու մասի՝ պոլսեցիների ու զաւառացիների։ Ցայտնի փաստ է, որ Ցաճկահայերը, նամանաւանդ պոլսեցիները ձգտում են դէպի Ֆրանսիա, իսկ կովկասցիները դէպի Գերմանիա. պատճառներն էլ պարզ են։ Միայն հեղինակի այն տեսութիւնը ճիշդ չէ մեր կարծիքով, երբ ասում է «Կովկասի հայերը կրում են գերմանական գրականութեան, փիլիսոփայութեան և առհասարակ ամբողջ գերմանական ոգու ազդեցութիւնը, մասամբ ուղղակի, Ֆայ Ֆլիսոբրոգէս ասա Գրոնոբնէ ՏԼՀ-ցով». էջ 11։

Ճիշդ է, Կովկասի հայերը գլխաւորապէս Գերմանիա են գնում ուսանելու, սակայն սոցա մէջ երկու իրարից բոլորովին տարբեր տարրեր կան, որ այս դէպքում զանց է արել հեղինակը. դոքա են՝ 1) այն հայ ուսանողները, որոնք իրենց միջնակարգ դպրոցական կրթութիւնը ստացել են հայ դպրոցներում. և 2) որոնք գնացել են արտասահման գիմնազիաներից, ռէալական դպրոցներից կամ ռուսական համալսարաններից։ Փորձով գիտենք, որ այս երկու խմբերը բոլորովին տարբերւում են իրարից՝ թէ իրենց բնորոշ յատկութիւններով, թէ ձգտումներով և թէ նպատակներով։ Ռուսական գիմնազիաներում աւարտողները սովորաբար չեն գնում արտասահման, որովհետև նրանց առաջ բաց են ռուսական համալսարանների դռները. դրանցից եթէ գնացողներ կան (սակաւաթիւ), նրանք էլ մի որ և է պատճառով միջին կամ վերին դասարաններից հեռացրած կամ իրենց կամքով դուրս եկած աշակերտներն են. մնում են ռէալական դպրոցներ աւարտողները և համալսարանից գնացողները. սոքա արտասահման գալիս՝ չեմ կարծում թէ կրեն «գերմանական հոգու ազդեցութիւնը»։ Վերջին տարիներս միայն ղանդան հանգամանքների շնորհիւ՝ ռուսական համալսարանների հայ ուսանողներն ևս գնում են արտասահման. սոցա վերաբերմամբ նոյնպէս չի կարելի ասել, որ «գերմանական հոգու ազդեցութեամբ» լինեն կրթուած, որովհետև ռուսական կեանքն այժմ չատ ինքնուրոյն կողմեր ունի և նորա երիտասարդութեան ուղղութիւնը բոլորովին տարբեր է գերմանական ուսանողութեան ձգտումներից։ Ասածներիս ապացոյց՝ չատ անգամ կրկնուած այն փաստը, որ ռուսական համալսարաններից Գերմանիա եկած ուսանողները դեռ երկար ժամանակ չեն կարողանում ընտելանալ գերմանական հանգամանքներին ու միշտ դժգոհ են լինում, մի քանի տարի ուսանելուց յետոյ միայն համոզւում են, որ իրենց նախկին կարծիքները սխալ հիմքերի վրայ են հիմնուած եղել կամ երևոյթների անճիշդ ըմբռնումից առաջացել։

Ցաճկահայերի և կովկասեան հայերի ընորոշ տարբերութիւններն առաջ բերելով՝ հեղինակն ասում է ի միջի այլոց, որ Կովկասի հայերն ունին «հակումն զաղափարական անհա-

մաձայնութիւնները մինչև անձնական անհայտ թշնամութեան հասցնելու»։ Մթթէ տաճկահայերը զուրկ են այդ յատկութիւնից։—Որ իբրև թէ ռուսահայերը «հրապարակախօսութիւնը զերադասում են գեղարուեստից», իսկ տաճկահայերը ընդհակառակը «գեղարուեստը զերադասում են հրապարակախօսութիւնից»։ Այս ճիշդ չէ. տաճկահայերը մեզանից շատ և շատ աւելի հրապարակախօսներ են տուել։ Եւ իբրև թէ «Տաճկահայերը ընդունակ չեն միասին գործելու», իսկ մենք ընդհակառակը։ Ի՞նչ փաստերի վրայ է հիմնւում այս կարծիքը. մեզ թւում է, որ այս ընտրութիւնն ևս ճիշդ չէ։—Ապացոյց Կ. Պոլսի ընկերութիւնները, որ ոչ տակաւն մեր ընկերութիւններից պակաս գործունէութիւն չեն ունեցել։

II հատուածում պ. Մ. Կ. յիշելով, որ հայ ուսանողներն այժմ Գերմանիայում գլխաւորապէս կենդրոնացած են Բերլինի և Լայպցիգի համալսարաններում, բացատրում է թէ ինչու առաջ հայ ուսանողները խոյս են տուել Բերլինից. «պատճառը այն վատ համբաւն է, որով յատնի էր նա (Բերլինը) առնտարակ աշխարհին, ինչպէս սոսիկաւական քաղաք, ուր աւելի քան որևէ մի ուրիշ տեղ Եւրոպայում հալածւում ու ճնշւում է գիտութիւնը, հրապարակախօսութիւնը և ամեն մի ազատ խօսքը»։ (էջ 15)։ Դո՞յզ ռուսների համար մի այդպիսի բացատրութիւն ճիշդ համարուի, սակայն հայ ուսանողներն այդպիսի մի ենթադրութեան անծանօթ են եղել. հայ ուսանողները Բերլին չեն գնացել նախ տնտեսական պայմաններից ստիպուած (Բերլինում կեանքն անհամեմատ թանկ է) ու երկրորդ՝ առաջ, ինչպէս հեղինակն էլ նկատում է, Բերլինում չէին կենդրոնացած գիտնական մեծ ոյժերը, այլ Գերմանիայի բոլոր համալսարաններն ևս ունէին գիտնական մեծութիւններ ու ազատարհոչակ հեղինակութիւններ, ինչպէս օրինակ Լայպցիգում հոդեբան-փիլիսոփայ Վրոբիշը, հոգեբանրնախօս Վունդը, քաղաքատնտես Ռոշէրը, աշխարհագրագէտ ֆօն Ռիխտհոֆէնը. Ենայում մանկավարժ Շտոյն, Ռայնը և այլն։ Նոյն դրութիւնը կարելի է ասել՝ մասամբ այսոր ևս շարունակւում է։

III հատուածի բովանդակութիւնը մի թոյլ նկարագրութիւն է նորեկ հայ ուսանողի առաջին օրերի՝ և ամիսների խոհերի և տատանումների՝ մասնագիտութեան ընտրութեան վերաբերմամբ։

IV հատուածում հեղինակն աշխատում է բացատրել այն հանգամանքները, որոնք արգելք են լինում հայ ուսանողին շփուելու գերմանացիների հետ։ Նախ յիշում է գերմանացու և հայի բնաւորութեան տարբերութիւնները և աւելացնում. «զգացմունքային իդէալական ձգտումները աւելի յատուկ են ռուս ինտելիգենտ հասարակութեանը, քան Եւրոպայի (?) իսկ մեր (հայ) հասարակութիւնը, ռուս հասարակական շարժումների այս կամ այն ուղղութեան անմիջական ազդեցութեան տակ է»։

Այս համեմատությունը սխալ հիմք ունի. եթէ ռուս և հայ ինտելիգենտը ձգտում է ունենալ այն, ինչ որ եւրոպացին վաղուց արդէն վայելում է, մթնէ այդ նշանակում է թէ առաջինն աւելի իդէալական է, քան երկրորդը, որ են մեր, այն էլ այժմեան ուսանողութեան, իդէալների հետևանքները. չէ՞ որ նոյն իսկ այդ իդէալները մենք փոխ ենք առնում Եւրոպայից. ուրեմն ինչպէս կարող ենք մենք աւելի իդէալական լինել, քան եւրոպացին։ Աւելի ճիշդ է պարոնի միւս նկատողութիւնը. Եւրոպացիք «աւելի շատ գիտեն ու շատ են զգում, քան արտայայտում, այն ինչ մենք, ընդհակառակը, աւելի շատ ենք խօսում քան իսկապէս գիտենք։ Մենք սիրում ենք կէս ժամուայ ընթացքում դուրս թափել ոչ միայն այն, ինչ որ «ունենք», այլ և ինչ որ չէ». ասեն առիթով մենք պատա՛ չ ունենք յայտ՝ ելու մեր «սեպհական կարծիքը» (էջ 28)։ Ապա խօսելով գերմանական ուսանողութեան մասին պ. Մ.-. արդէն շատ է չեղուում ճշմարտութիւնից. նա ասում է. «թէ որքան ցո՛ չ է ընդէ գերմանացի ուսանողը, բաւական է լիչել հետևեալը. Բերլինի համալսարանը ունի աւելի քան 5500 իսկական ուսանող. այդտեղ կան մի քանի (?) հետաքրքիր ուսանողական ընկերութիւններ, ինչպէս—«հատարական-գիտական», «գիտական» «փրաւարանական» և այլն. բայց այդ ընկերութիւնների անդամների ընդհանուր թիւը հաղ ւ թէ հասնի 400 500 (?) մինչդեռ նոյն համալսարանը ունի դուցէ (?) 50-ից աւելի ուսանողա ան corporativ ընկերութիւններ, որոնց մէկ, բացարձակապէս միակ զբաղմունքը գա՛ ելնալն է, երբէ և պարտադիր մենամարտութիւնները թերերով» (էջ 24)։ Այս «մի քանիսն և «դուցէ»ն ճ չդ լարարերութեամբ չեն վերցրած. առաջինը պակասեցրած, երկրորդը չափազանցացրած է. որովհետև գիտական և մասնագիտական ընկերութիւնների թիւը ոչ թէ մի քանի, այլ մի քանի տասնեակի կհասնի, ինչպէս օրինակ, փիլիսոփայական, բնագիտական, բժշկական, մանկավարժական, աստուածաբանական, լեզուաբանական, պատմական, աշխարհագրական և այլն, դրա՛ց թուումն են գտնուում Որ corporativ ընկերութիւնների թիւն ես շատ է, ընդունում ենք. այց որ 5500 ուսանողներր 400—500-ի բաղադրեալներ, բոլորն էլ բացարձակապէս մէ՛ մոյ գարեջուր խմելով, երգելով ու մենամարտութեամբ զբաղուած լինին, դա այնպիսի սուտ պերական չափազանցութիւն է, որ առ սակաւն չէիր ասում մի գերմանական ուսանողից լսել։ Եթէ այդ ճիշդ է, ապա որտեղից են առաջանում գերմանական գիտնականների այն ահագին խումբը, որոնց դասախօսութիւնները լսելու համար աշխարհիս բոլոր ծայրերից գալիս են Գերմանիա, որտեղից այնչափ մանրակրկիտ և իրենց ամբողջ կեանքը գիտական հետազօտութիւնների, ճանապարհորդութիւնների, նոյն իսկ վայրենի աղգերի հետազօտութեան նուիրուած գերմանացիք, որ—

տեղից դպրանոցական ամեն ճիգերը մշակող և ամեն լեզուներով թարգմանուող գերմանական լուրջ աշխատութիւնները, ի տեղից ամենանշանաւոր քաղաքագէտները, Գերմանիայում ամենատատաւոն հիմքերի վրայ դրուած սոցիալ-դեմոկրատական զեկավարները և այլն և այլն։ Ո՛չ, այդ մի թիւրիմացութիւն է. գերմանացի ուսանողութիւնը երբէք «դած չէ ընկել» և corporativ ընկերութեանց շատութիւնն էլ ամենեին ապացոյց չէ «դած ընկնելու»։

Ամեն մի հասարակութիւն, ամեն մի դասակարգ ունի իւր աւանդական սովորութիւնները. գերմանական ուսանողութեան աւանդական սովորութիւնն էլ ազատ կեանքն է. այդ corporativ կոչուած ընկերութիւնները ճիշդ է, դարեջուր շատ են գործածում (այդ էլ արդէն բնորոշ յատկութիւն է ամեն մի գերմանացու համար), բայց մի մոռանաք, որ դրանք զուտ ընկերանքներ կեանք են վարում՝ գիշեր ցերեկ միասին և միատեղ լինելով. նոյն քիչ բան է սովորեցնում երիտասարդներին ընկերական կեանքը, ընկերութեամբ զբօսնելը, ճանապարհորդելը։ Եւ որ գլխաւորն է, գերմանացի ուսանողը այսպէս ասած «քէֆ է անում» սովորաբար ուսանողութեան առաջին մի քանի կիսամեակներում, իսկ լեռոյ արդէն նա ամբողջ հոգուով նուիրուում է իւր գործին և ինչպէս իրենք ուսանողներն են ասում՝ «եղնում» (ochsen) է, այսինքն չափազանց աշխատում և գիտութեան ու պետական քննութիւններ տալիս։ Եթէ ուզում էք գերմանական ուսանողութեան մասին ճիշդ դաղափար կազմել՝ պէտք է ծանօթանաք Գերմանիայի աւելի փոքր համալսարանների ուսանողութեան հետ, որովհետև Բերլինն, ինչպէս մայրաքաղաք, շատ բան այնպէս չէ ներկայացնում, ինչպէս որ պէտք է լինի. մինչ Բերլինցի գերմանացուն ճանաչելով՝ ճանաչած կլինէք բուն գերմանացուն.—ոչ երբէք։

Մոռացել էք նոյնպէս մի շատ յարգելի դասակարգ, ուր հայ ուսանողը կարող է մուտք ունենալ—և շատերն ունեցել են, նամանաւանդ Գերմանիայի միւս համալսարաններում—և սիրով ընդունուել բնատանեկան շրջանում. այդ դասակարգը պրոֆէսորների ու մշնակարգ դպրոցների ուսուցիչների դասակարգն է։

Վ հատուածում պ. Մ. Կ. առաջ է բերում «Տեղեկագրից» ստատիստիկական տեղեկութիւններ, որից երևում է, որ 1898—1899 տարիների ձմեռուայ կիսամեակում Գերմանիայում եղել են 41 հայ ուսանող, որոնցից Բերլին 20, (երևի 26 պէտք է լինի, ինչպէս երևում է միւս էջի ցանկից)։ Լայպցիգ—11, Միւնխէն—8, Կարլսրուհէ—6, Հալլէ—3, Ֆրայբուրգ—3, Դրեզդէն—2, Բրեսլաւ—1. (տես. էջ 37—38)։ Հայտնի պակաս է Ցենա—1)։ Զուրիխ-ում եղել են՝ 31 ուսանող, Ֆրանսիա—Նանսի—9, Մոնպելիէ—10, Պարիզի ուսանողների ճիշդ թիւը յայտնի չէ։ «Տեղեկագրը 50 յայտնիներին

անալայտներն աւելացնելով՝ 130 է համարում, իսկ, պ. Մ.-Կ. «ամենաշատը 60 – 70». երկու թուերն էլ հաստատ հիմք չունին, այլ ենթադրութիւններ են։

Գերմանիայի և Ցիւրիխի ուսանողներից 55 Ռուսաստանից են, 13 Ֆաճկաստանից. Ռուսահայ ուսանողներից 28 հոգի աւարտել են ռէալական դպրոցների դասընթացքը, 12-ը հայոց թեմական դպրոցները. 8 ը Դէորդեան ճեմարանը. գիմնազիաներում 3. Սանասարեան, Պօլսի Կենդրոնական ու Պէրպէրեան վարժարաններից 4. 7 թերուսներից 4 գիմնազիայի բարձր դասարաններից են, 3 Ռէալական դպրոցի։

Այս թուերն առաջ բերելով՝ պ. Մ. Կ. իրաւամբ նկատում է. «Բաւական է աւարտած Ռէալականների թուին (28) աւելացնել աւարտած գիմնազիականների, Ներսիսեանների ու Դէորգեանների թուները (23), «դրէ՞ ոչ Վերջնոնոդէ ցրնչ (ցը-բուի) ոյն ոչ՞ լ՞որ ծ՞ էր, էբ Ռ՞ Գ՞ երմանիա (կամ աբդոսկման) ուսանում էն «զոնոզոն ոնյ՞ զնն՞ը» (էջ 46)։

Այնուհետև պ. Մ.-Կ. առաջ է բերում թէ քանի ուսանող ինչ մասնագիտութիւն է սովորում. այդ ցանկից երևում է, որ ամենից շատ սովորում են մեքենագիտութիւն (15), քիմիա (11), բժշկութիւն (8), հասարակական գիտութիւններ (7). ամենից քիչ՝ գիւղատնտեսութիւն (1), լեզուագիտութիւն (1), գրականութիւն (1), մանկավարժութիւն (1) և այլն։ Հեղինակը գիտութիւնները երկու մասի բաժանելով՝ գործնական և տեսական՝ եզրակացնում է, «որ մեր գերման ուսանողներից աւելի քան $^2/_3$ նուիրուած է գործնական մասնագիտութիւններին» էջ 47։ Միայն մեզ տարօրինակ է թւում՝ թէ ինչու պ. Մ.-Կ. բնագիտութիւնն ու մանկավարժութիւնը համարում է գործնական գիտութիւն, իսկ երաժշտութիւնը, նկարչութիւնը, ֆիզիկան և այն ուրիշներն։

VI հատուածում աշխատասիրողը խօսելով ընդհանրապէս հայ ուսանողական ընկերութեանց և մասնաւորապէս Բերլինի հայ «մատերիալիստական ընկերութեան» և «Բերլինի ընդհանուր հայ ուսանողական գրական միութիւն» կոչուած ընկերութիւնների մասին՝ չէ կարողանում որոշել թէ «ժամանակագրական կարգով» որն է այդ ընկերութիւններից առաջինը և աւելացնում է «Փոյէ Լէյպցիգինը, որ կազմուեց 1885 թ.»։

Մի աշխատութեան մէջ, որ ամբողջովին նուիրուած է Գերմանիայի հայ ուսանողութեանը, այդ մասին չպէտք է «զուցէ» ով խօսել, քանի որ կարելի էր ճիշդ տեղեկութիւններ գտնել ընկերութեանց արձանագրութիւնների մէջ։ 1885 թ. նոյնպէս ճիշդ չէ։ Լայպցիգի «հայ ճեմարանական ընկերութիւնը» հիմնուել է Լայպցիգի և Հալլէի հայ ուսանողների աշխատութեամբ 1884 թ.։ Այս գրքի մէջ կարդալով Բերլինի հայ ուսանողների պատակտումները և նպատակների ու ձգտումների տարբերութիւնները, զարմանում ենք թէ՝ ինչ դիւրութեամբ հայ ուսանողները ենթարկուել են կուսակցական գիտումնե-

րին և այնտեղ էլ նոյն կերպ են վարուել, ինչպէս վարում են այստեղ, մեզ մօտ։ Այդպէս չէր առաջ. կուսակցութիւններ չկային և բոլոր ուսանողները մի սիրտ, մի հոգի էին. նրանց նպատակներն էլ այն չէին, ինչ որ այժմս է։ Ուսանողական ձգտումների մէջ համեստութիւն կար. դրան ապացոյց կարող է լինել Լայպցիգի «հայ ճեմարանական ընկերութեան» կանոնադրութիւնը (1884 թ. մարտին մշակուած և ապա համալսարանի վարչութիւնից հաստատուած), որի նպատակները որոշուած էին հետեւեալ 3 կէտերով. (պ. Մ. Կ.-ին ծանօթ չէ այս հանգամանքը). 1. «ծանօթանալ հայկական հին և նոր կեանքի հետ և պարապել*) նոցա վերաբերեալ խնդիրներով». 2. «նպաստել անդամների ընկերակցական հաղորդակցութեան ընդհանրապէս և մասնաւորապէս ստեղծելոցա մէջ մի բարոյական կապ ներկայ և ապագայ կեանքի համար, իբրև օգտակար անդամներ Հայոց ազգի». 3. նպաստել (բարոյապէս) նորեկ և եկաւոր ուսանողներին իրանց նպատակին հասնելու»։

Նպատակի առաջին կէտի որոշումն ուղղակի անհրաժեշտ համարուեց, որովհետև ոչ հայոց դպրոցներից եկած ուսանողները չգիտենալով իրենց մայրենի լեզուն և պատմութիւնը, շատ անդամ ամաչում էին գերմանացիներից և կարիք զգում սովորելու։ Արտասահմանի ուսանողները առանց կարմրելու չեն կարող ն բոպացուն ասել, որ չգիտեն իրենց մայրենի լեզուն, այնքան անբնական է համարում այդ բանն այնտեղ**)։ Այժմեան արտասահմանի հայ ուսանողութեան համար աւելի անհրաժեշտ է այդ կէտի գոյութիւնը, քանի որ դրանց մեծամասնութիւնը այժմ Կովկասի պետական դպրոցներից են։

VII հատուածն ամբողջապէս նուիրուած է «Եւրոպայի հայ ուսանողութեան միութեան»ը և շատ համակրելի մտքեր է արծարծում այդ ընկերութեան նպատակների վերաբերմամբ։

VIII և վերջին հատուածում հեղինակը համեմատութիւն անելով ռուս համալսարաններն աւարտող հայերին գերմանականների հետ՝ իրաւամբ ասում է. «Այստեղ հաշուի պիտի առնել մեր հասարակութեան մէջ ու ամբողջ Ռուսիայում այնտարածուած կարծիքը, որ իբր թէ գերմանական համալսարան աւարտելը չնչին մի գործ է, որ դիպլոմներն այդտեղ կարելի է փողով գնել և այլն, մինչդեռ [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible]

*) «Պարապել» բառի փոխարէն առաջ գրուած էր «Մշակել», սակայն ժողովը երկար վիճաբանութիւններից յետոյ ընդունեց «պարապել» համեստ արտայայտութիւնը։

**) Իրաւ հիշդ իրողութիւն յայտնի է, որ երբ մի ուսանողական խնջոյքի միջոցին հայերէն չիմացող մի հայ ուսանողի առաջարկում են մայրենի լեզուով մի ճառ ասել, խեղճը շփոթում է, բայց շուտով հնարագիտութեամբ մի նոր է գտնում և ճառում է «հայր մերը» սկզբից մինչև վերջը։

հայ գաղութները Ռուսիայում։ Այդ պատճառով, կարծում ենք, որ Գերմանիայում աճապարանքը առնչվում է հայոց տասնութերորդ դարի առաջադիմության։ էջ 81—82։

Ապա պ. Մ.-Կ. դատապարտելով Պարիզի և մասամբ նաև Զուիցերիայի հայ ուսանողության չատ թերի կողմերը՝ եզրակացնում է. «Առհասարակ Գերմանիայի հայ ուսանողությունը տարբերվում է ուրիշ հայ ուսանողություններից էր գերազանցությունը։ էջ 89։

Այնպես երկար կանգ առնելով պ. Մելիք-Կարագեոզեանի փոքրիկ աշխատության վերայ, մեր նպատակն էր ընթերցողներին ծանոթացնել հայ ուսանողության մի հատուածի ձգտումների հետ, որովհետև դրանք մի քանի տարուց լեռայ պետք է տպարկեն դան և գործեն մեր հասարակական կեանքում։ Տարբերությամբ հայ լուրջ գործիչների թիրը հեղինակ պակասում է մեր գրական ոլորտի մէջ և չատ ցանկալի է, որ մեր երիտասարդ հեղինակի համակրելի դատողությունները արձագանք գտնեն և հայ ուսանողներ միմիայն նիւթական չահ բերող մասնագիտություններ չընտրեն՝ իրենց ապագայ գործունեության համար։

Հեղինակի առաջին ու վերջին հատուածները գերմանական ուսանողության վերաբերմամբ փոքր ինչ ճակատական են։

Գրքույկը կարդացվում է դիւրությամբ. լեզուի կողմից թերություններ ունի. ահա մի քանի օրինակ.

«.. Երթական չարժումը դեպի Եւրոպան անցել է արդեն անհատական չրջանից դուրս» (էջ 7). «... վրայ ընկնելով գերմաներենին..» (էջ 19). «... դիմին բարկանալ ու ոգևորուել» (էջ 22). «դիւրին է տանում» (էջ 22)։ «.. Պուշկինը, որը ամբողջ մի գլխով, բարձր էր իր ժամանակից ..» (էջ 30). «Գերմանիա ուսանել են» (էջ 37). «.. ուսանել են այնպիսի հինարկությունների, որտեղից ճանապարհ չբկայ կամ առհասարակ դեպի ռուսաց բարձրագոյն դպրոցները, կամ էլ —հանալարանը..» (էջ 45). «բոլոր թողնենք քննել ցուցակը» (էջ 45). «որպէս զի վերջնականապէս ցրել այն սխալ կարծիքը...» (էջ 46). «պահանջ եղաւ մի նոր ընկերության մէջ» (էջ 55). «հաղիւ թէ մի որ և է ուրիշ անդամ ապրած լինի նա դրա նման մի ժամանակ» (էջ 56) և այլն։

Մեկ տեղ «Կոլկասահայու», «Պոլսահայու», մի ուրիշ տեղ «թիւրքահայի», «տաճկահայի»։ «Զուիցերիա». սովորականն է Զուիցերիա կամ Շվեյցարիա։

Չնայելով վերոյիշեալ թերություններին՝ գրքույկը լանձնարարում ենք «Լումայի» ընթերցողներին, որովհետև սիրապետող դաղափարը համակրելի է։

ԳՐԻԳՈՐ

Պ. ՀԱԹԻ ՔՍԵԱԴԱՏՈՒԹԻԱՆ ԱՌԻԹՈՎ

(Մարտ – Հոկտ. 1901)

Հարցասիրութիւնն արդեն է Ուշինսկու կեանքի և գործունէութեան նկարագիրը։ Ռուսաց մանկավարժական գրականութեան այս հսկայ ներկայացուցիչը թէ իւր կենդանութեան ժամանակ և թէ մահից յետոյ շատ հայածանքների է ենթարկուել։ Կարդալով այս արտաքոյ կարգի անձնաւորութեան կենսագրութիւնը, մարդ չէ իմանում, թէ ինչի վերայ աւելի զարմանայ՝ նորա հակառակորդների յամառ չարամտութեան, թէ իրան Ուշինսկու անընկճելի բնաւորութեան ու նորա քարոզած գաղափարների մշտական թափանցութեան վերայ։ Թերևս կենդանի մարդուն հալածելը այնքան տգեղ չէ թւում մեզ, որովհետև մենք գիտենք, որ առօրեայ մարդ երևոյթները իշխում են հակառակորդի փոքրոգի բնաւորութեան վերայ, բայց երբ հալածանքը շարունակւում է մահից յետոյ, դա արդէն վրդովեցուցիչ մի բան է դառնում։ Ամենքը գիտեն, որ մինչև Ուշինսկու հրապարակ գալը ռուսաց մանկավարժական գրականութիւնը ողորմելի վիճակի մէջ էր, որ դա անգամ գոյութիւն չունէր։ Ուշինսկին ստեղծեց այդ գրականութիւնը և ստեղծեց հալածանքներն ու թշնամանքներն հարուածների տակ . . . Վերջապէս մահու հրեշտակը օգնութեան հասաւ մեծ մանկավարժի հակառակորդներին. Ուշինսկին մեռաւ։ Բայց նորա ցանած սերմերը չմեռան, նորա քարոզած մանկավարժական սկզբունքները զարմանալի արագութեամբ մարմնացան և ընդհանրացան, նորա լսրինած դասագրքերը բացառիկ գործածութիւն ստացան, Родное слово-ն մէջին թուով տարեկան 4 անգամ սկսեց տպագրուիլ և ամեն անգամ հարիւր հազար օրինակ։ Սա մի չտեսնուած երևոյթ էր, մի անսպասելի յաղթութիւն։ Բայց ուր կայ յաջողութիւն, այնտեղ կան և նախանձորդներ։ Ուշինսկու դասագրքերի բացառիկ գերիշխանութիւնը պէտք է նոր հակառակորդներ ստեղծէր դոցա դէմ։ Սկզբում այդ հակառակորդները գործում էին պաշտօնի և օրինաւորութեան անունների տակ... Բայց երբ համոզուեցան, որ ազատ մրցութեամբ չպիտի կարողանան հրապարակից հանել իրանց անպատեհ դասագրքերը, դիմեցին կոպիտ միջոցների. հրահանգեց որ Ուշինսկու դասագրքերը չգործածուին այլ նոր։ Պէտք էր ենթադրել, որ այդ պաշտօնական կարգադրութիւնը վերջնական հարուածը կտայ պատկառելի մանկավարժի գրական աշխատութիւններին։ Բայց ոչ. Ուշինսկու գրքերը գործածութիւնից չընկան. թէև հասարակը լցուեցաւ նորանոր դասագրքերով, մինը միւսից փարթամ, մինը մյուսից չքնդ տպագրուած, սա-

կայն Ուշինսկու գրքերը չարունակում էին տարածուել ու տարածուել. նոքա այնպիսի հիմունքների վերայ էին գրուած, որոնք արհեստական կերպով չպիտի յաղթահարուէին. Եւ չյաղթահարուեցան. ժամանակները փոխուեցան, կրքերը դադարեցան, նախանձորդները տեղի տուին, իսկ ներկայ նախարարութիւնը բացարձակ խոստովանեց այդ գրքերի արժէքը և կապանքից արձակելով, թուլատրեց ազատ գործադրել որպէս լաւագոյն դասագիրք սկզբնական դասաւանդութեան համար.

Իմ «Մայրենի լեզուի» առաջին տարին կազմուած է Ուշինսկու ա. տարուայ հետևողութեամբ. Մուրճը քննադատ պ. Հաթը իմ գրքի ուժեղ գործածութեան գլխ խօսելու ժամանակ ոչ թէ Իլավայսկու պատմութեան օրինակը պիտի առաջ բերէր, որի հետ ոչինչ առընչութիւն չունի իմ գիրքը, այլ պիտի վեր առներ Ուշինսկու օրինակը, որ մենք վերև յիշատակեցինք. Բայց այդ անելու համար հարկաւոր էր մի փոքր էրուխոհուէն, մի քիչ էլ էրնոմուէն.

Այդ իրաւախոհութեան և բարեմտութեան բացակայութիւնը ցոյց տալու համար ես կբերեմ մի երկրորդ օրինակ. Պ. Հաթը քննում է իմ գրքիս 26 դ. տիպը, մինչդեռ այն ժամին, երբ նա գրում էր իւր քննադատութիւնը, կային դորա 27-դ և 28-դ տպագրութիւնները, որոնք շատ կամ սակաւ տարբերւում էին նախընթացից. Ես չեմ պնդում, թէ այս հանգամանքը կարող էր փոխել քննադատիս հոգեկան տրամադրութիւնը, որովհետև բացարձակ տեսնում եմ, որ նորա եզրակացութիւնները հետևանք չեն քննադատութեան. Այսամենայնիւ գոնէ ձևականապէս իրաւախոհ լինելու համար պէտք էր վերցնել քննադատուող գրքի վերջին տիպը.

Բայց եթէ Պ. քննադատս իմ վերաբերութեամբ հաւատարիմ է մնացել իւր նախագծեալ մտադրութիւններին, ուրիշների վերաբերութեամբ գոնէ պէտք է իրաւախոհ լինէր. կամենալով վայր դնել իմ գրքերիս արժէքը, նա միևնոյն ժամանակ ոչնչացնում է բոլոր միւս դասագրքերը, որոնք գոյութիւն ունին հրապարակի վերայ «պ. Տէր-Ղևոնդեանի գիրքը նորա համար է այդչափ տարածուած, որովհետև ուրիշը չկայ»,— այսպէս է հաւատացնում պ. Հաթը. Այս պատճառաբանութիւնը ոչ ճշմարիտ է, ոչ արդարացի. Իմ Մայրենի լեզուի առաջին մասը լոյս է տեսել սրանից 30 տարի առաջ, 1871 թ. Հոկտեմբերին *). Սկզբումը արդարև նա մենակ էր հրապարակի վերայ, բայց հետզհետէ մեր բոլոր յայտնի մանկավարժները հրապարակ իջան իրանց դասագրքերով, որպիսիք են՝ Սեղրակ Մանդինեան, Բռնաթրեան, Աղայեան և ուրիշները. Հետևաբար մեր դասագիրքը ոչ թէ մրցակիցներ չէ ունեցել,

*) Հետևաբար «Մուրճի» բաբեմաղթութիւնները արուած են իմ գրքիս երեսնամեայ յոբելեանին.

ալ, ընդհակառակն, ունեցել է պատկառելի հակառակորդներ, որոնցից մի քանիսը մինչև այսօր էլ նորան հաւասար դործածութիւն ունին։

Այստեղ ես կարող էի վերջացնել իմ ասելիքս պ. Հաթի քննադատութեան վերաբերութեամբ, որովհետև նորա միւս դիտողութիւնները առանձին նշանակութիւն չունին։ Բայց կարևոր եմ համարում մի քանի բացատրութիւններ ևս առաջ բերել։

Եթէ Հայոց լեզուի ուսուցիչը այնպիսի պայմանների մէջ է, որ կարող է չորս ամիս շաբաթական կանոն առնել Այբբենական մասի վերայ, ինչպէս ենթադրում է պ. Հաթը, ապա նա պարտաւոր է զեկավարել մանուկների կրթական գործը իւր բոլոր մանրամասնութիւններով. նա պարտաւոր է ծանօթացնել նոցա իրանց շրջապատող աշխարհի հետ, զարդացնել նոցա մէջ դիտելու և խօսելու ընդունակութիւնը, փնտռոտել նոցա մանկական երևակայութեանը, պատմել և պատմել տալ փոքրիկ առակներ և հէքիաթներ, և սորա հետ զուգընթաց ընտելացնել կարդալուն և սովորացնել գրելը։ Իսկ եթէ ուսուցիչը այդպիսի պայմանների մէջ չէ, եթէ նորա աշակերտները մի ուրիշ լեզուով կարդում են արդէն, եթէ կոչուած է միայն հայերէն սովորցնելու, ապա մի ամիսը բաւական է գրքի այբենական մասն անցնելու համար։

Ոչ մի հեղինակ իրան անսխալական չէ կարող համարել. նմանապէս ոչ մի դասագիրք չէ կարող բաւարարութիւն տալ բոլոր ուսումնարանների և ուսուցանողների պահանջներին։ Դասատուն մեքենայ չէ, որին կարելի լինի այսպէս կամ այնպէս լարել. նա կենդանի արարած է, ունի իւր ինքնուրոյնութիւնը, իւր անհատական հայեցակէտը։ Դասագիրքը մի ուղեցոյց է միայն, որ առաջարկում է որոշ եղանակ, որոշ նիւթ և որոշ չրջանակ. մնացածը կախուած է ուսուցանողի անհատականութիւնից։ Հետևապէս մեր առաջարկած առակները ուսուցչի համար պարտադրեցուցիչ չեն։ Նա ունի սաստիկ առակներ պատմելու։ Նմանապէս օրինակելի բառերը վերլուծութեան համար նա կարող է ընտրել իւր ուզածին պէս, որովհետև ինչ որ մէկի համար հեշտ է և յարմար, միւսի համար կարող է դժուար լինել և անյարմար. նոյնը պիտի ասել տեղի ու ժամանակի վերաբերութեամբ։ Սոքա տարրական ճշմարտութիւններ են, որ ամեն դասատուի ծանօթ պիտի լինին... Ամենահեղինակաւոր ձեռնարկներն անդամ չեն կաշկանդում ուսուցչի ազատութիւնը։

Մենք աշխատել ենք, որքան կարելի է, համառօտել «Մայրենի լեզուի» այբբենական մասը. մեր նշանագրերն այնքան շատ են, որ եթէ դոնե մի տարի վերայ երկար կանոն առնէինք, գրքի կէսը պիտի ալբուբէնին նուիրէինք։ Այբբենական մասի այս համառօտութիւնը մեր գրքի արժանաւո-

բութիւններից մինն է, թէն դա դուր չէ գալիս մեր քննադատին։

«Մայրենի լեզուի» այբբենական մասից մանուկներն անցնում-են ընթերցարանին քայլ առ քայլ, բոլորովին անդգալի կերպով. պ. Հաֆի ակնարկած ցատքումները չկան ամենևին։ Դրքիս ընթերցանական մասը բաժանուած է երկու շրջանի։ Ա. շրջանը բաղկացած է 16 մանրաշրջանից։ Ամեն մի մանրաշրջան տալիս է մանուկներին նախ որոշ առարկաների անուններ. յետոյ այդ առարկաների անունները խառն դասաւորուած առաջարկւում են գրաւոր աշխատութիւնների համար. այնուհետև գալիս են ասացուածներ, առածներ, հանելուկներ... Զրուցատրութեան համար մենք տալիս ենք մի նկարագրական փոքրիկ յօդուած, անգիր սովորելու համար մի մանկական ոտանաւոր, արձակ կարդալու համար մի պատմողական գրութիւն։ Սորանով մանրաշրջանը վերջանում է։ Մեր քննադատը սարսափում է այս նիւթերի չատութիւնից։ Պէտք է գիտենալ, սակայն, որ ընթերցարանիս մէջ առաջ բերած բոլոր առարկաները իրաղնութեան նիւթ չպիտի լինին. բաւական է, եթէ նրանցից մէկի կամ միւսի վերայ ուսուցիչը փոքր ինչ կանգ առնի... Ներկայումս, երբ մեր զաւակները քիչ է մնում հացի անունն էլ մոռանան, այդ վարժութիւնները ոչ միայն կարևոր են, այլ և անհրաժեշտ։

Մարդու առաքինութիւններից մինն էլ այն է, որ նա ձգտում է չարիքի մէջ անդամ բարիք որոնել. իսկ այն մարդը, որ մինչև անդամ բարիքի մէջ բարիք չէ տեսնում, ամենաողորմելի արարածն է իւր տեսակի մէջ։ Մի մաշուած ճշմարտութիւն յայտնած կլինէինք, եթէ ասէինք, թէ հրապարակախօսը պէտք է ազատ լինի մանր հաշիւներից. թէ նա պէտք է պատկառանք ունենայ դէպի իւր պաշտօնի վսեմութիւնը. բայց և մեղանչած չէինք լինիլ իրականութեան դէմ, եթէ պնդէինք, որ մեր հրապարակախօսներից չատերը այս տարրական ճշմարտութեանն անդամ հաւատարիմ մնալ չեն կարողանում։ Երբ հրապարակախօսը քննադատում է մի հասարակական երևոյթ և իւր քննադատութեան մէջ ծայրայեղութեան է հասնում, ոչոք նրան անպատման դատապարտել չի կարող. բայց երբ դոյն այդ հրապարակախօսը զրկում է իւր դիմացինին պաշտպանուելու իրաւունքից, նա արդէն փոքրոգութիւն է գործում։

«Մուրճ»-ի հոկտ. համարում դետեղած էր մի քննադատութիւն իմ «Մայրենի լեզուի» ա. տարուայ վերաբերութեամբ։ Յօդուածի տակը դրած էր «Հաֆ» ստորագրութիւնը։ Ոչ քննադատութեան ոճը, ոչ նորա եղրակացութիւնները ինձ չէին կարող վշտացնել. պ. Հաֆը ինձ համար մի մարդ էր, որ իւր սլաքները արձակում էր թիրի տեսակից։ Այսու ամենայնիւ ես

կարևոր համարեցի մի քանի դիտողութիւններ անել այն քննադատութեան առիթով և իմ պատասխանս ուղարկեցի «Մուրճին»։ Իմ դիտողութիւններս, որ անփոփոխ առաջ բերի վերևը, գրուած են ամենայն սառնարիւնութեամբ. ոչ մէկ վիրաւորական խօսք, ոչ մէկ անպատշաճ դարձուած չկայ նրանց մէջ։ Ես համոզուած էի, որ Մուրճը կը տպագրի իմ պատասխանս, եթէ պ. Հաթը նոյն իսկ Լ. Սարգսեանը եղած լինի։ Բայց ես սխալուեցայ։ «Մուրճ»-ը չընդունեց իմ յօդուածը։ Իմ դիտողութիւնները «Մուրճ»-ին ուղարկելիս՝ ես ոչ միայն լենուած էի իմ օրէնքն իրաւունքներիս, այլ և հաւատում էի «Մուրճ»-ի ազնիւ բարոյական պարտաճանաչութեանը։ Պ. Սարգսեանի վարմունքը փարատեց իմ սխալ կարծիքը։

Սակայն հետաքրքիր է պարզել, թէ ինչ պատճառ ունէր պ. Սարգսեանը դժգոհ լինել իմ գրութիւնից կամ ինչու նա չէ կարողանում հաշտ աչքով նայել մի դասագրքի, որ 30 տարի շարունակ ծառայել է հայ մանուկներին թէ այստեղ, Ռուսաստանում, և թէ Տաճկաստանում, որ 500,000 տուն է մտել, ուրեմն 500,000 մարդու սովորցրել է իւր մայրենական լեզուն, որոնցից 300,000-ին ձրի (Տաճկաստանում)։ Գուցէ ես նրանով եմ մեղաւոր պ. Սարգսեանի առաջ, որ գործում եմ լռելեայն, առանց աղաղակ բարձրացնելու, առանց հրապարակական հատուցումներ պահանջելու։

Ոչ, այստեղ դեր չեն խաղում ոչ իմ գրքերի պակասութիւնները, ոչ իմ գործելու եղանակը. միակ և հասկանալի պատճառն այն է, որ պ. Լ. Սարգսեանը մի դասագիրք է յօրինել, «Մայրենի խօսք», որ իւր բովանդակութեամբ միանդամից պիտի փոխարինէր իմ գրքերի եթէ ոչ Ա. գոնէ Բ. Գ. և Դ. տարիներին։ Սակայն հայ հասարակութիւնը, երևի բթացած իմ գրքերի վնասակար ազդեցութիւնից, անկարող է գտնուել գնահատել պ. Սարգսեանի գրչի արգասիքը։

ԵՓԵՍԱՂԱՑՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ. Հ. Հայրապետի Դիւանի գրութեան հետ ստացանք էջմիածնատիպ օրացոյց նոր տարուայ շնորհաւորութեան առթիւ։

Մ. Աբեղեան. Հայ ժողովրդական առասպելները Վաղարշ. 1901.

Շիրվանզադէ. Նամուս Բ. տպ. Թիֆլիս 1901.

Բենիկ վ. Բարոզչական թռթռվանքներ. Ա Թիֆլ. 1901.

Վ. Փափազեան. Վտակ. Թիֆլ. 1901.

Տմբլաչի Խաչան. Զուռնա տմբլա. Բագ. 1900.

Ռ. Պերպերեան. Դաստիարակի մը խօսքերը. Վեն. 1901.

Գ. Մելիք-Կարագեոզեան. Գերմանիայի հայ ուսանողները. Թիֆլ. 1901.
Իս. Յարութիւնեան. Ե. Սպիրի կենսագիր. Թիֆլ. 1901.
Գ. Սունդուկեանց. Պէպո. Թիֆլ. 1901.
Պ. Պռոշեանց. Ցունծն. Թիֆլ. 1901.
Ալֆրէդ դը Վինէ. Քերթուածներ. Փարիզ 1901.
Ա. Բրուտեան. Ռամկական մրմունջներ. Ալէքս. 1901.
Բ. Ս. Շահնազարեան. Հայ դպրոցի ցաւերից. Մոսկուա 1901.
Տեղեկագիր 100 ամեայ յոբելինի ս. լուս. աղգ. հիւանդանոցի Զմիւռնիոյ. Զմիւռն. 1901.
Ն. Ք. Ղամարեանց. Համառօտ քարոզներ. Թիֆլ. 1899.
» Քրիստ. վարդապետութիւն. Թիֆլ. 1900.
» Համ. պատմ. հայ եկեղեցւոյ. Թիֆլ. 1901.
Օրացոյց ս. Երուսաղէմի 1902 թ.
А. Тумановъ. Армянск. дрен. рукописи монаст. св. Ѳома. Тифлисъ 1901.
Г. Эзовъ. Начало сношеніи Эчм. Патр. престола съ Русскимъ правительствомъ, Тифлисъ 1901.
Բենիկ վ. Տեղեկագիր 1900—1901 թ. Շուշուայ հայ. թեմ. դպր. Թիֆլ. 1901.
Վահան Միրաքեան. Լալուարի որսը. Թիֆլիս 1901.
Օրացոյց ս. Փրկչեան հիւանդանոցի 1902 թ.
Наръ-Досъ. Анна Сароянъ, Тифлисъ 1902.
Մխիթար Պոնտացի. Քերական ընթերցարան պատկերազարդ Ա. և Բ. տարիներ հրատ. Պալենց գրատան. 1900—1 Կ. Պոլիս.

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՅՕՌԵԼԻՆԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԳԷՍԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Անցեալ տարի, երբ մօտենում էր Վրաստանը Ռուսիայի հետ միանալու հարիւրամեայ տարեդարձը, Թիֆլիսում մտածման առարկայ եղաւ այն հարցը՝ թէ ինչ եղանակով տօնուի այդ պատմական և մեր երկրի համար շատ մեծ նշանակութիւն ունեցող յօբելեանը։ Եւ ի միջի այլոց արծարծուեց նաև այն յաջող միտքը, թէ հեռաբրբրական կլինի տեսնել, թէ Կովկասի ազգաբնակութիւնը որքան յառաջադիմութիւն է արել այդ հարիւր տարուայ ընթացքում. բայց ինչ կերպով կարելի էր ցոյց տալ զանազան ազգութիւններից բաղկացած մի ամբողջ ժողովրդի քաղաքակրթական յառաջադիմութիւնը, որ շատ բազմակողմանի տարրերից է կազմուած։ Հարկաւ ցուցահանդէսը ամենից լաւ միջոցն էր այդ նպատակին հասնելու համար. երկրի և ժողովրդի դիւզատնտեսական և արդիւնաբերական աստիճանը ցոյց տուած յառաջադիմութիւնը կարող է ցոյց տալ և նորա քաղաքակրթութեան աստիճանը։

Կովկասեան դիւզատնտեսական կայսերական ընկերութիւնը յանձն առաւ այդ դժուար գործը ու կարճ ժամանակի ընթացքում կազմակերպեց «Կովկասեան յօբելենական դիւզատնտեսական ու արդիւնաբերական ցուցահանդէսը», որ թէև իրրև շտապով կատարուած գործ՝ մեծ թերութիւններ ունեցաւ և մինչև անգամ նիւթական վնաս պատճառեց դիւզատնտեսական ընկերութեանը, այնուամենայնիւ պարզ կերպով ցոյց տուեց՝ թէ որքան մեծ տարբերութիւն կայ Կովկասեան ազգերի ալժմեան նիստ ու կացի, սովորութիւնների, պահանջների, դպրոցական գործի, դիւզատնտեսութեան և արդիւնաբերութեան տապարիզում ցոյց տուած ջանքերի և որանից հարիւր տարի առաջ գոյութիւն ունեցող նահապետական պարզ բարքերի ու երկրի և արդիւնքի մշակութեան տարրական եղանակների մէջ։

Բացի լիշեալ հարիւրամեակից, այս տարի լրանում էր նաև «Կովկասեան Կայսերական դիւզատնտեսական ընկերութեան» գոյութեան լինելու մեակը. ուստի և ընկերութեան ղեկա-

վարներն ամեն ջանք ի գործ դրին՝ հասարակութեան առաջ պարզերես դուրս գալու։ Կազմուեց ցուցահանդէսը կազմակերպող վարչութիւն, որի պատուոյ նախագահն եղաւ Կիրկիս կառավարչապետ իշխան Գալիցինը. իսկ գլխաւոր վարչութեան նախագահ եղաւ իշխան Պ. Գրուզինսկին, Կովկասեան Կայսերական գիւղատնտեսական ընկերութեան փոխ նախագահը։ Ցուցահանդիսի կոմիսար ընտրուեց իշխան Անդրոնիկովը։ Իսկ ամբողջ ցուցահանդէսն իւր բարձր հովանաւորութեան ներքոյ առաւ Նորին Կայսերական Մեծութիւն մեծ իշխան Միխայիլ-Նիկոլայևիչը-Կովկասի նախկին փոխարքան։

Ցուցահանդէսը պաշտօնապէս բացուեց սեպտեմբերի 4-ին և մինչև նոյեմբերի մէկը ունեցաւ մօտ 160,000 այցելու. այս թիւն աւելի մեծ կլիներ, եթէ Թիֆլիզում այդ միջոցներին անձրևային ու վատ եղանակ չլիներ։

Ցուցահանդէսը բաղկացած էր հետևեալ 18 գլխաւոր բաժանմունքներից. 1) երկրագործութիւն, 2) գինեգործութիւն, 3) այգեգործութիւն և բանջարեղէնի մշակութիւն 4) պտուղների մշակութիւն. 5) զարդի տեղ ծառայող բոյսեր, 6) անասնապահութիւն. 7) ընտանի կենդանիներ, 8) կաթնատնտեսութեան և կենդանապահութեան արդիւնքներ. 9) շերամապահութիւն ու մեղուապահութիւն. 10) ձկան արդիւնաբերութիւնը և որսորդութիւն. 11) երկրագործական գործիքներ և մեքենաներ. 12) տնային և արհեստների արդիւնաբերութիւն, 13) գործարանական արդիւնաբերութիւն, 14) լեռնային. 15) մանկավարժական—արհեստդիտական 16) գիտական-ստատիստիկական 17) գիտական դպրոցական և 18) գեղարուեստական։ Ի ցոյց կարող էին դրուիլ միմիայն Կովկասեան երկների արտադրութիւնները։

Ցուցահանդէսի փայտեայ շէնքը կառուցուեց այդեպանութեան դպրոցին կից գետնի վրայ ու մասամբ էլ նոյն իսկ այդ դպրոցի այգում. համարեա թէ բոլոր բաժանմունքներն էլ զետեղուած էին գլխաւոր մեծ շէնքի մէջ. շէնքից դուրսն էին Թիֆլիզ ու Բագու քաղաքների սրահները, դպրոցական վարչութեան սրահը, Բագուի նաւթարդիւնաբերական սրահը, Բագուի պանորաման, մի քանի մասնաւոր արդիւնաբերողների սրահներ և այլն։

Ամենից հարուստ բաժինը հարկաւ երկրագործականն էր, որովհետև Կովկասեան երկրների աղգաբնակութեան աչքի ընկնող մեծամասնութիւնը երկրագործութեամբ է պարապում. այս բաժինը դասակարգերի էր բաժանուած ըստ նահանգների և ամենից ճոխը Երևանեան նահանգինն էր։ Հացահատիկների մշակութիւնը և դորան վերաբերեալ գործիքները՝ թէ հին ասիական և թէ գլխաւորապէս նոր-Եւրոպական՝ աչքի էին ընկնում իրենց բազմութեամբ. հնձելու, կալսելու մեքենաները ու նոր ձևի դութանները կամաց-կամաց տարածւում են մեր երկրում և մեր պանսպանողական գիւղացիները հետզհետէ հա-

մոգում են, որ դրանց գործածութիւնն առաւել ձեռնտու է, քան իրանց հնադարեան գործիքները։

Հանդէս բերուած մեծաքանակ ու բազմատեսակ գինիների և ընտիր-ընտիր պտուղների տեսակներն ապացոյց են՝ թէ վերջին ժամանակները մեր այգիագործները մեծ ջանք են գործ դնում՝ աղնուացնելու պտղաբեր ծառերի տեսակները։

Ցնայնագործութեան արդիւնքներից թէև շատ բան չկար ցուցահանդէսում, բայց եղածներն էլ ցոյց էին տալիս՝ թէ մեր երկրի մի քանի մասերում որքան նուրբ գործուածքներ են կարողանում արդիւնաբերել՝ ամենապարզ և հասարակ գործիքներով։

Դպրոցական-արհեստագիտական բաժանմունքում այնքան նեղուածք էր, որ դժուարութեամբ էր կարելի լինում մանրամասն դիտողութեան ենթարկել ի ցոյց դրուած աշակերտական աշխատանքի արդիւնք իրեղէնները. բայց և այնպէս մի քանի արհեստաւորաց և կար ու ձեի դպրոցների արդիւնքները լաւ տպաւորութիւն էին թողնում այցելուի վրայ։ Տարաբաղդաբար պէտք է նկատենք, որ ոչ Գէորգեան ճեմարանը, ոչ Ներսիսեան դպրանոցը և ոչ էլ մեր միւս թեմական դպրոցները ոչինչ չէին ուղարկել ցուցահանդէս. ս. Էջմիածնի տպարանն ու հռչակաւոր մատենադարանն էլ ոչինչ չէին գտել ի ցոյց դնելու և հասարակութեան ցոյց տալու իրենց գոյութիւնը։

Այցելուն պարզ և ամփոփ գաղափար էր կազմում նաև Բաղուի նաւթի արդիւնաբերութեան վրայ. նաւթի վիշկան, նաւթի հոր փորելու, նաւթ հանելու գործիքներն ու գործողութիւնները Բաղու չտեսնողին էլ լաւ գաղափար էին տալիս։

Հանքային ոչ շատ ճոխ ժողովածուները ցոյց էին տալիս մեր երկրի հանքային հարստութիւնը. քարածուխը, մարմարի տեսակները, պղինձը, աղը և այլն հետաքրքրական պէտք է մեր անհող մնացած գիւղական դասակարգին ապրուստի միջոց տան, ինչպէս որ այժմ տալիս է նաւթի արդիւնաբերութիւնը։

Լ. Գեղարուեստական բաժինը նոյնպէս աղքատ էր. եղածների մէջ աչքի էին ընկնում նաև Վարդէս Սուրենեանցի մի քանի հայկական կեանքից նկարած լաջող պատկերները։

Ի. Յոբելենական ցուցահանդէսի ամենամեծ թերութիւններից մէկն էր աղգագրական նիւթերի ու տիպերի բացակայութիւնը. եղածն այնքան քիչ էր, որ օտարը դրանով երբէք դաղափար չէր կարող կազմել կովկասի բազմաթիւ աղգութիւնների ու նրանց կենցաղի մասին։

Ցնայելով իւր թերութիւններին, կովկասեան յոբելենական ցուցահանդէսը մի որոշ պատկեր տուեց մեր երկրի տընտեսական ու արդիւնաբերական զարգացման և ցոյց տուեց, որ Կովկասեան աղգերի մէջ առաջնակարգ տեղ են բռնում հայերը. ցուցահանդէսի առաջնակարգ մրցանակների մի խոշոր մասը ստացան հայերը։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Նորակազմ դրամատիք ընկերութիւն։ Նորա բանակցութիւնները։ Անյաջողութիւն և պատճառները։ Խմբի անպաշտպան դրութիւն։ Անյաջող և յաջող ներկայացումներ։ Բենեֆիսներ։ „Ծղինէ“ դրամա Շիրվանզադէի։ Բովանդակութիւնը։ Մեր կարծիքը։ Վերջաբան։

Վերջապէս, տասնամեայ անտարբերութիւնից յետոյ Թիֆլիսի հայ ինտելլիգենցիան, այսինքն նորա մի փոքր մասը անցեալ գարնան սկզբներից սկսեց հետաքրքրուիլ հայ թատրոնի ճակատագրով։ Մի քանի թատերասէրների ձեռներէցութեամբ կազմուեց մի թատրոնական ընկերութիւն։ Դրի նպատակն էր մեր թափառական դերասանական խմբին միջոց տալ իւր գործունէութիւնը կենդրոնացնելու Թիֆլիսում—այն քաղաքում, որից դուրս նա չի կարողացել և երբէք չի կարող բարոյապէս առաջադիմել։

Ամառուայ սկզբին ընկերութիւնը, ձեռքի տակ ունենալով տեղական իշխանութեան հաւանութեանը արժանացած կանոնադրութիւնը, սկսեց բանակցութիւն մի կողմից դերասանական խմբի ցիրուցան անդամների, միւս կողմից Բաղդի թատրոնասէրների ոչ-պաշտօնական յանձնաժողովի հետ։ Այդ յանձնաժողովը, որ վերջին չորս տարիները նպաստում էր խմբին նիւթապէս, չէր կարողացել հայ բեմի գոյութիւնը հաստատ հիմունքների վրայ դնելու։ Հարկաւոր էր մի աւելի հեղինակաւոր հիմնարկութիւն, որպէս զի երկար տարիներ վարկը կորցրած հայ թատրոնական գործը դնուէր արժանաւոր պատուանդանի վերայ։ Այսպիսի մի հիմնարկութիւն կարող էր լինել միմիայն Թիֆլիզում, և այս հիման վերայ նորակազմ ընկերութիւնը բնականաբար ձգտում էր զեկավար մարմնի դեր կատարել։ Դժբաղդաբար, բանակցութիւնը ցանկալի հետևանք չունեցաւ, և խումբը ոչ միայն Թիֆլիզում ձեռք չբերեց հովանաւորութիւն, այլ և զրկուեց Բաղդցիների նիւթական աջակցութիւնից։

Հետաքրքրական են այդ անյաջողութեան հիմնական պատճառները։ Մեզ հասած տեղեկութիւնները ցոյց են տալիս, թէ որքան մենք դեռ տհաս ենք հասարակական գործերում։ Նորակազմ ընկերութեան ներկայացուցիչները վիճում են Բաղդուի յանձնաժողովին առաջարկելով նորան՝ միանալ իրանց հետ և խումբը պահել ընդհանուր ոյժերով։ Յանձնաժողովը բանակցութիւնը յանձնում է թատրոնական գործին միանգամայն անտեղեակ մի պարոնի։ Այդ մարդու համար թատրոնն այնքան մեծ նշանակութիւն է ունենում, որ նա բաբեհաճում է Թիֆլիզի ընկերութեան առաջարկութեանը պատասխանել երեք ամիս յետոյ, այսինքն ամառուայ վերջին։ Այս մէկ պատճառ։ Երկրորդ պատճառը լինում է դերասանական

խումբը։ Դերասաններից ոմանք, լսելով, որ Նորակազմ ընկերութիւնը ժողովել է մի քանի հազար ռուբլի, այնպիսի մեծ պահանջներ են անում, որ բոլորովին չեն համապատասխանում ոչ իրանց բեմական ընդունակութիւններին, ոչ անդեալին և ոչ ներկային։ Եւ, որ զարմանալի է, այդ մեծ պահանջները լինում են ոչ այնքան խմբի խոշոր ոյժերի, որքան այն անձանց կողմից, որոնց բեմական ձիրքերը կամ կասկածելի են կամ տակաւին անյայտ հայ հասարակութեանը։ Երբորդ պատճառը Նորակազմ ընկերութեան ղեկավարների ոչ այնքան խոհեմ վարմունքն է լինում։ Ցաւոտը հէնց առաջին քայլերից բացակայում է այդ մարդկանց ձեռնարկութեան մէջ, և այս այն պատճառով, որ ոմանք նրանցից գործի մէջ մտցնում են աղայութեան ոգի։ Այսպէս, օրինակ, մեզ պատմել են ընկերութեան մի լիազօրի կողմից մեր առաջնակարգ դերասաններից մէկին ուղղուած մի նամակի մասին, որի ձևը առնուազը տարօրինակ պիտի համարել։ Բանակցութեան այդպիսի եղանակ գործադրող ընկերութիւնը մոռացած է եղել, որ դերասանն էլ անհատ է և թէ նորա հետ չի կարելի խօսել ինչպէս մի սպասաւորի հետ։

Այսպէս թէ այնպէս, աշունն արդէն սկսուել էր, երբ դերասանական խումբը դեռ չգիտէր ինչ է լինելու իւր ճակատագիրը 1901—1902 թ.թ. սեզոնին։ Վերջապէս, նա լուսը կտրելով թէ Թիֆլիզի ընկերութիւնից և թէ Բաքուի լանձնաժողովից, հարկադրուած եղաւ բեմի բանալ սեպհական ոյժերով։ Սակայն այդ այնքան էլ դիւրին բան չէր։ Խումբը լոյս ունէր Թիֆլիսում ներկայացումներ տալ Արտիստիք ընկերութեան թատրոնում, որ ունի հասարակութեան դրաւելու բոլոր յարմարութիւնները։ Բայց յայտնուեց, որ այդ թատրոնը կապալով վերցրել է ռուսաց դրամատիքական մի խումբ տիկ. Վ.ոլգինայի ղեկավարութեամբ։ Կապալառու տիկին Վ.ոլգինան հայ խմբից պահանջում է իւրաքանչիւր ներկայադման համար 350 ռուբլի վարձ։ Ցաւոտի բան է, դերասանական խումբը, չունենալով ոչ մի նիւթական երաշխաւորութիւն, դժուարացաւ այդ գումարը տալ, ուստի, երկու թէ երեք ներկայացում տալով Արտիստիք Ընկերութեան թատրոնում, չտապեց տեղափոխուել վրաց աղնուականների թատրոնը։

Թէ ինչ է վրաց աղնուականների թատրոն կոչուած շինութիւնը Թիֆլիզում—այդ ամենքին յայտնի է։ Յուրտ դահլիճ, մշտական մրջանցուկ քամի, նեղ անցքեր, անյարմար բեմ խղճալի դեկորասիոնով, զգեստների կատարեալ աղքատութիւն—ահա այն պայմանները, որոնց մէջ պիտի խաղար խեղճ խումբը։ Թիֆլիզի հասարակութիւնը, որ զգում է մի անլաթելի ատելութիւն դէպի այդ թատրոնը, հարկաւ, չայցելեց հայ ներկայացումները, չընայելով, որ խումբը ճգնում էր դրաւել նորան այնպիսի էֆէքտաւոր պիեսներով որպիսին է, օրինակ. «Թագի համար» փքուն դրաման։ Եւ խումբը սկսեց

ոչ միայն յուսահատուել. այլ և զգալ անխուսափելի քաղցածութեան բոյրը։

Վերջապէս, նորակազմ ընկերութեան ղեկավարները զգացին, որ ամօթ է տասը տարի կանոնաւոր բեմ չունենալուց յետոյ, թողնել մի վերին աստիճանի չնորհալի խումբ ճակատագրի հաճոյքին, քանի որ դանձարանում կայ մի քանի հազար ռուբլի հասարակական դրամագլուխ։ Նրանք յանձն առան ծախքի մի մասը և, նշանակելով իւրաքանչիւր ներկայացման համար 150 ռ. նպաստ, միջոց տուին խմբին ցոյց տալու իւր ձիրքը Թիֆլիզի հայ հասարակութեան։

Արդարև, վեց կանոնաւոր ներկայացումներով խումբը կարողացաւ ցոյց տալ իւր ոյժերը։ Ասում ենք վեց, որովհետև քանի տեղ չենք դնում ոչ վրաց թատրոնում և ոչ Հասարակական Ժողովարանում տրուած մի չարք ներկայացումները, որոնց արտաքին պայմաններն այնքան աննպաստ էին խմբի ձիրքերի կատարեալ արտայայտման համար։ Այդ 6 ներկայացումներն էին, որ փրկեցին խմբին և նպաստեցին նորան Թիֆլիզի հասարակութեանը թողնել ամենալաւ տպաւորութեան տակ։ Մեր խօսքը տիկ. Սիրանոյշի և պ. պ. Արէլեանի ու Պետրոսեանի բենեֆիսների, նաև «Համլէտի» Նեմիրովիչ—Դանչենկոյի «Կեանքի արժէք» կոմեդիայի և Շիրվանզադէի «Նեզինէ» դրամայի մասին է։ Տիկ. Սիրանոյշը իւր բենեֆիսի համար ընտրել էր Շիլլերի «Օռլէանի Կոյսը», պ. Արէլեանը «Տրիլբի» անունով թէև գրականական ու գեղարուեստական արժէքից զուրկ, բայց վերին աստիճանի էֆէկտաւոր դրաման, իսկ պ. Պետրոսեանը իւր ոյժերը փոյձելու համար Շէքսպիրի «Վիր Ա՛քան» (և ոչ «Ակրքայ Լ՛ր», ինչպէս անուանում է թարգմանիչ Մասէհեանը)։

Երեք բենեֆիսներն էլ անցան յաջող նիւթականի կողմից, երեք անգամ էլ թատրոնը ծայրէիծայր լիքն էր, սակայն այն միակ բացառութեամբ, որ տիկ. Սիրանոյշի բենեֆիսին օթեակների գրեթէ $^1/_3$-ը դատարկ էր և հասարակութիւնը միայն այդ երեկոյ ժլատ գտնուեց գոնէ մի փունջ ծաղկով չըպատուեց դերասանուհուն, մինչդեռ միւս բենեֆիցիանտները ստացան պսակներ ու արժէքաւոր նուէրներ։ Մենք կը կամենայինք այս հանգամանքը վերագրել թատրոն այցելողների անտարբերութեանը, որովհետև որքան մենք նկատեցինք տիկ. Սիրանոյշը դեռ ևս վայելում է նրանց գէթ մի մասի որոշ չափի համակրութիւնը։

Բացի բենեֆիսներից առանձին ուշադրութիւն դրաւեցին տիկ. Սիրանոյշի խաղը Համլէտի դերում և պ. Շիրվանզադէի «Նեզինէ» դրամայի ներկայացումը։ Համլէտը դրաւել էր թատրոն անգին հասարակութիւն այն չատ հասկանալի պատճառով, որ ամենքը հետաքրքրուած էին տեսնելու թէ ինչպէս է հասկացել և ինչպէս պիտի պատկերացնի մի հայուհի դանիական անմահ իշխանի բարդ փիլիսոփայական տիպը։ Եւ ամենքը

եկան մի ենոյն եղրակացութեան, այն է, թէ անբնական է կնոջը տեսնել տղամարդի դերում նոյնչափ, որչափ անբնական կը լինէր այ. Պետրոսեանին տեսնել Կամելիաղարդ տիկնոջ դերում և թէ այն, ինչ-որ ներելի է Սառա Բերնարի նման մի աշխարհահռչակ աստղի քմքին, չի կարելի ներել մի թէև տաղանդով, բայց այնուամենայնիւ միջակ դերասանուհու։ Տիկ. Սիրանոյշը, այդ հմուտ դերասանուհին չը կամեցաւ հասկանալ այդ բանը և յամառութեամբ շարունակում է կրկնել Համլէտի դերը։ „Kacnin“ լրագիրը հաղորդում է, որ նա արդէն երկու անգամ Բաքուում դուրս է եկել այդ դերում և «ոչ մի անգամ հանդիսականների վրայ տպաւորութիւն չի գործել։» Անկասկած պատկառելի դերասանուհին վերջիվերջոյ կը զգայ իւր սխալը և կը դադարի թէ իւր ձիրքը աղաւաղել և թէ հասարակութեան քիչ թէ շատ նուրբ ճաշակ ունեցող մասի նեարդերը ի չարը գործ դնել։

Բոլորովին այլ տեսակի հետաքրքրութիւն էր շարժել Շիրվանզադէի «Եզինէ» դրամայի ներկայացումը։ Այդ ներկայացման երեկոյ առաջին անգամ դերասանական խումբը թատրոնի սրահում տեսաւ Թիֆլիզի հայ ինտելլիգենցիային։ Եւ այդ շատ հասկանալի էր։ Մեծամասնութիւնը հետաքրքրուած էր այն բանով, թէ որքան մի վիպասան յաջողել է դրամա գրել։ Ցաւոնի է, որ շատ քիչ վիպասաններ են դրամատիքական ասպարիզում յաջողութիւն ունենալ։ Այլ է վէպը, այլ է բեմական գրուածքը և որչափ դրամատուրգի համար դժուար է վէպ գրելը, նոյնչափ և վիպասանի համար դժուար է դրամա գրելը։ Իւրաքանչիւրը նրանցից ունի որոշ տեսակի ձիրք և տարիների ընթացքում ձեռք բերած գրելու եղանակ, որոնց պայմանները կաշկանդում են գրողին և չեն թոյլ տալիս մի ասպարիզից միւսն անցնել գոնէ սուանց ծանր աշխատանքի։ Շատ վիպասաններ են փորձել դրամա գրել և մեծ մասը անյաջողութեան հանդիպել։ Այս տեսակէտից, հարկաւ, հետաքրքրական էր տեսնել Շիրվանզադէին դրամատուրգի դերում։

Մի ուրիշ պատճառ, որ գրաւել էր ինտելլիգենցիային, պիեսան ինքն էր իրրև նորութիւն։ Նորա բովանդակութեան ու գաղափարի մասին հասարակութեան մի մասի մէջ պրտըտում էին թեր ու դէմ կարծիքներ։ Բաւական ժամանակ էր, որ հայ բեմը նոր ինքնուրոյն պիէս չէր տեսել, այս էլ մի ուրիշ պատճառ ընդհանուր հետաքրքրութեան։

Ինչ և է, «Եզինէ»ն գրաւել էր մեծ բազմութիւն մեր ուսում առած դասակարգի, որ հետաքրքրուած սպասում էր վարագոյրի բարձրանալուն։

Ահա «Եզինէի» բովանդակութիւնը։ Մեծ արդիւնաբերական քաղաքում յայտնի փաստաբան Միհրան Ալվերդեանի ոալօնում երեկոյեան հաւաքուած հիւրերի մէջ խօսք է բացւում մի դատարանական գործի մասին։ Մի ոմն Արաբաջեան համալսարանականի երիտասարդ կինը մի օր խոստովանում է

իւր ամուսնուն, թէ իւր անցեալը մաքուր չէ, թէ օրիորդ մամակ նա խաբուած ու մոլորուած է եղել մի անպիտան երիտասարդից։ Ամուսինը սկսում է ատել կնոջը և հալածել։ Հալածանքն այնքան ճնշում է թշուառ կնոջը, որ սա իւր կեանքին վերջ է տալիս ինքնասպանութեամբ։ Նորա մահից ետոյ գործը յայտնուում է հասարակութեանը։ Արաքաջեանը ենթարկուում է դատի իբրև կնասպան։ Ահա այդ դատի մասին է խօսում Ալվերդեանի սալօնում։ Վերջինս իբրև փաստաբան տեղեակ լինելով դատին, պատմում է նորա մանրամասնութիւնները։ Եւ այդ միջոցին, հիւրերի ներկայութեամբ չփոթուում է նորա կինը Եգինէն, պիեսի հերոսուհին։ Նա արդէն առանց այն էլ յուզուած էր, դեռ կէս ժամ չի անցել, որ զարդացել է մի լրագրում Արաքաջեանի դատը։ Ներկայ եղողներից մէկը, տիկ. Գալամքարեան, որ կասկածներ ունէ Եգինէի անցեալի մաքրութեան մասին, դիտմամբ շարունակում է խօսակցութիւնը Արաքաջեանի ինքնասպանութեան մասին։ Նա հետաքրքրուում է իմանալ տղամարդ հիւրերի հայեացքը եղեռնագործութեան մասին և իւրաքանչիւրին հարցնում է՝ արդեօք ինչպէս կը վարուէին եթէ իրանք լինէին կնասպան համարուած Արաքաջեանի տեղը։ Երբ հերթը հասնում է Ալվերդեանին, Եգինէն յանկարծ արձակում է մի ճիչ, լսելով իւր ամուսնու պատասխանը. «եթէ ես լինէի, կը ներէի կնոջս անցեալի մեղքը»։ Հիւրերը չփոթուում են։ Շփոթուում է և Միհրան Ալվերդեանը։ Ի՞նչ պատահեց։ Եգինէն հաւատացնում է նրանց, թէ կայծակից վախեցաւ և, իրաւ, այդ վայրկենին լսում է ուժգին որոտում։ Տիկ. Գալամքարեանի կասկածը սկսում է աւելի ու աւելի ամրանալ։ Եգինէն հիւրերի առաջարկութեամբ նուագում է դաշնամուր։ Բայց նա յուզուած է չափազանց, նորա նեարդերը դաւաճանում են նորան։ Ձեռները թուլանում են, գլուխը թեքուում կրծքին։ Նա զրեթէ ուշաթափուում է։ Դարձեալ ընդհանուր շփոթութիւն։ Եգինէն ուշքի է գալիս, ժողովում է ոյժերը, փորձում է հիւրերին զուարացնել մի ուրախ նուագելով։ Բայց ամենքը շուաւած են և հրաժեշտ են տալիս։ Բեմի վերայ մնում է Եգինէն ջէր ամուսնու հետ։ Այն ժամանակ ամուսինը հարց ու փորձի իրենթարկում Եգինէին. արդեօք ինչ է պատճառը, որ վերջին ամիսները նա այնպէս լուռ է, տխուր, մտախոհ։ Եգինէն նախ հրաժարուում է պատասխանից, ապա ամուսնուն հանդատացնելու համար հնարում է ինչ-որ հէքեաթ, որի մէջ նուրբ կերպով արտայայտում է իւր հոգու տառապանքը։ Նա հաշիւ կարողանում է դպցել իրան, որպէս զի չը ջոքի իւր աղնիւ, բարի ամուսնու առջև և չը խոստովանի, թէ ինքն էլ մի տիկին Արաքաջեան է, թէ իւր անցեալն էլ մաքուր չէ։ Այս անդամ նա հասկացնել է տալիս Միհրանին, թէ ինքն իրան արժանի չէ համարում նորան և ճնշում է նորա անսահման բարութիւնից։ Սակայն բարի Միհրանը ժպտում է ներո-

զամտաբար։ Նա սիրում է Եգինէին անսահման, համարում է նորան անղուգական կին, մի կին, որ «այնքան գաւիշ է, այնքան հրապուրիչ, որ մի քաղցր ժպտով ընդունակ է վարձատրելու ամուսնու բոլոր բարութիւնները»։ Եգինէն զգում է խղճի սուր խայթոց այդ բառերից. նորա տանջանքը հետզհետէ աւելանում է։ Ձեռները դնելով Միհրանի ուսերի վերայ, նայում է աչքերին և արտասանում յուզուած ձայնով. «որքան բարութիւն կայ քո աչքերում.. Իսկ ես..» ասում է և հեկեկալով վազում ննջարան։ Միհրանը ապշած նայում է ետևից և արտասանում. «չեմ հասկանում»

Այսպէս է վերջանում առաջին գործողութիւնը։

Երկրորդ գործողութիւնը կատարւում է նոյն հիւրասենեկում։ Եգինէի խղճի խայթոցը հետզհետէ սաստկանում է։ Ցայտնւում է Գարրօ Աղարեանը, այն անձնաւորութիւնը, որ զրկել է Եգինէին պատուից, յարիշակելով նորան 15 տարեկան հասակում, երբ դեռ միամիտ, կեանքի հրապոյրներին անծանօթ օրիորդ էր։ Մոլորիչը եկել է յանցաւոր յուսով վերականգնելու նախկին բարեկամական կապը Եգինէի հետ, որ այժմ մի գեղեցիկ ու հրապուրիչ կին է։ Եգինէն, տեսնելով նորան, յուզւում է ու վրդովւում անչափ։ Ցեղի է ունենում մի դիալոգ, որ հանդիսականներին տանում է դէպի Եգինէի անցեալը և ծանօթացնում նորա մոլորչի լարոյական պատկերի հետ։ Աղարեանը թողնում է իւր անոտի յոյսերը և խղճահարուած ներումն է խնդրում Եգինէից։ Բայց արդէն ուշ է. Եգինէն վռնդում է նորան իւր տնից և յուսահատ, ընկճուած, քայքայուած ընկղմւում է աթոռի վերայ ու դառնագին հեկեկում։ Յետոյ սրբում է աչքերը և ուշքը ժողովում։ Ներս է մտնում Միհրանը։ Նա ուրախ է ու զուարթ. նա դատարանում տարել է մի խոշոր գործ, ազատել է չղթաներից մի անմեղ դատապարտեալ։ Նա երջանիկ է և, համբուրելով սիրեցեալ ամուսնուն, յայտնում է, թէ պատրաստւում է նորա հետ ճանապարհորդել Եւրոպա։ Բացի դրանից, նա Եգինէին նուիրում է արդիւնաբերական մի ընկերութեան մի քանի թանկագին բաժնետոմսեր։ Նորա արտայայտած սէրը, անսահման հաւատը, անկեղծ զգուանքներ վերջնականապէս ընկճում են Եգինէին և ստիպում նորան խոստովանել իւր անցեալը։ Տանջուող և խղճի սուր խայթից տառապող կինը անկեղծ ու համարձակ յայտնում է ամուսնուն իւր անցեալի սխալը։ Միհրանն այնքան հաւատում էր նորա անմեղութեանը, որ այժմ իւր լսած չարագուշակ լուրը համարում է ցնորք։ Սակայն Եգինէն պնդում է իւր ասածը։ Դժբաղդ Միհրանը առաջին վայրկենին ենթարկուելով սրտի գրգռին, լարձակւում է Եգինէի վերայ տեղն ու տեղը խեղդելու նորան. Բայց իսկոյն յետ է կանգնում, գոչելով. «գազանը, գազանը պիտի զսպել»։ Եւ հեկեկալով փաթաթւում է իւր քրոջ Մարթալի պարանոցին, իսկ Եգինէն ընկնում է մօր գիրկը։

Երրորդ և վերջին գործողութիւնը մեզ տանում է դժբաղդ ամուսինների հոգեկան աշխարհը։ Միհրանի մէջ սկսուել է սոսկալի հոգեկան կռիւ։ Կռւում են նորա մէջ երկու հակառակ զգացումներ. մի կողմից մի բարոյական բարձր գաղափար-ներման գաղափարը և սէրը դէպի Եւգինէն, միւս կողմից այն կսկծալի գիտակցութիւնը, որ սիրեցեալ կնոջ անցեալը մաքուր չէ։ Նա պատրաստ է ներել, բայց ինչպէս, չէ որ տանջւում է անսահման։ Նորա քոյրը, այրի Մարթան, հասարակական կարծիքի մարմնացումը հաւատացնում է նորան, թէ տղամարդը երբէք չի կարող մնալ անպատիժ. չէ որ կայ հասարակական կարծիք, ինչնամիների չար խնդութիւն, բարեկամների դաղտնի արհամարհանք։ Սակայն այս բոլորը արժէք չունին Միհրանի աչքում։ Նա ալրւում է միայն և միայն ներքին կրակից։ Մարթան չի կարողանում նորան համոզել, որ Եւգինէից բաժանուի և վշտացած հեռանում է, լուսալով, որ եղբայրը խելքի կը դայ։ Գալիս է Եւգինէն։ Նա վճռել է թողնել Միհրանին։ Նա չի կարող տեսնել նորա տանջանքը, չի ուզում մնալ նորա յարկի տակ, վերջապէս, իրաւունք չունի մնալու, որովհետև արժանի չէ իր ապականուած անցեալով։ Բայց որքան, որքան սիրում է Միհրանին և որքան տանջւում, որ պէտք է զրկուի նորանից։ Միհրանը համաձայն չէ, որ Եւգինէն բաժանուի։ Եւ ներում է նորան։ Սակայն Եւգինէն ասում է «ներել կարելի է մոռանալով, իսկ դու մոռանալ իմ անցեալը երբէք չես կարող»։ Միհրանի վճիռը անփոփոխ է։ Հաստատուն է և Եւգինէի վճիռը։ Թշուառ կինը արդէն, վերջին հրաժեշտը տալով, քայլերն ուղղում է դէպի դռները։ Այդ վայրկենին լսւում է դալեկի մեղմիկ «օրօրը», նա քնացնում է Միհրանի և Եւգինէի երեխային։ Եւգինէն դողում է, մի վայրկենում տակն ու վրայ են լինում նրա բոլոր դաղափարները։ Բայց նա շատ է մտածել այս մասին. երեխան բարոյական օրէնքով պատկանում է Միհրանին, ուստի թողնում է նորա տունը։ Եւ ուզում է դուրս գալ։ Բայց ուշաթափւում է և ընկնում Միհրանի գիրկը։ Ուշքի դալով, նա չոքում է ամուսնու առջև և ասում. «չեմ կարող, չեմ կարող»։ Միհրանը դրկում է նորա դլուխը և արտասանում. «Համոզմունքով ներեցի, սիրելով կը մոռանամ»։

Վարագոյրն իջնում է, դրաման վերջանում։ Հասարակութիւնը հեղինակին հրաւիրում է բեմ և բուռն ծափահարութիւններով արտայայտում իր գոհունակութիւնը։

Պիեսի բովանդակութիւնից ընթերցողը ինքը կըտեսնէ, որ դա մեր թատրոնական դրականութեան մէջ ներկայանում է որպէս մի նորութիւն իր մէջ արտայայտուած ներման դաղափարով։ Քրիստոնէական բարձրագոյն դաղափարներից մէկն էլ՝ յանցաւորին ներելն է, եթէ նա սրտանց ղղջում է իր յանցանքը և ապաշխարում։ Եւգինէն երկար հոգեկան տան-

ջանքերից, նոյն է ապաշնարութիւնից յետոյ՝ արժանի է այդ շնորհին։

Այս տեսակէտից մենք ողջունում ենք պ. Շերվանզադէին, մանաւանդ որ բեմական կողմից էլ պիեսը ունի իւր առանձին առաւելութիւնները։

Մի ամիս խաղալով Արտիստիական Ընկերութեան թատրոնում, խումբը գնաց Բաքու և այժմ այնտեղ է ներկայացումներ տալիս։ Իսկ Թիֆլիզի դրամատիական ընկերութիւնը վճռել է առաջիկայ ձմեռ ամբողջ սեզոն խումբը պահել Թիֆլիզում։ Դա, ի հարկէ, վերին աստիճանի դովելի միտք է։ Թիֆլիզի հայ հասարակութիւնը վաղուց է զգում մայրենի բեմի կարեորութիւնը։ Ապացոյց այն բուռն սէրը, որով նա այցելում էր վերջին ներկայացումները։ Մնում է միայն, որ ընկերութիւնը վաղօրօք հոգայ թատրոնի մասին։ Ապա պիտի հոգալ և խմբի ոյժերը բարձրացնելու մասին։ Խմբի այն կազմը, որ խաղաց այս անգամ, շատ թերի էր։ Ճշմարիտ է, նա ունէր տիկ. Սիրանույշի և պ. Աբէլեանի նման ոյժեր զօրեղ դրամատիքական դերերի համար, տիկ. Մայսուրեանի նման շնորհալի դերասանուհի նուրբ դրամատիքական դերերի համար, պ. Պետրոսեանի նման բարեխիղճ և աշխատասէր ոյժ, նաև Աւետեան ամուսինների նման անհրաժեշտ բեմական ոյժեր, ճշմարիտ է, լաւ է իւր դերերում նաև պ. Ստեփանեան, ինչ. պէս և վատ չէ Ալիխանեան, սակայն այդքանը բաւական չէ։ Պակասում են մի քանի տեսակ դերերի համար դերասաններ, մանաւանդ դերասանուհիներ։ Պէտք է բեմը հարստացնել. բացի տիկ. Մայսուրեանից, նաև մի քանի թարմ կանացի ոյժերով, պէտք է հրաւիրել օր. օր. Աղամեանին, Սունդուկեանին, նաև Ֆելէկեան քոյրերին։

Իսկ մեր կարծիքը ռեպերտուարի բարեփոխութեան վերաբերմամբ կը յայտնենք միւս համարում։

---

6. Գ. Լրագրները հաղորդեցին մի ուրախալի լուր, այն է, մեր յայտնի դերասանուհի տիկ. Հրաչեան այնքան կազդուրուել է, որ կարող է բեմ դուրս գալ, ուստի մտադիր է առանձին խմբով կատարել մի արտիստիական պտոյտ։

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Լուսնի վերայ գործող հրաբուղխներ, 2) Փայտախտ, 3) Կոշկաներկով թունաւորութիւն 4) Սարդի ոստայնը արիւնը դադարացնելու համար։

ԳՈՐԾՈՂ. ՀՐԱԲՈՒ ԳԽՆԻՐ ԼՈՒՍՆԻ Վ.ԵՐԱԳ. Լուսինը վաղուց մարել է, սառել, զրկուել ջրից ու օդից, և այ-

ժամ որպէս մի աննպատակ անկենդան քարի կտոր—սլանում է եթերային ովկիանոսում, ապասելով որ մի օր ընկնի գետնի վերայ և նորա հետ միասին արևի վերայ և միանայ այն ընդհանուր զանգուածի հետ, որից նա գոյութիւն է առել, որպէս մեր արեգակնային ընտանիքի մի անդամ։ Այս է ներկայ դարի և առհասարակ ժամանակակից աստղագէտների մեծագոյն մասի կարծիքը։ Բայց կային և այլ կերպ մտածողներ։—Նոքա կարծում էին, որ դեռ լուսինը բոլորովին մեռած չէ, և նորա վերայ գոյութիւն ունին դեռծող հրաբուղխներ։—Դոցա գոյութիւնը նոքա հիմնում էին այն լուսաւոր և փայլուն կէտերի վերայ, որ նոցա լաճախ յայտնվում էր տեսնել դիտակի օգնութեամբ, լուսնի վերայ։ Այդ մասին առաջին անգամ, XVIII դարում, յայտարարեց Հելվեցիոսը, փոքր լեռուց, այն է 1706 թ. Լախիրը լուսնի վերայ նկատեց կասկածաւոր կէտեր։ 1715 թ. մայիսի 5-ի խաւարման ժամանակ Լուվելը նկատեց մի քանի փայլուն կէտեր։ Սակայն նոցա դիտակներն անկատար էին, նոյնը չի կարելի ասել յայտնի աստղագէտ Հերշէլի մասին—որի կատարելագործուած հայելիաւոր դիտակի նմանը այժմ էլ շատ քիչ կայ։ 1787 թ. նա հրատարակեց «Լուսնի վրայի երեք հրաբուղխների մասին» գրուածքը, որի մէջ հաստատում է, որ իւրքը իւր դիտակով լուսնի վերայ նկատել է երեք գործող հրաբուղխ և մատնանիշ է անում հէնց տեղը։ Չնայած յայտնի Արագոյի խիստ բողոքներին, այն զաղափարը, որ լուսնի վերայ կան գործող հրաբուղխներ, փոքր առ փոքր արմատ էր բռնում, սակայն ներկայ դարում սկսեց փոքր առ փոքր թուլանալ և լուսինը կրկին երկնային մեռած մարմինների կարգը դասեցաւ։ Բայց ահա կրկին ասպարէս եկան լուսնի հրաբուղխները։ Մեդոնցայի (Ֆրանսիայում) աստղաբաշխական դիտարանի աստղագէտ Շարբոնոն Ֆրանսիական աստղաբաշխների ժողովում մի զեկուցում կարդաց այն զարմանալի երևոյթների մասին, որ նա պարզ կերպով նկատել է լուսնի վերայ դիտակի միջոցով։ 1897 թ. նորա ընկեր—Միլիջան մի անգամ դիտակը ուղղեց դէպի լուսինը և զարմացած նկատեց, որ լուսնի Պոսիդոնիուս կոչուած խառնարանը (հրաբուղխի բերան)—ծածկուում է ինչ որ սպիտակ ամպով կամ մէգով։ Իսկոյն կանչեց Շարբոնոնին և առաջարկեց նայել դիտակում։ Վերջինս սաստիկ զարմացաւ, տեսնելով որ խառնարանը կիսով չափ ծածկուած էր ինչ որ ամպով։ Այդ բոլորը այնպէս էր երևում, որ կարծես թէ խառնարանը գտնուում է ժայթքման վայրկենում—և ամպի կտորը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հրաբուղխից դուրս եկած ծուխ և գոլորշի, որ երբեմն նոսրանում էր և կրկին խտանում։ Այդ երևոյթը կրկնուում էր գրեթէ ամեն գիշեր—սկսած 1877 թ. մարտ ամսից, մինչև նոյն թ. հոկտ. վերջը։ Ուրեմն կարծել թէ—դա խաբուսիկ երևոյթ է, չէր կարելի։ Այսօրինակ պատահարների գլխաւոր հակառութիւնը նրանումն էր, որ ամպը չարունակ

կանգնած էր նոյն տեղը — և մեռցած հարևան սարերը, որոնց թիւը անհամար է լեռների վերայ, մնում էին պինդ — ոչնչով չրծածկուած։ Շարբոնոն մեծ խնամքով չափեց այդ ամբի մեծութիւնը — նա միջին հաշուով պիտի ունենար 4-ից 7 վերստ լայնութիւն, իսկ այն խառնարանը, որի վերայ նկատեցին այդ ամբը — ունէր մի վերստ լայնութիւն։ Եթէ այդ ամբը աշխարհից դէ առաջանում — ապա պիտի ենթադրել, որ լեռների դրսից եքսում են ինչ որ մէջեր և ամպեր։ ոչ երեմն և կայ ջրային գոլորշի կայ ջուր, կայ և օդ, կան գործող հրաբուխներ։ Այդ հանգամանքը շատ հետաքրքրեց անողդէանների և աշխատում են պարզել այդ կասկածելի երևոյթը։

ՓԱՅԱԽՏ։ Բենի համալսարանի ուսուցչապետ Կրիէն նկարագրում է մի տարօրինակ հիւանդութիւն, որին ենթակայ է չինութեան փայտը և նրն առաջ են բերում մի քանի տեսակ բուսական պարազիտներ։ Երևում է, որ այս ցաւը շատ է տարածուած և նայելով նորա գործած աւերմունքներին — մեծ վնասը է սպառնում։ Ամենահիմնաւոր կերպով կառուցած չէնքերը, եթէ ունի փայտեղէն մասեր — կայ ճ ժամանակից լեռուց, շնորհիւ այդ պարազիտների դանդաղ — բայց անխոնջ գործունէութեան, փլում է։ Այդ պարազիտների մէջ ամենավտանգաւորը, իւր աւերիչ գործունէութեամբ, է merulius lacrimans, որ գրեթէ ամեն տեղ պատահում է։ Այս բոպէիս նա իւր կատաղի գործունէութիւնը տարածում է Անգլիան և Միդնէի քաղաքներում, ուր նա ոչնչացնում է Նորվեգիայից ստացած սպիտակ եղևնափայտը։ Նա իւր լայնակումը գործել է Բոմբէի, Ցէիլոնի և Կալկաթայի զինուորանոցների, զինարանների և այլ փայտէ շինութիւնների վերայ։ Նոյն այդ պարազիտը Միացեալ Նահանգներում ոչնչացնում է «pitch-pin» ծառը — որից պատրաստում են յատակներ։ Ռուսաստանում այդ պարազիտը մեծ վնաս է տալիս Բրեստ-Լիտովսկում, Էլիզ կզզու վրայ և Սիբիրում։

1830 թ. — merulius lacrimans ը կատարեալ համաճարակի բնաւորութիւն ստացաւ Ֆինլանդիում։ — Շատ ժամանակ չի անցել, որ նոյն պարազիտների շնորհիւ Պետերբուրգում մի քանի նորակառոյց և թանկագին տներ փլուեցան, իրենց տակը թաղելով մի քանի մարդկային զոհեր։ Նորա աւերիչ գործունէութիւնը նկատուած է նոյնպէս Գերմանիայում, Իտալիայում, Աւստրո-Ունգարիայում և Զուէյցարիայում, — ուր նա աւերեց 1700 մետր բարձրութեան վերայ խիմափայտից շինած որսորդական տնակները։ Վերջերս երևացել է և Լոնդոնում, իսկ Ֆրանսիայում — համաձայն Կրիէյի ուսումնասիրութեան, բացի այդ պարազիտից — նոյնանման վնաս է հասցնում փայտեղէն շինութիւնների և «physisporus raporarius կոչուած պարազիտը։ — Այդ երկու պարազիտների աւերիչ գործունէութիւնը նկատուած է Փարիզի շատ թաղերում և ուրիշ քաղաքներում։

Վերջին ժամանակներս փայտեղէնների այդ թշնամիները կարծես աւելի ընտանիանալով քաղաքներից սկսել են այցելել գիւղերին. հեռադրասիւների փչանալ վայր ընկնելը, որ յաճախ մարդկային զոհեր ևս տանում է իւր հետ—Կրիէլի կարծիքով պիտի վերագրել դոցա։ Դժբաղտաբար նոցա հասցրած վնասը միայն վերը լիշածը չէ—այդ պարազիտը չի խնայում ոչ կահ կարասիք ոչ սպիտակեղէն և ոչ թուղթը—հետևապէս դա այնպիսի մի չարիք է, որի դէմ պիտի կռուել։

Միչեալ բուսական պարազիտների աւերիչ գործունէութիւնը անկասկած յայտնի է եղել շատ հին ժամանակներից ճարտարապետներին—բայց այն ժամանակ շատ սակաւ է տարածուած եղել։ Իսկ այժմ մօտ 20 տարի կլինի, ինչ որ նոցա հասցրած վնասը աւելի և աւելի է յայտնի լինում։ Փայտակատ, կարելի է այսպէս ասել—քանի գնում աւելի և աւելի է տարածւում և մեծ հոգս պատճառելով շինութիւն անողներին։ Այդ հիւանդութիւնը ներկայումս շատ քիչ է ուսումնասիրած։ Եթէ Ուսուցչապետ Կրէյը—իւր «խորհուրդներ տանտէրերին և ճարտարապետներին» գրքի մէջ շատ քիչ միջոցներ է առաջարկում—որ նա հիմնում է իւր արած փորձերի վերայ։

ԿՕՇԿԻ ՆԵՐԿՈՎ ԹՈՒՆԱՒՈՐՈՒԵԼԸ.—Մի քանի դէպքերի մասին տեղեկութիւն է հաղորդում բժշկապետ Կատերացը «la Nature» ամսագրում և որովհետև այդ դէպքերը յայտնի հանդամանքներում առաջացան, որոնցից հեշտ է խուսափել, ուստի այդ զեկուցումը արժանի է ուշադրութեան։ Վերջին ժամանակներս շատ են կարում կօշիկներ դեղնապոյն կաշուց, մանաւանդ երեխաների համար, սակայն երեխանց ոտները մեծանում են և ամառուայ կօշիկները էլ միւս ամառ պէտք չեն գալիս։ Ուստի և կօշիկը սնացնում են, որ ձմեռն էլ պէտքական լինի։ Սնայնում են՝ կաշուի մէջ թափանցող սև անէլինի ներկով, որ և պատճառ է լինում այն դժբաղդ դէպքերի, որոնց մասին յայտարարել են գիտութեան ճեմարանում բժշկապետները—Լանչինի և Բրուարդելը։ Մի տաք դարնանային օր,—ասում են նոքա—մեղանից մէկին խնդրեցին չուստափոյթ օգնութիւն հասցնել $1^1/_2$ տար. երեխային, որին զբօսանքից յետ էին բերել անշնչացած դրութեամբ։ Երեխան առաւօտը սովորական կերպով անցնելուց յետոյ, տարան զբօսնելու պարտէզ, սակայն, նա այնտեղ անշարժ էր, տխուր և մինչև անգամ դէմքի գոյնը թռել կապտել էր։ Կարծես սառել փայտ էր դարձել, բայց ձայն չէր հանում, չէր լալիս։—Երբ ծծմայրը նորան յետ դարձրեց, նորա շրթունքները և մատները-սառել կապտել էին—ինչառութեան բոլոր նշաններով։ Բժշկութիւնը օգնեց, երեխան յետ եկաւ, բայց դրանից յետոյ նա կրկին երկու օր դանւում էր անբնական դրութեան մէջ, որտի գործունէութիւնը սաստիկ խանգարուած։ Որովհետև հիւանդանալը յանկարծակի էր, ուստի ենթադրում էր, որ նա թունաւորուած է, բայց թէ ինչից—չգիտէին։ Բժիշկները ու-

չադրութիւն դարձրին կոշիկներից եկող սաստիկ հոտի վերայ։ Այդ կոշիկները առաջ դեղնադոյն են եղել, այժմ ներկով սեւացրած։

Մի քանի օրից յետ նման դէպք պատահեց նոյն ընտանիքում մի ուրիշ երեխայի, որից անկասկած եղրակացուեցաւ, որ թունաւորուելու պատճառը կոշիկներն են։—Այդ դէպքերը բացառիկ չէին. բժիշկները 12 նման դէպք հաղորդեցին, և բարեբաղտաբար ամեն անգամ հիւանդները լաւացել էին։

Անիլինի ներկով թունաւորուելու երևոյթները ուսումնասիրելու համար Լանդուղին և Բրուարդելը մի շարք փորձեր կատարեցին կենդանիների վերայ։—Նոքա անիլինի սև ներկը սրսկեցին կենդանիների կաշուի տակ, կամ քսում էին նոցա կաշուին մազի վերայ և կամ մաղը հեռացնելուց յետոյ։ Նոքա հաստատեցին, որ երբ ներկը ծծուում է կաշուի մէջ—առաջ է բերում սաստիկ շնչարգելութիւն, որի գլխաւոր պատճառն այն է, որ արեան կարմիր գնդակներն սկսում են փոխոխուել։ Այդ ներկը ծծուում է կաշուի մէջ, առաջ է բերում շնչարգելութիւն, որովհետև արեան կարմիր գնդակներն սկսել են փոխուել։ Ներկի ծծումը կաշուի մէջ աւելի արագ է կատարուել այն դէպքում երբ կենդանին գտնուում էր տաք փակուած սենեակում, ուրեմն վերոյիշեալ դէպքերում թունաւորուելու համար եղել են յարմար հանգամանքներ։ Ի հարկէ սև անիլինի ներկ կարելի է պատրաստել այնպէս, որ նորա մէջ ազատ անիլին չլինի, սակայն լաւ է խոյս տալ այդ ներկից և կոշիկները սեւացնելու համար գործածել սովորական կոշկաներկ։

ՍԱՐԴԻ ՈՍՏԱՅՆԸ ԱՐԻՒՆԸ ԴԱԴԱՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ։—Ֆրանսիայում, ինչպէս, դժբախտաբար, նաև մեր երկրում, սխալ կարծիք է տարածուած, թէ վերքից հոսող արիւնը դադարեցնելու համար ամենալաւ միջոցն է սարդի ոստայնը։ Ֆրանսիայում այն կարծիքի են, որ աւելի լաւ է եթէ ոստայնը վերցնեն ախոռներից։ Այդ նախապաշարման դէմ պիտի մաքառել, որովհետև երկար ժամանակ կախուած ոստայնը օդից շատ միկրոբներ է ընդունում և շատ էլ ստանում է ճանճերից։ Ոստայնից շատ հեշտ է վարակուել, մանաւանդ երբ հին է։

Նորերս բժշկապետ Պեկիւսը Փարիզի անասնաբուժական ընկերութեան մէջ հետևեալ զեկուցումն արաւ։ Մի ձի վիրաւորել էր ոտքը, ցանկապատի ցցի վրայ. շտապել էին վերքը կապել ոստայնով։ Մի քանի օրից յետոյ վերքի մօտ ոտը սաստիկ ուռաւ և երևաց, որ ձին ծաղիկ է ընկել։ Անասնաբույժը յայտնեց - որ վերքը կապելու համար ոստայնը վերցրել են այնպիսի՞ ախոռից, ուր եղել են ծաղկով հիւանդ կովեր։ Վարակման թոյնը ոստայնից անցել է ձիու վերքի մէջ և վարակել։ Ուստի և դը-Պրէվիլը իրաւունք ունի բացականչելու, որ եթէ հարկաւոր է ոստայնը հաւաքել—այդ պէտք է անել միայն ոչնչացնելու համար։ Ա. Ս.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՐԷՅԵԱՆ

Կիլիկիայի ծերունի Մկրտիչ կաթողիկոսի մահից յետոյ բաւական տարիներից ի վեր Կիլիկիայի հայրապետական գահը թափուր էր մնացել։

Թէև ընտրութեան վերաբերեալ բանակցութիւնը վաղուց սկսուած էր հայոց պատրիարքարանի և տաճկական կառավարութեան մէջ, սակայն համաձայնութիւն չէր կայանում։ Վերջապէս այս տարի յաջողուեց Սրբազան Օրմանեանին ընտրութիւնը դլուխ բերել և Երուսաղէմի աւագ Լուսարար Սահակ եպիսկոպոս Խապայեանը նշանակուեց ընտրական ժողովի նախագահ և առհասարակ ընտրութեան գործի կարգադրիչ։ Ընտրական ժողովի պատգամաւորները Ատանայում նախ կազմեցին ընտրելիների ցուցակ վեց բարձրաստիճան եպիսկոպոսների անուններով և առաջարկեցին Կ. Պոլսի կրօնական ժողովի և տաճկական կառավարութեան վաւերացման և ապա թէ 1901 թ. Նոյեմբերի 29-ին կայացաւ Պերջնական ընտրութիւնը։

Մինչև ընտրութեան օրը թէ Կ. Պոլսում և թէ մեզ մօտ ամենից հաւանական ընտրելին համարւում էր Երուսաղէմի միաբան Սահակ եպիսկոպոս Խապայեանը, որ ընդհանուր յարգանք է վայելում։ Նոյեմբերի 29-ին կատարուած ընտրութիւնից յետոյ միայն երևաց, որ կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորների լիսուինը ձայնից 32 ձայնով Կիլիկիայի կաթողիկոս հռչակուեց Գէորգ Սրբազան Երէցեանը՝ Երուսաղէմի պատրիարքի Կ. Պոլսի արժանաւոր փոխանորդը։

Նորընտիր կաթողիկոս Երէցեանը տաճկահայոց ամենայայտնի հոգեորականներից մէկն է և իւր թէ անձնական յատկութիւններով, թէ անցեալ գործունէութեամբ ըստ ամենայնի

արժանի է Կիլիկիայի կաթողիկոսական պատմական դահին։ Նա դեռ քառասունեվենը տարեկան է. ծնուել է Ռումինիայի Իսմաիլա քաղաքում 1852 թ. և եպիսկոպոս ձեռնադրուել սուրբ Էջմիածնում, Վեհափառ Հայրիկի ձեռքով 1898-ին։ Ձեռնադրութիւնից առաջ Վեհափառ կաթողիկոսի հետ ճանապարհորդել է դէպի Թիֆլիզ, Բաքու և ամեն տեղ սիրալիր ընդունելութիւն էր գտնում, իբրև զարգացած, ճարտասան և եւրոպական լեզուներ իմացող հոգևորական անձն։

Շնորհաւորելով Սրբազանի բարձր և պատասխանատու նոր կոչումը՝ լինելու ենք, որ նա կարդարացնի Կիլիկիայի հայ որբացած ժողովրդի յոյսերը և իւր կաթողիկոսութեամբ լուսաւոր գաղափարներ ամբաջ մղելով՝ կբնդմացնէ Կիլիկիայի դպրոցական հաստատութիւնների թիւը և ամենայն եռանդով կնպաստէ ժողովրդի տնտեսական դրութեան բարւոքման։ Կիլիկիան Եւրոպային մօտ լինելով՝ ամեն յարմարութիւն ունի ընդունելու եւրոպական քաղաքակրթութեան օգտակար կողմերը. հարկաւոր է միայն եռանդ և անձնդէր գործունէութիւն։

ՌԵԹԷՈՍ ՊԷՐՊԷՐԵԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

1901 թ. Հոկտեմբերի 28-ին փառահեղ հանդիսով տօնուեց Կ. Պոլսի Պէրպէրեան մասնաւոր միջնակարգ դպրոցի հիմնարկութեան 25 ամեայ տարեդարձը։ Ահա մի արտաքոյ կարգի երևոյթ. ամբողջ տաճկահայերի պատրիարքարանը, աղգային վարչական հիմնարկութիւնները ձեռք ձեռքի տուած հայ մամուլի բոլոր ներկայացուցիչների հետ՝ տօնում են մի մասնաւոր անհատի մասնաւոր դպրոցի 25 ամեայ տարեդարձը։ Յոբելեանի հանդէսն սկսում է եկեղեցում. հանդիսաւոր պատարագ է լինում՝ Սրբազան պատրիարքը մի ամբողջ ժամ քարոզ է խօսում, Պէրպէրեան դպրոցի և նրա հիմնադրի ազգին տուած օգուտները թւում և դրուատում։ Այնուհետև հանդէսը շարունակւում է դպրոցի դահլիճում, ուր հաւաքուած են լինում Կ. Պոլսի հոգևոր և աշխարհական գործիչները, նոյն իսկ յունաց պատրիարքարանի ներկայացուցիչը և ամենքը միաբերան փառաբանում են դպրոցն ու հիմնադրին։ Բազմաթիւ նուէրներ է ստանում հիմնադիրը և դրամական նպաստը

հանում է 1098 օսմանեան ոսկու. զգացուած յօբելեարն էլ այդ գումարից 100 ոսկի «ուսուցչաց նպաստից մնտուկին» է յատկացնում, 30 ոսկի «Վանայ Երամեան վարժարանին», 20 ոսկի էլ Մ. Մամուրեանի լիշատակին արձան կանգնեցնելու համար։

Այս տօնախմբութիւնը մենք մի արտաքոյ կարգի երեւոյթ անուանեցինք, որովհետեւ սովորաբար մասնաւոր անհատի, մասնաւոր հիմնարկութեան տարեդարձը մասնաւոր շրջանումն է տօնւում, իսկ Պէրպէրեան դպրոցի տարեդարձը տօնւում է իբրև ազգային հիմնարկութեան յօբելեան։ Ինչու՞ Որովհետեւ նախ՝ այդ մասնաւոր դպրոցը այնպիսի տաղանդաւոր մարդու ձեռքով է ղեկավարուել, այնպիսի գաղափարներ է ներշնչել իւր պատերի մէջ սովորողներին, որ սոքա վերջն իրանց հասարակական գործունէութեամբ օգտակար են հանդիսացել ազգին և դպրոցի անունը բարձրացրել։ Երկրորդ՝ դպրոցի տէրը միմիայն այդ հաստատութիւնը ղեկավարելով չէ բաւականացել, այլ իւր գրական և մանկավարժական գործունէութեամբ մեծ դեր է խաղացել Ցահկահայոց դպրոցական գործի կազմակերպութեան և յառաջադիմութեան վերաբերմամբ՝ «ուսումնական խորհրդի» ամենափորձուած և ամենաեռանդուն անդամներից մէկը լինելով։

Ռեթէոս Պէրպէրեանի գրական գործունէութիւնն սկսւում է 1870-ից էլ առաջ. նա գրում է Կ. Պոլսի թերթի, գրական հանդէսների մէջ, դասախօսութիւններ է կարդում և ձեռք բերած գիտութեան պաշարն այնպիսի բանաստեղծական ու գրաւիչ լեզուով է արտայայտում, որ ընթերցողի կամ լսողի վրայ հիանալի տպաւորութիւն են թողնում։ 1871-ին նա հրատարակում է Լամընէի «Բանք հաւատացելոյ ուրուք», 1880-ին «Առաջին տերեքը», 1883-ին Գէօթէի «Հէրման և Դորոդէա» և «Քաղաքական մնտեսութիւնը», 1885-ին «Մարդիկ և իրք», 1886-ին «Ժողովրդեան զրօսանքները», «Դրամը», 1886-ին «Երկու բանախօսութիւնք» և այս տարի յօբելենական «Դաստիարակի մը խօսքերը»։

Պէրպէրեանը թէ իբրև անհատ—մարդ, թէ իբրև ազգային՝ հասարակական գործիչ—շատ համակրելի կողմեր ունի և քստ ամենայնի արժանի է այն զովեստից ու բարոյական և նիւթական վարձատրութեան, որ յօբելեանի առիթով ստացաւ իւր երախտագէտ հայրենակիցներից։

Մեր կողմից շնորհաւորելով նորա քանանհինգամեայ վաստակաւոր և արդիւնաւէտ գործունէութիւնը՝ մաղթում ենք, որ նա նոյն եռանդով շարունակէ աշխատել յօգուտ տոհմային դատիարակութեան։

ԶՄԻՒՌՆԻԱՅԻ Ս. ԼՈՒՍ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆ

Մենք ստացել ենք յիշեալ հիւանդանոցի հարիւրամեայ յօբելեանի տեղեկագիրը (1801—1901)։

Զմիւռնիայի ազգային հիւանդանոցը թէպէտ որպէս աղքատանոց գոյութիւն է ունեցել 18-րդ դարու կէսից յետոյ, սակայն հիւանդանոցի է փոխուել 1801 թուին, որի նախակառուցման մարմարէ յիշատակարանը գտնուել է վերաշինութեան ժամանակ 1879 թուին։

Հիւանդանոցը իւր աւելի քան միդարեայ գոյութեան ընթացքում եղել է իսկապէս իբրև գթասիրական մի հիմնարկութիւն, պատսպարելով և դարմանելով հայ և օտար հիւանդներ ու կարօտեալներ, իսկ 1877 թուից, երբ Զմիւռնիայի առաջնորդ ընտրուեցաւ դեր. Տ. Մելքիսեդեկ վ. Մուրատեանց, վերջնիս բարոյական ազդեցութեան շնորհիւ և բարեյիշատակ Սպարթալեան եղբայրների առատաձեռնութեամբ նոր զարկ ստացաւ այդ հիմնարկութիւնը, մի հոյակապ շէնք կանգնեց և գործը աւելի հաստատ հիմքերի վերայ դրուեց։ Հիւանդանոցը հետզհետէ ապահովուեց բարերարների նուիրած կամ կտակած հաստատուն կալուածներով, և այսօր հիւանդանոցի վերայ ծախս է լինում մօտ 12,000 ռուբլի տարեկան, որ սակայն ամենայն խնայողութեամբ վարուելով իսկ անբաւական է հաստատութեան մեծ կարիքները հոգալու։

Հիւանդանոցի 600 ամեայ յօբելեանը տօնելուն՝ ինչպէս նաև կամաւոր հանգանակութեամբ այդ մեծ հիմնարկութիւնը կատարելապէս ապահովելու համար Զմիւռնիայում կազմուած է մի յանձնաժողով տեղոյն առաջնորդ Ամեն. ա. Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանի նախագահութեամբ։

Յօբելեանը կատարուելու է տարուոյս մարտ 31-ին ս. Լուսաւորչի տօնին յաջորդող կիւրակի օրը։

Շնորհաւորելով հիւանդանոցի տօնը, խմբագրութիւնս յոյս

գնել դրա մեր կողմերում ևս արձագանք կգտնէ հիւանդների և պանդուխտների խնամատարութեան համար այդ ցանկալի հրաւէրը։

«ՀՈՒՄԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐԻ ՔԱՆԵՀԻՆԳԱՄԵԱԿԸ

1901 թ. Նոյեմբերին լրանում էր Գիւտ ա. քահանայ Աղանեանի գրական և ուսուցչական գործունէութեան քանեհինգամեակը, բարձրապատիւ հոր քաղաքիս համակրողները տեսնելով նորա եռանդոտ և ժրաջան աշխատանքը յոգնատ հայրենի գրականութեան՝ միտք յղացան ընտանեկան կերպով տօնել նորա յոբելեանը՝ առաւել խրախուսելու նորան և միջոց տալու՝ իւր գրական երկերը տպագրելու։ Այդ համեստ նպատակն իրագործելու համար ա. հոր հայրենակիցներից և ծխականներից կազմուեց մի մասնաժողով։ Մասնաժողովը մասնաւոր դիմումներ անելով զանազան անձանց՝ կարող եղաւ մի համեստ գումար ժողովել ի նպաստ յոբելեարի գրական երկերի հրատարակութեանց։

Հոկտեմբերի 28-ին հանդէս ու վայելուչ կերպով տօնուեց «Հումայ»-ի խմբագրի յոբելեանը։ Ժամը տասից արդէն «Հումայ»-ի խմբագրատուն էին գալիս զանազան պատգամաւորութիւններ, քահանաներ, ուսուցիչներ, ծխականներ, Թիֆլիզի հայ և ռուս մամուլի ներկայացուցիչներ, գրագէտներ և այլն։ Ցարգելի հանդիսականները մինչև ժամի երկուսը զբաղուեցին շահագրգիռ զրոյցներով և Տէր հոր ստացած և ի ցոյց դրուած նուէրները գիտելով։ Ժամի երկուսին եկան սրբազան Գարեգին եպիսկոպոս Սաթունեան, բարձրապատիւ Կորիւն, Գարեգին, Տիրայր և Մամբրէ վարդապետները, իրենց հետ բերելով Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը։

Հանդէսը բացուեց Նորին Վեհափառութեան կոնդակի ընթերցմամբ—կարդաց Տ. Գարեգին վարդապետը—. Վեհափառ Հայրիկը հոգեշունչ խօսքերով գրուատելով Հ. Գիւտ ա. քահանայի՝ ազգին և եկեղեցուն մատուցած ծառայութիւնները՝ օրհնում էր նորան և խրախուսում՝ շարունակել նոյն հոգւով գործելու։ Կոնդակի ընթերցումից յետոյ կարդացուեցան ուղերձներ կարգադրիչ մասնաժողովի, քահանաների և ծխա-

կանների կողմից. ապա հերթը հասաւ այն բազմաթիւ շնորհաւորական հեռագիրների և նամակների ընթերցմանը, որ ստացուել էին Կովկասի ամեն կողմերից, Ռուսաստանից և Տաճկաստանից։ Ի թիւս այլոց աչքի էին ընկնում շնորհաւորութիւններ՝ Կ. Պոլսի Սրբազան պատրիարք Օրմանեանից, Ամեն. Տ. Մելքիսեդեկ արքեպիսկոպոսից, սրբազան արքեպիսկոպոսներ՝ տ. տ. Սուքիասից, Ներսէսից, Գէորգից և Արիստակէս Դաւթեանից, եպիսկոպոսներ՝ տ. տ. Մակարից, Շիրակունուց, Փիլոյեանից, Մայր Աթոռի Ճեմարանի տեսչից և ուսուցիչներից, Ղարաբաղի թեմական դպրանոցից, Ս. Պետերբուրգի, Գանձակի հասարակութիւններից և քաջանաներից, Պոլսի Հայոց պատրիարքարանից, տ. Յ. ա. ք. Մկրտչանից, Լայպցիգի հայ Ճեմարանական ընկերութիւնից. Ն. Նախիջ.-ի, Բագուի, Գորուաղ դպրաց. փոխանորդներից։ «Լումայ»ի աշխատակից Յար. Թումանեանից ոտանաւոր ձօն և այլն։ Անձամբ կամ լրատուական գրասենեակներով շնորհաւորել էին Թիֆլիզի բոլոր հայ և ռուս պարբերական մամուլի խմբագիրները բացի «Մշակ»ից և «Մուրճ»ից։

Նուէրներ ստացուել էին. 1. Թիֆլիզի հայ հոգևորականներից՝ ոսկէ ժամացոյց. 2. Տէր-հօր ծխականներից՝ արծաթէ սերվիզ. 3. Կենդրոնական գրաճառանոցից՝ արծաթէ սերվիզ. 4. Արզար Յովհաննիսեանից՝ արծաթէ աղօթ (վազ). 5. այդ միջոցին Թիֆլիզ գտնուող կաթոլիկոս ու վարդապետներից մի շատ սիրուն արծաթակազմ լուշատետր. 6. Բագուից՝ Գարա ընտանիքից՝ արծաթեայ լուշատետր. 7. Աստրախանից՝ պ. Սերեբրյակեանից արծաթեայ գրիչ և այլն։

Հանդէսը վերջանալուց յետոյ ներկայ եղողներից 30 հոգի հիւրասիրուեցան յծբելեարի կողմից և ճաշի միջոցին բաւականին բարեմաղթութիւններ եղան՝ ցանկանալով «Լումայ»ի խմբագրին աւելի մեծ եռանդ և տոկունութիւն՝ լոգուտ հայ գրականական ասպարէզի։

Տայ Աստուած, որ բարձրապատիւ Տէր Գիւտը իրականացնէ հասարակութեան բաղձանքը։

ՄԱՍՆԱԺՈՂՈՎ.

ՄԱՀԱԳՈՅԺ

✠ Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Անցեալ նոյեմբերի 9-ին մեր տոհմային գրականութիւնը մի մեծ և անփոխարինելի կորուստ ունեցաւ. Վենետիկի վանքում կնքեց իր մահկանացուն մեր գրականութեան պարծանքներից մէկը Հ. Ղեւոնդ Ալիշանը—Աւարայրի պլպուլը, Հայաստան աշխարհի սիրահարը, այդ աշխարհի անկենդան աւերակներին ոգի ու շունչ տուող, նրանում ապրող լքուածներին լաւագոյն ապագայի յոյսերով խրախուսող ու ոգեւորող Նահապետը։

Հանգուցեալը ծնուել էր Պոլիս 1820 թ. յուլիսի 16-ին։ Որպէս հայ-կաթոլիկ ընտանիքի զաւակ, դպրոցական հասակում նրան ուղարկում են Վենետիկ Մխիթարեանների վանքը ուսանելու։ Այդտեղ աւարտելով վանական ուսման դասընթացը, 1840 թուի յունուարի 7-ին ձեռնադրւում է կուսակրօն քահանայ և նոյն վանքում՝ զանազան ժամանակ վարում է վանական և դպրոցական այլ և այլ պաշտօններ։

Հ. Ալիշանի բազմատեսակ բեղուն գործունէութիւնն սկսուել է համարեա նորա քահանայանալու թուականից էլ վաղ, որ ասել է՝ աւելի քան կէս դարս 1890 թ. մայիսի 3-ին տօնուեցաւ նորա գրական գործունէութեան յիսնամեայ յօբելեանը։

Բացի հայերէնից, նա տեղեակ էր նաև հին ու նոր քանի մի լեզուների և ունի այդ լեզուներով գրուածքներ թէ թարգմանական և թէ ինքնուրոյն. նա

պատուաւոր ու թղթակից անդամ էր եւրոպական շատ գիտնական ընկերութիւնների։

Հայաստան աշխարհի սիրահար ծերունին, միշտ սիրուած ու մեծարուած է եղած իւր հայ ընթերցողներից, և նորա յիշատակը մեր գրականութեանը մատուցած ծառայութեանց համար՝ յաւէտ անմոռանալի կըմնայ ամեն մի հայի սրտում։

«Լումայ»-ի հետևեալ համարներից մէկում մենք մի քննական տեսութիւն կտանք նորա գրական երկերի մասին։

✠ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱ ՏԱՏԵԱՆ

Ինչպէս Ռուսաստանում, այնպէս էլ Տաճկաստանում մէկ-մէկ յաւիտենական աշխարհն են փոխադրւում պետական բարձը հայ պաշտօնեաները։ Հոկտեմբերի 7-ին Կ. Պոլսում կնքեց իւր մահկանացուն հայ պետական ամենաբարձր պաշտօնեաներից մէկը, Յարութիւն Տատեանը, որ իւր գերազանց ծառայութիւնների շնորհիւ փաշայութեան բարձր տիտղոսին էր արժանացել տաճիկ կառավարութիւնից։

Յարութիւն փաշան յայտնի հայ բարեգործ և Օսմանեան պետութեան վառօդապետ Յովհաննէս Պէյ Տատեանի որդին էր, ծնուած Այնտեֆանցում 1830 թ։

Տատեանն իւր միջնակարգ ու բարձր կրթութիւնը ստացաւ Փարիզում և վերադառնալով Կ. Պոլիս՝ հօր աղդեցութեան և Ֆրանսերէնի հմտութեան շնորհիւ շուտով պաշտօն ստացաւ Օսմանեան արտաքին գործոց նախարարութեան մէջ և այնուհետև զանազան պետական յանձնարարութիւններ կատարելով՝ հետզհետէ բարձր աստիճանների հասաւ և 1865 թ. Փարիզի տաճկական դեսպանութեան առաջին քարտուղարն եղաւ. այդ դեսպանատանը 3 տարի ծառայելով՝ նորից Կ. Պոլիս վերադարձաւ և 1868 թ. նշանակուեց պետական խորհրդի անդամ և մեծ եպարքոս Ալի փաշայի համակրութիւնը վայելեց։ 1872 թ. Մահմուտ Նէդիմ նախարարապետի օրով բարենորոգմանց բարձր յանձնաժողովի անդամ նշանակուեց, ապա եղաւ պետական արժեթղթերի վարչութեան տնօրէն, իսկ

1873—1874 թ. ելեմտից (ֆինանսների) նախարարութեան խորհրդական։ 1875 թ. արտաքին գործոց նախարարութեան խորհրդական նշանակուեց և այդ պաշտօնի մէջ էլ մնաց մինչև մահ։ իսկ վիզիրութեան աստիճան ստացաւ 1887 թ. և պետական ամենաբարձր պատուանշանը՝ «ակլանակուս իֆթիխարս»։

Այդպիսով նա պետական բարձր պաշտօններ է վարեցէ՝ թէ իբրև քաղաքագէտ և թէ իբրև ելեմտագէտ (ֆինանսիստ) և իւր պաշտօնների շնորհիւ գործ ունենալով եւրոպական օտար պետութեանց հետ՝ համարեա բոլոր մեծ ու փոքր պետութիւններից շքանշաններ է ստացել։

Իբրև հայ անհատ՝ թէև մեծ մասամբ իրեն նուիրուած է պահել աղգային շրջանից, բայց և այնպէս մի երկու անգամ տաճկահայոց Աղգային ժողովի նախագահ է եղել և 1896 թ. քաղաքական ժողովի նախագահ ընտրուելով՝ իւր երկարամեայ դիւանագիտական փորձառութեամբ և բարձրագոյն յարաբերութիւնների շնորհիւ՝ օգտակարութիւն հանդիսացել իւր հայրենակիցներին։

Յաջորդիւն փաշայի որդին, Տիգրան Պէյ Տատեանը՝ «պաշտօնէից ընտրութեան բարձրագոյն յանձնաժողովի» անդամ է, իսկ դուստրը՝ տիկին Նադաշեան «կայսերական կանանոցի» առաջին թարգմանուհի։

Յարութիւն փաշայ Տատեանի թաղումը տեղի է ունեցել մեծ շքով ու հանդիսով, Օսմանեան պետութեան հաշուով, Պէշիկթաշի եկեղեցու մէջ։ Եկեղեցական արարողութեանը ներկայ են եղել բոլոր եւրոպական դեսպանատների ներկայացուցիչները։

✠ Դ. ՏԷՐ ԴԱՒԹԵԱՆՑ

Անցեալ նոյեմբերի 17-ին կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց Դաւիթ Տէր Դաւթեանցը երիտասարդ հասակում։

Հանգուցեալը աւարտել էր Ներսիսեան Դպրոցը և ուսուցչի պաշտօն էր վարել քաղաքիս մի քանի ծխական դրպրոցներում և վերջին տարիները մինչև իւր մահը վերակացու էր Ներսիսեան դպրոցում։

Տէր Դաւթեանը կործում էր հայ գրական ամպարիշտում, վրացերէնից բաւական յաջող թարգմանութիւններ և փոխադրութիւններ անելով, որոնցից յայտնի են քանի մի կատակերգութիւններ և խմբագրում էր Ռոստոմաշվիլու վրացերէն հանրագիտական բառարանի հայկական բաւական հարուստ բաժինը։ Դժբախտաբար նա չաւարտեց իւր այդ աշխատութիւնը, այլ մինչև այժմ լոյս է տեսել միայն 4 հատոր։

Նա աշխատակցում էր և հայ թերթերին, վերջերս նաև «Լումայ»ին, իսկ վրացերէն «Կվալի» շաբաթաթերթի մշտական աշխատակիցն էր համարում, ուր ունի տպած հայ գրականութեան վերաբերեալ բազմաթիւ յօդուածներ։

Հանգուցեալը ծանրաբեռնուած էր մեծ ընտանիքով և նիւթական շատ նեղ վիճակի մէջ էր, որ և անշուշտ նորա մահուան պատճառներից մէկն եղաւ։

Այսպէս անցաւ մի բեռնաւոր և ապագայ ունեցող կեանք, որ աւելի հալածուած էր քան դնահատուած որոց կողմից որ արժան էր։

Յաւիտենական հանգիստ դժբաղդ գրական գործչին...

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

«ԼՈՒՄԱՅԻ» ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻՆ։ Խմբագրութիւնը իւր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն անձանց, որոնք հեռագիրներով և նամակներով իրենց խնդակցութիւնն էին յայտնել «Լումայի» երկամեայ դառնալու առթիւ։

ՔԻՇՆԵՒ Կրպէին. յօդուածը ստացանք. կաշխատենք տպել միւս համարում։

ԱԽԱԼՑԻԱ. Ե. Մեծատունեանցին։ Ձեր ուղարկած Ս. Նազարեանի նամակները կտպագրուին հետևեալ համարներում։

ՄՈՒՐՃԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. «Լումայի» մասին մի խմբագրական նկատողութիւն էք տպել «Մուրճի» նոյեմբերի համարում, չուալլելով մեր հասցէին «կղերական» «տէրտէրական» և այլ անմիտ խօսքեր։ Մենք չգիտենք թէ ինչ կապ ունի մեր կոչումը գրական այս կամ այն խնդիրների հետ. այն ժամանակ մենք էլ պէտք է իրաւունք ունենալինք ասել, որ նաթալին գործերը և վաճառականութիւնն սկսել են ազդեցութիւն ունենալ գրական

ասպարիզում, որովհետև եթէ «Լումայ»ի խմբագիրը հոգևորական է, «Մուրճ»ի այժմեան խմբագիրը վաճառական է։ Ասում էք թէ «Լումայն» պասքվիլներ է տպում։ Այս բոլորն ասում էք. բայց ուր են ապացոյցներ։ «Լումայն» երբէք պասքվիլ չէ տպել։ Ձեր բարեհաճ կամքն է ամեն մի յօդուածում պասքվիլ տեսնել։ Պասքվիլներ խնդրեմ որոնէք Լ.-ի «կիրակնօրեայ զրոյցներում» և Վերձինի «մանրանկարներում»։ Իսկ թէ ինչ են նշանակում «Լումայում» լիշուած «մի այլ Լ. կամ ոգիոէ նոյն լիւն, 900 ռ. հաշիւ ունի տալու մի աղքատիկ վարժարանի» խօսքերը, կպատասխանենք մի այլ համարում։

Քաղցր պարտք եմ համարում երախտագէտ սրտով շնորհակալութիւնս յայտնել այն բոլոր յարգելի հոգեւորական եւ աշխարհական անձերին եւ հաստատութիւններին, որոնք պատիւ արին ինձ անձամբ, հեռագիրներով, նամակներով եւ պատգամաւորութիւններով շնորհաւորել իմ զրական հանեստ գործունէութեան 25 ամեակը։

ԳԻՒՏ Ա. ՓԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՓԱՀ. ԱՂԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտարարում է, որ հանգուցեալ Նունէ Ղամբարեանցը 1891 թուի Օգոստոսի 28-ի կտակով առաջարկել է Հոգաբարձութեան իւրաքանչիւր չորս տարին մի անգամ տալ *Արկու մրցանակ*, որպէս վարձատրութիւն ամենարնտիր աշխատութիւնների, գրուած հայկական լեզուով Կովկասի և փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և ազգագրութեան մասին. մրցանակաբաշխութեան մասնակցելու թոյլատրուում է Ներսիսեան Հոգևոր դպրանոցի և ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի այն բոլոր աւարտած ուսներին, որոնք իւրեանց ուսումն աւարտել են մրցանակաբաշխութեան օրից ոչ աւելի առաջ քան հինգ տարի։ Յիշեալ պայմանների հիման վերայ հանգուցեալ Նունէ Ղամբարեանցի երկրորդ մրցանակաբաշխութիւնը լինելու է 1902 թ. վերջին ամիսներին։

1) Հեղինակութիւնները պէտք է ուղարկուին Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձութեանը մինչև 1902 թ. Նոյեմբերի 1-ը։

2) Հեղինակութիւնները պէտք է ունենան խորագիր, իսկ հեղինակի անունը պէտք է նշանակած լինի փակ ծրարի մէջ, նոյն խորագրի տակ, որպիսի ծրարը բացուելու է միայն մրցանակաբաշխութեան որոշումից յետոյ։

3) Մրցանակաբաշխութեան հարցը որոշուելուց յետոյ, հեղինակութիւնները կարելի է յետ ստանալ կամ անձամբ, կամ հաւատարմաթղթով։

4) Մրցանակի արժանացած շարադրութիւնների, նոցա հեղինակների և տարած պրեմիայի քանակութեան մասին կը հրատարակուի լրագրներում։

5) Առաջին պրեմիայի քանակութիւնը հաւասար է 325 ռ. իսկ երկրորդ պրեմիայի քանակութիւնը 100 ռուբլու։ 2. 2—1.

Բացուած է 1902 թ. քաժանորդագրութիւնը

XX ԱՂԲԻՒՐ XX տ. և XIII տ. ՏԱՐԱԶ XIII

տարի է։ Հրատարակուում են նոյն ուղղութեամբ և աշխատակից-

ների մասնակցութեամբ

ԱՂԲԻՒՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Մանրավէպ, Զրոյց, Հէքիաթ, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն։ Գիտութիւն և արուեստ։ Նոր լուրեր. Այլ և այլք։ Զարմալիք։ Մանկական, Ֆրեօբէլեան, շարմատի և այլ խաղեր, Բերուաններ, Թաքանական խնդիրներ. Անեկդոտ. Հանելուկ, Երգեր նոտաներով.

Բ. ԲԱԺԻՆ Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։ Առաջարկութիւններ։ Խորհուրդներ։ Մատենախօսութիւն և նոր գրքեր։ Խառն լուրեր։ Պատասխաններ։

ՏԱՐԱԶԻ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարուեստ և գիտութիւն։ Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրուածներ։ Բանաստեղծութիւն։ Քննադատութիւն։ Կենսագրութիւն։ Կար, ձև, ձեռագործ և ամէն նորութիւն արհեստների վերաբերեալ։ Տնային արդիւնագործութիւն, տնտեսութիւն։ Ճանապարհորդութիւն և արկածք։ Երաժշտութիւն և թատրոն։ Լուրեր, տեղեկութիւններ։ Ցօդուածներ և այլն։ Ֆելիէտոն, ծաղր, առած և կատակ։ Շախմատի և այլ խաղեր, Բերուս։ Հարցեր, խորհուրդներ։ Այլ և այլք։ Սուրհանդակ։ Ցայտարարութիւններ։

12	№№	պատկերազարդ ԱՂԲԻՒՐ ամսագիր	ՏԱՐԱԶ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
12	№№	Պարիզի մոդաներ	
12	№№	Առողջապահական	
12	№№	Իլլիւստրասիոն	
50	№№	Գրական-գիտական քննադատական	

ՊՐԷՄԻԱ, *հքնաղ քարեկենդան*

Տարեկան բաժանորդագինը **10** *ր.*, արտասահման 18 *ր.* 50 *ֆր.* ապառիկ կամ մաս-մաս վճարող բաժանորդագրութիւն չէ ընդունուում։ ԱՂԲԻՒՐ ամսագրի տարեկան գինը 3 *ր.* ՏԱՐԱԶԻՆԸ—6 *ր.* ՊՐԷՄԻԱ, ԻԼԼԻՒՍՏՐԱՍԻՕՆ, ՊԱՐԻԶԻ ՄՈԴԱՆԵՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ *ստանում են Աղբիւր և Տարազ միևնոյն հասցէով ստացող բաժանորդները։*

Հասցէն՝ ТИФЛИСЪ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ TIFLIS (Caucase) Redaction des jour. AGBUR et TARAZ.

Խմբ.-Հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

(Փ.) 3—1.

„ՆՈՐ-ԴԱՐ“

(ՏԱՍՆԵՅԻՆ ՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ Ռէբլեք 1902-ին հրատարակուում է Թիֆլիսում նոյն ծրագրով և ուղղութեամբ ամէն օր, բացի տօներին հետևող օրերից։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 ռուբլի, վեց ամսուանը՝ 6 ռուբլի, երեք ամսուանը՝ 3 ռ. 50 կ., Թիֆլիսից

դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կոպ., Թիֆլիսում 5 կոպ.։

Բաժանորդ են գրւում մի միայն՝ խմբագրատանը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և օտար լեզուներով բառը 2 կ., առաջին երեսումը՝ 4 կոպէկ։

Խմբագրատունը գտնւում է Դաւիդովսկայա փ., տ. № 5.

Պոստով «Նոր Դարու» հասցէն Тифлисъ въ Редакцію „НОРЪ-ДАРЪ" կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar». (Ф.)

ԹԱՏՐՈՆ

Գրական եւ թատերական հանդէս

Բացուած է 1902 թուականի բաժանորդագրութիւնը

Տարեկան բաժանորդագինն է երկու №№ (գիրք 9 և 10) երեք ռուբլի. Թիֆլիսից դուրս 3 ր. 30 կ. արտասահման 10 ֆրանկ.

Բաժանորդագրութիւնն ընդունում է հրատարակչի մօտ, ինչպէս նաև «Կենդրոնական» և «Գուտենբերգ» գրավաճառանոցներում։ ՀՐԱՏԱՐԱԿ. ԿԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ

Դիմել հետեւեալ հասցէով՝ Тифлисъ Александру Тарханіанъ կամ Tiflis, Alexandre Tarkhanian. Ф. (2—1)

Съ разрѣшенія главнаго управленія по дѣламъ печати,

ПОНИЖЕНА ПОДПИСНАЯ ПЛАТА

НА

ежедневную политическую и литературную газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ"

Подписная плата какъ для городскихъ, такъ и для иногородныхъ подписчиковъ: за годъ—7 р., за полгода—4 р., 3 мѣс.—2 р. 50 к., 2 мѣс.—2 р., 1 мѣс.— 1 р.; отдѣльный № въ Тифлисѣ—3 коп., внѣ Тифлиса—5 коп.

Допускается разсрочка платежа: къ 1-му января—4 р., къ 1-му іюня—3 р.

Для сельскихъ учителей, народныхъ и школьныхъ библіотекъ и благотворительныхъ учрежденій сдѣлана скидка: год. плата для иногородныхъ—6 руб., для городскихъ—5 р.

Программа газеты, сотрудники и другія условія изданія останутся прежнія.

Подписка принимается не иначе; какъ считая съ 1-го числа каждаго мѣсяца. Подписка принимается въ Тифлисѣ, въ конторѣ газеты, Барятинская ул. д. № 8. (Ф.)

Открыта подписка на 1902 годъ

НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“

Съ безплатнымъ приложеніемъ

„ВѢСТНИКА ГОРНАГО ДѢЛА И ОРОШЕНІЯ НА КАВКАЗѢ“

Газета „Кавказъ“ въ 1902 году будетъ выходить повременамъ съ литературными иллюстрированными приложеніями и рисунками въ текстѣ.

Новые годовые подписчики получаютъ при подпискѣ *безплатно* экземпляръ „ЮБИЛЕЙНАГО СБОРНИКА“ съ портретами и рисунками, изданнаго къ 100-лѣтію присоединенія Грузіи къ Россіи.

„Вѣстникъ горнаго дѣла и орошенія на Кавказѣ“ выходитъ два раза въ мѣсяцъ.

Подписная плата на газету „Кавказъ“, съ приложеніемъ „Вѣстника горнаго дѣла и орошенія на Кавказѣ“, понижается, а именно: съ доставкою въ Тифлисѣ на годъ—10 р., на полгода—6 р., на 1 мѣсяцъ—1 р.; съ пересылкою иногороднымъ на годъ—11 р. 50 к., на полгода—6 р. 50 к., на 1 мѣсяцъ—1 р. 25 к.; за границу на годъ—17 р., на полгода—9 р., на 1 мѣсяцъ—1 р. 75 коп.

Плата за объявленія: въ самой газетѣ—для объявителей Кавказскаго края впереди текста—16 к. и позади текста—8 к. со строки петита или занимаемаго ею мѣста; для остальныхъ—20 к. впереди текста и 10 к. позади текста: въ „Вѣстникѣ“—15 к. съ такой же строки или 20 р. со страницы. Для лицъ ищущихъ труда, и за многократныя объявленія допускается значительная скидка.

Подписка и объявленія принимаются исключительно только въ конторѣ газеты „Кавказъ“ (Эриванская площадь, домъ Харазовой, телефонъ 182).

Лица и учрежденія, находящіяся внѣ г. Тифлиса, плату за подписку и объявленія благоволятъ присылать въ контору газеты „Кавказъ“ полностью, безъ вычета за пересылку, и съ точнымъ указаніемъ, на какой предметъ (за подписку или объявленія) высланы деньги, не перечисляя сихъ денегъ (какъ это было ранѣе установлено) ни въ спеціальныя средства, ни въ депозиты канцеляріи Главноначальствующаго.

Правительственныя же мѣста и должностныя лица, находящіяся въ Тифлисѣ, деньги за газету „Кавказъ“ и за объявленія въ ней и „Горномъ Вѣстникѣ“ имѣютъ сдавать непосредственно приходорасходчику канцеляріи Главноначальствующаго, или въ контору газеты „Кавказъ“, или же, наконецъ, перечисляютъ ихъ, по прямымъ ассигновкамъ, на имя означенной конторы, съ присылкою талоновъ отъ этихъ ассигновокъ въ упомянутую канцелярію.

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКъ“

(ГОДЪ ИЗДАНІЯ XXV-й)

въ 1902 году, какъ и раньше, будетъ выходить ежедневно, но значительно **УВЕЛИЧЕННОМЪ ФОРМАТѢ.**

Увеличивъ размѣры газетнаго листа до формата „Русскихъ Вѣдомостей“, редакція ежедневно будетъ давать подписчикамъ приблизительно на 4 столбца или на 600 строкъ газетнаго матеріала болѣе, чѣмъ до сихъ поръ, получивъ такимъ образомъ возможность одни изъ отдѣловъ газеты, до нынѣ являвшіеся, за отсутствіемъ мѣста, случайными,—вести регулярно („Обзоръ печати“, журнальное обозрѣніе, беллетристика и пр.), а другіе отдѣлы (внутренней и иностранной жизни и др.)—значительно расширить.

Особенное же вниманіе редакціи будетъ обращено на развитіе отдѣла корреспонденцій, чтобы газета могла явиться возможно полной выразительницей нуждъ закавказскихъ провинцій, безъ ущерба однако отдѣлу тифлисской жизни, на который и въ предстоящемъ году будетъ обращено преимущественное вниманіе.

Въ 1902 году газета будетъ заключать въ себѣ слѣдующіе отдѣлы и подъотдѣлы:

I. Дѣйствія и распоряженія правительства. II. Телеграммы отъ собственныхъ корреспондентовъ и „Россійскаго телеграфнаго агентства“. III. Статьи по общимъ краевымъ вопросамъ, а также по вопросамъ городского самоуправленія. IV. Внутреннія извѣстія. V. Иностранныя извѣстія. VI. Мѣстный отдѣлъ (хроника тифлисской жизни и другихъ мѣстъ Кавказа и Закавказья). VII. Наши корреспонденты. VIII. Злободневные фельетоны („Мысли вслухъ“, „Мелочи жизни“, „Бѣглыя замѣтки“ и др.). IX. Судебный отдѣлъ. X. Письма читателей. XI. Обзоръ печати (общей и кавказской). XII. Фельетоны (городской, обозрѣнія кавказской жизни, популярно научный, историческій, беллетристика, иностранной и внутренней общественной жизни и др.). XIII. Театръ и музыка. XIV. По Россіи. XV. Смѣсь, справочный отдѣлъ и объявленія.

Текстъ газеты по временамъ будетъ иллюстрироваться, а по мѣрѣ надобности будутъ выходить отдѣльныя **„ИЛЛЮСТРИРОВАННЫЯ ПРИБАВЛЕНІЯ“.**

По понедѣльникамъ подписчикамъ будутъ разсылаться телеграммы съ справочнымъ отдѣломъ и объявленіями.

ПОДПИСНАЯ ЦѢНА съ доставкой въ Тифлисѣ 5 р. на 6 м. 3 р., на 3 м. 1 р. 75 к., на 1 м. 75 к. Съ пересылкой иногороднимъ на годъ 7 р., на 6 м. 4 р., на 3 м. 2 р. 50 к., на 1 м. 1 р. Съ перес. за границу на годъ 12 р., на 6 м. 7 р., на 3 мѣс. 4 р., на 1 мѣс. 1 р. 50 к.

ПОДПИСКА принимается только съ 1-го числа каждаго мѣсяца исключительно въ конторѣ изданія: Головинскій проспектъ, № 3.

Плата за объявленія для Закавказья за мѣсто занимаемое строкой петита: на первой страницѣ—10 коп. и на четвертой страницѣ—5 коп; на объявленія внѣ предѣловъ Закавказья: на первой страницѣ—24 коп. и на четвертой—12 коп.

На 1902 годъ (III-й годъ)

Открыта подписка на ежемѣсячный научно-литературный журналъ

„КАВКАЗСКІЙ ВѢСТНИКЪ."

„Кавказскій Вѣстникъ" даетъ ежегодно около 3,000 страницъ оригинальныхъ и переводныхъ статей съ арм., груз., татарск., арабск. и съ европ. яз.

Въ вышедшихъ книгахъ журнала были помѣщены: 1) **Беллетристическія произведенія** К. С. Баранцевича, П. П. Гнѣдича. Д. К Бедребисели, Ивановича. Д. Л. Мордовцева, К. В. Назарьевой, Раффи, Гр. Церетели, Прошьяна, Патканьяна, Ниношвили, Кдіашвили, Агароньяна, Л. Кипіяни. Иванъ да Марьи. П. А. Опочинина Д. С. Мережковскаго, Арагвиспирели, кн. Орбеліани, Хетагурова, Ак. Церетели, А. П. Андреева, Н. Бердяева, Оссовскаго и др.

2) **Научныя статьи** Н. Н. Баратова, П. О. Бобровскаго. Г. А. Эзова, А. Д. Ерицова, А. Ф. Кипшидзе, проф. Н. Я. Марра, проф. А. С Хаханова, К. Ф. Гана, проф. Н. Ф. Катанова, проф. В. Ѳ. Миллера, проф. К. И. Лисенко, А. А. Калантара, кн. Масальскаго, В. Е. Романовскаго, А. В. Мдивани, Ахмедъ бекъ Агаева. проф. А. Н. Краснова, проф. А. Н. Веселовскаго, Юр. А. Веселовскаго, Г. В. Баева, Я. В. Абрамова, М. И. Тамамшева. Л. Исарлова. Гашимъ бекъ Везирова, С. И. Уманца, Е. С. Такаишвили, А. И. Хатисова. Г. П. Меликъ-Каракозова. П. М. Кара-Мурзы, М. Джанашвили, Х. А. Вермишева, М. В. Глушакова, А. И. Натроева и др.

3) **Письма и записки:** Гр. Евдокимова, Католикоса Нерсеса V, А. Бенкендорфа, А. Дурново, декабриста Бѣляева, гр. М. С. Воронцова, гр. Гудовича, И. Айвазовскаго, арх. Іосифа Аргутинскаго, Ермолова, И. Тургенева и др.

4) **Рисунки:** Царь Грузинскій Георгій XII, Царевичъ Грузинскій Давидъ Георгіевичъ, А. Суворовъ. Шарденъ, Карта Ахалцихскаго уѣзда, Развалина церкви Чаба Эрда, Мцехтскій соборъ Свети-Цховели, И. И. Свѣдѣнцовъ, Кн. Р. Д. Эристовъ, Раффи. Виды Тифлиса, Эривани, Эчміадзина въ 1673 году. Пиръ въ Тифлисѣ въ XVII вѣкѣ.

УСЛОВІЯ ПОДПИСКИ

	въ годъ	—½ года
Для городскихъ подписчиковъ	9 р.	5 р.
Для иногороднихъ	10 р.	6 р.

Разсрочка допускается для учебныхъ заведеній и учащихся, подписывающихся непосредственно въ **конторѣ** журнала. **Книжнымъ магазинамъ** ком. сч. 10%.

Адресъ Редакціи и Конторы: Тифлисъ, Тургеневская,

11. Подписка принимается во всѣхъ книжныхъ магазинахъ, въ конторѣ журнала и въ отдѣленіи конторы: Тифлисъ, Голов. пр. № 1 (Книжный маг. Хиддекель).

Полный экземпляръ „Кавказскаго Вѣстника“ за 1900 годъ можно получить въ конторѣ журнала за 11 р.; за 1901 г. —10 р.

Годовые подписчики получатъ въ 1902 г. приложеніемъ къ „Кавказскому Вѣстнику“ романъ М. С. Хатисовой ПО НОВОМУ ПУТИ. Редакторъ-издатель В. Д. КОРГАНОВЪ.

„АРГОНАВТЪ“

ВЪ 1902 ГОДУ.

Подписная цѣна:	на годъ	6 мѣсяцевъ	одинъ мѣсяцъ.
Съ пересылкой и доставкой:	7 р.	4 р.	1 р.
ВЪ ТИФЛИСѢ . . .	5 „	3 „	75 к.

Отдѣльные номера у разнощиковъ газетъ, въ Тифлисѣ по 3 коп., въ другихъ городахъ по 5 коп.

ПРОГРАММА газеты обнимаетъ всѣ отдѣлы ежедневныхъ газетъ.

По четвергамъ и воскресеньямъ текстъ будетъ иллюстрированъ портретами государственныхъ и общественныхъ дѣятелей, представителей науки и искусства и т. п. и рисунками къ текущимъ событіямъ и злобѣ дня.

„АРГОНАВТЪ“ выходитъ двумя изданіями. Первое—вечернее для восточнаго Закавказья, т. е. для города Баку и остальныхъ мѣстностей по линіи желѣзной дороги „Тифлисъ-Баку“ и сдается на почту на вечерній поѣздъ желѣзной дороги. Эта мѣра даетъ возможность доставлять газету подписчикамъ гор. Баку и по всей линіи желѣзной дороги цѣлыми сутками раньше. Бакинскимъ подписчикамъ газета доставляется въ день выхода ея въ Тифлисѣ черезъ разсыльныхъ между 3—4 часами дня. Второе изданіе утромъ доставляется подписчикамъ гор. Тифлиса и сдается на почту для отсылки иногороднымъ. Это второе изданіе, состоящее изъ тѣхъ же передовыхъ статей, фельетоновъ, корреспонденцій и другихъ отдѣловъ газеты, однимъ словомъ, повторяя первое изданіе, вмѣстѣ съ тѣмъ заключаетъ въ себѣ всѣ новѣйшія извѣстія, получаемыя нами послѣ шести часовъ вечера и ночью, которыя входятъ въ первое изданіе только въ слѣдующемъ номерѣ.

Редакціонныя письма, статьи и сообщенія просятъ адресовать на имя Ивана Григорьевича Хачатурова, Голов. № 14.

Съ цѣлью дать возможность публикѣ ознакомиться съ направленіемъ „Аргонавта“, редакція въ теченіе двухъ недѣль разсылаетъ газету и неподписчикамъ.

БЕЗПЛАТНО 3 СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ

ВЪ 12 ГОТОВЫХЪ ИЗЯЩНЫХЪ ПЕРЕПЛЕТАХЪ

БЕНЕДИКТОВА въ 2-хъ изящно перепл. томахъ,
МИЦКЕВИЧА въ 4-хъ изящно перепл. томахъ и
СТАХѢЕВА—6 изящно перепл. томовъ получитъ въ 1902 году каждый подписчикъ

богато иллюстрированнаго, литературно-художественнаго журнала

„НОВЫЙ МІРЪ"

Кромѣ того, также безплатно рядъ другихъ приложеній, въ числѣ которыхъ:
ДВА НОВЫЯ ХУДОЖЕСТВЕННЫЯ ИЗДАНІЯ:

1) **КАРТИННАЯ ГАЛЛЕРЕЯ ИМПЕРАТОРСКАГО ЭРМИТАЖА**

и 2) **ОРУЖЕЙНАЯ ПАЛАТА** въ Москвѣ,

состоящія изъ 300—400 художественныхъ картинъ-автотипій на веленевой бумагѣ, въ форматѣ in-folio

Подписная цѣна годового изданія журнала „Новый Міръ",

состоящаго изъ: 24 илл. №№ лит.-худож. ж. „Новый Міръ" на веленевой бумагѣ, 24 илл. №№ „Всемірной Лѣтописи" на веленевой бумагѣ, 24 илл. №№ ж. прикл. знаній и новѣйшихъ изобрѣтеній для самообразованія, п. н. „Мозаика", 52 илл. №№ ж. „Живописная Россія", 52 №№ „Временника Живописной Россіи" и 12 илл. кн. ж. „Литературные Вечера" для семейнаго чтенія, безъ всякой доплаты за дост. и перес. безплатныхъ премій, т.-е. „Картинной галлереи Императорскаго Эрмитажа", „Оружейной Палаты" и 12 изящно переплетенныхъ книгъ „Библіотеки Русскихъ и Иностранныхъ Писателей", состоящей изъ собранія сочиненій Бенедиктова въ 2-хъ изящно перепл. том., собранія сочиненій Мицкевича въ 4-хъ изящно перепл. том. и 6 (1—6) изящно перепл. том. собранія сочиненій Стахѣева, съ дост. и перес. на годъ 14 р. Тѣ же изданія, но съ „Новымъ Міромъ" и „Всемірной Лѣтописью" на слоновой бумагѣ (вмѣсто веленевой) на годъ 18 р. Допускается разсрочка платежа: при подпискѣ не менѣе 2 р. и ежемѣсячно не менѣе 1 р., съ тѣмъ, чтобы вся подписная сумма была уплачена полностью не позже 10-го декабря 1902 г. Гг. подписчикамъ съ разсрочкой одна изъ объявленныхъ премій, а именно—12 переплетенныхъ книгъ „Библіотеки Русскихъ и Иностранныхъ Писателей" будетъ выслана по уплатѣ послѣдняго взноса.

Подписка на «Новый Міръ» принимается въ книжныхъ магазинахъ Товарищества М. О. ВОЛЬФЪ: въ С.-Петербургѣ, Гостиный Дворъ, 18, и въ Москвѣ, Кузнецкій Мостъ, 12, а также во всѣхъ прочихъ столичныхъ и провинціальныхъ книжныхъ магазинахъ. Адресъ ред.: Спб., В. О., 16 л., д. 5—7.

Ներքին Գործոց Տ. Նախարարի թույլտուությամբ ներկայ 1902 թուի յունուարի 1-ից հրատարակվում է

ԼՈՒՄԱՅ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ ՀԵՏԵՎԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ

1. Ինքնուրոյն և ռուսերէնից ու օտար լեզուներից թարգմանուած վէպեր, պատմուածքներ և ոտանաւորներ այլ և կենսագրութիւններ։

2. Կոլկասագիտութեան վերաբերեալ աւելն տեսակ պատմական վաւերագրեր և յօդուածներ։

3. Ճանապարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագիրներ։

4. Բարոյագիտական յօդուածներ։

5. Մատենախօսութիւն և կրիտիկա գրական երկերի։

6. Այլ և այլք. տեղեկութիւններ գիտութիւնից և արուեստից։

7. Խմբագրութեան պատասխաններ և յայտարարութիւններ։

«ԼՈՒՄԱՆ» կը հրատարակուի 2 ամիսը մի անգամ

«ԼՈՒՄԱՅ»-ին աշխատակցում են մեր թէ նախկին բոլոր աշխատակիցները և թէ նոր ոյժեր։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 6 ՌՈՒԲԼԻ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՔՈՎ ԵՒ ՏՈՒՆ ՀԱՍՑՆԵԼՈՎ. ԻՍԿ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ 20 ՓՐԱՆՔ։

Բաժանորդագրութիւն ընդունում է Թիֆլիսում «Լումայ»-ի խմբագրատանը, Օրբէլեան փողոց № 38 և կենտրոնական գրավաճառանոցում։

Առանձին բաժանորդագրութիւն չէ ընդունուում։

Քահանաներին, ուսուցիչներին և աշակերտներին թոյլ է տրուում բաժանորդագրինը վճարել մաս մաս. ստորագրելիս 3 ռուբլի և ապրիլին մնացեալ 3 ռուբլին։

Յայտարարութիւնների տողը արժէ 10 կոպէկ։

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція журнала „ЛУМА“, արտասահմանից՝ Tiflis, Redaction du journal armenien „LOUMA“.

1902 № 2 ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ